

# ՄԱԼԻԳ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ  
Ա. Մ Ս Ա. Գ Ի Բ

№ 3-4 1895

ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ

1895 № 3-4

Ե Թ Թ Ե Ր Ո Ւ Դ Տ Ա Ր Ի

	Երես	
1 ԱՂԵԼԱՆ, Ա. . . . .	361	Նրա ցաւը (պատմւածք);
2 ԾԱՌԱՋԻՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ . . .	385	Անտէր գերեզման (բանաստ.);
3 ՇԱՆԹ . . . . .	387	Երաղ օրեր (վերջ);
4 ՆՈՅՆԸ. . . . .	420	Երնէկ (բանաստեղծ.);
5 ԳԵՂՕԹԵՒՅՑ ԼԵՒՈՆ ՏԻԴՐԱՆԵԱՆ	422	Հերման և Դորոթէա (վերջ);
6 ԽԵՄԻՐՃԱԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ . . . .	435	Բարի զիշեր (բանաստեղծ.);
7 ԺԵՐՈՄ, Ժ. . . . .	436	Արտառուչ պատմութիւն;
8 ՏԵՐ-ՄԻՐԱԲԵԱՆ, ՅՈՎ. ՀՈՆՆԵԱՆ	444	Աստիճանաբար ուսուցումը (վերջ);
9 ՄԵՅԼԱՆ . . . . .	455	Սասուն (շարունակութիւն);
10 Գ. Ա. Ս. . . . .	474	«Հայկականք»;
11 ԱՐԱՄԻԱՆԵԱՆՑ, ՍԻԵՑԻՔ. . . .	476	Ժամանակակից Տեսութիւն.—Հայկական խնդրի նորագոյն զարդացումը: (Յօդւած երրորդ; Ընդհանուր տեսութիւն: Նոր միտինդներ Անդիակում: Նոր լավանութիւններ Բանակուր Դէվլի Տելեգրաֆի գէմ: Քննիչ չանձնաժողովը: Նոր կոսորածների սպառնալիք: Բանաստարկեալները: Հայկական խնդիրը):
12 ՄԵՒԵԱՆՑ, Հ. . . . .	550	Թատրոնի շուրջը:
13 Զ. . . . .	553	Քաղաքական Տեսութիւն:
14 ԽՄԲ. . . . .	557	Զանազան լուրեր:

ՏԵՂԵԿԱՏՈՒ և ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐՈՒ Մ. Գ. Ո-ԾԻՆԵԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротніанца, Гол. пр., д. № 41.

1895



# ՄԱԿԱՀ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍՈՎԻ ԳԻՐ

№ 3—4 1895

ԱՄՍ—ԱՊՐԻԼ

1895 № 3—4

ԵՌՈՓԵՐ ՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊՈ.ԸՆ. Մ. Դ. ԱՕՏԻՆԵԱՆՅԻ

Տպոգրաֆիա Մ. Դ. Ռոտինանց, Գօլ. ք. և. № 41.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 16 Марта, 1895 г.

VII ՏՐԻ ՄՈՒՐՃ” ՏՐԻ VII

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻՍԿ. ՀԱՄԱՐ ԲԱՑԻԱԾ Է

ՄՈՒՐՃ” ամսագիրը 1895 թւականին կը հրատարակւի նոյն ծրագրով և նոյն գիրքով, որպէս և նախկին վեց տարիներում՝ ՄՈՒՐՃ”-ը, որպէս անցեալում, նոյնպէս և ազադաշում՝ կը բռնադակի՝

- I. Յօդւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմածքներ:
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ:
- IV. Նկարագրական-ճամբորդական:
- V. Գիտական հանրամատչելի յօդւածներ:
- VI. Հետազօտութիւններ տնտեսական, սոցիալական, պատմական:
- VII. Գրական քննադասութիւն:
- VIII. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի:
- IX. Ժամանակակից Տեսութիւն մեր կեանքի ընթացիկ ինդիր-ների և այլ յօդւածներ մեր ժամանակակից ներքին կեանքից:
- X. Գաւառական նամակներ:
- XI. Թղթակցութիւններ Ռուսաստանից և Արտասահմանից:
- XII. Քաղաքական տեսութիւն:
- XIII. Զանազան լուրեր:
- XIV. Յայտարարութիւններ և տեղեկատուններ:

«ՄՈՒՐՃ»-ի ԳՐԱԿԱՆ ՄԱՍԻ ապահովւած է բազմաթիւ աշխատակից։  
ներով, որոնց կազմը ուժեղանում՝ է նորերի նպաստներով։

Անցեալ 1894 թւականից սկսած աշխատակցել են «Մուրճ»-ին, հետևեալ անձերը՝ որոնց անունները դասաւորում ենք լսու աշխատակցութեան հնութեան։

- |  |                          |
|--|--------------------------|
| 1 Արամիանեանց, Ա.                              | 23 Յակոբեան, Յակոբ       |
| 2 Մանուէլեանց, Լևոն                            | 24 Խանգաղեան, Խորեն Քահ. |
| 3 Վարդանեանց, Գր.                              | 25 Աստածատրեանց, Գէորգ   |
| 4 Ծատուրեան, Ալ.                               | 26 Շահիթ                 |
| 5 Միխիթարեան, Արշալուս<br>(Նոյնը և Արգահատեան) | 27 Աղջեւան, Ա.           |
| 6 Տէր-Սիրաքեան, Յովհաննէս                      | 28 Յահամերեան, Յարգիս    |
| 7 Ղազարեան, Երւանդ                             | 29 Դամճեան, Արմէն Վարդ.  |
| 8 Արծրունի, բժ. Վահան<br>(Նոյնը և Ֆելիքս)      | 30 Մարգանեան, Ֆրիդոն     |
| 9 Խաժակնեան, Գ.                                | 31 Տէր-Մարտիրոսեան, Միք. |
| 10 Նաւասարդեան, Մկրտ.                          | 32 Յովհաննիսեան, Միք.    |
| 11 Փափազեան, Վ.                                | 33 Միրիմաննեան, Յար.     |
| 12 Վանցեան, Գր.                                | 34 Մելքոնեան, Մ.         |
| 13 Մնացականեան, Գարբ.                          | 35 Գուրբախեան, Յովհ.     |
| 14 Բաշինջաղեան, Գէորգ                          | 36 Տէրեան, Յտ.           |
| 15 Մուրագեան, Յակոբ                            | 37 Սոլոմոննեան, Բ.       |
| 16 Ղարաջեան, Գէորգ                             | 38 Մէդնիկեան, Յովհ.      |
| 17 Աթանասիան, Աշոտ                             | 39 Գնունի, Յովհ.         |
| 18 Բալաղեան, Սամուէլ                           | 40 Տէր Մկրտչեան, Մ.      |
| 19 Զաքարեան, բժ. Թագէսու                       | 41 Մինասիան, Երև.        |
| 20 Աղաքեան, Ղազարոս                            | 42 Գեմիրճեան, Գերենիկ    |
| 21 Վարույ                                      | 43 Բահաթրեան, Լևոն       |
| 22 Դաղբաշեան, Յար.                             | 44 Սէլյան                |
|  | 45 Տիգրաննեան, Լևոն      |
|  | 46 Արմէնէ, Խ.            |

Դիմել՝ Խմբագրատունը—Տիֆլիս, въ редакцію „МУРЧЪ“

Արտասահմանից—Tiflis, Rédaction „MOURTCH“.

ԲԱԺԱՆՈՐԻԱԳԻՒՆ է 10 ռուբլի տարեկան։

Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 ռուբլի։

ՎՃԱՐԻ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 5 ռ. (կամ 4 ռ.)  
սկզբում, մնացածը մինչ առաջին կիսամետակի լրանալու

# Ն Բ Ա Ց Ա Կ Ը

(Պատմուածք)

Ա. Ա Դ Է Լ Ե Ա Ն Ի

## I

Այսօր էլ հանդիպեցի նրան:

Զգիտեմ ինչու, բայց ամեն անզամ, երբ պատահում եմ փողում այդ ալեզարդ ծերունուն, որի վշտագէմ հայեացքը և թոյլ ու մաքամոլոր քայլերը վիշտ են պատճառում իմ սրտին, ևս գեռ հեռակից իմ առքերը ազահութեամբ յառում եմ նրա գէմքի վրայ, լի՛հետաքրքրութեամբ կամենում եմ թափանցել նրա սրոտի խորքերը, որպէս զի իմանամ, թէ ինչ է նրան տանջողը:

Խմ վաս և զգայուն երեւակայութիւնը տեղի է տալիս պէս պէս պատկերների, որոնք աւելի ևս ձնշում են կուրծքս:

Երբ նա անցնում է, ևս կանգ եմ աւնում, գարձնում եմ երեսս և շարունակում եմ նայել նրա յետեից. ծերունին հագել է թէալիսաի մի հին և գունաս վերարկու, որի մետաղեաց կոճակներից տեղադեղ պակաս է, իսկ մի քանիսը փօխարինւած են ոսկրէ սկ կոճակներով: Վերարկուն մէջքատեղից կապան չունի, որի պատճառով յետեից ցցւած է կանգնած: Այդ հնամաշ և այդ տարազի հագուստի մէջ ծերունին ծիծաղելի էր երեսում, բայց դրա հետ միասին նայողի մէջ նա զարթեցնում էր խիզճ ու կարեկցութիւն:

Ծերունին զնում էր հանդաբառ և մտախոհ: Ոտների մէջ ասես

թուլութիւն կար: Նրա ծնկները ամեն մի քայլափոխից առաջ էին կռում և յետոյ ուղղումն ձանապարհին նա գնում էր միշտ զլիսակոր: Միայն երբեմն փողոցում պատահող մի արտասովոր դէպք կը գրաւէր նրա ուշադրութիւնը:

Ամեն անգամ կանգ առնելուց ես դարձեալ գնում եմ իմ ձանապարհով և շարունակ մտածում թէ ովէ է արդեօք այդ մարդը և բնչ է նրա ցաւը:

Այդ հարցը երբեմն այնքան տանջում էր ինձ, որ ես մի անգամ իմ ալեզարդ և վշտագէմ ծերունուն տեսայ երազումն: Հէնց է ես անցնում եմ քաղաքի փողոցներից մինով: Չմեռն է, օրը ցուրտ: Սանձարձակ քամին վզգում է ուժգնութեամբ դէպի ամեն կողմ և ձիւնի փոշիով լցնում օդը: Հեռւից նայողին թւում է, թէ փողոցներում մառախուղ է կանգնած: Տեղ-տեղ պատահում են փաթաթւած անցորդներ: Կառապանները այս-այն մայթի մօտ պահած ունեն կաւքերը, իսկ իրանք ասես թմրած լինեն: Զիերը ականջները կախ և տիսուր կանդնած՝ համբերութեամբ տանում են բուքն ու ցուրտը: Նեղ փողոցներից մէկի վրայ երեսում է մի կիսաւեր երկարկանի տուն: Նրա վերին մասերը քանդւած են բոլովին, այնպէս որ հեռւից նայողին իշխանական կիսաւեր մի պանդոկի է նմանւում: Զգիտեմ ինչու ես մտնում եմ այդ տունը Մի փոքրիկ, լուսաւոր բայց ցուրտ սենեակ է: Մերկ յատակին նստած է մի կիսամերկ երեխայ, որ իւր գրիում ունի նոյնպիսի մի մանուկ: Ուրիշ ոչ ոք չկայ սենեակում: Ես սկսում եմ հարց ու փորձ անել, թէ ովքեր են նրանք, ովք է նոյա տէրն ու ինամոլը: Բայց երեխան, փոխանակ պատասխան տալու, մանկան հետ սկսում է լաց լինել: Այդ բոպէին ներս է մտնում մի ջահիլ կին, զարմանքով և հետաքրքրութեամբ ինձ է նայում, յետոյ գաւնալով երեխային սիրո է տալիս, որ չվախենան և առնելով նրա զրից մանկան՝ սկսում է ծիծ տալ: Ես հարցնում եմ կնոջ, թէ ովք է ինքը և ումն են այդ երեխայքը, բայց մինչեւ պատասխան ստանալս ներս է մտնում իմ ալեզարդ ծերուկը նոյն վշտագին դէպքով և ձեռքին ինչ որ է մի կապոց: Նա տեսնում է ինձ, շփոթում և ամաչում է փոքր ինչ: Յետոյ մօտենալով ինձ:

—Որբիկներս են, ասում է, իսկ սա հարեւանուհիս է, որը իմ

Խնդրանօք մի քանի անգամ ծիծ է տալիս այս մանկան՝ Դրանց մայրը իմ աղջիկն էր. իւր աղքատ և անբախտ ամուսնու մահից մի քանի շաբաթ յետոյ էլ ինքը մեռաւ նոյն թշւառ և ողորմելի դրութեան մէջ՝ այս անբախտներին զգիս թողնելով:

Ծերունու աչքերը արտասւակալեցին: Նա իւր վշտակէմ հայացքը որբերին դարձեց, յետոյ խեղճ-խեղճ ինձ նայելով շարունակեց.

—Սիրտս շատ է կակծում, քթիցս մուխ բարձրանում, երբ նայում եմ այս որբիկների վրայ և չիշում դրանց ծնողաց: Ի՞նչու Աստւած դրանց լոյս աշխարհ գցեց: Չմեռը ցուրտ, իրանք տկլոր, ինքս աղքատ ու ծերացած... Խնամող չկայ... չգիտեմ ի՞նչ անեմ: Ննորհակալ եմ, շնորհակալ եմ Գրիգոր աղայից. Հիմայ փողոցում պատահեց, ասաց եկ փայտ տար վառիր... Առ այս հացը, ասաց ծերունին ձեռքի կապոցը երեխային տալով, յետոյ դարձաւ ինձ և շարունակեց.

—Հիմայ ես գնում եմ փայտը բերեմ, վառեմ, խեղճ են ախր, տաքանան—և շաապով դուրս գնաց:

Ծանր տապաւորութեան տակ զուրս եկայ և ես այդ սենեակից, իսկ այնուհետ... էլ չգիտեմ ի՞նչ պատահեց հետո երազումն: Առաւոտեան, երբ քնից արթնացայ, մոտածեցի, մի զուցէ մի այդպիսի ցաւ ունի ծերուկը:

Եւ ահա այսօր կրկին պատահելով նրան՝ էլ չկարողացայ համբերել, մօտեցայ ու հարցը:

—Ներողութիւն, զուք որտեղացի եք:

Իմ հարցը լսելով նա խկոյն կանգ առաւ, զարմանքով երեսիս նայեց, որ կարծես ուզում էր ասել. ևս ի՞նչու է հարցնումն, մի թեթև ժպտաց և խղճալի ու պարզասիրտ եղանակով պատախանեց.

—Զանգեղուցի եմ:

—Ո՞ր գիւղից:

—Ե՛, չես ճանաչիլ:

—Ասացէք, կը ճանաչեմ: ես էլ այն կողմերիցն եմ:

Ծերունին ասաց իւր գիւղի անունը:

—Ճանաչում եմ, ճանաչում եմ, պատասխանեցի ես: Դա մի

գիւղ էր, որտեղ մշակում էին բամբակ և պահում շերամ; մի գիւղ, որի տնտեսական գրութիւնը վերջին տարիներս բաւական վատթարացել էր գլխաւորապէս հողի պահասութեան, եղած բերքերի, արտահանելու միջոցների բացակայութեան, սերունդների անհամեմատ աճման և նորանոր պահանջների զարգացման շնորհիւ։ Դրա հետ միասին անմիջական հետեւանքն էր գիւղացոց բարոյական անկումը Անձնական ամենաչնչին շահի համար նրանք ունատակ էին տալիս ամեն մի սրբութիւն, խիզճ, ազնութիւն, մարդասիրութիւն, արդարութիւն և այլն։ Ներս էր մղւել մի այսպիսի սկզբունք. Փնչ որ քոն է, պինդ պահիր, իսկ ինչ որ ուրիշնն է, աշխատիր ձեռքդ գցել»։

Եւ յանուն այդ սկզբունքի գործում էին համարեա ամենքը՝  
— Խնչն ես հարցնում, ասաց ծերունին նոյն զարմանքով և  
հետաքրքրութեամբ։

— Հենց այնպէս...

Նա մի րոպէ լրեց։ Դէմքը մի այնպիսի արտայայտութիւն ընդունեց, որ կարծես մի բան էր ուզում ասել, բայց ամաչում էր և չէր համարձակում։ Վերջապէս նա սիրու առաւ և ասաց.

— Զէ, մի բան կը լինի, որ հարցնում ես

Եւ նրա գէմքը փայլեց լի, բայց վշտագին ծիծաղով։

— Կուք իմ հօրեղբօր շատ նման էք, որը ձեր հասակակից մարդ է, ասացի ես։ Նա երկու որդոցը երկար ժամանակ է, որ բաց է թողել օտարութիւն, բայց նրանք ոչ մի օգնութիւն չեն հացնում հօրը։ Նրանք այդ կարող են, բայց չեն անում, որովհետեւ մոռացութեան են տւել ամ են ինչ, հասկանում էք, ամեն ինչ Պաշտամին բոլոր աշխատանքը կատարողը և անույին հոգսեր քաշողը հօրեղբացը է դեւ։ Նա է վարում, նա է ջրում, նա է քաղ հանում և այլն։ Ափսոս, որ հողեր քիչ ունի Եթէ նրա առաջայ հողերը հեղեղի կուլ չգնային, այն ժամանակ հօրեղբացը լաւ կ'ապրէր իւր աշխատանքով։ Կրկնում եմ, աշխատանքը մնացել է, իսկ հող չկայ։ Ահա թէ ինչու օգնութեան կարօտ է իւր որդիկերանցից Եթէ միայնակ լինէր կնոջ հետ, դարձեալ կը կառավարւէր, բայց նա տանը ունի երկու հասած աղջիկ, որ շուտով մարդու պիտի տայ։ Լաւ է, որ այդ 60-ամեայ ծերունին բաւական առողջ կադ-

մըւածքի տէր է և դիմանում է այդ ամենին ամառավին սարսա-  
փելի շռքերի ժամանակն անգամ Երբեմն աշխատանքը շատ էր  
հոգնեցնում նրան: Նա վշտակալում էր և դէմքը դառնում ցա-  
ւագին: Յիշում էր որդիկերանցը ու գանգատում իւր վիճակից.  
աշխր ես ինչու որդոցս բաց թողնեմ; որ հիմայ էս օրերում, էս  
հասակում մնամ՝ էսքան խեղճ, էսքան շարչարւելիս: Պա իսկի ես  
մի հանդիսան չպիտի առնեմ: Ոչ զալիս են իրանց տունը—տեղը  
կառավարեն և ոչ փող են ուղարկում—ես մի կերպ կառավարւեմ:  
Ասր թ'նչ անեմ: Էլ որ օրւայ համար են նրանք, եթէ ծերութեանս  
այս հասակումն էլ ինձ չեն օդնելու»:

Այսպիսի գանգատներ էր անում հօրեղբայրս: Նրա դէմքի ար-  
տայացտութիւնը այդ բոսկէներին նոյնն էր լինում, ինչ որ ձերինը:  
Եւ հենց այդ է պատճառը, որ ամեն անգամ ձեզ տեսնելուց յի-  
շում էի խսկոյն հօրեղբօրս, կամենում էի խօսեցնել ձեզ, հետա-  
քըրբրում էի իմանալ մշտական տիսրութեան պատճառը, իմանալ  
ձեր ցաւը:

Մերունու դէմքը, որ իմ խօսելու միջոցին աւելի ևս մուացլւել  
էր, վերջին խօսքերիս հետ փայլեց վշտակի ժղիտով և դարձեալ  
մարեց: Նա թափահարեց իւր գլուխը, ոչինչ չասաց ու կրկին  
խորասուզւեց ցաւերի աշխարհը:

—Հը՞, չեք ասիլ ինձ ձեր շարունակ տիսրութեան պատճառը,  
հարցը իս:

—Ե՛հ, հառաջեց ծերունին, քեասիբութեան տունը Աստած  
քանդի, թ'նչ ասեմ, քեասիբին էլ կը հարցնին, թէ ցաւդ թ'նչ է:

—Ճշմարիտ է, հասկանալի է, բայց անկեղծութեամբ կրկնում  
եմ, որ ես շատ եմ կամենում իմանալ, թէ ով էք դուք, թ'նշու  
գիւղը թողած այսուղ էք եկել: Միայն աղքատութիւնը այնքան  
չէր մթեացնիլ ձեր դէմքը:

—Խ՞ո՛: արած, մեծ է ցաւս, թող աղքատ ապրեմ, բայց ազատ-  
ւեմ դրանից: Քեզ կը պատմեմ դրա մասին յետոյ, երկար է, հիմայ  
ժամանակ չունիմ: Համ էլ մի նամակ պիտի ուղարկեմ գիւղը, բայց  
լաւ զրող չեմ գանում, դու, գիտեմ, կը գրես, քանի որ համ ուսեալ  
ես, համ էլ հարցնում ես: Ամենքը էդպէս չեն, մանաւանդ մեր-  
ուսպրաւ լիախիւշ: իկը» (կառավառիչ): Եղ անխիղճը իսկի ոչ երեսիս է

նայում, ոչ հետո խօսում: Խնդր էլ որ ուզում՝ ես հետը ի՞ երկու խօսք խօսաս, տեսնում ես թթւեց, երեսը շուռ տւաւ: Լեզուկ էն սհաթը կապում է, մնում ես խեղճ: Խնդիրքս է, որ մի նամակ գրես ինձ համար: Մեր կանտորում կան տղերք, մի քանիսին վախենում եմ խնդրեմ: գիտես, վրաս կը ծիծաղեն, որ համարձակում եմ նրանց էղաղէս բան ասել, ու կ'ասեն՝ Գնա, գնա: Մի քանիսն էլ հայերէն իսկի չեն կարող գրել, թէև հայեր են: Մեր ուպրաւեան շշիքը, ասում են, լաւ կը գրի, ամա ես որ նրան մի էղաղիսի բան խնդրեմ: հաւատա, ինձ ծառայութիւնից դուրս կ'անի:

—Որտեղ էք ծառայում; հարցըի ես:

—Կիրակոսովենց կանտորումը, սրբում եմ, լամպաները սաղ եմ անում, վաւում, սամաւար եմ՝ զցում, թղթեր եմ՝ դէս-դէն տանում: Ամիսը 15 մանէթ աշխատում էմ:

—Իսկ մրտեղ էք գիշերում:

—Հենց կանտորումը:

—Որ այդպէս է, եկէք ինձ մօտ, երբ կամենաք, և ես ուրախութեամբ կը գրեմ ձեր կարեոր նամակը:

Ես ասացի նրան իմ հասցէն:

—Շնորհակալ եմ, շատ ապրես, Աստւած քեզ սլինդ ձեռով պահի, հօրդ համար շատ չտեսնայ:

—Շնորհակալ եմ, ասացի ես, և մենք բաժանեցանք:

—Ե՞րբ կը գաք, գարձաջ ես դէպի նրան:

Նա փոքր ինչ մտածեց և ասաց.

—Էզուց երեկոյ սհաթի Զ-ից յետոց:

—Շատ բարի, ես կը սպասեմ:

## II

Միւս օրը երեկոյեան սենեակումն թէյ էի խմում, թերթելով Գլէք Աւսպենսկիի հեղինակութիւնների բ. հատորը, որտեղ զետեղւած է նրա հռչակաւոր „Վլաստ զեմլյ“ (Հողի իշխանութիւնը) գրւածքը, որ ներս մտաւ իմ ծանօթ ծերունին, Սահակ ապերը նա նախ թրիսկացրեց սենեակիս դուռը, յետոց կամացուկ կիսաբաց արաւ և, երբ ես համեցէք արեցի, ներս մտաւ:

Սահակ ապերը նստեց աթոռներից մէկի վրայի ես նրա համար թէյ պատրաստեցի և հրաւիրեցի սեղանին մօտ:

— Նամակս լաւ պիտի գրես, համա, քեզ մատաղ, սկսեց նաքիչ լոռվթիւնից յետոյի:

— Կ'աշխատեմ, բացց դուք հէնց այժմ պատմեցէք ձեր ասելիքը, որ պիտի գրեմ:

— Թէ առաջ շատ բարով գրիր:

— Ո՞ւմ՝ դրեմ:

— Մկրտչին:

— Ով է դա:

— Եղբօրս փետան է:

— Յետոյի:

— Գրիր առաջ շատ բարով, թէ փառք Աստծոյ, ողջ սալամաթեմ, պարագ չեմ, գոհովթիւն Աստծոյ, առողջ եմ:

— Այդ յետոյի, Սահակ ապեր, յետոյի: Մենք նախ պիտի սկսենք գործի ամենահակածն մասից: Դուք նախ պատմեցէք այն, ինչ որ նամակի դլիսաւոր բովանդակութիւնը պիտի լինի:

— Համա, լաւ, դրանից սկսիր, պատմես:

Նա թէյը բաժակակալից բաժակը ածեց, մի երկու կռւմ խմեց և սկսեց:

— Գրիր Մկրտչին, թէ էգսկս չի, որ զու անում ես, էղ անխղճութիւն, անաստուածութիւն է: Ախր գիտես ի՞նչ կաց: Ես մի աղքատ մարդ եմ: Ունեի քիչից-շատից հող, որ ինձ կառափարում էր: Ամա սելը (հեղեղը) մի լաւ, շատ լաւ արտս տարաւու հէնց էդ օրից մէջքս կոռուեց: Եկամուտս շատ պակասեց: Տունս դժւար էի կառավարում: Ապրուսոս շատ, շատ դժւարացաւ: Երկու տղայ ունեի, նրանց կարգացնել էր հարկաւոր, երկու հասած աղջկե ունեի, հազցնել էր հարկաւոր: Մեր գիւղի ապրուսոն էլ էնպէս է, որ շատ բանի հնք փող տալիս ցորենի, իւղի, բրինձի, հագուստի... ի՞նչ ասեմ, ամեն բանի: Մեծ տան-տեղ, շատ թթենի ծառեր չունեի, որ շերամի որդ շատ պահէի, պահածն էլ իսկի լաւ բերք չէր տալիս, քանի որ պահելը լաւ չնք իմանում, եկամուտի ուրիշ աղքիւր չկար: Աւրիշի համար բան էի անում, ամա դրանով աշխատածը չնչին էր լինում: Էն էլ իսկի փող չէին տա-

լիս. աշխատանքիս փոխարէնը գինի, արաղ կամ՝ ուրիշ բան կը տա-  
յին Ստիպւած պիտի ստարտք վերցնէի, էն էլ անսաելի տոկոսով,  
100-ին 20—25 մանէթ։ Եդ անխիզճ փողատէրերի պատճառով մի  
արտ էլ ձեռքից զնաց։ Շատերը հէնց փող են տալիս, որ վերջը  
հող զցեն ձեռքները Մնաց խաղողի ացգիս, բամբակի մի փոքրիկ  
ճութով։ Փող չէր լինում, որ ցորեն առնեմ։ Տարին 12 ամս  
պանրի, իւղի, շացի կարօտ կը մնացի։ Միայն գինիս էր լինում.  
էն էլ խմում էի, որ դարդերս մոռանամ։ Ափսոս, որ էդ էլ շուտ  
էր վերջանում։ Դրանից յետոց հոգսն ու աղքատութիւնը էլի ու-  
տում էին ջանաւ ծար չկար, տղերանցո օտարութիւն ուղարկեցի։  
Համ բեռս կը թեժեանար, համ էլ մի բան տուն կ'ուղարկին։  
Մեր վարժապետը շատ արեց, որ չուղարկեմ ասում՝ էր ախսոս են,  
լաւ են կարդում, թող հալա մնան ուսումնարանում, շատ բան  
սովորեն, յետոց գնան օտարութեան։ Ես էլ էդպէս էի միոք անում,  
ամա ասում եմ, ծար չկար։ Ուղարկեցի, գնացին, իսկ պարտքը էլի  
ծանրացաւ զցիս։ Պարտատէրս ամեն անգամ պատահելուց ծիծա-  
ղելով ասում էր. Ամահակ աղէր, դէ այցին ու ճութը առւր, հա-  
շիւներս վերջացնենք էլին։ Ես ոչինչ չէի խօսում, ինքս էլ ծիծա-  
ղում էի, ամա ինչ արած, որ էդ վախսալ ներսս կառո-կառո էր լի-  
նում։ Իմանում էի, որ աշքը անկել է մինու ճար հողիս ու ուզում  
էր իր ձեռքը զցի։ Զար-չար մոքերը ինձ տանջում, հողիս հա-  
նում էին։ Քի՞ էր մնում զժւեմ։ Որ միոք էի անում, թէ զա էլ  
ձեռքից դուրս կը դայ, քթից մուխ էր բարձրանում, ջանս փշա-  
քաղւում էր։ Մի օր էնքան յուսահատել էի, որ կամուրջով անց-  
նելուց ուզում էի ինձ զցեմ՝ գեալը, ազատուեմ, երեխայքս, կինս  
միոքս ընկան, չկարողացաց։ Իսկ պարտատէրս պատահելուց միշտ  
ասում էր. Ամահակ աղէր, պա ախր ինչ ես ասում, փողը տալիս  
ես, թէ չի։ Իեր էդ հաշիւը հեշտ վերջացնենք։ Զուր էդքան առ-  
կոս տալով ինչ կը լինի։ Այգիդ տուր, ամեն ինչ վերջանաց։ Ի՞նչ  
ասէի։ Միայն խեղճ-խեղճ քմբ ծիծաղը էի անում և գլուխս կախ  
ճանապարհս զնում։ Միոք էի անում, թէ ինչ կը լինի ճարս, եթէ  
մի օր էդ մինուճար հողիցս, որը չէր թողնում յոյսս կարւի,  
զըկւեմ։ Կամ սաղ ընտանիքովս պիտի գնալի խեղտէի և կամ  
յաւիտեան պիտի թողնէի զիւղը։ Իսկ ես ախր կարող էի թողնել

գիւղը։ Պա իմ ճարը ինչ կը լինէր քաղաքում։ Կեանքիս վերջին օրերը պիտի էնտեղ անցկացնէի, ին էլ ով զիտէ ինչ օրում, դըրառմբ, սոված, կնոջս, երկու աղջկերանցս հետ 0'5, էդ չեի կարող։ Խոչեր չեի լսել քաղաքի վատ-վատ բաների մասին... Տունս կրակի մէջ կը լնինէր։ Քաղաքում ապրելը Աստած հեռու տանի, եթէ անգործ ես, փող չունես. ոչ տուն կը տան ապրես, ոչ հայ կը տան ուտես։ Գիւղում ինչ օրում էլ լինեմ, տունս, վառք Աստծոյ, կայ, մի հարեանից հաց վոխ կ'ասնեմ, միւսից բրինձ, միրզը խօմ կայ։ Գիւղում կը պահպանեն, քանի որ իրանց մարդն ես, աշքները վեր չի առնիլ, առա քաղաքում երեսիդ էլ չեն նացիլ։ Չե, քաղաքում ես ապրող չեի, ին էլ ընտանիքովս։ Համ էլ ացիս էնքան սիրում էի... Աչքիս լոյսի որէս էի պահել։ Սիրոս էնքան կպել էր նրան, որ ասես նա էլ որդիկերանցիցս մինն էր։ Նրանից զրկած, քաղաքում անսուն, անտէր ընկած, որ չիշէի հնձանս ձեռքիցս դուրս եկած, իմ ձեռքով աշխատած սարգ ու կարգը, ացիս, սրան ջրելը, պահպանելը, ես չեմ իմանում ինչ կը դառնացի։ Անպատճառ կամ կը գժւէի, կամ ջանս կարօտից դուրս կը դարի էդ էր պատճառը, որ չեի ուղում մինուճար հողս ձեռքիցս թողնեմ։ Իտի նրանից պինդ բռնէի։ Նա չէր թողնում, որ յոյս կորւի, նա էր ինձ սիրտ և մսիթարութիւն տւողը։ Առանց նրան ցամաք ընկած ձուկի նման կը լինէի։ Հենց ամեն մի զիւղացի էլ առանց հողի էդպէս մի բան է։ Որ էդ հողից էլ զրկւէի, էլ ես կորած էի։ Հարկ աւոր էր ուրեմն մի կերպ ազատել այգիս պարտադիրոջ մօտեցող ճանկերից։ Եղակս էլ արեցի։ Գնացի Մկրտիչ վեսայիս մօտ խորհուրդի։ Դէ նա ջանել տղայ է, քաղաքից նոր եկած, դէսից գէնից կարգացած, դալամը ձեռքին, հասկացող տղայ է, ինքըն էլ միշտ մեր գիւղի վարժապետների հետ նստում վեր կենում։ Նրան որ յայտնեցի ցաւս, քի։ միոք արեց և յետոյ յանկարծ ասաց։ «ուա քո տունը Աստած շինի, ճշմարիտ, իսկի մոքովս էդ բանը անց չի կացել։ Աւետիս աղերը (պարտասէրս) էդպէս բաներ է խօսում, համար էդ անիրաւը շատ շատերի տունն է քանզիլ, հիմայ էլ քեզ է իր ձեռքը զցել ու ուղում ձուծդ քամի։ Մկրտիչը շատ թնդւեց։ անխիղճների անխիղճը, ասում էր նա բարկացած, իր օթախում դէս դէն գնալով, վաշխառու շան որդի, կարծում է,

թէ հիմայ էլ ի՞նչ ուզի, կարող է անել... հը, պարտքդ 150 մա-  
նէթ է, իսկ նա 400 մանեթանոց այգիդ է վերցնում գրա տեղ  
Ները կանիծենք, միամիտ կաց: Շատ էլ նա մաքումի դրել է, ով  
կը թողնի: Կը խայտառակենք, ուղղակի երեսին կը թքենք: Հանաք  
մասխարձյ է գիւղացուն բոլորովին զրկել հողից և ընտանիքը  
փողոցը անել... Զէ, էն վազ էր, որ էշը կազ էր: Հիմայ էլ էր  
ովէս բաներ չեն թողնում, որ մարդիկ անեն: Թող իմ ընկերներին  
հետ էլ խորհուրդ անեմ, տեսնեմ նրանք ինչ կ'ասեն:

Միւս օրը երեխային ուզարկեց յետիցս, թէ տուն գար  
Գնացի: Զգիտեմ էլ խորհուրդ էր արել վարժապետների հետ թէ  
չէ, ասաց. «Յաւիդ ճարը սա է. եկեղեցուց կը վերցնենք իմ անու-  
նով և կր տանեք պարտքդ: Եղախով հողդ Աւետիսի ձեռքից կ'ա-  
զատենք: Իսկ դու լաւ կ'անես, որ գնաս օտարութիւնն Համ ինքտ  
կ'աշխատես, համ էլ տղերանցդ ձեռքինը կը պահես: Փող կ'ուզար-  
կես տոկոսները կը տանք, տոկոս էլ քիչ է, 12 մանեթ է: Յետոյ  
կամաց կամաց պարտքդ էլ կը վերջացնենք: Տղերքու շուտով լաւ  
աշխատանքի տէր կը դառնան, էն ժամանակ դու կը գաս տանզ  
կը նատես, հոգդ կը կառավարես, իսկ տղերքդ փողով կ'օգնին քեզն:

Ասացի վնաս չունի, օտարութիւն կը գնամ: Թող մի երկու  
տարի էլ էնտեղ մնամ, միայն թէ մինուճար հողիցս չզրկւեմ:  
Վկրտիչը մի քիչ էլ մնածեց ու ասաց.

— Սահակ աղեր, այգին մօտս պիտի գրաւ դնես: Աշխարհ է  
կարող է պատահի, որ ոչ պարտքդ կարողանաւ տալ և ոչ տոկոս-  
ները: Էն ժամանակ ամեն ինչ իմ վզիս կը մնա, որ պարտքը իմ  
անունով է: Մի քանի մարդ կը բերենք էս բանը նրանց կ'ասենք:  
Միւնոյն է, որիշն էլ էս բանը քեզ կ'ասէր, պատճառը, որ  
օրէնքը էգուէս է:

Յետոյ քիչ էլ միտք արեց ու աւելացրեց՝

— Մէկ էլ այգու եկամուտը պիտի կիսենք: Կարող է պատահի  
որ դու իսկի չը կարողանաս փող ուզարկել, էն վախուը տոկոսը  
ինձանից են առնելու և ես ստիպւած պիտի տամ: Դրա համար  
եմ ասում եկամուտը կէս անենք:

Մտածեցի. աս որ ինձ համար ցաւում է, ուզում է օգնի, պա-  
ինչու գրաւ է ուզում: Ասացի, զէ մարդ է, հալբաթ չի հաւատում,

կասկածում է: Են վախտը ազ էր միտք անում, թէ, ոչ եղած փեսաս էսպիս շար մոքեր է ունեցել գլխումը: Լաւ, պա եկամուտը ինչն է կէս անում: Ասացի, հայրաթ դա էլ ինձ արած լաւութեան վարձն է: Որ ուզում է, ինչ: արած: Իսկ որ ես էն ժամանակի իմանացի, թէ դա ինչ զաւակ է, պա իսկի կը լոէի նրան:

Ազտեղ լոեց Աահակ ապերը, թափահարեց գլուխը, հանեց զրպանից մի պատուած և համարեա սեացած թաշկինակ, սրբեց քիթն ու շարունակեց:

—Գործերս միամիտ կերպով էնպէս էլ վերջացրի, ինչպէս Մկրտիչն ասաց, ու ինքս ճանապարհ ընկայ զէպի քաղաք: Մի տարի է, որ զարիբութիւնում եմ: Մինչեւ հիմայ 40 մանեթ փող եմ ուղարկել զիւղը, որ համ պարտքից տան, համ մի 10-15 մանեթ տանեցիք վերցնեն: Փողը նրա անունով էի փոշո գձել: Կնիկս էր նամակ ուղարկել, թէ փողը ստացանք: Համ էլ զրել էր, թէ Մկրտիչը մի ուրիշ կերպ, խեթ-ինիթ է նայում մեզ վրայ, երբ այդին ենք գնում: Ասացի, տէր Ասուած, դա ինչ նշան է: Ազգին իմը, նա բարկանայ տանեցոց վրայ: Զար կասկածը նեղացնում էր ինձ: Վատ մոքեր էր անցնում դլխովս: Եւ էդ ամենն էլ ուղիղ եղաւ: Մի երկու շաբաթ որանից առաջ անից էլի նամակ ստացայ, որտեղ գրում են, թէ Մկրտիչը այդու եկամուտը չի կիսում մեզ հետ, այլ սաղ ինքն է վերցնում: Ասում է՝ մենք էրպէս բան չենք խօսացել: Համ էլ տանեցոց չի թողնում: որ ոոք դնեն այգում, հայհոյում, զուրս է անում:

Մէկ էլ գրում է, թէ Մկրտիչը գերաններ է առել և ուզում է հնձանը քանդի, նորից շինի: Կնիկս գնում ասում է, որ էդուս բան չանի, Մկրտիչն էլ բարկանում, անողատուում է կնոջս և ասում: գուրս էստեղից, էտ քո գործը չի: Հիմայ ես շատ վախենում եմ. վայ թէ զլխիս մի օյին բերի, այգիս ձեռքիցս խլի: Ես էստեղ նստած, նա էնտեղ տեսնես ինչ թալակներ է սարքում: Էս երկու շաբաթումը բողազովս հաց չի անցկացել: Որ ասում են ժամանակումս բարեկամից էլ փայտայ չը կայ, սուտ չեն ասում: Էս է եղել Մկրտչի արած բարութիւնը:

—Լաւ, պայմանաթուղթ չունէք ձեր մէջ, հարցը ես:

—Ինչ պայմանաթուղթ, նա ասաց՝ քո տեղ փող կը վերցնեմ,

պարտքդ կը տամ, այգիդ ինձ մօտ գրաւ կը դնես, իսկ ինքդ կը զնաս փող կ'աշխատես կ'ուզարկես, որ պարտքդ տանք վերջացնենք։ Համ էլ թէ եկուսնուալ կը կիսենք։ Պայմաթզթում էդ է գրւած։ Դէ ես նրան բարեկամն եմ համարել, նրանից եմ՝ պարտք վերցրել։ Ուրիշից չէի կարող, ամս ուրիշն չէի հաւատում։

Ծերունին խօնարհեց զլուխը և բնկղմւեց վշտերի աշխարհը Արքան խղճալի, որքան ցաւալի արտայատութիւն ստացաւ նրա գէյքը վերջին խօսքերից յետոյ։ Անկասկած նրա միտքը ամբողջապէս զբաղւած էր Մկրտչի անարդար վարժունքով։ Եղքան էլ չարութիւն, էդքան էլ անխղճութիւն—ահա այն մոքերը, որ կարծես պատում էին նրա զլխում։

—Լու, ի՞նչ պատճառով նա պիտի վերցնէ այգիդ։

—Ես զի՞տեմ։ Ամեն մի աղւէսութիւն կ'անի, կը վերցնի էին Քիչ բարեկամներ ունի։ Որ մաքումը զրել է, էնպէս կ'անի, որ ձեռքից կը խլի։ Անխիղճ, անաստւած մարդու համար էլ կ'ասն, թէ ինչպէս կ'անի, էն էլ զիւղերմւեմ։ Էնպէս թալակներ կը սարքին որ... գրաւ համար հաւատ շատ պատճառներ։ Էնպէս էլ փաստքաններ են գուրս եկել զիւղերում որ...»

Ես մտածեցի ու ասացի.

—Անշուշտ նա պատճառ չկը բերի այն, թէ եկեղեցին վազ պահանջում է (նա ացդ կաշառքի միջոցով զլուխ կը բերի), յետով կ'ասէ, որովհնատե գու զեռ փողը չես ուզարկել։ Իսկ եկեղեցու պահանջի համաձայն ինքը պիտի վճարէ պարտքը, ուստի նա պիտի անում է ստիպւած և վերցնում է գրաւ գրւած այգին։

—Ե՞հ, թող Մկրտչին մնամ պարու Եթէ նա իմ լաւս է ո՞գում, թող քիչ էլ յետոյ ազատւեմ պարտքիցաւ

—Բայց որ մտագրւել է անսպատճառ վերցնել այգիդ, էլ այլ այդպիսի մոքեր կ'անէ։

—Պա իմ ասածն էլ հէնց դա չէ, արտասանեց ծերունին թառանձին հառաջանքով և զլուխ օրորելով։ Նրա երեսը քանի գնում, աւելի մռայլ, աւելի գունատ կերպարանք էր ստանում։

—Լաւ, միթէ Մկրտչին չէիք ճանաչում։

—Համ լաւ չէի ճանաչում, քանի որ քաղաքից նոր էր եկել ի՞ն համ էլ դէ ուրիշներին չէի կարող հաւատալ, զիտէի նրանք ի՞ն

գայլեր են, ամս նա իմ բարեկամն է։ Հիմս նա էլ դուրս է զա-  
լիս մէլիք Մէլքումի նման մի մարդ։ Պարսից ժամանակներում  
խաներից մէկը գալիս է մեր գիւղը և ուզում է մի աղջկան, որի  
վրայ առաջուց աշք է եղել դրած, իւր հետ վերցնի տանի։ Էդ  
բանը իմանում են զիւղացիք, աղջկատէրն էլ Խնդրում են, որ  
մէլիք Մէլքումը, ինքը մեծ իշխան, վերցնի մօրն ու աղջկանը  
իրա տանը պահի, խանից ազատի Մէլիքը էդպէս էլ անում է։ Մօրն  
ու աղջկան չի տալիս խանի ձեռքը, մինչեւ որ էդ անիծւածը  
հեռանում գնում է։ Ամա էդ միջոցում ինքը մէլիք Մէլքումը,  
էդ գէօռբագէօռը, ամօթ է ասելլ, խայտառակում է մօրն ու  
աղջկանը ու խանի գնալուց յետոց բաց թողնում։ Մեր էս Մկրտիչն  
էլ մէլիք Մէլքումի նման մի մարդ է դուրս գալիս Հաւատում եմ,  
հողս նրան պահ տալի, որ խանի նման մարդիկ չը խլեն, ամա Մկրտիչը,  
որին հաւատ էի լնծացել, ինքն է իր ճանկը գցում։

Նա գարձեալ լրեց և երկար ժամանակ ոշինչ չէր խօսում։

—Դուք լաւ կ'անէք, որ գնաք գիւղը, մէկից փող վերցնէք,  
վարէք պարտքներդ եկեղեցուն և Մկրտիչ հետ հաշիւներդ վեր-  
ջապնէք։

—Ես ի՞նչ իմանամ, որ ուրիշն էլ նրա նման չի անելու։

Մերունին արտասւեց։

—Չէ, դու մի լաւ նամակ գրիր, է՞հ բան է, բալքի խղճաց  
ինձ, էդ բանը շանին Գրիր, ասա, էդ խղճմանք չի որ դու ես  
անում, Մկրտիչ։ Պա էդ անսաստածութիւն չի, էս հասակումն  
զրկես ինձ գիւղից և քաղաքի փողոցները անես։ Իմ նեցուկը,  
իմ միթարութիւնը էն մինուճար հողս է, էն ուզում է խլի  
ձեռքից։ Այսր ես ուրիշներին չհաւատալով էդ բանը արեցի։ Պա  
ամօթ չի, ուսեալ տղերանց հետ նստում է վեր կենում։ Աղջկե-  
րանցս խղճաց։ Էսայէս մի քանի բաներ գրիր, քեզ մասազ։ Է՞հ,  
մարդ է, գուցէ սրտի մէջ ուահմ լնկնի, շար սատանան գլխիցը  
դուրս գայ։

Նա վերցրեց բաժակը, որ արդէն սառած էր և սկսեց միջին թէյլ  
խմել։ Ես հասկացաց, թէ գործը ինչումն է, և Մկրտիչը խկոյն պատկե-  
րացաւ իմ առաջ։ Մերունու խօսքերից երևում էր, որ նա գայ-  
էր գառանմիրթով։ Նա անշուշտ ուսեալների առաջիրան ձևացնում էր,

թէ իբր ինքը ևս հետաքրքրւում էր այն ամենով, ինչով որ նրանք, որ ինքը ևս նոյն գաղափարներն ու ձգտութներն ունի, ինչ որ ու սեալները։ Դրանով նա թող կը փշէր ուսեալների աչքերին, իսկ ժողովրդի մէջ մանելով մարդիկ կը խեղդէր։

Դրանք էլ նոր տեսակի գացլեր են։ Առաջ բարեպաշտութեան, եկեղեցասիրութեան և աստւածավախութեան դիմակի տակ էին մարդիկ խեղդում, իսկ այժմ սկսել են ինտելլիզենտի դիմակ առնել և նոյնպէս մարդիկ խեղդել, նրանց արիւնը խմել, մարմինը դէն գցել, կարծելով թէ միշտ կարող են ծածուկ պահել իրանց բարոյական մերկութիւնը։

Ես իմացայ ծերունու ցաւը ևաւ էր գիւղում ապրել աղքառ, քան յաւիտեան զրկւել գիւղից և այն կտոր հողից, որ նրա յոյսը նեցուկը և միմիթարութիւնն էր։

Նամակի մէջ մոցրի այգ խօսքերը և դրա առիթով յայտնեցի մի քանի մաքեր, որոնց մասին Սահակ ապերը իւր սկատմութեան մէջ կցկառուր, ոչ այնքան որոշ կերպով ասել էր։ Զկարողացայ սաւ նասրտութեամբ դիմել Մկրտչին։ Ես նրան համեմատեցի մելիք Մէլքումի հետ, որը բարոյապէս ընկած և ամեն մի սրբութիւնց գուրկ լինելով, ի չարը գործ դրեց ժողովրդի հաւատը և բռնաբարեց իւր մօտ փրկութեան յոցսով պատապարւած մօրն ու աղջկան Մատնացոց արեցի և այն նոր տիպերի վրայ, որոնք, ինտելլիզենտի դիմակ առած, մարդիկ են խեղդում և արիւն ծծում։

Ծերունին սուցաւ նամակը, չսպասեց ընթրիքի և շնորհակալութիւն յայտնելով դուրս գնաց։

Նրա և իւր ընտանիքի ցաւալի ու գուցէ դէսպի կորուստ տանող վիճակը երկար ժամանակ դուրս չէր գալիս մոքիցս։

### III

Անցաւ այն օրից մի քանի շաբաթ։ Այդքան ժամանակամիջոցում Սահակ ապօր ևս միանգամ միայն պատահեցի։ Իմ հարցին, թէ նամակ կայ Մկրտչից, նա պատասխանեց տխուր և մոախոն եղանակով։

— Զէ, մարդ է, որ պատասխան գրի։ Հալա սպասում եմ։  
Ես շատ էի հետաքրքրւում, թէ Մկրտիչը, արդեօք, նամակին

ինչ է պատասխանելու։ Իմ վերջին հանդիպումից մօտ մի ամիս յետոյց, որի ընթացքում Սահակ ասզօրը երբէք չէի հանդիպել, մի երեկոյ Կիրակոսովինց կանոռորը գնացի նրան տեսնելու և հարցնելու, թէ դիւզից ինչ լուր կայ։

Մտայ բակը, թրիկացը Սահակ ասզոր սենեակի դուռը ես լսեցի, որ նա արագութեամբ վեր թռոաւ տեղից և շուտով բացաւ դուռը ես ներս գնացի։ Մի փոքրիկ սենեակ էր, սպիտակ ներկած, բայց զարդարանքով աղքատ։ Դէպի բակը նայող պատուհանի առաջ կանգնած էր մի հին, տեղ-տեղ այրւած սեղան, որի մի անկիւնում հեշտաեռ էր գրւած, իսկ հակառակ կողմում շարւած էին լամպաները և նաւթամանը։ Երեաց, որ նա մաքրում էր լամպաները, երբ ես թրիկացը դուռը։ Դուան հանդէս պատի տակ զրած էր հասարակ մահճակալ, որը ծածկւած էր մի հնամաշ վերմակով։ Բացի մի հասարակ աթոռից, աւելից, ածխամանից և պատից և կախ արած լամպի խոզանակից էլ ուրիշ զարդարանք չկար սենեակում։

Սահակ ասկերը շատ ուրախացաւ իմ ացելութիւնից, առաջարկեց ինձ սենեակի միակ աթոռը, իսկ ինքը նստեց մահճակալի մրայ։

—Հը նամակ գրել են, թէ ոչ, եղաւ իմ առաջին խօսքը։

—Կայ, պատասխանեց նա հեգնօրէն և ձայնը երկարացնելով։ Յետոյ ծոցից հանեց նամակը և ինձ տւեց։ Մկրտիչիցն էր, նամակիս պատասխանը։ «Այն պարոնը, գրում էր նա, որ գրել է քեզ համար այս նամակը և ինձ զայլի հետ համեմատել, իմ հասցէին ամեն տեսակ կեղտուս բաներ ուզրել, պարզ է, որ կամեցել է ինձ խայտառակել, անսպառել և ի հարկէ այդ էլ քո կամքով։ Այնքան անհասկացող ես դուրս եկել, որ չես տեսել, թէ դրանով իմ պատիւը վիրաւորում ես և իմ արած լաւութիւնը մոռանում։ Դրան ստում են ապերախտութիւն։ Այս նամակը գրողին էլ ասա, որ մարդիկ քեզ նմաների ասածներին եթէ լսեն, հիմա աշխարհը քանդւած կը լինէր։ Քաղաքում նստել է մեծ-մեծ բրդում։ Այն խելքը թող իրա համար բանեցնի, ինձ հարկաւոր չէ։ Իսկ ես իմացածը կ'անեմ այսուհետ։ Դէ որ մարդիկ այնքան են կուրանում, այնքան ապերախտ են գտնուում, որ արած բարերարութեան փո-

խարէն ամեն տեսակ վիրաւորանք են հասցնում, հարկաւոր է արած լաւութիւնը յետ վերցնել և վատութեանը վատութեամբ էլ պատասխանել: Եշերի հետ էշաւարի պիտի վարւել: Ես իմ գիտեցածը կ'անեմ:

Այս էր նամակի բովանդակութիւնը: Ճիշդ Կրիլովի «Գայլն ու գառը» առակը:

Կարդալու միջոցին ես երթեմն աչքերս ապորն էի գարձնում և տեսնում, թէ ինչպէս խեղճը ամաչում, քաշում էր, լսելով Մկրաչի ինձ ուղղած խօսքերը. իւր գէմքի արտազայտութեամբ նա կարծես ուղում էր ասել. «Նրան մի լսիր, ի սէր Աստծոյ, նրա խելքը զլիին չէ, նա չի իմացել, թէ ինչ է գրել. քեզ մատաղ, մի նեղանար, մեղաւորը ես եմ, որ քեզ գրել եմ տւել նամակը և հիմա քո սիրով պիտի կոտրուի»:

Իմ ենթալլրութիւնը սիսալ չէր:

—Պարոն, մի նեղանար, դարձաւ նա գէպի ինձ խնդրանօք, ականջ մի գնիր նրա ասածներին, ինչ գրել է, զլսին տւած:

—Ես չեմ նեղանում, միամիտ կացէք, բայց ինձ մի բան է անհանգստացնում, վայ թէ Մկրտիչը հողը իւր ձեռքը դցած լինի արդէն: Նրա նամակից երևում է որ վճռել է այդ բանը անելու:

—Պա ի՞նչ, պա ի՞նչ, ասաց ծերունին հառաչելով:

Մի քիչ միամուռում եմ նրանով, որ տանեցիք ոչինչ չեն գրում: Ախր եթէ էգակէս բան լինէր՝ տանեցիք իսկոցն կը գրէին, չե՞:

—Իհարկէ:

—Լաւ, որ էղակէս անաստածութիւն արած լինի, էն վախով էլ ճար չի լինիլ էլի՞, հարցրեց նա փոքր ինչ անտարքերութեամբ և սառնութեամբ:

Ես տառանում էի պատասխանել:

—Հօհ, նրանից յետոց էլ ոչինչ չեմ կարող անեմ:

—Դժւար է, պատասխանեցի ես մտախոհ և զլսակոր:

Նա ես կախեց գլուխը և մտածմունքների մէջ լնկղմւեց: Ես աչքերս երթեմն գաղտագողի նրա երեսին էի գարձնում: Ո՛քան նիհարել, որքան գունատել էր այդ մարդը սկսած այն օրից, երբ տռաջին անգամ գրաւել էր իմ ուշադրութիւնը: Առողջութեան այդ քայլքայութիւնը ցոյց էր տալիս, որ ծերունու հոգեկան և

բորբական ցաւը շարունակ տանջում և ուտում էր նրա հոգին ու մարմինը:

Ես զարմացայ մի բանով, որ Սահակ ապերը Մկրտչի նամակի վերաբերմամբ այս անգամ հեղնական եղանակով խօսաց: Նամակի մես իմ գիտեցածը կ'անեմն խօսքերը. նրան վախեցրած պիտի լինեին և նա դէպի ինձ սարսափահար պիտի դիմէր: Բայց երեւի այն ցաւը, որից ազատւելու մասին նա շարունակ լարւած մտածում էր, արդէն նրան այն եղակացութեանն էր հասցրել, թէ այլ ևս ձար չկայ: Այնուհետ ցաւը կատարելապէս կը յաղթէր, կ'ընկճէր ծերունուն իւր տակ: Զոհի մէջ նախ ցառաջ կը գար յու սահատութիւն, իսկ յետոյ սառնասրուութիւնը և անտարբերութիւնը դէպի ցաւը կամաց-կամաց սերմեր կը գցէին նրա հոգու մէջ: Կամ գուցէ այնքան ուժեղ էր նրա մէջ ազատութեան յոյսը, որ նա Մկրտչի խօսքերին լոկ արհամարանքով էր վերաբերւամ, այնքան բանի տեղ չէր գնում:

Երկուսս էլ լուս մտածում էինք: Վերջապէս ես խօսեցի:

—Դիտեք թնչ, Սահակ ապեր, ես ձեզ համար փող կը գտնեմ, դուք կը ճանապարհւեք գիւղը, կը տաք Մկրտչին այդ փողը և կ'ազատեք ձեր այգին:

—Եսոտեղից էլ պարտք վերցնեմ:

—Զէ, զա պարտք չի լինի, այլ օգնութիւն իմ մի քանի ընկերներիս կողմից, որոնք անշուշտ գլուխ կը բերեն այդ օգնութիւնը:

Նա ոչինչ չպատասխանեց:

—Ես շուտով հարկաւոր գումարը կը պատրաստեմ և դուք վաղը կամ միւս օրը կը ճանապարհւեք դէպի գիւղը: Որքան շուտ, այնքան լաւ:

Սահակ ապերը ոչինչ չէր պատասխանում: Նա ասես շշկւած էր: Իմ առաջարկութիւնը նրա համար երազի նման մի բան էր երեւում, որից նա ապշել էր: Ացդպիսի մի գործ իւր կեանքում երեւի նա դեռ չէր տեսել: Նրան թւում էր, թէ իւր ցաւից այդպէս հեշտ և միանգամից ազատւելը անսպասելի, աներեւակայելի մի բան է, որ զա կատարեալ հրաշք և զարմանք է: Ծերունին չղիտէր ինչ ասէր:

— Թող այսպէս լինի, ասացի ես, և գնամ և հէնց այժմեանից հոգամը փողի մտախն:

Սահակ ապերը լուռ էր, մտախոհ և դարձեալ ոչինչ չէր պատասխանում:

— Դէ բարի գիշեր, ասացի ես, վերկենալով տեղից, ու դուրս եկայ սենեակից:

Փողոցում դէպի տուն գնալուց ես մոքումն կազմում էի անանձերի ցուցակը, որոնցից նպաստ պիտի խնդրէի:

## IV

Երեք օրւայ ընթացքում ես կարողացայ ժողովել մօտ հարիւր ըուրիշի փող, որի նւիրատուները համարեա ամենքն էլ գրասենեակում ծառայողներ էին: Ես պարզեցի նրանց առաջ թշւանձերունու խղճալի դրութիւնը և նրանցից համարեա խրաքանչիւրը ուրախութեամբ իւր ոյժի համեմատ այդ գործին օժանդակից:

Ծերունու հետ վերջին տեսակցութիւնիցս երեք օր անցած ես, դարձեալ երեկոյեան, Կիրակոսովենց կանոռը գնացի, որ փողը Սահակ ասորը յանձնեմ և հետեւեալ օրը նրան ծանապարհեմ դէպի գիւղ: Ներս մտայ բակը և բախեցի սենեակի դուռը մի քանի անգամ: Քիչ յետոց բացւեց այդ և մի անձանօթ դէպի դուրս եկաւ՝ վրաս զարմանքով և հետաքրքրութեամբ նացելով:

— Տանը չ՞ Սահակ ապերը:

— Չէ, էստեղ չի:

— Կը գայ շուտով, որ սպասեմ:

— Չէ, նա էստեղ չի. էս է երկու օր է հիւանդ է, բախիցումը (հիւանդանոց) պառկած:

— Ինչու, ինչ է պատահել, հարցրի ես վախով ու կասկածով:

— Ես գիտեմ, պատահեց էլի:

Ներս մտայ սենեակ լի հետաքրքրութեամբ և լուսաւորութեան ներքոց տեսայ Սամոնի (այսպէս էր անձանօթիս անունը) դէմքն ու հասակը: Դա մի կարճահասակ, հասողիկ, երեսը լիքը աշքերը սե, մեծ.մեծ և շարունակ զարմանք ու հետաքրքրութիւն արտացատող երիտասարդ էր, որը, ինչպէս իմացայ յետոց, Սահակը համագիւղացին էր:

Ես վերցրի սենեակի միակ աթոռը և նստեցի:

—Դէ պատմիր, Սամսոն, տեսնենք այդ ի՞նչ բան է, հարցրի  
ես արագաշունչ:

—Պատահեց էլի, Աստւած հեռու տանի էղպէս ցաւը ևաւ,  
դու Սահակ ասպորը լաւ ես ճանաչում:

—Այս, ես նրա բոլոր ցաւերը գիտեմ:

—Հման, ասն, ուրեմն դու կ'իմանաս, որ նրա եղբօր փեսան  
Մկրտիչը ուզում էր նրա մինումար հողը իր ձեռքը դցի:

—Գիտեմ, գիտեմ:

—Եղպէս էլ արեց Մկրտիչը, նրա զլիին քար ընկնի, հողը  
հաստատեց իր վրայ, ալեորի պարտքն էլ աւաւ:

—Յետոյ:

—Յետոյ... Էն է, ես էդ օրերումը ճանապարհ ընկայ դէպի  
էստեզ: Սահակ ասպոր կնիկը մի նամակ էր տւել բերեմ: Ես էլ բե-  
րայ տւեցի իրան: Որ իմանացի էդ բանը գրել են, իսկի չէի տալ:  
Հասայ քաղաքը, էս կանտորը գտայ ու վեր եկայ Սահակ ասպոր  
մօտ: Ինձ տեսաւ, համեցէք արեց, շատ ուրախացաւ, ասեց, լու-  
ես արել, որ եկել ես մօտ վեր եկել: Ուրիշ տեղ գնացիր, զուր  
փող պիտի մնխէիր: Քիչ յետոյ սամաւարը դուրս տարաւ, կրակ  
դցեց ու էլի ներս եկաւ: «Ճ՞՛կ, Սամսոն, ասաց, դէ պատմիր, քեզ  
մատաղ, մեր տանեցիք ինչպէս են եօլայ գնում: Ասում էն ցորենը  
թանգացել է: Մեր էն սեերես Մկրտիչը իսկի մերոնց նայում է:  
Ինչպէս արեց: Սի նամակ էր գրել, երեսում էր, որ ուզում է տունս  
զիմիս քանդի: Էղպէս բան խոմ չի արել: Ասեցի, չեմ իմանում,  
սուտ ասեցի: Տանեցոց նամակն էլ իրան տւեցի, ասեցի առ, կար-  
դայ, եթէ էղպիսի բան լինի, գրած կը լինեն: Էս որ ասեցի, խեղճ  
ալեորը իմացաւ, որ սուտ եմ խօսում և շատ վախեցաւ: «Այ  
տղայ, ասեց, չլինի էդ անիծւածը ուզածն էլ արել է: Հը՝ արել  
է, Սամսոն, ախր դու կ'իմանաս, ի՞նչու ես սուտ խօսում: Քեզ մա-  
տաղ, գիւղը ասս, այգին իր ձեռքն է դցել, հիմա նրանն է էլի:  
Ի՞նչու չես խօսում, այ տղա, ախր սիրոս հայ է անում դուրս  
դայ: Էդ սհաթին Սահակ ասպոր երեսի գոյնը դառել էր էս սիսլ-  
տակ պատի գոյնը, իսկ կերպարտնքը՝ խղճալի: Նրա պոօշները  
դրդողում էին:

Նամակը տւեցի իրան, ամս շատ էի խղճում ալեսրին, որովհետեւ զիտէի թէ ինչ գրած կը լինեն նամակում: «Նամակը տւել ես ինձ, ինքդ լավկւել, գողգողալով ասաց Սահակ ապերը, ի՞նչ ես սուս արել, ես նամակ կարդացող եմ, որ ինձ ես տւել, ասա ինչ որ զիտես»: Նա սկսեց լաց լինելու: Այ Սահակ ապեր, որ իմանամ, կասեմ էլի, ինչու եմ ծածկում: Էս ասեցի և նամակը առաջ ձեռքից: Կարդալը քիչ զիտեմ: Բաց արեցի նամակը ու կարդացի. «Տուններս քանդւեց, սուգ ու շխանի մէջ ենք ընկել, Մրկանը ացգին խլեց մեզնիդ, փողը տւառ և մելիքի<sup>1)</sup> ու սուզեանների<sup>2)</sup> ներկայութեամբ ացգին հաստատեց իւր անւանը: Հիմայ ինչ անենքու: Հէնց էս երկու շարքը կարդացել էի, որ մին էլ անենեմ Սահակ ապերը թուլացաւ, աչքերը շազւեցին, սաղ մարմար դրղլողաց ու յանկարծ ուժեղ կերպով փաւեց գետնին: Վարաց վազեցի, տեսայ ուշքը դնացել է: Չուր գտայ, բերայ, գլխին ածեցի, ոտքն ու ձեռքը հարեցի, ուշքի եկաւ, ամա էլ չը կորսղացաւ տեղը կանդնի: Մի կողմը թուլացել էր: Վայ էն, որ խօսում էր: Խառնեցի դրեցի մահճակալի վրայ, պառկեցրի, և ինքս կողքին մնացի նստած մինչև առաւօտ: Երբ լուսացաւ խաղէցիններին յայտնեցի էր բանը, նրանք էլ չը զիտեմ՝ ում ասացին, եկան Սահակ ապօրը տարան բալնիցա<sup>3)</sup>: Հիմայ էնտեղ սպառկած հիւանդ է: Երեկ գնացիլ էի տեսնելու, ասես լաւանալու յոյս չկայ:

Ես մնացել էի լուս և շւարած: Ահա թէ որքան էր նրա սերը դէպի զիւղը, դէպի հողը, այն էլ մինուճար, աչքի լոյն պէս պահած հողը, նրանից զրկւելու բօժը ծերունուն անդամալոյժ էր արել: Ճիշտ է, որ զիւղացին առանց հողի՝ ցամաք լնկած ձկան նման է: Որքան էլ լայն հասկանալու լինենք այդ միոքը գարձեալ նա ճիշտ է:

Եւ ացդպէս հիւանդ սնոց ընկաւ Սահակ ապերը, զրկւելով իւր մինուճար հողից, որը նրա կեանքի վերջին նեցուկն էր և որին ապաւինելով իւր յոյսը, պայծառ օրերի էր սպասում: Անդա հայց եղաւ խեղճ ծերունին, սարսափահար լինելով այն խոր անդունդից:

<sup>1)</sup> Գիւղի տանուառէր. <sup>2)</sup> Պատաւոր (ոռաւ). <sup>3)</sup> Հիւանդանոց (ռուսերէն):

որ նա տեսաւ յանկարծ իւր առաջ այլ ես անդեկ, անձար ու աղքատ գրութեան մէջ:

Մի քանի վայրկեան լուս մնալուց յետոյ ես վեր կացայ տեղից, դուրս եկայ սենեակից և քայլերս ուզզեցի գէպի քաղաքացն հիւանդանոցը: Տեղեկանալով, թէ որ սրահումն է գտնւում Սահակ ապերը, ես ներս մասայ նրա մօտ: Ծերունին ինձ նկատեց այն ժամանակ միայն, երբ ես արդէն մօտեցել էի նրա մահճակալին: Նա բոլորովին նիհարւել և նւազել էր: Դէմքի արտայացութիւնը այնպիսի տպաւորութիւն էր թողնում, որ կարծես ծերունու սիրալ, թոքերը և ընդհանրապէս ամբողջ մարմինը հազիւ էին քարշ տալիս իրանց գոյութիւնը: Եւ երկար չէր աւելի այդ քայքայւած, չարդւած կեանքը: Նոյն բանը ասաց ինձ յետոյ բժիշկը, երբ ես նրանից տեղեկութիւն հարցրի հիւանդի զրութեան մասին: «Սիստ յառաջադիմող պարալիչ (կաթւած) է, որ շուտով վերջ կը տայ ծերունու կեանքին», ասաց բժիշկը իւր առանձնասենեակի մօտ, երբ ես զուրս էի գալիս հիւանդանոցից:

Սահակ ապերը ինձ տեսնելուն պէս մի թեթև ժակաց: Երևի իմ այցելութիւնը նրան ուրախութիւն պատճառեց: Բայց յետոյ իսկոյն նրա շրթունքները զողացին և արտասուքի կաթիլները սկսեցին հանդարտիկ գլորւել նրա աչքերից: Տեսնելով իւր մոերմին, անշուշտ նա աւելի խոր զգաց իւր թշւառ և անբախտ զրութիւնը, գառն վիշտը աւելի խոր խոցեց նրա սիրալ և ծերուկի աչքերը արտասւակալեցին:

— Սահակ ապեր, սա ի՞նչ է պատահել ձեզ, դարձայ ես գէպի նրան: Հարցս այս անգամ ևս ցնցեց նրա փափուկ սիրալ և ծերունին սկսեց մեզմ կերպով հեկեկալ: Ես ևս յուզեցի, կուրծքս ծանրութիւն զգաց, կամեցայ խօսել, բայց ձայնս խեղդւեց կոկորդումն: Մի կողմ քաշւեցի, որպէս զի հիւանդից թագցնեմ արտասուքս: Եւ երբ ներքուստ փոքր ինչ թեթեւութիւն զգացի արտասուք թափելուց յետոյ, ես կրկին մօտեցայ հիւանդին ու հարցրի:

— Սահակ ապեր, ինչպէս էք զգում ձեզ:

— Է՛հ, վատ, շատ վատ, պատասխանեց նա նւազւած ձայնով: Նրա աչքերում գեռ չէր ցամաքել արտասուքը, իսկ այտերից մէկի վրայ դեռ մնում էին երկու խոշոր կաթիլներ:

—Մի յուսահատւեք, ասացի ես, Աստծուն փառք, կ'առողջանաք  
—Կ'առողջանամ... հը՝ (դառն քբքիջ էր այդ), սրանից  
յեղոյ պա ես էլ առողջանցող եմ: Վաս, անաստած մարդը մէջք  
կոտրել պրծել է, ես էլ՝ էլ վեր կացող եմ: Իմ տունը  
քանդողի տունն էլ Աստած քանդի: Զէ, էլ իմ բանս պրծել է,  
Էնպիսի ցաւի չեմ պատահել, որ ազատւեմ:

—Յոյս կապեցէք Աստծուն, սրտպինդ եղէք, դա ձեր առող  
ջութեան վերականգման կը նախատէ:

—Նատ էլ յոյս կապեցի, Բ'նչ օգուտ: Աստած որ ինձ օդնող լինէր,  
Էնց էն է, առաջուց կ'օգնէր, իսկ վաս մարդկանց տներն էլ կը քանդէր:  
Ես ոչինչ չգուայ ասելու: Քիչ լուսութիւնից յետոյ շարունակեցի:

—Սիր այն փողն էլ ժողովել եմ: Հիմա ինչպէս անեմ, մաս-  
ծում եմ ուղարկեմ ձեր տանեցոց վրայ:

—Դէ ինչպէս ուղում ես. ես Բ'նչ անեմ, ինքոյ ինձանից լա-  
ես հասկանում: Մի բան եմ խնդրում: Էնպէս արա, որ տա-  
նեցիք հիւանդութեանս մասին շիմանան: Թող մեռնեմ, յետոյ իմա-  
նան: Խեղճ են, երկմիտ կը մնան: Ա՛խ, բալէքս, որ իմանաք ձեր  
հայրը ինչ օր է ընկել, սրտներդ կը ճաքի: Ճեռու տեղում, էս չորս  
պատերի արանքում, բարեկամների, ազգականների և զիւղին կա-  
րու: Ա՛խ, Մկրտիչ, էն աշխարհում ահեղ զատաստանին Բ'նչ ես  
ասելու Աստծուն արած տնաքանդութեանդ համար: Զան բալէքս  
ձեր ճարը Բ'նչ է լինելու: Ել դուք ոոք չէք դնելու իմ աչքի լրսի  
նման պահած ազգում, էլ մի հողի կտոր չէք ունենալու, որով ու-  
րախանաք ու ասէք. էս էլ մեր հողն է: Երկու կողմից էլ որբ էք  
մնացել հիմա. հօրից զրկւած, հողից զրկւած: Աչքներդ վեր չէ  
առնելու, քթներիցդ մուխ է դուրս զալու անգամ մեր ազգու մօ-  
տով անցկենալուց: Հալբաթ ես մեղաւոր եմ, որ Աստած ինձ էս  
պատիժը հասցրել է: Ամս ախր մեղաւոր չեմ: ոչ ոքի մի փառու-  
թիւն չեմ արել... ինձ անհեք շապք, բալէքս, անխիղճ մարդու  
տունը կրակ ընկնի, որ իմ տունս կրակ զցեց:

Դա դարձեալ արտասւեց, յետոյ փոխեց իւր դրութիւնը, տե-  
ղից մի փոքր շարժւելով և մնաց լուռ՝ աչքերը առաստաղին ձգած:

Դա մտածում էր անշուշտ իւր հիւանդութեան, ձեռքից դուր-  
եկած հողի և իւր թշւառ ընտանիքի դրութեան մասին:

Դրա համար նրա դեմքը այնքան դալկացած, այնքան վշտազին էր:

Քիչ յետոյ ես թողեցի հիւանդին, խոստանալով շուտ-շուտ յաճախել նրան: Հետևեալ օրը ժողոված գումարը փոստով ուղարկեցի Սահակ ապօր կնոջ վրայ իւր անունից:

Այսուհետ ազատ ժամերիս միշտ գնում էր նրան այցելելու: Հիւանդի դրութիւնը օրէցօր վատթարանում էր: Անդամալուծութեան հետ միասին թուլանում էր նրա սրտի դործողութիւնը: Խանդարւած էր և ստամոքսը: Այդ ամենը, որոնց դէմ բժշկութիւնը կուելու ոյժ չունէր, օրէցօր ծերունուն մօտեցնում էին գերեզմանի գոան: Եւ ահա մի օր, ուղիղ երկու շաբաթ իմ առաջին այցելութիւնից անցած, Սահակ ապերը չկար այլ ևս: Ծանր հիւանդութեանը նա չկարողացաւ դիմանալ և խեղճը մեռաւ հողին, ընտանիքին ու գիւղին կարօտ մնացած: Բայց նա զեռ յոյս ունէր գիւղ վերադառնալ, գիւղում ապրել և գիւղում մեռնէլ: Նա սկզբներում ուրախ էր, որ Մկրտիչը օգնութիւն էր հասել: Անզգալի կերպով կը տանէր երկու-երեք տարւայ պանդիստութիւնը, իսկ յետոյ ուրախ սրտով գիւղը կը վերադառնար տան համար քիչից շատից բերած, իսկ որ գլխաւորն է, հողը ազատած: Այդ էր նրա յոյսը, այդ ձգտութիւնը էր նրան եռանդ ներշնչողը: Բայց գայլ մարդը, որ ոչխարի մորթի էր հագել, խեղճեց նրան, խմեց արիւնը և այդպիսով վերջ տւեց նրա կեանքին: Ի՞նչու. որովհետեւ այդ կեանքը նրա աչքը ծակում էր, որպէս այդպիսի մի կեանք նա զուր, աւելորդ էր համարում: Այդ մարդը ներքուստ միշտ այս էր մտածում. ևաշխարհիս բոլոր աղքատները պիտի կուլ գնան հարուտոներին և դոչաղներին: Նա այդ համարում էր մի օրէնք և իւրաքանչիւր քայլափոխում աշխատում էր միայն առնել ու կլանել:

Խեղճ, խեղճ Սահակ ապեր: Սիրում էիր հողդ ու տունդ անահման սիրով, նա էր քեզ եռանդ ներշնչողը ծերութեան այդ հասակում, նա էր քեզ յոյս տալիս, թէ անշուշտ կը գան և պայծառ օրեր, վերջապէս նա էր քո կեանքի միակ նեցուկը: Բայց չար, անխիղճ և անզութ մարդիկ, որոնց սրտերում որդեր են պտաւում, որոնց ամբողջ ներքին աշխարհը նեխած ճահիճ է պատկերացնում, գարշելի զեռուներով լի, անդթաքար խլեցին քեզա-

նից այդ վերջին նեցուկը ևս վերջ տալով կեանքիդ, որպէս զի փոքր ինչ կշտանայ իրանց ծակ աչքերն ու անկուշ փորը, որպէս զի մութ անկիւններում առիթ ունենան դեացին ժպիտներ ու քրքիջներ արձակել:

Յաւալի էր, շատ ցաւալի:

Ներունուն թաղեցինք քաղաքի գերեզմանատանը: Անբախար յուղարկաւորութեանը եկել էին միայն նրա նման մի քանի թշւառ պանդուխտներ, որոնց մաշւած մռայլ և գունատ դէմքերը անսահման վիշտ ու ցաւ էին արտացացում:

Ուսուցիչ Սմբատ Ներսիսեանը իմ լաւ ծանօթն է, որ այժմ գտնուում է Սահակ ասզօր գիւղում: Նրանց նամակով հարցրել էի ծերունու ընտանիքի մասին: Ներսիսեանը պատասխանել էր, թէ այդ մարդու ընտանիքը անտանելի օրեր է կրում գիւղում քաղցած ու համարեա տկլոր: Վերին աստիճանի աղքատութիւնը ցեցի արագութեամբ ուտում էր նրանց: Թէ Սահակ ասզօր կա՞ և թէ նրա աղջկերանց մասին վատ լուրեր էին պատուում գիւղում:

Այդպիսի լուրերով հետաքրքրւող և ապրող հասարակութիւնը վերջապէս հանգիստ առաւ և գնաց մնաւոր ուրիշ պալատ որո՞նելու, երբ Սահակ ասզօր մեծ որդին քաղաքից վերադարձաւ և գետնին մնացած մնանկ ընտանիքը իւր հետ տարաւ քաղաք: Թէ ինչպէս են ապրում քաղաքում, այդ անցաւ է: Միայն լուրեր են հասում, թէ որդու գործերը այնքան յաջող չեն և թէ նրա մայրը փոքր ինչ ցնդւել է խելքից: Ոմանք ասում են դրա պատճառը այն է, որ որդին մօր հետ շատ վատ է վարւում, իսկ ոմանք էլ պնդում են, թէ խեղճ կինը շատ է մոտածում՝ գիւղի մասին և սրա կարօտը քաշում: Աղջիկները դեռ մարդու չեն գնացել:

# ԱՆՏԵՐ ԳԵՐԵԶՄԱՆ

(Սերբիական երգերից)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈԽԵԱՆԻ

Ահա գերեզման՝ մոռացւած, անտեր,  
Ուր հանգչում է այն հերոսն անվեհեր,  
Որ հայրենիքի սուրբ սիրով վառւած՝  
Նորան էր մատաղ կեանքը նւիրած:  
Նա թաղւեց իւր շար ոսոխի ձեռքով՝  
Անլաց, անդագաղ, ինեղմ, անտիրական.  
Ոչ խաչ է կանգնած, ոչ էլ քար դըրւած  
Անմահ հերոսի սուրբ շիրմի վերան:

Սիան դեռաբոյս համեատ ուռենին  
Կանգնած է մենակ լոցն զաշտի միջին.  
Նո զիշեր ցերեկ գոռում է, գոչում  
Կատարը թեքած զէպի գերեզման,  
Եւ այնտեղ նիրհող հերոսին պատմում  
Հայրենի երկրի վիճակն անպաշտպան.  
«Դեռ չար ոսոխի ծանլը լըծի տակ  
«Տնքում, հեծում՝ է քո խեղմ հայրենիք  
«Եւ ազատութեան փայլուն արեգակ  
«Դեռ նա չի տեսնիլ... Կ'անցնեն շատ տարիք...  
«Քո հայրենիքում սակաւ են քաջեր,  
«Եւ զեռ զօրեղ է թշնամիդ դաժան.

«Ամեն տեղ ճնշում, ամեն տեղ աւեր.  
«Ամեն տեղ արթիւն, լաց, կոծ ու շիւան...»

Ուսին լոռում է... Բայց վայրկեան շանցած,  
Դարձեալ թեքւում է դէպի մոռացւած  
Յուրա գերեզմանը—և նորից գոչում.  
Նա ողբ է կարդում այն անբախտ, թշւառ,  
Տանջւած, հալածւած սորուկ աշխարհին,  
Ուր խոնարհուում է ամեն մի անճար  
Անարդ, բունակալ ոյժի առաջին...»

Մոսկւա:

## ԵՐԱԶ ՕՐԵՐ

(Գիշերօթիկի մի յուշատետրէն)

Շ Ա Ն Թ Ի

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

Օգոստոս 14

Գինովի պէս գնացեր եմ:  
Անբացատրելի ազմուկ մը ինծի քունէս ցատկել տւաւ։ Կէս  
վախած, կէս զարմացած սենեակի դուռը բացի, որ դուրսէն պինդ-  
պինդ կը զարնէի։

—Պարհնը, պարհնը եկաւ։  
Աչքերս շփեցի, յիշեցի, որ հօրեղբայրս գալու էր. Աստա-  
ծածնի տօնին Սևան երթալ ուխտ էր ըրած։

Թեժե մը հազնւելուս պէս դնւրս վագեցի։  
Թիֆլիսէն եկած թարմ լուրերու ազգեցութեան տակ երկու  
ժաման չափ անցած էր արդէն, երբ յայտնեցին Զ.-երու գալուստը։

Անոնք ալ եկած էին բարի-եկաքի ու նոր լուրերու։  
Ճաշին վար դրինք։

Տիկինը կը համոզէր Զ.-երը, որ ուխտին մեզի ընկերանան։  
Նախ քիչ մը չեմ-չում ըրին, բայց վերջը սկսան թուլնալ։ Տիկին  
նասալիս բարեպաշտ էր, ուխտի երթալը մերժելու կը դժւարա-  
նար. ալ. Կարապետ Սևան լիճը տեսնել կ'ուզէր, նկարչական տե-

<sup>1)</sup> Տիկինը Մուրան 1894 թ. № 11—12, և 1895 թ. № 1 և 2.

սակէտէն. Վարդուհին, ըսելն ալ աւելորդ, խենթի պէս կը ցան-կար, թէև կը ծածկէր:

Այս բոլորէն գիւրին է եզրակացնել անոնց ցուցուցած ընդիմութեան տկարութիւնը. վերջապէս զիջան ու մեկնեցան տուն անհրաժեշտ պարտաւորութիւնները տեսնելու համար. որոշւեցավ վաղը կէսօրին ճանապարհ ենիւր:

Վարդուհին լուրջ գէմք մը առած էր ու բոլոր ջանքերուն հակառակ՝ հետո առանձին մնալէ խուսափեց. քանի մը անզամ հետը խօսիլ փորձեցի՝ վռնուեց. մեկնելու ատեն ձեռքը սեղմեցի՝ զայրոյթով ետ քաշեց. միայն չիկրցաւ այն պատիկ ժպիտը սանձել, որ թշերէն յանկարծ սահեցաւ՝ իր կալքին հակառակ:

Աւրախութիւնս չափ չունի:

Մէջս ամեն բան իրար է խառնւած. կոտրելու մօտիկ աղեղի պէս լարւած՝ զգացումներս, Վարդուհիիս պատկերն ու քմահաճոյքները, առաջիկայ ճամբորդութիւննիս, լեռները, ծովը, Սևանի կապոյտ երկինքը և միշտ Վարդուհիին հետ գիշեր-ցորեկ:

Տունը կը պատրաստուէին:

Ես ուղղւեցայ գէպի Միքայէլենց. իրենց տան դուռը կեցած, կովուն գլուխը բռներ էր, մինչ կը կթէր:

Ելանք շրջելու. յայտնեցի ուխտագնացութիւննիս. առաջարկեցի մեզի ընկերանայ, բայց վախնալով, որ մի՛ գուցէ առաջարկս ընդունի. բարեբազուկաբար մերժեց. Աստւածածինը մօրն ու քրջը հետ ընել կ'ուզէր: Այս մերժումը վրաս լաւ ազգեց. երէկւան ինձի պատճառած տանջանքը կերպ մը քաւած եղաւ. ներեցի սրտի խորէն. դեռ տեսակ մը զիղջ ալ զգացի. ես մոքէս հայնոյէր էի այդ աղան, որուն բոլոր մեզքը ինծի սիրելը, պարզ լինելն ու մօրը եփած քիւֆսէն ինծի ալ կերցնելու փափագն էր եղած:

Աւշ ատեն իրարմէ բաժնւեցանք. զւարձութիւն մաղթեց ինծի հս ալ իրեն:

Օգոստոս 17

Յաբաթ օրը կէսօրին քիչ մը վերջն էր, որ կառքերը շարժւեցան: Կառք մը մերոնք, կառք Վարդուհիինք. ես ալ ձիուս վրայ որ ամբողջ գիւղի մէջէն Միքեի եղբօր փորձառութիւնն էր լնորած:

Խեղճ ձին թն: կը քաշէր ձեռքէս. մեկ առաջ կը վագէի, մէկ ետ, կը դառնացի կառքերուն շուրջը. թիթեսնիկի մը պէս, որ ճրագին շուրջը կը թռվուաց:

Մէջէմչ կը խօսակցէի ապ. Կարապետի հետ անխների աղմուկի մջէն հազիւ ձայնս լսելի ընելով:

Վարդուհին լուռ էր ու ծանր. իր լուրջ դերը կը խաղար: Ձիուս վրացէն երբ աշքերս վրան կը յառէի՝ հեռուն զիտելու ձևեր կ'առնէր զայրացկոտ, թէն շատ աղէկ դիտէի, որ անդին զառնալուս պէս հայե սցքը վրաս էր:

Ես այդ կ'ըզգացի ու ջիղերուս բոլոր ճարպիկութիւնը հանդէս էի դրած. առանձին յոխորտանքով մը սանձը կը քաշէի. և ձին կարծես միտքս կը հասկնար. ան ալ խրոխտ ու սիրուն ձևեր կ'ըստանար, գլուխը սիփաբար կը բարձրացնէր, բաշը կը թոթւէր ու կը խրինչար: Ես ու ձիս աղուոր անբողջութիւն մը կը կազմէինք. այն աստիճան, որ սպարնե Կարապետը յափշտակւած խոստացաւ ինձի այդ դիրքով նկարէ. լայնեզր յարդէ գլխարկը գլխուս. նեղ, ճերմակ տաբագով. քրէմ շապիկ մը վարդկապ կարմիր փողպատով. մէջքս գօռի և ուսլնդանութ ատրճանակիս տուփը. ծունկերուս ձգած էի ամառւ ան փալթոս, որ վայր ընկնելու աստիճան ծունկերս սահած էր, բայց ևս դիտմամբ չէի ժողւեր:

Կատակներով, աշքի խոսափումներով ու հանդիպումներով, շուրջերնիս գիտելով անցեր էր հինգ վեց ժամը, երբ լեռնադաշտակին մէջ ոլոր մըն ալ ընելով՝ ծովու երկնագեղ հայելին բաց. եցաւ առջիս:

Հանեցի ատրճանակս ու երեք հարւած տւի. ամենքը կառքերէն գլուխնին երկնցուցին: Տրկինները ջերմեռանդութեամբ խաչ կը հանէին. ճիշդ մեր գէմն էր Սևանի կղզին, որու սրածացը գագաթին բազմած էր մատուոի սրածացը գմբէթը, որու վրայ խաչն էր:

Քիչ մը վերջը ճանսսպարհը այլ ևս ծովու ափովն էր. միայն հետզհետէ կը բարձրանար գէպի լեռան լանջը:

Ամենքս ալ ծովը կը դիտէինք ու չէինք կը շտանար: Ես քանի մը հեղ անցած էի այս անցերէն, բայց այս անգամ առանձին հրապոյր մը ունէր կարծես. կարծես գէմքիս կը ժալտէր. ևս ալ քանի մը անգամ ծովու. երեսին ժպոեցայ:

Յանկարծ պարոն Կարապետը հակառակ էր ձի նստելու դէմ ունեցած գաղափարներուն, կամ, յաւելի ճիշտ, երկիւղներուն, փափագ յայտնեց քանի մը վայրկեան ձիս նստելու, կառքէն յոգնած էր:

Ես ւիրով համաձայնեցաց, մանուանդ աւելի սիրով, քանի որ կառքին մէջ իր տեղն էի բանելու քրոջը դիմաց:

Կառքը կեցաւ, ձիու վրայ տեղաւորեցի վախկու նկարիչս ու ցատկեցի կառքը:

Վարդուհին ամփոփեցաւ, ըստ կարելոյն ինծի լայն տեղ տալու համար, արտաքուստ յարգանք, ներքուստ սկախիմ:

Իրիկւան զովութիւնը սկսած էր. մենք լեռան սուերի մէջ էինք, Տիկինը հաստ կրիստոցին մէջ փաթթւած կը մրափէր կառքի ցնցման տակ, և քանի աչքը բանար տղան կ'ըզգուշացնէր ձին քշելէ: Սպասուհին լճով զբաղւած էր՝ Կատեան գրկած: Վարդուհին խոշոր շալի մը ծալքերուն մէջ թաղւած՝ երբեմն նիրհել կը կեզծէր, երբեմն հեռուն կը դիտէր միշտ իմ հայեացքէ խուսափել ջանալով: Բայց անկարելի էր. քանի մը անդամ նայւածքնիս իրարողարկին և ամեն անդամ աւելի թուլցած էր կեղծելու կարսող թիւնը. վերջին անգամ հաճոյքի ժպիով չկրցաւ ծածկել, պահ մը շրթունքները սեղմած անթարթ աչքերուս նայեցաւ ու արագ շարժումով մը դէմքը շալին մէջ թաղեց:

Ես սպասուհիի գրկէն Կատեան առի ու սկսայ անկուշտ համբուրել:

Կառքի ցնցումը ինծի նստարանէն վար կը սահեցնէր. ես ինք զինքս չիբոնեցի. քի: մը վերջը մեր ծունկերը իրարու յարեցան. աղջիկն ալ ասհած էր: Ծունկերս դողացին ու Կատեան պինդ մը գրկիս մէջ սեղմեցի, որ երկու թաթիկներովը վիզս փաթթւէր էր:

Վարդուհին իր դէմքը բոլորովին ծածկած էր շալի ու լայն գլխարկի եղերքին տակ. միայն իր կուրծքը կը տեսնէի, որ անհանդադիւն դարս շնչառութենէն կ'ուռաէր ու կը յաճնար սեղմած քորսէին մէջին:

Կառքի կանգ առնելը ազւոր երազէ մը արթըննալլ եղաւ ինծի համար:

Եկանք ծովու ափը՝ կղզիին ամենէն մօտիկ կէտրէ: Հոն հանդիպեցանք ստար խումբ մը գիւղացիներու, որոնք մեզի պէս ուխտի էին եկած իրենց ունիւչունիմով:

Քանի մը հրացան պարողեցին. ևս ալ նորէն առաճանակիս ձայնը հանեցի, նաւակ ստանալու համար: Պահ մը յերջը կղզիի ծովափի ծառերուն տակէն երեք նաւակ բացւեցան գէպի մեղի:

Երկուքի մէջ լեցւեցան մեր գիշացի ուխտակիցները, երրորդի մէջն ալ մենք տեղաւորեցանք: Ես նաւակի ծայրը մնացի կամքիս հակառակ:

Նաւակները ափէն հեռանալնուն պէս զուռնաշիները սկսան իրենց արևելեան եղանակները: Պառաւները երկիւզածութեամբ պղնձէ թասով լծի ջուրը կը խմէին. երիտասարդուհիները իրենց երփներանդ հագուստներու մէջէն, ուր տիրող գոյնը կարմիրն էր, իրենց երկար ու սև հիւսքերուն տակ գրաւիչ՝ մեզի կը դիտէին. մանաւանդ քաղզիցի աղջիկը, որ անոնց աչքին անշուշտ նախանձելի էակ մը կը թւեր իր բարակ բաց-վարդագոյն շրջազգեստին մէջէն, իր նեղ քորսէէն դուրս ցայտած կրծքով, իր կարճ մազերուն խոպոպներովը, որոնք ծաղկեսպատ գլխարկին տակէն առասութեամբ ուսերուն վրայ կը ծփացին. ձեռքը բննած սիրուն, նկարէն հովանարը, բրով աչքերը արևի վերջին ճառադայթներէն կը պաշտպաներ, զեղջկուհիներու հիացումը կամբողջացնէր:

Զուռնացի սուր ձայնը քանի կ'երթար կը սաստկանար. երիտասարդ ու շափահաս միաբերան կը խօսէին, կը խմէին Մերոնք լուռ էին և կը դիտէին քաղզեցու հպարտութեամբ:

Ես ալ կը դիտէի այդ խումբը ու կը ցիշէի անցեալը. կը ցիշէի մեր ուխտագնացութիւնները Ալսթամար: Հոգեկան ուրախ տրամադրութիւնս, որ արդէն սկսէր էր թուլնալ՝ նախ թեթև մտահոգութեան և վերջապէս տարտամ թափիծի մը տեղի տւաւ:

Զէ, սրտիս համար միշտ քաղցր պիտի մնան այդ խարխուն նաւակները, այդ ալիքներու ծփծփումը, այդ թմբուկի պինդ զարկերը, այդ կանացի խայտաբղյու նահապետական արդուզարդը, այդ առողջ, արճառ առնական գէմքերը, այդ համեստ դիմագիծերը, այդ հաստ ու բամբ ձայները, որ աշխատաւորի գոհ կուրծքէն կը վիժեն. ա, այդ բոլորը որքան ծանծթ է ինձի:

Երբ կղզի հասանք, մեզի գիմաւորեցին ու վանքի առենէն շնորհքով սենեակը առաջնորդեցին. սկստաւոր հիւրերէն էինք:

Թէև սթնելու վրայ էր արդէն, բայց հօրեղբօրս առաջարկով

բոլորս ալ անգամ մը մոտանք տաճար սրբութիւնները համբուրելու

Փոքր, մուժ եկեղեցիմը բազմամթիւ մանր մոմերու լոյսերը և խլրտող բազմութիւնն, որ երկիւղած կ'ազօթէր, վրաս ազգեցին, երկիւղած յուզումով խառն անուշ պատկառանք մը զգացի:

Տիկինները մօմերնին վառեցին, ազօթեցին, լացին և երամին բան վերջացաւ՝ դուրս ելանք:

Ընթրիքը կարճ տեսց. ամէնքն ալ յոգնած էին. ծածկոցներու մէջ կերպ մը փաթթւեցան ու պատկեցան, առտուն կանուխ պիտի ելնէին ժամերգութեան ներկայ լինելու: Իսկ ես քնանալ կրնացի Ռւթը տարւան անցեալը կենդանացեր էր աչքերուս դէմ. ելայ դուրս ու նասեցաց սենեակի սեմին. ձեռքերս երեսիս, արմուկներս ծունկերուս. սկսայ մտածել ու դիտել:

Սենեակներուն առջել, հրապարակին մէջտեղը, ծառերուն տակ՝ ամէն կողմ խմբւած էին գիւղացինները. անդուլ ազմուկ մը շուրջս, ուրախ ժխոր մը. հոն պզտիկներուն խժլդուքը, գետնի մէջ փորած օճախներու վրայ փայտէ շամփուրներով գարձող խոր վածին հոտը, մատաղներու սպարասառութիւնը, վանքի պաշտոնեաներուն իրարանցումը. անդին տղոց աշխոյժ պարը զուօնացի եղանակներուն տակ. հոն ազջիկներու ազատախօս անուշ երգերը, որ առիթէն օգտուելով կը թափէն իրենց սրտի ամիսներով ծածկած յուզումները, կը կանչեն քեարը», կը գովկեն. հոն ամէն ազջիկ սուր ու համարձակ ձայնով ու սրտին խորէն կ'երգէ իր իղձը, և ոչ գիտէ մօտը կեցած երիտասարդներէն որո՞ւն հոգին կը խոտիէ, ու կորիճը ալ չի կրնար գիտանար, ընկերներուն հետ կը միանց ազջկանց շրջանին. շրջանը կը մեծանայ, երգերը կը շեշտառուին, սրաերը կ'ալեկոծւին. մանչ ու ազջիկ փոխնեփոխ կ'երգեն տունտուն բացարձակ իրարու հետ սիրաբանելով. ու պարը կը զանաց ու կը գտոնաց խենթ մտածման մը նման, որ ուղեղէդ դուր շելներ:

Բայց, Աստւած իմ, այս բոլորովին նոյն պատկերն է, որ ասի տարիներ առաջ տեսած եմ ես իմ ծննդավայրս՝ հայրենիքիս մէկ ուրիշ անկիւնը: Նատ մը մուցւած ու սուրբ բաներ միտքս կու գան. յուզումն իր գագաթնակէտին կը համնի. զգացումներս կը բարդւին. ու այլ ես ինքզինքս զսպելու անկարող, մութի մէկ

առանց ոչոքէ քաշւելու՝ անձնատուր եղայ ինծի ճնշող թախիծին ու արցունքներս սկսան հոսել այտերէս վար. անուշ...

Բայց սխալած էի. տեսնող աչք մը կար. ուսիս թեթև զարկ մը զդացի յանկարծ. ու ամբողջ մարմնէս սարսուռ անցաւ:

—Ինչու այդպէս տխուր նստեր էք. լսեցի Վարդուհիի կարեկից ձայնը: Թէեւ չէք արժեր, բայց ինչ և է. ելէք միասին պտոյս մը ընենք:

Ես ինքզինքս մոռցած անոր նայեցած. լուսնի աղոստ լոցսին տակ արցունքս տեսաւ:

—Կուլմք. բացականչեց յանկարծ, մոռցաւ իր գերը, նստեցաւ ինծի կից, երկու ձեռքով բռնեց թեւս ու ակաւ բոլոր ուժովը սեղմել:

Այդ քաղցր շեշտը, այդ համակրանքի շարժումը գրգռւած չըղերս բոլորովին թուլցուց. ձեռքերովս դէմքս ծածկեցի ու սկսայ հեծկլտալ:

—Բայց ի՞նչ ունիք, ի՞նչ կայ. կը կրկնէր աղջիկը յուզւած, ինծի սեղմենք ու ձեռքերս երեսէս հեռացնել ջանալով:

Ես յանկարծ ինքզինքս ժողւեցի, կամքի բուռն ուժով մը լացս կարեցի, ցատկեցի ոտքի ու Վարդուհին թես առնելով՝ ըսի.

—Ուի՞նչ, ոչի՞նչ, ջիզերու գրգռում. հիմն կ'անցնի. եկէք պտուհնք:

Մուրջ-պարի ամենէն տաք ատենն էր. սարի դլուխը անցել էր հուժկու երիտասարդմը բաց, թաւ կրծքով, որ ձեռքի խոշոր կարմիր թաշինակը շարժելով՝ կ'երգեր տուն մը, որ անմիջապէս բոլոր շղթան կը կրկնէր գիւղական յատակ ու ազգու շեշտերով:

Մենք անցանք անոնց քովին ու դիմեցինք ծովուն ափը:

—Ինչու կուլացիք. հարցուց աղջիկը յուզւած, երբ քի: մը առանձին մնացինք: Յորէկը ընդհակառակը անչափ ուրախ էիք:

—Վայ, օրիորդ, այդ ուրիէ գիտէք. ըսի ես ծիծաղելով. այսօր մինչև անդամ երեսս չէք նայած:

Բռնւած էր. աչքերուս մէկը նայեցաւ՝ ժպտեցաւ:

—Լաւ, հաշտւինք. ըսաւ ձեռքս սեղմելով:

—Ա՛, որչափ բարի էք. ըսի ես զգացւած ու վայրկեան մը մտածկու կանդ առի:

—Բայց ինչու կուլացիք. պէտք է ըսէք. թէ չէ շեմ հաշտուիր. սւելցուց աղչիկը չարաճընի շեշտով մը:

—Օրինըդ, ես ալ ձեզի պէս ունիմ մացր, քոյրեր, եղբայր, ընկերներ, որոնց հետ բոլոր մանկութիւնս անցուցեր եմ. ունիմ հայրենի անակ մը, քաղաք մը, ծովակ մը. սրտիս անչափ մօտիկ ձորակներ և վայրեր, որոնք երկար, երկար տարիներ չեւմ տեսած. և հիմա այս ծովը, այս ծովափը, այս ուխտը կամաց-կամաց մոքիս մէջ բիւրաւոր թմրած ցիշատակներ արթնցուցին. հակը ցաք ուստմառը, գ՞հն էք:

Կուրծքս լեցւած էր. պէտք ունի սիրտս պարպելու. և առանց պատասխանի սպասելու՝ շարունակեցի.

—Ե՛, քանի տարի է այս. ով գիտէ որքան մեծցած են հիմա քոյրերս. ամէն մէկը ձեզի պէս հասուն ու սիրուն աղջիկ մը:

Բերնէս փախած համեմատութիւնէս ձայնս դողաց. պահ մը լոեցի. ու իսկոյն շարունակեցի.

—Այս պարողները կը տեսնէք. ահա այդ շրջանին մէջ ես ալ եղած եմ երբեմն. և գուցէ այս գիշեր նոյն այդ շրջացին մէջ կը դառնան քոյրերս ու իմիններս. և այդ երգերն ու ոստումը, որ գուցէ ձեր ճաշակին ծիծաղելի կուգայ, իմ սրտիս ամէնէն զգայ. ուն թելերուն կը զարնէ: Զեր եւրոպական երածշոռութիւնը, ձեր արևմտեան օպերաներն ու երգերը գեղեցիկ են, սքանչելի, արւետի կատարելազործում, համակ ներդաշնակութիւն. աղէկ. բայց և այնպէս կան վայրկեաններ, որ այդ բոլորին հետ չեմ փոխանակեր գիւղական պարզակ սիրերգի գեղգեղ մը, որ ամբողջ սիրոս տակնուվրայ կընէ ու երեւակացութիւնս թափ կուտայ: Այդ այն ժողովրդի սրտին ձայնն է, որու զաւակն եմ ես. այդ իմ սրտին ձայնն է:

Շունէ առի. աղջիկը լարւած ականջ կը գնէր:

—Բայց, է, անխելք բաներ կ'ըսեմ. այս գիշեր շատ տարօրինակ եմ, չէ, օրինըդդ. մի՛ խնդպք վրաս:

—Ես ձեր վրայ խնդմմ. այն ալ այս վայրկեանիս. երբէք ձեզի պիտի խոստւանիմ. զուք ինձի համար, այն, տարօրինակ էակ մըն էք. ոչ միայն այս գիշեր, այլ միշտ. ձեր զգացումներն ալ, ձեր դասողութիւնն ալ, ձեր զաղափարներն ալ, ձեր վարմունքն ալ

ձեր... բարեկամութիւնն ալ, վերջապէս ձեր ամբողջ հոգին ուրիշ գոյն մը ունի, ուրիշ երանգ մը, որ իմ սովորական տեսածներէս շատ ու շատ... ինչպէս ըսեմ... տարբեր է, ազնիւ է, բարձր է: Այսպէս որ տեսակ մը նախանձ կ'ըզգամ գէպի ձեզի:

—Այս, նախանձեցէք, նախանձեցէք. բայցականչեցի ես ու բարձրացն սկսայ խնդալ՝ այս գովեստի տարափէն կերպ մը ազատ- ւելու համար, որ ինձի սաստիկ կը ճնշէր:

Պահ մը լռեցինք:

Եւ պահ մը գիւղական երգերուն ու երաժշութեան մէջէն կարող եղանք ծովուն անդորր շւշլոցն ու ոտքերնուս տակի խիճե- րուն խշրտուքը լսելու:

Լուսնի խոշոր մահիկը ծառերու ոստերու մէջէն լուսի ցանց մը կը նետէր գէպի ծովիզը: Եւ մենք այդ ցանցի մէջ կաշկանդւած կը քալէինք, լուս թևեթևի, իրարու սեղմած: Մեր մէջէն կեղծ ու բոնազրօսիկ յարաբերութեան վերջին մնացորդները կը ցնդէին:

Ի՞ւ սրտագին յուզումն, աղջկան անկեղծ խոստովանութիւնը վերջին հարւածն էր տւած մեր բոլոր ծեքծեքումներուն. անցեալի ու ներկայի այդ քնքուշ խառնուրդը խեղդած էր իր մէջը մեր սպատիկ քէները:

Երկուքս ալ այդ կ'ըզգացինք ու ալ ուժգին իրարու կը սեղ- մըւէինք:

Ուշ էր, որ կամաց կամաց գէպի խցիկնիս ուղղւեցանք. ակա- մայ թևերնիս բայնեցինք ու աղջիկը ներս մոտաւ:

—Ուր ես. լսեցաւ ներսէն մօրը կէս քուն, կէս արթուն ձայնը:

—Եացլն կը զիտէի, եղաւ պատասխանը:

Իսկ ես գեռ երկար կը պտտէի զուրսը միայնակ:

Բոլոր ուխտաւորները երգէն ու ցատկելէն յոդնած՝ իրենց խսիրներու վրայ խմբովին փուեր՝ պառկեր էին ամենատարօրինակ շարքերով, ամենախտառնակ կոցաերով: Հնա ու հնա կը լսէր երգի մը մնացորդը, խոսակցութեան մը քայլացումը, կամ գինովի մը պո- սոտախոսութիւնները:

Ցոլ ծանր էր, զով ու անշարժ:

Ես ալ մոտայ սենեակ. լուս էր. աչքս բնականաբար Վարդու- հինց կողմը նետեցի. կէս-բացւած լամպի աղօտ լոյսի մէջէն նըշ-

մարեցի Վարդուհին, որ խոշոր շալին ծալքերուն մէջ փաթթւած կը քնանար. մազերը խառնակ եկեր գէմքին էին ինկեր. ձախ ձեռքը մինչև արմուկը բաց գլխուն վրայ էր նետեր:

Ես ալ նետեցայ անկիւն մը՝ մերիներուն մօռ՝ աչքերս աց մերկ դաստակին դամած: Զգիտեմ՝ յունաց դիցաբանութեան ինչ գրքի մէջ դիցուհիի մը պատկերն եմ տեսած. պատկած ճիշդ աց դիրքով, ճիշդ նոյն կերպով խառնակ մազերը ճակտին թափւած, ճիշդ նոյն մերկ թեւը գլխուն վրայ և երեակացութեանս մէջ, ուր կէս բացւած լապտերի աղօտ լոյսը մեծ զեր կը խաղար, այդ երկու պատկերները սկսան իրարու ձուլւիլ, հիանալի զեղարւեստական ամբողջութիւն մը առաջացնելով. միայն հեազնեաէ սկսաւ մաքիս մէջ ամեն բան աղօտանալ ու խառնակւիլ...

Եւ երբ աչքս բացի՝ այնքան լոյս էր, որ աչքերս շացան ու գոցելու սոխպւեցայ:

Առաւոտեան պայծառ լոյսը ինծի հաճոյք կ'առթէր. առաջին մուածումս արմուկը եղաւ. Վարդուհին հոն չէր. սենեակի մէջ ոչ ոք չիկար. սեմին վրայ պարոն Կարապետը նստեր իր ծոցառետրին մէջ բան մը կը գրէր, թէ կը նկարէր:

Աշխոյժ շարժումով վեր ցատկեցի ու նատեցայ. և նոր նկատեցի, որ վրաս ծածկեր էին. և որքան եղաւ հաճոյքս, երբ Վարդուհիի կրկնոցը ճահցայ: Դեռ ինքս ինծի հաշիւ չիտւած, թէ այդ կրկնոցը ինչպէս էր վրաս նետւած, Վարդուհին ցատկիլը ներս մտաւ սենեակ:

—Ա՛խ, արթնցեք էք, պարոն ծոյլ. լսաւ շիտակ ինծի դալով. մենք ճիշդ ժամ է ելեր ենք. տեսայ, որ հոս բաց պատկեր էք, կրկնոցս վրանիդ նետեցի. ուհ, ինչ անզգուշ էք. վերջացոց ձեռքի թաշկինակը գէմքիս գարնելով:

Անուշ հոս մը դէմքս պարուրեց:

Ես ուրախութենէս գլխովցած ոտքի ցատկեցի:

Մինչև ճաշ ինչպէս անցաւ չգիտեմ. շարունակ կը խօսէինք ու կը կատակէինք. իմ արտասովոր անփոյթ զւարթ օրերէս մէկն էր. ճիշդ գիշերւան հակառակը: Զէի կրնար նստիր. անդագար կը շարժէի, կարծես մէջս բան մը կ'եռար:

Նոյնն իր Վարդուհին:

Երարու շուրջ կը դաւնայինք:

Ճաշէն անմիջապէս վերջը երկող՝ Վարդուհին, եղբայրը և ես՝ ելանք կզզին շրջելու, թէև տաք արել վրանիս իր բոցերը կը թափէր: Բարձրացանք գագաթը, ուր բաւական բազմութիւն կար. իջանք լեռան հարաւային եզերը, որ բոլորովին ամաչի է, կը մըտնէնք ժայռերու խոռոչները, կը մագլցէնք քարափներէն վեր և դարերէ ի վեր միայն սրբակրօն մենակեացի մը աղօթքին մրմունջները պահող ճգնարանները պահ մը կը թնդային Վարդուհիի գւարթ ու կայտառ ծիծաղէն:

Վարդուհին ամբողջ շարժում ու նազանք էր դարձած. գրաւի, կրակու բան մը:

Մեր փոխադարձ յուզումը մեզի աւելի կը յափրեցնէր. և անձնատուր մեզի վարող հոսանքին՝ տղայ էինք դարձած. անդադար իրարու կը զարն էինք՝ կը սեղմէնք՝ գետնէն բան մը վերցնելու, ժայռէն անցնելուն օգնելու, իրարու թէև մոներու պատրւակներուն տակ:

Եղբայրը մեզի արգելք չէր. իր նկարներով էր զբաղւած. հասած տեղէն ուրւանկարներ կը հանէր:

Պարոն Կարապետը ժայռի մը տակ նստած կը գծէր: Ես ու Վարդուհին ծովի ափէն կը քալէնք. հասանք տեղ մը, ուր լերկ ժայռը եկեր ու մինչև չուրը հասած էր. բայց քայլ մը միայն անզին նորէն հարթ ծովափին էր. ես առաջարկեցի վերէն պայոտ մը ընել. աղջիկը կուզէր շիտակ շարունակել. անմիջապէս քանի մը քար դայաց, լեցուցի ժայռի վերջացած տեղը ջրի մէջ. ես այդ քարերու վրայն միւս կողմը անցաց, որ աղջկան օգնեմ. գաւագանս տւի անոր, որուն յենած յատկեց քարերուն վրայ, բայց երբ քարէն աստին նետուիլ կուզէր, ոտքը սահեցաւ. ես առաջ ծուեցայ, որ բռնեմ. ու շիտակ զիրկս ինկաւ. ես բոլոր ուժովս կրծքիս սեղմեցի: Վարդուհին ինքզինքը ազատեց, մատը վրաս թափ տւաւ շարաձնի ժողոտով մը ու ժայռն ի վեր վազեց. վերի կողմէն դարձանք եղբօրը քով՝ երկուքս ալ յուզումէն զողալով:

Այդ յուզումը, որ ամեն վայրիեան կ'անէր ու իր սանձը փըրցընիլ կըսպառնար՝ մեզի խեղտէր պիտի. մենք սոսկալի ուժով իրարու կը ձգտէնք. կարծես ելեքտրական երկու մարտկոցներ, որոնք

փոխադարձաբար իրար ելեքտրականութիւնը կը բազմապատկեն ու ալ առել իրարու կը ձգտին. չնչին, ամենաթեթև մերձեցում մը, և այդ երկու ուժերը իրարու պիտի ձուլի ին կուրացուցիչ կայծի մը զիկզակին մէջ. առիթ մը միայն...

Արեւ արդէն մայր խոնարհւելու վրայ էր, որ մենք նորին բարձրացանք լեռան գագաթը ։ Գագաթը այլ ևս մարդ չէր մնացեր. խարխուլ մասուռը պարապ էր. ամենքը իրենց գիշերւան քէֆի պատրաստութեամբ էին զբաղւած վարը:

— Բայց այս ի՞նչ սիրուն է. բացականչեց պարոն Կարապետը՝ արևմաեան կողմը լեռան գագաթներու խումբ մը ցուցնելով, որ ամսի պատկի մը տակ և ծովուն ջրին մէջ անդրադարձած անման պատկեր մը կը կազմէր:

— Վայրկեան մը սպասեցէք. քանի մը բան ունիմ նշանակի. լու. ըստ ու նստեցաւ գետին:

— Մենք ալ եկէք մասուռի մօտ երթանք, ըստ Վարդուհին. առառն շատ բազմութիւն կար, չնորհքով չտեսաց:

Օրիորդի հետ շատ էի առանձին մնացեր, բայց այս անգամ երբ եղբօրմէն բաժնելով կիսաստւեր մասուռին մէջ ինձի ու Վարդուհին մենակ զբացի՝ մարմնէս սարսուռ մը անցաւ ու սիրոս ուժգին սեղմէեցաւ:

Ճերմակ լաթի մը վրայ փառօտ խաչ մը կար սեղանին տեղը. քոնին ալ պղըսկուած աւետարան մը:

Անգամ մը չօրս դին նայեցանք ու բան մը ըրած լինելու համար սկսանք պատերու վրայի մատիտի արձանագրութիւնները կարպար:

Վայրկեան մը վերջը պատահմամբ հայեացքս դուռնէն դուրս ինկաւ. Ասուած իմ, ինչ տեսարան:

Արեւ դիմացի Գեղարքունեաց լեռներու երկու սուր գագաթ. ներուն մէջ մայր կը մտնէր. խոշոր, ամենի ոսկի մը կարծես, որ բնութիւնը ծանր-ծանր ու գժւարաւ կը մղէր իր գանձանակը: Բայց ոսկին անցայտացած է արդէն ու արեան կարմիր մը կ'ողողէ երի նակամարի այդ հատւածը. բամբակ ամպերու փեռեկտումներ այդ արեան մէջ թաթխըւած կը ծանրանան, կ'իջնեն ու կը գոցեն գանձանակին անցքը, ուրկէ վայրկեան մը առաջ ներս էր սահեր արկը իսկ երկնքի այդ արիւնոտ կէտէն անդին՝ որքան հետու ացնքան

մութ-թանձր կապարագոյն կամար մը, որ իր գորշութեամբ բոլոր հայեացքդ կարմրին կեզրոն ացնել կուտայ: Եւ այդ կարմիրը կը ցուայ ծովուն վրայ՝ մութ-կապտորակ ջրին վրաց կարմիրի հեղեղ մը հասեցնելով: Ծովու ու երկնքի այդ կարմիրը կ'արտացոլէ կղղիին ժայռերուն վրայ, գագաթին վրայ, մատուռին վրայ, մեր վրայ...

—Ասուած իմ, այս ի՞նչ է. բացականչեց իր կողմէն Վարդուհին այս տեսարանին առջև շլացած:

Ես իրեն նայեցայ, այդ մոգական լոյսով ողողուն՝ Վարդուհին երեսիս կը ժողովէր:

—Բայց հիանալի է այս. կրկնեց բոցոս հայեացքով մը աչքերուս մէջ նայելով:

—Այո. միայն դուք աւելի հիանալի էք, ըսի ես յուզումէս դողացող, կամաց ձախով մը:

—Վերջապէս. բացականչեց աչքերը աչքերէս չիզատելով. իրաւ այդ աստիճանին հիանալի եմ. հարցուց պէրելով ժպտերես, յուզւած ու ոգիչ:

—Ահ, այս վերջալուսէն ալ, այս ծովէն ալ, այս արիւնոտ երկնէն ալ, այս բոլորէն ալ շատ ու շատ աւելի:

—Չարմանք. հասպա այդ ի՞նչպէս է, որ մինչև հիմա ինձի ոչինչ չէիք ըսած. ես ձեզի կը ճանչնամ. դուք կեղծել, ծածկել չդիտէք:

Վարդուհին ինձի կը նայէր օձի թովիչ ակնարկովը, որ որսը իրեն կը ձգէ:

Ես յանկարծ խլեցի ձեռքը ու կ'ուզէի շրթունքներուս տանեմ: բայց ուժով մը ձեռքս սեղմեց ու չի թողուց:

—Չեզի բան կը հարցնեմ:

—Ի՞նչ. ըսի ես սչինչ չի հասկնալով:

—Ի՞նչու մինչև հիմա ոչինչ չէիք ըսեր:

—Ա՛խ, չդիտեմ. կմկմացի աւելի իրեն մօտենալով:

—Չդիտէք:

—Վարդուհի, ա, սոսկալի ես. այս աստիճան հպարտ:

—Հպարտ, հպարտ. հասպա դժւն... փոքրիկ վայրենիս. կը հծծէր ակռաներուն մէջէն, երկու ձեռքովը ձեռքերս սեղմած ու դլուխը քիչ մը ետ նետած:

Ամուր ցնցում մը անցաւ մարմնէս. սիրտս ակնթարթ մը զարնելէ դադրեցաւ. ուժգին շարժումով մը ձեռքերս ազատեցի ու իր կրծքին գալարեցայ:

Նախ դիմադրելու պէս բան մը ըրաւ. ետքը կամաց մը կրթնեցաւ մատուռի դրան, ու իր թևերու բոլոր առանձգականութեամբը գլուխս իր լանջին վրայ սեղմեց:

Ալ միայն «վայրենիս» բառը կը ցիշեմ, որ կը կրկնէր մեր կիզանուտ, տենչու համրոյներուն մէջէն:

...Երբ պարոն Կարապեալ եկաւ, մենք յուռ ու երազուն նստածէինք իրարու քով մասոււին մօտիկ քարի մը վրայ Վարդոհին քիչ մը գոյնը նետեր էր ու կիսաբաց շրթունքներուն մէջէն ծանր ու անկանոն կը շնչէր: Իմ գլուխս հրգեհ կար. ճակտիս դրոշմած համրոյները կարծես ուղեղս էին թափանցեր:

Թեթև կէս-մութ մը կը տիրէր արդէն, երբ մենք ես ճանապարհ եկանք. Վարդոհին թևէս կախուեցաւ: Պարոն Կարապեալ կարծեմ իր հանած ուրանկարներուն վրայ կը խօսէր:

## Օգոստոս 24

**Ամբողջ** շաբաթ մըն է, որ յուշատերս թողած եմ. ի՞նչ գրեմ, ե՞րբ գրեմ:

Ոչ կը կարդամ, ոչ կ'ըզբաղիմ. չեմ կրար կեդրոնանար. հաւասարակշուութիւնս կորսնցուցած եմ բոլորովին. ամբողջ օրը ու հոն եմ. սիրտս զեղուն է:

Առաւոտ-իրիկուն Վարդուկիս հետն եմ. ցորէկներն ալ կերթամ դաշնակի պատրւակով: Կը նւագէ, կը պատինք, կը խօսնէք ու կ'երազենք. կը գծենք ծրագիրներ ապագային համար, մեր միասին գործունէութեան համար. կ'երեակացինք այդ մեր տենչալի կեանքի աշխատութիւնը. ա, ինչ սէր, ինչ եռանդ, ինչ ազնուութիւն, ի՞նչ գործունէութիւն կը նկարւի մեր աչքերուն առջեւ. ու մեր ողերութեան թափէն իրարու կը փաթթւինք:

Միքայէլը մէջ մէջ կուգայ, և որովհետեւ գալու առենը գիտեմ՝ միշտ առւնը կը գտնւեմ. բայց իր ներկայութիւնը ինձի կը մնի. զբագում կը կեղծեմ. խեղճը հոսկէ-հոնկէ քիչ մը կը ճռճռայ ու կ'ելնէ կ'երթայ փիլիսոփայութիւնս հայհոյելով. կը դաւի, որ նո-

րէն ճամբէս շեղեցայ. թէ ինչպէս շէնք-շնորհք մարդ լինելու վրայ էի ու կրկին գրքերուս դարձայ:

Երբ կը մեկնի բուժթ խայժ մը կ'ըզգամ: նախ որ ուրիշի աշքին խքզինքս փիլխոփայ կը նկարեմ այսպէսով և երկրորդ որ ընկերս կը վանտեմ; թէ ինքը այդ չըզգար:

Երէկ սենեակս մտածին պէս, երբ վերատին ինձի գրքերու մէջ թաղւած տեսաւ, գլխարկը բարկութեամբ սեղանին վրայ նետեց. ու բարձրաձայն:

— զբայց, քիչ մը ձեռք վերցուր այդ գիրքերէդ. քիչ մը չորս գիդ նայէ, չորս կողմի պէտքերդ ուսումնասիրէ, հերիք է. տեսական մարդիկներու պէտք չունինք. քիչ մը զործնական եղիր:

— Քեզի՞ պէս. լսի ժայռելով:

— Ծաղրէ որքան կ'ուզես, բայց ես լուրջ կը խօսեմ: այդ քու գրքերովդ, թուղթերովդ, փոշիներովդ ապագային քանի ստակի օգուտ պիտի տաս: Ատոնց ժամանակը անցաւ. կամ եթէ կ'ուզես՝ դեռ չէ եկած:

— Այդ ինչպէս:

— Զգիտեմ. միայն հիմա այդ տեսակ բաներու ատեն չունինք:

— Ե՛, շատ աղէկ քու հաշով, ինչ կը բարեհաճիս որ ընեմ:

— Ինչ որ կ'ուզես. միայն կեանքի հետ կապւէ:

— Կեցիր. պարզ խօսէ. երևի զիխուզ մէջ ծրագիր մը կայ:

— Ե՛, կը գտնւի. գոնէ ինձի համար:

— Եւ ինձմէ կը ծածկես:

— Ծածկեմ, ինչմւ. տեղը չէ եկեր, որ ըսեմ:

— Լաւ, ըստ տեսնենք ինչ բան է այդ:

— Զգիտեմ, Երւանդ, մէկ կը մտածեմ կապւեմ հողին հետ ու շնորհքով, լուրջ, լնդարձակ գործունէութիւն սկսեմ, նախապէս լրջութեամբ պատրաստելով:

— Այսինքն:

— Նաև պարզ. զիտես որ փիլխոփայական բաներու խելքս չի հասնիր: Գալ տարի դպրոցը աւարտելուս պէս կ'երթամ Եւրոպա երկրագործական գործնական վարժարան մը:

— Այդ նւագը շատ ենք լսեր:

— Կատակը մէկոի: Գիտես, որ հոսկէ Աղստե տանող ճամբուն վրայ բաւական լնդարձակ հողեր ունինք. վերադարձիս՝ բերել կու-

տամ նոր գործիքներ. նոր մեթուներով գործի կը ձեռնարկեմ. կը ժողուես զլիսուս առոցդ, հողատէր դիւզացի երիտասարդներ. կ'սկսեմ գործի. անոնց ալ կը սորու եցնեմ, իմ ալ գործս կը տեսնեմ. այնքան պատահան տղաք կան այստեղ. մէկ-երկու տարւան մէջ թէ իմ ազարակս տիսլար կը գառնայ և թէ միեւնոյն ժամանակ կը լինի գործնական զպոց մը: Խոկ թէ մեր մշակութեան եղանակի ու գործիքներու փոփոխութիւնը որբան անհրաժեշտ է դուն անդամ՝ կրնաս հասկնոր քու փիլիսոփացի անպէտք խելքովդ: Ամբողջ երկիրը գաղթականներ լեցւած են. հիմա ալ սկսած են յանդուզն ու բաղդախնդիր եւրոպացիներ երևան դալ. անոնց հարլատութեան ու արեւատին դէմ մերոնք չեն կրնար մրցել. և հետեւանքը այն կը լինի, որ շատ շանցած մեր բոլոր հոգերը օտարներուն ձեռքը կը կերպնանայ. անոնց դէմ մաքառելու համար իրենց զէնքերը ունենալու ենք. բայց զիւղ սցին դիւրութեամբ ձեռք չվերցնէր դարերու սրբագործած իր սովորութիւններէն, գործիքներէն. վատահութիւն պիտի ներշնչել դէպի նորը. Թովմաս առաքեալին պէս ինքը շօշափէ պիտի նախ. մանաւանդ ուշ գարձնելու է նոր սերնդին. հինը համոզելը շատ դժւար խնդիր է. ահն երազամիս, թէ իրագործեցի:

Զեռքերը գրպանը խոթած՝ արագ քայլերով կ'երթևեկէր մենեակիս մէջ: Յանկարծ կանգ առաւ, բռնեց մահճակալիս գունդերէն մէկը ու սկսաւ մտածել. և մէկ ալ մտածման ու ոգևորութեան ներքին թափէն մզ ած՝ ռէէէս մանչեց ակուաներուն մէջէն ու այնպէս ուժով թեւը ցնցեց, որ մահճակալիս գունդը ձեռքը մնաց: Խեղճը զարմացած նախ վրան նայեցաւ, ետքը բարկութեամբ անկողնիս վրայ նետեց. ինքն ալ վրան ցատկեց ու նետեցաւ:

—Այս բոլորը աղէկի. բայց... մոմռաց նորէն ու կանգ առաւ: Բայց վայրկեաններ կան, շարունակեց, որ աչքիս ոչինչ չերեար. այդ բոլորը շատ երկար-բարակ կը թւի ինծի ու անիրազործելի. մանաւանդ իմ բնաւորութիւնս ալ ոչ այնքան յարմար այդ խաղաղ, անվերջ ազարակի կեանքը. Այդ վայրկեաններուն բռուլն ու խենթ իղձեր կ'անցնին մէջէս. ազմուկ ու իրարանցում կ'ուզեմ. անձնւիրութիւն ու դիւցազնութիւն կ'երագել: կ'ուզեմ զարնեմ, կուիմ. կարծես իհեծուկս նոյն վայրկեանին ձիս ախոռէն

կը վրնջէ և հայեացքս տկամոյ դէպի պատէն կախւած հրացանս կը բարձրանայ:

Եւ երեսս նայեցաւ. ես իր ազդեցութեան տակ կը լռէի, վայր-կեան մը մտախոհ պատուհանէս դուրս սեեռեց աչքերը:

—Ե՛, մնաս բարնվ. պուաց յանկարծ, ցատկեց, գլխարկը առաւ ու դուռը ետևէն ուժով մը գոցեց:

Ես կը հետևէի իր քայլերու ձայնին նախ սրահը, վերջը սանդուղներէն վար ու պարտէզը աւազին վրայ. քայլերը թուլցան, անորոշան ու հալեցան, իսկ ես դեռ ականջ կը դնէի անշարժ...

## Օգոստոս 27

Այս այս պէս է, ուզեմ չուզեմ հաւատամ պիտի...

Երեք օր առաջ՝ իրիկունը Զ.երը մայր ու աղջիկ մեզի եկան թէյ խմելու:

Պատշգամն էինք նստած:

Առաջին ակնարկէս Վարդուհիս տեսակ մը երեցաւ աչքիս:

Մէնք ներս գացինք. և երբ առանձին մնացինք՝

—Ի՞նչ ունիս այս իրիկուն, ի՞նչ է պատահեր. հարցուցի խանդակառանքով՝ երկու ձեռքերս քորսէին մէջ կաչապարւած մէջքին յենած:

—Քեզի՞ ինչ. իմ մտառանջութիւնը քեզի՞ ինչու կը հետաքրքրէ. ըստ կարուկ շեշտով մը:

—Վարդուհի...

—Իրաւ. ինձի շատ կը սիրես. աւելցուց իսկոյն, քնքալով սեղմեցաւ ինձի, ձեռքերը մազերուս մէջը խրեց, բռնեց զլուխս երկու ձեռքով ու մկան աչքերուս մէջը նայել:

—Բաց ինչ ունիս, ի՞նչ է պատահեր. հարցուցի կրկին անհնդատութեամբ:

—Ոչինչ. ի՞նչ պիտի պատահի. պատասխանեց բոնի ժպտելով. ամենասովորական բան մը... վազը չէ միւս առաւօտ կանուխ մեկնելու ենք:

Կարծես կուրծքս քար մը ինկաւ: Ձեռքերս մեքենաբար ետքաշեցի. և տեսակ մը խենթ յոյսով՝

—Ո՞ւր, ինչու, հարցուցի:

— Ուր. Թիֆլիս. միթէ ամենևին մոքէդ չէր անցնիր, որ օգոստոսի վերջերն ենք. շուտով դպրոցները կր բացւին, եղբայրա ալ գործ ունի:

Ես այդ բոլորը գիտէի, բայց միշտ մոքէս մէկդի էի նետած ցեռ ժամանակ կաջ ըսելով. չէի ուզեր ներկայի հաճոյքը պղարեմ. ու այն աստիճան զբաղւած էի ներկայով, որ անցեան ու ապագան իր առերի տակն էր ձգեր ամբողջովին: Եւ իմ այդ մռացման վիճակէն յանկարծ իրականութեան հետ ճակատ ճակատի գտնւելս ինծի քարացուց:

— Ե՛, ԲՇՆ եղար. որ մը չէ օր մը այս պատահելու չէր. ըստ գոպւած ձայնով մը:

— Բայց այսչափ շնոր, այսպէս արմագ, այսպէս զգացումներու ամէնէն վառ ատենը, զես հազիւ իրար ճանչցած, զես հազիւ սիրած...

— Ա՛, լոէ. պոռաց ձեռքը բերնիս դէմ դնելով. ԲՇՆ իմ բոլոր մռածածներս կը կրկնես. ուրիշ բան ըսէ, հերքէ, հակառակը ինծի համոզէ. ըսէ, որ պէտք է բաժնւինք, որ այզպէս աղէկ է. ես այդ յոյսով քու քովդ եկայ:

Աւ աղերսող աչքերով սկսաւ ինծի նայել:

— Դէհ, խօսէ. այնպէս չէ. կը կրկնէր ձեռքերս պրկելով. մենք հեռուէն աւելի երջանիկ կը լինինք, չէ. իրար անդադար յիշելլը գիտնալ, որ հարիւրաւոր վերստեր հեռու սիրու մը կաց, որ քեզի համար կը արոփէ, գիտնալ որ ամէն դիշեր երազներուն մէջ քեզի կը տեսնէ. այս բոլորը անբացատրելի հեշտանքներ են, չէ. դէհ, բառ մը ըսէ. նկարագրէ մեր ապագան, մեր երազները, մեր տեսնչերը, մեր միասին գործունէութիւնը հայրենիքիդ մէջ. ուր է լուրդ, ուր է ոգեռութիւնդ. չիխօսի ա:

Ես լուռ, արձանի պէս, կեցած էի:

— Դէհ խօսէ, խօսէ, Երւանդ. հիմա գլուխս կը պայթի:

Եւ իր սովորական յանկարծ շարժումնովը նետեցաւ բաղկաթուին մէջ ու ձեռքերովը դէմքը ծածկեց:

Ես վայրկեան մը կեցած տեղէս գիտեցի. ետքը յուշիկ դացի քովը, նստեցայ նոյն բազկաթուին մէջ ու ձեռքերը երեսէն ետարի:

Նայեցաւ երեսս. վիզս փաթթւեցաւ ու սկսաւ. լալ: Փոթո-  
րիկը անցած էր, անձրև կը տեղար:

Բայց ես չեի կրնար լալ. ոչ ալ խօսիլ. ի՞նչ խօսէի: Իմ ար-  
ցունքներուս փոխարէն անոր տրցունքները այտերէս վար կը կաթէ-  
ին. իր թաց այտերը կը սահէին շրմունքներուս վրայ... ես վայր-  
կիան մը կարծեցի, թէ սիրելէ դադրած եմ. այն աստիճան մեռե-  
լութիւն մը կը տիրէր մէջս:

Երբ քիչ մը հանգարտեցաւ, գնաց լլւացւեցաւ. և մենք այլ  
ևս մինակ չի մնացինք:

Մութը կոխած լինելուն դէմքերնուս այլայլութիւնը աննշա-  
րիլի անցաւ:

Անոնց մեկնելէն անմիջապէս վերջը քաշւեցայ սենեակս ու  
սիզը գրի:

Տաք գիշեր մըն էր. բացի պատուհանս ու առջել նստեցայ.  
Քիչ վերջը ելաւ լուսինը. շատ քիչ աստղեր կային. սկսայ համրել.  
բայց միշտ հաշիւս շփոթելով՝ վերջապէս ձանձրացայ. գլուխս  
ափիս արմուկս ալ պատուհանի եզերքին յենած՝ սկսայ գիտել հե-  
ռուն լեռները, որոնք լուսնի լոյսի ու մութի խառնուրդի մը մէջէն  
երկնի վրայ ամենաանկանոն երկրաչափական գիծ մը կը քաշէին.  
ոչինչ չեի մտածեր. ժամը գիշերւան երեքը զարկաւ սրահէն, ես  
դեռ հստած էի ու լեռները կը դիտէի:

Այլ դիրքով առաւօտեան դէմ քունս տարեր էր. երբ աչքս  
բացի լոյս էր. թեևս թմրած. ու կուրծքս կը ցաւէր փայտին դէմ  
գալով. նետուեցայ անկողնիս վրայ, բայց ալ քունս չի տարաւ. կէս  
կէս արթուն նիրհման մը մէջ էի. իմացայ, թէ ինչո՞ւ կաթնա-  
վաճառ գիւղացինիս եկաւ, քիչ մը վերջը ուրիշ մէկը, որ սողա-  
սուհիին հետ կուր ըրաւ. կը լսէի սրահէն աւելին խշրոուքը:

Նախաճաշէն անմիջապէս վերջը Զ.երուն գացի: Վարդուհին  
մէջաեղ չի կար. ըսին՝ իր սենեակը կը ժողովէր: Տիկինն ու սողա-  
սուհին ժողվառուքի վրայ էին. պարոն Կարապետը իր պատկեր-  
ներն ու շրջանակները կը փաթթէր ամենայն զգուշութեամբ:

Ես իրու քաղաքավարութիւն սկսայ պղտիկ օգնութիւններ  
ընել անոր. բայց այդ գնալ գալը, ծոել ելնելը քիչ քիչ սկսաւ  
ինձի ուղղակի հաճոյք պատճառել. և այնպէս ողեղութեամբ անձ-

Նատուր եղայ գործին, որ մէկ-երկու ժամ վերջը, երբ Վարդուհին ներս մտաւ՝ չի կրցաւ ծիծաղը զսպել:

Ամբողջ օրը հոն էի. մանաւանդ մերոնք ալ քիչմը վերջը եկան: Ընդհանուր իրարանցում ու շարժում մը կար. կը մտնէին կենէին, կը խօսէին, կը խնդային. և այդ ընդհանուր հոսանքին մէջ ես ալ կորսւած էի:

Իրիկւան դէմ Վարդուհին մօրը յայտնեց, որ վերջին պտոյտ մը պիտի ընէ. ու գուրս ելանք:

Տարի անտառին կողմը, իմ սիրած տեղերէս մէկը՝ բարձր ու առանձնացած: Նստեցաւ կորած կոճղի մը վրայ. ես ալ գետինը թեթև մը զյուխս իր ծունկին կրթնցուցած:

Սրեւ պահ մը կեցած, կարծես կը վարանէր լեռան ետին մուելու. ինչպէս թողնէր այդ վառ-նարնջի հորիզոնը, այդ բիւրեղի պէս ջինջ ու նուրբ երկնակամարը և վերջապէս մեզի, որ ծառերու բուներուն մէջէն իր գէմքը կը գիտէինք լուռ...

Զգացի, որ Վարդուհիիս մատները մազերուս մէջ կը խրէին. այդ թեթև շօշափումը ինձի տարօրինապէս յու զեց. ես ցնցւեցայ. կրծքիս տակ բան մը շարժւեցաւ, փղձկեցայ ու երկու օրէ իվեր մէջս ուսունացած արցունքները աչքերէս գուրս ժայթկեցին. խեցի ձեւքը, սեղմեցի շրթունքներու ս, թողեցի գէմքս ծունկներուն մէջ ու սկսայ հեծկլուալ:

Երբ զյուխս բարձրացուցի՝ մեր աչքերը իրարու բևեռեցան. երկու զոյգ ելեքտր սցած, արցունքի մէջ լողացող աչքեր:

Ժայռեցանք ու զրկւեցինք:  
Որտերնիս քի: մը թեթևոցած ելանք ոտքի. ու իրարու փաթըթւած սկսանք պատոիլ ծառերու տակ:

Կատակագծեցինք, որ շուտ վերջացնենք ես իմ, ան ալ իր դպրոցական ընթացքը. որոշեցինք, որ առանձնապէս հետևի մեր գրականութեան, ես ալ նամակներովս իրեն առաջնորդէի պիտի. մն ոգեսրութիւնս պիտի լինէր ձմեռւան աշխատութիւններուն մէջ, շուտ շուտ իրարու դրէինք պիտի. խոստացանք իրար աւելի ջերմ սիրել և իրարու համար աշխատելու զգացումը մեզի զրդի: լինի. կարծես թէ այս բոլորը խոստանալու պէտք կար:

Եւ այս ամենը մէկ ձմեռւան մը համար միայն: Խակ անիկ

վերջը... ա, եթէ ծրագիրնիս յաջողի: Կ'երեակայեմ այն պարզ ուսանողական խցիկը, թաղւած գրքերու ու դասախոսութիններու մէջ. կ'երեակայեմ ինքզինքս՝ երազներու, ապազայի յոչերու բոցավառման վայրկեանի մը մէջ, երբ թարմ շրթունքներու հոգում մը ինձի իրականութիւն կը կանչէ. Վարդուհիս մանկավարժութեան դասընթացներու հետևող մը, ես ուսանող մը ընկերական զիտութիւններու: Եւ օր մն ալ, աննման օր մը, թարմ ուժերով, անսահման ձգտութներով, լայն հայեացքով, հոգով մշակւած, երազներով լեցուն, թե թեի, արդէն համարձակ աշխարհի տուած, մանինք հայրենիքս ապրելու, յուզիելու, յոդնելու ու գործելու:

Մեր բաղդին հետ կարծես համակերպած էինք արդէն, երբ մութի հետ տուն վերադարձանք:

Մեր երկու ընտանիքները վերջին անդամ մը միասին թէլ խմեցին. ու բաժնւեցանք իրարու հանգիստ քուն մազթելով:

Փռւեցայ անկողնիս վրայ ու սկսայ մտածել. վրաս թախծութիւն մը կար. անորոշ, տրատում զգացում մը, որ մարդ ՚ունենայ, երբ վշտացած է առանց խզճի խայթ ունենալու: Ես կը կարծէի, թէ նախորդ գիշերւան պէս նորէն պիտի չի կրնամ քնանար. բայց որքան եղաւ զարմանքս, երբ յանկարծ աչքս բացի ու արելի ճառագլաթներուն հանդիպեցայ, որոնք մահճակալիս դունդերուն հետ կը խաղացին:

Նոտապեցի պատշգամի: Կարասին բեռցած կառքերը արդէն ճանապարհ էին ելած. իսկ Փայտոնը դրան առաջ պատրաստ կեցած էր: Ծանր քայլերով սանդուղներէն իջնել սկսայ, ձեռքերս թեթև մը կը դողար. մէջս կծկում մը, տարտամ յուզում մը կար:

Զեմ կրնար ճիշտ լսեր, թէ ինչ ըզգացի, երբ «բարի լոյ» լսելով Վարդուհիս ձեռքը բռնեցի. կը դողար:

Ժամ մը վերջը տիկինները իրար կը համբուրէին. տիկին նաթալիսն կը խրատէր մեր տիկինը, որ շուտ քաղաք դառնայ:

Ես ձի մը վարձած էի ու անոնց պիտի ընկերանայի քանի մը վերսու:

Մնաս-բարովի արարողութիւնը վերջացաւ. կառքը շարժւեցաւ ու ես ձիս աշտանակեցի:

Եթէ ինձի համար ամենելին ետ դառնալը միտքս պիտի չբեզ

րէի ու պիտի երթայի այսակէս մինչև Ազստափա երկաթուղիի կայարանը. հոնկէ ալ անդին մինչև Թիֆլիս՝ գնացքի այն վագոնին քովէն վազելով, ուրկէ Վարդուհիս մագնեսացուցիչ աչքերը ինձի յառած պիտի լինէր:

Բայց տիկինը՝ ինձմէ աւելի իրական աշխարհին մէջ՝ կառքը կեյնել տւաւ ըսելով, թէ պարապ տեղը ձիս չի չարչքիմ, թէ պաշտին ալ ի սրտէ շնորհակալէ և թէ տունը հիմա ինձի կ'ըսպասեն:

Հնազանդեցայ: Իջայ ձիէս. տիկնոջ ձեռքը համբուրեցի: Պարոն Կարապետն ու Վարդուհին ալ իջան. պարոն Կարապետի հատ համբուրեցանք. բռնեցի օրիորդի ձեռքը ու չգիտէի ի՞նչ ընեմ. համբուրելու կը վարանէի:

— Համբուրէ, համբուրէ, պարոն Երւանդ. այն ալ քու քոյլէ, ըսաւ պարոն Կարապետը տարօրինակ կերպով երեսիս ժպտելով:  
Համբուրեցանք:

Վարդուհին հազիւ ինքզինքը կառքը նետեց, որ սկսաւ լալ գէմքը թաշկինակին մէջ ծածկած: Մայրը այդ լացը աղջկան զգայ նութեան վերագրելով՝

— Դէհ, խենթութիւն պէտք չէ. այդքան փափուկ չեն լինիր, կ'ըսէր:

Չիերը չափ առին:

— Բարե ըրէ, բարե՛ ամենքին. լսեցաւ կառքէն: Ես կեցած էի անշարժ աչքերս հեռացող կառքին յառած: Սիայն պարոն Կարապետի ձեռքը կը տեսնէի որ թաշկինակ կը շարժէր: Զնոր Վարդուհին անգամ մըն ալ տեսնել փորձեցի:

Երբ կառքը աչքս անյացտ եղաւ, փայտի պէս ինկայ գետին. կուրծքս կը սեղմէր. լալ կ'ուղէի, չէի կրնար. խեղդւէի պիտի. Սոսկալի ճիկ մը ըրի և տաք արցունքները աչքերէս դուրս ցայ տեցին: Հազիւ խոտով ծածկւած գետնին եզերքին փռւած էի քիթիս-քերնիս. արցունքը կը վազէր. և ես ոչ երերալ կ'ուղէի, ու լալէ դադրիլ:

Մոտեցող կառքի մը թաւալումը ինձի ոտքի ցատկելու արի պեց. սրբեցի աչքերս, բռնեցի ձիուս սանձը ու ետ ճանապարհ ինկայ:

Վրաս ոչ դող էր մնացեր, ոչ խեղտւանք և ոչ յուղթւմ, այլ խոր տիրութիւն մը միացն:

Տունը նստել չի կրցայ, իջայ ձոր, շրջեցայ արքունի ճանապարհին քովերը, ելայ անտառակը. ամեն ծառ, ամեն քար, ամեն անկիւն Վարդուհին յիշատակ մը ունէր. տխուր ամեն կողմի:

Երեկոյեան գնացի նստեցայ այն կրճղին վրայ, ուրկէ երէկ Վարդուհիին հետ արևի մայր մտնելը կը գիտէինք. հիմա ալ կը գիտէի. ճիշտ երեկւանը:

Արել շատունց անցայտ էր եզած. ես տեղէս շարժւիլ չէի ուզեր. երազոնւն, ցրիւ գրութեան մը մէջ: Կ'ուզէի գաղափարներս ամփոփեմ, մոքերս ժողւեմ, անցեալի վրայ ինծի հաշիւ տամ: բայց չէի յաջողեր: Խոհերս կարծես լարծուն մակերեւոյթի մը վրայ են. չեմ կրնար իրարու մօտեցնել. կարծես մնդիկի կաթիլներ, որ որքան կը շտապիս իրար ձուլելու, այնքան աւելի կը ցրւին ու կը վազեն սեղանիդ երեսին վրայ. հանգիստ քանի մը շարժում ու անոնք միացած կը լինին. միայն քու մէջդ չիկայ այդ անդորրութիւնը. և դուն վերջապէս յուսահատ՝ մէկդի կը նետես զուր ճիգերգ՝ պիշտիշ նայելով մնդիկի կաթիլներուն, որանք դեռ հայեացքիդ տակ կը գլուրտըկին:

Աւզեղիս այս բոլոր անկարգութեան մէջ բան մը միայն ինծի պարզ է. թէ Վարդուհին այլ ես չի կայ. գաղափար մը, որ չեմ կրնար ըմբռներ, թէւ կատարելապէս կը գիտակցեմ:

## Օգոստոս 29

Հազիւ նախաճաշիկէն ելէր էինք, որ Միքէն եկաւ: Քաշւեցանք սենեակս:

— Թունակը թռեր է, վանկակը պարպւեր, ըստ աչքովը  
Վարդուհինց ամարանոցը ցոյց տալով:

— Այն. պատասխանեցի ժակուլով. երէկ տարի ճանապարհ ձգեցի:

— Գիտեմ, պառաւդ ըսաւ:

— Ի՞նչ, դուն հնա ես եկած:

— Երէկ չէ նախորդ օրը եկաց՝ ըսին Զ. երուն է, ետ դարձայ:

— Պարսն կարապեաին օգնելու էի գացեր. բեռ մը խենթենթ պատկերներ, թուղթեր, շրջանակներ ունէր. բոլորը փաթըթեցինք:

—Երէկ ալ եկայ... շարունակեց Միքէն, երբ նորէն մէջ նետւեցայ:

—Այն. երէկ ալ ճանապարհ դնելու էի գացեր. գործ ալ չունենամ. թնչ ընես. քաղաքավարութիւն:

Միքայէլը յանկարծ ելաւ ու դէմն կեցաւ շեշտ աչքերուս մէջ նայելով. մարմնէս թեթև սարսուռ մը անցաւ. քիչ մնաց աչքերս խոնարհեցնէի. արդեօք նկատած էր, որ ինքը այդպէս չարաշար կը խաբէի:

—Կը զարմանամ քեզի, ըսաւ ծանր-ծանր. քու մէջդ սիրտ չի կայ. դուն տղայ չես:

Ես այդ հարցին ոչինչ դեռ չի հասկցած՝ անհամբեր կը սպասէի:

—Երիտասարդ տղա մը միշտ աչքին տակը Վարդուհիին պէս սիրուն ու կացտառ աղջիկ մը ունենաց. այդպէս կենսալից, այդպէս հրապուրիչ, ակնյացնի կերպով զէպի իրեն հակում ունեցող. և դուն այդ գիտնաս ու այս աստիճանի անզգաց լինիս. ա՛, խելք չի հասնիր:

—Իրաւոնք ալ ունի չի հասնելու. պատասխանեցի քմծիծալ:

—Եղբայր, դէթ բնութեան այդքան մօտ լինելն ալ վրադ չազդեց. այս գաղջ օդը, այս գետի օրօրող աղմուկը, այս սիրուն ձորը, այս անտառներու գրգուիչ հոտը. այս բոլորը քու արիւնդ յուղել չգիտե՞ն: Այս վայրկեանէս գրաւ գալու պատրաստ եմ, որ դուն կատարեալ փիլիսոփայ լինելու մարդ ես. քաշւիս խցիկդ ու հիփոթէզներու վրայ ուղեղդ մաշես:

Ես կէս խղճահար, կէս ուրախ, կէս ինքնագոհութեամբ մտիկ կ'ընէի այս ամբաստանիչ ճառը, որ ինձի թէ խնդալու փափակ կուտար և թէ կը սանձէր:

Վայրկեան մը լոեց:

Իսկ ես մոքէս իմ ու անոր բնաւորութիւնները կը զուգակց ռէի: Միքէն բաց ու պարզ. և եթէ իմ տեղս լինէր առաջին օրը իր զգացման առաջին խլրտման պիտի գար ամեն բան ինձի պատմէր ընկերովի՝ ամենայն պարզամտութեամբ. մինչ ես ամեն կերպ կը ջանամ ծածկեմ սրախս յուզումն ու եռումը. կը մոտածեմ՝ ինչն. արդեօք հպարտութիւն մըն է այս, արդեօք գաղոնի մնալին համայք մը կը լուսամ, թէ պարզապէս հոգիս աւելի խորունկ է: Իմ

Ներքին աշխարհս պղտոր խոր գետի մը պէս կ'երևնայ աչքիս,  
որու խորութեան տակ ամեն շարժում կը ծածկւի հետաքրքիր  
աչքերէ. մինչ Միքէի սիրոը սիրուն լճակ մըն է. ցած ու վճիռ,  
որու թափանցկութեան մէջէն կարելի է համրել յատակի ամեն մէկ  
խիճը. ու կը խորհեմ, թէ այս երկուքէն որն է աղէկ. եզրակա-  
ցութիւն չունիմ. միայն կ'ըզգամ, թէ որքան հակառակ պիտի լի-  
նէր մեր բնաւորութիւն, եթէ Միքէն ինծի պէս ծածուկ լինէր,  
կամ ես բաց նամակի պէս ամենքին մատչելի սիրո մը ունենալի:

—Ի՞նչ կը մտածիս. շատ մի՛ մտածեր՝ շուա կը ծերանաս.

ընդհատեց Միքէն լուութիւնը. տէս, արդէն բաւական նիհարեր եւտ

—Կը մոտածեմ, թէ մի գուցէ սիրահարւած լինիս Վարդուհին  
վրայ, ըսի ժպտելով. այդ ի՞նչ ոգեորութիւն է:

—Ո՞չ, սիրելի, կը սխալիս. ես շատ լաւ գիտեմ, որ այդ ազ-  
նւակերպ օրիորդները իմ սրտիս համար չեն, ինչպէս որ ես ալ  
իրենց սրտին համար չեմ. այդ քաղքի փափկութեան մէջ մեծցող-  
ները իմ արեւէն ացրած գէմքիս շատ չեն ախորժիր, ոչ ալ իմ  
գիւղական հաստ շեշտերէս ու շարժումներէս. անոնց ճաշակին հա-  
մար աւելի քննուշ կազմ պէտք է, աւելի բարակցած խօսք, ու  
աւելի տաշւած ձեւեր:

—Իմ կարծիքով՝ ընդհակառակիր. քաղքուհիները ճիշտ քեզի-  
պէսները սիրոի վինտուին. գիտես, մարդ չախորժիր այն բանէն, որ  
ամէն վաշրկեան ձեռքին տակն է. տարօրինակը, անսպասելին,  
ուժեղը միշտ աւելի անուշ է ու գրաւիչ:

—Այն. գւարձանալու համար միայն հայց ինչ և է. այդ թող-  
նենք հիմա. ես շործ ունիմ. եկալ կառքին համար խօսելու:

—Ի՞նչ կառք:

—Ինչ կառք մի՛. վաղը չէ միւս օր օգոստոս երեսուն ու մէկ:  
Էհէ, պարոնս՝, դպրոցը մոռացմք:

Ե՛ս չէի մոռցած:

Միքէն շարունակեց:

—Վաղը այլ ես քեզի չեմ կրնար գալ. զուն ալ ինծի մի՛ գար.  
զբաղւած եմ. աւելի աղէկ կ'ընես, երթառ փոսթի թրոցկան վար-  
ձես. և միւս առաւօտ մութուն գաս ինծի առնես, որ իրիկունը  
դպրոցը լինինք:

— Լաւ. ըսի մեքենաբար.

Եւ բաժանեցանք:

Մէկ գաղափար մը հիմա մխւած էր գլխուս մէջ. դպրոցը տարօրինակ իրար հակասական մոքեր կ'անցնէին գլխէս. տեսակ մը ցաւ կ'զգացի Դելիջանը թողնելուս. կարծես բան մը մէջէս պիտի պակսէր. միւս կողմէն կարօտցեր էի դպրոցը. կը զգացի, որ բնութենէն կշտացած էի այլ ես. դպրոցական վէճերը, փոթորկալից իրիկոնները միաքս կու գար. սիրած ընկերներս կը չիշէի. ու անհամբերութիւն մը կը թառէր վրաս. և յափշտակութան վացրկեանիս մէջ:

— Երթամ, երթամ, կը կրկնէի. երազներով, յոցսերով, Վարդուկիս սիրովը շաղաղւած աշխատութեան մէջ թաղելու համար տարի մըն ալ. տարին անցնի արագ. և վերջը... ահ:

Ալ կը լուէր լեզուս, բայց երևակայութիւնս շմաս հեռու, շատ վերերը կը տաւառնէր. աջնքան վեր, որ գլուխս պահ մը պտոյս կու գար. ու ինքզինքս աթուին մէջ կը նետէի:

Օգոստոս 30

Տունը ինձի ճանապարհ զնելու պատրաստութեան մէջն են ես մեքենաբար վերջացուցի բոլոր մանր-մունր գործերս: Երբ գրքերս կը կապէի, հեգնական ժպիտ մը խաղաց շրթունքներուս. մեծ մասը գեռ չէի բացած:

Իրիկունը վերջին անգամ պտոյտի ելայ. տխուր էի, այցելեցի բոլոր սիրած տեղերս:

Արդէն մթնելու վրայ էր ու տուն կը վերագառնալի, երբ յանկարծ գաղափար մը յղացաց. Վարդուհինց հովանոցն ալ վերջին այց մը տամ. իսկնժե բան էր, կ'զգաացի. բայց քայլերս արդէն այն կողմ կ'ուղղւէին:

Տունը պարապ էր, լուս ու գոց. բոլոր փեղկերը անցուցած: Պարապ տունը արդէն ինքնին ճնշող բան մը ունի, ունայնութեան գաղափարին հետ յարակցութիւն մը. բայց երբ այդ պարապ տան մէջ երբեմն աղջիկ մը սիրած ես, այդ ճնշումը ուղղակի տան ջանք կը դառնայ:

Պարտէզին ետեի պատը այնքան բարձր չէր՝ դիտէի. և հոնիկ ալ գողի պէս ցատկեցի պարտէզ, այս գողի պէս. ու ցատկա

վայրկիանիս միայն մէկ մտածում՝ ունէի. մտածում՝ մը, որ գողերուն յատուկ է. և արդ չաենէց:

Քանի մը օրւան անխնամ մնալը բաւական էր եղած ածուներու աւրբւելան. քանի մը ջրասէր ծաղիկներ գլուխնին կախեր էին ու դեղներ:

Իմ տիրութիւնս սաստկացաւ: Մտայ բաղեղապատ հովանոցը. սիրոս ճմլւեցաւ. Դստեցայ հոն, ուր սովորաբար կը նստէի ու իմ դէմ Վարդուհին՝ դիրքը ձեռքը, ժպտուն, հերարձակ, շիկնած, ոգեորւած, իր բոցանուու աչքերով... պատկերը հետզհետէ որոշել սկսաւ, իր դէմքի իւրաքանչիւր զիծը կը ցիշէի. բայց ինչ ցիշել. այդ նոյն ինքն է. ինքը՝ Վարդուհին դէսի ինծի հակած, ձեռքը լինած ուսիս: «Վանրդուհի» կը բոցականչեմ ես խելագար ու վեր կը ցատկեմ վիզը փաթթւելու:

...Հիառթափում:

Ուհ, այդ ակնթարթի մը սրտիս պատրանքը շատ սուզի նստեցաւ ինծի. անդարձ կորուստ մը իրականութիւնը հալած ոսկիի կիզանւութեամբ երակներուս մէջ սկսաւ շրջան ընել ու գալ սրտիս վրայ թանձրանալ... կը ճնշւէի, գլուխս կ'այրէր, ուղեղս կը դառնար. ա, խենթենայի պիտի. շնչասպառ գուրս նետւեցայ ու ցատկեցի պարտէզի պատէն:

### Սեպտեմբեր 3, դպրոց.

**Տիսուր եմ: հիւանդի մեզմ տիրութիւն մը:**

**Տիսուր էի ճանապարհին ալ. և հոն արդէն չափազանց:**

Լալկան, ամպոս օր մըն էր, երբ Դիլիջանի ոլորներէն վեր կենէինք: Տեսակ մը ցաւ. հոգիս պատաճ էր. ինծի այնպէս կուդար, որ ամբողջ այն աղւոր անցեալը հոն կը թողնէի. ու կը հեռանայի մերկ, ինչպէս որ զգացումներէ մերկ հոն մտած էի:

Դեռ մինչեւ Սևան զգալի չէր այնքան. Սևան ինծի համար ձգողութիւն մը ունէր. կար կատ մը սրտիս ու այդ վայրի կղզեակին մէջ: Մէկ-երկու ժամէն տեսայ իր գագաթը, իր գագաթի մատոււը. է, որքան տիսուր էր հիմա այդ բոլորը. կը մոտածէի ու հաւտալս չէր գար. երկու շաբաթ միայն առաջ էր այն իրիկունը. կարձես երկու լուր է անցեր:

Ա՛, այս իրիկւընէ ի վեր ի՞նչ զգացումներ եկան ու անցան սրտէս, լեռան հեղեղատի մը ալիքներուն պէս արագ ու գահավէժի Ես կեանք տեսայ այդ միջոցին. ես ապրեցայ:

Եւ հիմա Գեղարքունի լեռներու վրայէն թախծութեամբ կը նայէի այն մատուոին, ուրկէ այն իրիկունը արևի մուտքը կը դիտէինք Գեղարքունի լեռներուն մէջ: Ես ակամայ ցիշեցի բնութեան ոսկի դրամները, որ գանձանակը կը նետէր. Աստւած իմ, արդեօք ես ալ նոյնը չէի ըներ. այս իմ կեանքիս ոսկի օրերը չէին արդեօք, որ անցեալիս գանձանակը կը նետէր... Կը մատէի աչքեր կղզեակին յառած, որ քիչ-քիչ կը փոքրանար:

Ճանապարհը ծուեցաւ լեռնադաշտին մէջ ու լեռան մը ետին մտաւ ծովակը, կղզին ու մատուուը, թողնելով ինծի զգացումներուս բուռն հոսանքին մէջ: Եւ այդ զգացումներս սոսկալի էին. ես գրէթէ կըզգայի այն, ինչ որ կ'ըզգայ յուղարկաւորութենէ դարձող մը. ինծի այնպէս կուգար, թէ յաւիտենասէս բան մը թաղած էի սրտիս խսրերը. և այդ թաղածս, երկինք, հասարակ բան մը չէր, ահուելի, սոսկալի բան մը. ա, գրիչս վրայ չերթար գրելու. այդ թաղածս սէրս էր, իմ առաջին ճշմարիտ սէրս:

Այս մտածումներս շուտով նախապաշարման գոյն մը առնել սկսան. ու ես լրջութեամբ սկսայ զարհութել. ինծի այնպէս կը թէկը թէ ամեն բան կտրտւած է այլ ևս իմ ու Վարդուհիիս մէջ: Այս ցիմար հոգեկան զգայնոտութենէն ազատւելու համար, որ տխուր բնութեան ու տխուր սրտիս հետեանքն էր, Միքէն խօսեցնել սկսայ, որ նիրհելու հակումներ յոյց կուտար:

Իրիկունը ուշ առեն հասանք դպրոց Հեռւէն փայլելուն պէս դրան ճակատի լապտերները՝ մէջս ուրախութիւն մը ցոլաց.

Բոլոր լնկերներս շուրջս. դրկախառնում, զգացման գեղում. համբոյր համբոյրի վրայ՝ փունջերով. կարօտակէզ ձեռքի սեղմումներ. և անվերջ, ոստոտուն, լեցուն խօսակցութեան մը հիւսքը:

Ես այդ վարող յորձանքին մէջ մոռցայ առաւօտեան իմն թութիւններս:

Սակայն հիմա, թէև զեռ չէ անցած երեք օր, արդէն կ'ըմբռնեմ, որ անցաւ այս կեանքին նորութիւնը, յագեցած է կարօտա-

ու ես ակամայ նորէն անցեալին կը դառնամ; Մանաւանդ պարապ ենք, դեռ դասերը չեն սկսած:

Կ'երթամ ամառւան տօթէն չորցած պարտէզը, կը թափառեմ պատերուն տակ առանձին ու կը սուզւիմ մելամաղձուռ երազանքի մը մէջ; Աչքիս առջե դեղնած տերեւները կը թափին թթենիներէն, և ես աւելի կը տիսրեմ: կը տիսրեմ ու կը կատղիմ: Ես այս բոլոր վէպերու մէջ կը կարդացի ու սանտիմենտալ ըսելով կը ծաղրաբանէի. Հիմա իմ գլխութս կու գայ:

Եւ այդ գաղափարէն մորակւած՝ կը վազեմ ընկերներուս քովը՝ անոնց հոսանքին մէջ խառնելու համար: Միայն կ'ըզգամ, որ երբ բարձրաձայն կը խնդամ; կ'երգեմ, կը վիճեմ; կը պուամ; կրծքիս տակ բան մը անձայն կը ճմլէ...

#### Սեպտեմբեր 20

Երկու շաբաթ է յուշատերս նետեր էի. գրելու բան չի կայ: Պարապ բան է՝ զպրոցական սեղաններու վրաց յուշատեր չի պահպիր. երէկը այսօր կը կրկնւի. ոչ յուզում, ոչ կեանք:

Երեք շաբաթ եղաւ, որ անհամբեր նամակի կ'ըսպասեմ. իզնուր միակ միսիթարիչս ընթերցումն է. հոն է զբաղումն, ոգեսորութիւնս ու ինքնամուացումն:

Բայց եթէ ցորէկները դասերու և ընթերցման մէջ խեղդել կուզեմ սրախս յոյզն ու բողոքները, կամ ընկերական շփման ու վէճերու մէջ մոռացման տալ, դիշերները անոնք աւելի ուժ կ'ըստանան:

Նեղարանին մէջ, երբ կը դադրի հսկողներուն երթևեկը, երբ պաղտուկ խօսակցող չարաճիններու փափսուքն ալ կը վերջանայ՝ ես աչքերս գոց կ'ընկղմեմ անցեալիս մէջ ու կ'երազեմ: Յորէկը զազըւած ու բանտարկւած պատկերներն ու գաղափարները ձեռք ձեռքի վրա կը խուժեն. և ես կ'ընկճւիմ: Կ'երեւակացեմ՝ Վարդուհիս, իր ամէն մէկ շարժումը, խօսքը, ակնարկը, համբոցըները... ու ալ շեմ կ'ինար ինք զինքս զապեր. կը գրկեմ բարձս բոլոր ուժովս, կը թաղեմ դէմքս անոր մէջ ու չոր-չոր կը հեծկլատամ...

Եւ այսպէս կ'անցնին օրն ու գիշերները իրարու ետևէ: Ես ամէն օր նամակի կ'ըսպասեմ: Սկիզբները ուշանալլ կը պատճառա-

բանէի. բայց հիմա այլ ևս խելքս չի հասնիր. արդեօք իմ նա-  
մակներս չէ առած. օր օրի աւելի ճնշիչ կը դառնայ վիճակս. եր-  
բեմն յուսահատութեան պէս բան մը կու գայ վրաս:

Հոկտեմբեր 13

**Յանթահարւած էի. ճզմւած, ճմլւած...**

Ա', նախազգացումն ինձի խաբած չէր:

Ճիշտ շաբաթ մը առաջ էր այն գիշերը, այն ցուրտ ու մութ  
գիշերը, երբ ընթրիքէն վերջ, դպրոցի պարտէզին առջեւ, խաւա-  
րին ապաստանած կը քալէի արագ-արագ, դատողութիւնս խառնակ,  
կուրծքս ուռած, կատղած ու քրտնած:

Ե՛, այս կոպտութիւն է, վայրենութիւն, սրիկայութիւն,  
կը մոնչէի բռունցքներս սեղմած. «քոյրս արդէն համոզւելու խելա-  
ցիութիւնը ունեցած է» կը գրէ ինձի. ստախօս. Վարդուհին ինձի  
մոռնաց. ոչ. այս այսպէս չվերջանար. ապուշ, գուն քու նկարներէդ  
տնդին մի՛ անցնիր:

«Ի՞նչ. կը շարունակէի վայրկեան մը մտածելէս վերջը. այ  
վերջացաւ. չնչին թղթի կտոր մը աւրեց իմ ամբողջ չորս ամսո-  
ւան շինած հոյակապ շէնքս. այս, այս թուղթը»

Աւ նամակը բգիկ-բզիկ հովուն կու տայի:

«Ո. ինձի կը խաբէ. անոնք գեռ Թիֆլիս են. և վաղւլնէ շուոր  
չի կայ. կը ձգեմ գպրոցը, ամեն բան, կ'երթամ կը գտնեմ Վարդու-  
հին, մօրը հետ ալ կը խօսեմ: Այս, վաղ առառ կանուխ...»

Բայց այդ վաղ առառն անկողնէս ենիլ չի կրցայ. կարծեմ  
թժիշկը ըսաւ, որ սասափիկ պաղ է առած. շաբաթ մըն է դպրոցի  
հիւանդանոցն եմ. սոսկալի տենդ մը կար վրաս. մէկ-երկու անդամ  
թեթև մը ուշքս կորսնցուցեր եմ. հազիւ երկու օր է, որ տառ-  
քինումն սկսած է:

Նուրբ վիշտ մը կայ կրծքիս տակ, նուրբ ցաւ մը, կարծեն  
վէրք մը, որ կը բանի:

Հոկտեմբեր 19

**Զղջացած եմ նամակը պատռած լինելուս:**

Քանի դեռ յիշողութիւնս թարմ է դրի անցնեմ գէթ բովանդակութեան:

գակութիւնը. ու գրի անցնեմ դահիճի մը ստաղ-արիւնով. սիրոս նորէն պիտի կատղի. որու հոգ:

Առջի երեսը անշան բաներ էին. ամարանոցէն քանի մը բան կը ցիշէր. երկրորդ երեսէն է, որ թոյնը կ'լսկի: Մօտաւորապէս հետեւալլ կը ցիշէմ, որ շատ ցանցիր ու խառնակ կերպով գրած էր:

«Դրելիք մըն ալ ունիմ: կ'լսէր. բայց նախապէս կը ինդրեմ ներող լինիք բաց խօսելուս. քանի որ այլ կերպ անկարելի է այս տեսակ խնդիրներու մէջ: Բարեկամն, և շատ կանուխ նկատեցի ձեր ու քրոջս մէջ եղած յարաբերութիւնը. դեռ եթէ կ'ուզէք նոյն խիկ գիտակցելէն ալ շատ առաջ արդէն նախադուշակած էի. և ապոր համար մարգարէ լինելու պէտք չի կար, երկուրդ ալ նոր հասունցած, երկուրդ ալ եռուն, իրարմէ տարօրինակ ու զգայնու կազմով: Արդ, ձեր երկուրդի իրարու մօտենալլ, ձեր անվերջ առանձնութիւնը ընթերցանութեան համար, այն ալ Դիլիջանի պէս առողջ օդի մէջ ինծի համար շատ պարզ է, թէ ձեզի ուր պիտի տանէր. և ես հեռւէն կը հետեւէի ձեր փոխադարձ զգացման հետղ-հետէ աճելուն: Գուցէ զարմանաք, թէ ինչու շարգելեցի. նախ իրաւունք չունէի ձեր զւարճութիւնը խանգարելու. երկրորդ՝ չեի կրնար. իմ կողմէս չնշին փորձ մը ձեզի հակադրելու՝ դուք երկուրդ ալ աւելի յանդուզն կը զառնայիք և գործը ծայրահեղութիւններու կրնար հասնիր. մինչդեռ իրերու այս վիճակին մէջ շատ լաւ գիտէի, որ ոչ դուք, ոչ ալ քոյրս սահմանէն դուրս պիտի ելնէիք. երկուրդ ալ դեռ շատ անփորձ էք, շատ իդէական, շատ մաքուր ու շատ միամիտ:

«Ձեր յարաբերութիւնը շատ բնական էր ու անխուսափելի: Իսկ գալով ինծի մասնաւորապէս՝ ձեր այդ կապէն դժգոհութիւն մը չունենալէս զատ՝ գեռ շիտակը ձեզմէ շնորհակալ եմ. դուք ինծի ազատեցիք քոյրս զբաղեցնելու, հոս ու հոն պլաւուցունելու հարկէն, որ իմ նկարչական սկարապմունքներէս բաւական զգալի ժամանակ կը խլէր:

«Անշուշտ կ'լսապահէք, թէ այս յառաջաբանիս իմաստը ի՞նչ է. կը գուշակեմ. դուցէ արդէն անհամբերութեամբ կը կարգաք ու ձանձրալի կը գտնէք: Ներեցէք, երիտասարդ բարեկամն, այս բոլոր լսելը անհրաժեշտ սեպեցի եզրակացութեանս համար. միայն

կը խնդրեմ սառնարիւն լինիք, ես այս նամակս դիտմամբ ամիս ու կէս ուշ կ'ուզարկեմ, որ անցեալի թարմ ազդեցութիւնէն քիչ մը գէթ սթափած լինիք:

«Ամառը որքան որ զւարճանաք՝ դուք ու քոյրս՝ այդ ձեր իրաւունքն էր ու խելացի. իսկ երբ ամրան անցնելէն ալ վերջը նոյն երազներով կ'ապրիք ու նամակ նամակի վրայ քրոջս կը դրէք՝ այդ արդէն չափազանցութիւն է և, ներեցէք արտայացութեանս, այն չափ ալ խելացիութիւն չէ:

«Իիթէ իրաւ դուք կ'երազէք ձեր ապագան քրոջս հետ կապէք. տղայութիւնն է այդ. դուք գեռ աշակերտ մըն էք, գեռ պատանի մը դրեթէ. և շատ կանուխ է կարծեմ այդ խնդիրներու վրայ խորհելու համար. պիտի առարկէք, թէ կ'ըստասէք մինչ որոշեալ տարիքնիդ. բայց նախ՝ մի՞թէ կը կարծէք, թէ քոյրս կարող է սպասել, և երկրորդ՝ ինչո՞ւ սպասէ. ձեր ապագան ի՞նչ է. ո՞վ կրնայ երաշխաւորել: Այս բոլորը ինծի չվերաբերիր անշուշտ. բայց դուք շատ անփորձ ու միամիտ էք գեռ, բարեկամս, և կ'ուզիմ ձեզի համոզեմ:

«Ի՞նչ որ ձեզի կը դրեմ՝ խօսած եմ և քրոջս. առաջ լացաւ, ինծի յանդիմաննեց, վշտացաւ, սպանալիքներ ըրաւ. բայց հիմա արդէն կամաց-կամաց համոզելու խելօքութիւնը ունեցած է ու համակերպած անհրաժեշտութեան:

«Ձեզի այս ալ ըսեմ, որ քրոջս ուղարկած նամակնիդ և ո՞ւ մէկը քրոջս ձեռքը հասած է. բոլորը ես եմ վար դրած ու պառուած: Անհանդիստ չը լինիք՝ չեմ բացած. նախ որ այդ յանցանք է. և երկրորդ որ արդէն առանց բանալու դիտեմ, թէ ինչ պիտի դրած լինի մէջը: Սիրելիս, այդ նամակներէն ես ալ բաւական խմբագրած եմ ժամանակին: Անշուշտ իմ այս մէկ ասօրինութիւնն կը ներէք. եթէ այդ նամակները քոյրս կարդար՝ աստիճան մը աւելի պիտի դժւարանար զործս: Դուք քանի որ քոյրս՝ կը սիրէք պիտի չուզէք, որ աւելորդ չարշարանքներ կրէ խեղճը:

«Իսկ ասկէ վերջը, սիրելիս, դրելու աշխատութիւնը յանձն չառնէք, որովհետև այս շաբթու ընտանիքով Թիֆլիսէն կը մեկնենք բժիշկներու ոլատուհրով. մօրս ջղային դրդութիւրը սաստ կացան:

«Կը յուսամ, ազնիւ բարեկամն, որ այս անկեղծ նամակէս չէք վշտանար. իսկ թէ ապագային չափագանց շնորհակալ պիտի լինիք՝ հասուառ գիտեմ: Այդ պատմութիւնները ամենքի գլխովն ալ անցած են:

«Բարեկամաբար ձեռքերնիդ սեղմելով՝ վերջին անգամ մըն ալ իրսեմ՝ ներկան անցեալի հետմի՛ շփոթէք. անցածը անցաւ:»  
Անցածը անցաւ...

## ԵՐՆԵԿ

ՇԱՆԹԻ

Երնեկ շիթ մը լինիմ ցողի՝  
Կաթիմ կուրծքը թոշնած ծաղկին.  
Թարմութեամբըս իմ կենսալի  
Վայրիեան մըն ալ տամ իր կեանքին.  
Կամ թէ նւր է, որ ես դառնամ  
Տաք արդունքի պոտկում մը յորդ  
Ու սառոցի կոյտը բառնամ  
Աշոտ կուրծքէն յուսակարօտ.

Միայն, երկինք, գէթ մի անգամ  
Էութեամբըս ես պէտքի դամ:

Երնեկ լինիմ սիւք քաղցրաշուն:  
Դէպ երազող զոյգը վազեմ  
Եւ կուսական մազէն մի փունջ  
Տղու տարփոտ գէմքին ցանցեմ.  
Կամ թէ դառնամ փոթորկոտ հով  
Ու խորտակեմ բերդն այն հըսկաչ,  
Որ լեռներու ծայրն ասլահով  
Տկարին դէմ կը յոխորդայ.  
Միայն, երկինք, գէթ մի՛ անգամ  
Այս կեանքին մէջ ես պէտքի դամ:

Երնեկ լինիմ երազ անուշ,  
 Կուսանոցին ներս սրազըրդիմ  
 Ու տամ փունջ-փունջ յոյզեր քընքուշ  
 Կեանք երազող անկեանք սըրտին.  
 Եւ կամ մւր, որ երկնային  
 Տէսիլ դառնամ քերթողին դէմ;  
 Պատուեմ քօղը ասղագային  
 Նոր ներշընչում իրեն ազդեմ.  
 Ու կեանքիս մէջ գէթ այս անգամ  
 Պէտքի դալըս սըրտէս ըզգամ:

Երնեկ լինիմ ես զերդաշնակ  
 Թաւալում մը եղանակի  
 Եւ իմ զիւթի; զրդւանքիս տակ  
 Տամ ձեզ բաժակն անլնջանքի.  
 Կամ ձընշըւող կուրծքէ ժայթքած  
 Բուռըն երդ մը լինիմ անգութ.  
 Աննըսպատակ, անսիտ, յամքած  
 Զեր խեղճ կեանքը տամ երեսնուդ.  
 Ա'ս, մի'միայն գէթ մի' անգամ  
 Պէտքի դալըս սըրտէս ըզգամ:

## ՀԵՐՄԱՆ ԵՒ ԴՈՌՈԹԵԱ

ԻՈԶԱՆ ՎՈԼՖԳԱՆԳԻ ՖՈՆ ԳԵՅԹԵԿԻ

Թարգմանութիւն ԲԺ. Լեռն Տիգրանեանցի

(Ծարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

ՄԷԼՊՈՄԷՆԵ<sup>2)</sup>

ՀԷՐՄԱՆ ԵՒ ԴՈՌՈԹԵԱ

Կրանք դիմեցին դէպի արևմուտք, ուր արեգակն արդէն խոնարհւել էր դէպի իր մուտքը, թագնւել մըրկածին ամսկերի յետերքեմն ամսկերի միջից ցոյց տալով իր հրաշէկ ճառագայթան հայեացքը՝ տարածւում էր գաշտերի վրաց մի տեսակ խորհրդաւոր լուսաւորութիւն։ Երանի, ասեց Հէրմանն, այս սպառնալի եղանակն երկնքից կարկուտ և հեղեղ չբերի, որովհետև կոչնչացնի մեր ցանքերը։ Երկուսով էլ ուրախանում էին տեսնելով բարձր ցորենի երերւող հասկերը։

Աղջիկն ասեց իր ուղեկից բարեկամին՝ դուք բարի էք և ի՞մ վիճակիս համար ձեզ շատ շնորհակալ եմ, որ պատսպարում էք ինձ՝ աքսորւածիս, այս մըրկացին եղանակի ժամանակ։ Բայց այժմ

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1895 թ. № 1 և 2.

<sup>2)</sup> Մէլպոմէնէ, ալտինգն երգչուհի, ողբերգութեան ներկայացուցիչն է։ Ծ. Թ.

ասեցէք և տեղեկութիւն տւէք ինձ ձեր ծնողների մասին, որոնց ես պարտաւոր եմ բոլոր հոգովս ծառայելը Եթէ մարդ ճանաչում է իր ամբոջը՝ կարող է նաև նրա մտածածը շուտով կատարել և գոհացնել նորան։ Այդ պատճառով էլ խնդրում եմ ասէք, ի՞նչպէս կարող եմ ծնողաց սիրուլ շահել։

Խելացի երիտասարդն ասեց՝ դու իրաւացի ես, ազնիւ և բարեսիրտ աղջիկ, որ ամենից առաջ կամենում ես իմանալ ծնողներիս պահանջը։ Երբ սկսեցի կառավարել մեր հողերը և յետոց այգին, ամենայն կերպ աշխատում էի սրտով ծառայել հօրս՝ նրա պահանջներին համաձայն, բայց բոլորն իզուր էր, իսկ մայրս գոհ էր ինձանից և գնահատում էր աշխատանքս։ Մայրս քեզանից բոլորվին գոհ կը լինի՝ եթէ մեր տունը կը կառավարես ինչպէս քո տունը։ Բայց հօրս բաւականացնելը դժւար է, որովհետեւ հայրս սիրում է ձեւականութիւնը։ Դու լաւ աղջիկ ես և խնդրեմ չհամարես ինձ սառնասիրտ և անզգայ, որ հօրս պակասութիւնը բարձրածայն ասում եմ քեզ, թէսկէտեւ դեռ մեզ համար օտար ես։ Այն, երգւում եմ, այս առաջին անգամն է, որ բերանիցս այբակէս մի խօսք դուրս թռաւ, և այդ պատահեց, որովհետեւ ես քեզ հաւատում եմ։ Հայրս պահանջում է սիրոց արտաքին ցոյցեր և պատիւ, ևա լնդունակ է սիրել ամենափատ ծառային, որ կարողանում է իրեն սիրել տալ և առել ամենալաւին։

Աղջիկը, թեթևութեամբ արագացնելով իր քայլերը, ժպտալով ասեց՝ նրանց պահանջը կատարելով ես յոյս ունիմ՝ որ կարողանամ երկուսին էլ ծառայել։ Զեր մօր ցանկացածն էլ իմ բնաւորութեանս համաձայն է, իսկ արտաքին ձեւականութեանը մանկութիւնից սպոր եմ։ Մեր դրացի Վրանսիացիք առաջ քաղաքավարութեանը մեծ նշանակութիւն էին տալիս նրանք մեծ քաղաքավարութիւն էին պահանջում թէ ազնւականներից, թէ քաղաքացիներից և թէ հասարակ դիւզացիներից։ Դրանց ագուցութեամբ մեր դերմանացոց մէջ էլ սովորութիւն դարձաւ, որ երեխաներն առաւօտեան համբուրեն ծնողների ձեռքը, սամնան նրանց օրհնութիւնը և ամբողջ օլը հետեւն քաղաքավարական ձեւերին։ Ինչ որ մանկութեանս հասակում սովորել եմ և ինչ սրաիցս բղխում է այդ բոլորն էլ կարտացայտեմ նրանց։ Բայց այժմ ոչի ինձ պէտք է

սովորցնի թէ ինչպէս պէտք է վարւեմ ձեզ հետ, որ ծնողներիդ  
միայնակ զաւակն էք և իմ ապագայ տէրը և հրամայովը:

Այսպէս խօսելով մօտեցան տանձենուն:

Լուսնեալը հրաշալի փայլում էր երկնակամարում: Արդէն  
մթնել էր և արեգակի վերջնալոյսը բոլորովին անհետացել էր  
Նրանք տեսնում էին լուսատու լապտերներ և գիշերացին մութ  
սուերներ: Հերմանն ու րախութրամբ լսեց նրա գուրեկան հարցը  
գեղեցիկ ծառի տուերի տակ, այսինքն այն տեղում, որ նրան  
քաղցր էր և որ տեսել էր նրա արտասուզն աքսորւած աղջկաց  
պատճառով: Երբ նստեցին այդ տեղ հանգստանալու սիրահար երի-  
տասարդը բռնելով աղջկաց ձեռքը՝ ասեց, թող քո սիրար քեզ ասի  
և ամէն բանում հետեւիր սրտիդ ձգտումներին: Թէպէտեւ գէպքը  
շատ յաջող էր, բայց Հերմանը համարձակւեց մի խօսք ասել, վա-  
խենում էր բացասական պատասխան ստանաց, որովհետեւ իր  
ափում շօշափում էր մասանին, որ աղջկաց մասին էր և որը  
նրա համար մի ցաւալի նշան էր:

Նրանք լուս ու մունջ միասին նստած էին:

Վերջապէս աղջիկն ընդհատելով լուսութիւնն ասաց՝ ի՞նչպէս  
գեղեցիկ է լուսնեալի փայլը, համարեա ցերեկւաց պէս լոյս է տա-  
լիս: Այստեղից պարզ երեսում են քաղաքի տները, բակերը և ան-  
այն տան տանիքի տակ երեսում է մի լուսամուտ, որի ապակիները  
կարելի է նաև համարել:

Այն տունը, որ տեսնում ես, մերն է, ասեց Հերմանը. այդ  
տեղ եմ տանում քեզ, և տանիքի տակի այն լուսամուտը իմ սե-  
նեակի լուսամուտն է, որ կարելի է թէ մի օր քո սենեալը դառ-  
նաց: Այս ցանքերն էլ մերն են և արդէն հասել են: Այս ծառի  
սուերի տակ մենք երբեմնապէս կը հանգստանանք և կը ճաշենք:  
Բայց լաւ կը լինի, որ անցնենք այս այգիով ու պարախլով և տուն-  
գնանք, որովհետեւ ու ամպերը մօտենալով ծածկելու են լուսնեա-  
լով: Նրանք վեր կացան և զւարձանալով լուսնեակի լուսով՝ իջան  
կը: Նրանք վեր կացան և զւարձանալով լուսնեակի լուսով՝ իջան  
ցորենի միջով: Հասան մինչև այգին և մտան սուերների մէջ:  
Հերմանն առաջնորդում էր աղջկան հասարակ քարերի վրայով:  
որոնք ծառայում էին որպէս սանդուղքներ և տանում էին գէպի  
հովանոցը: Աղջիկը ձեռքը դրած Հերմանի ուսին՝ զգութեամբ

իշնում էր: Լուսնեակը ծառերի միջով նայում էր նրանց վրայ մինչև որ ծածկւեց ամպերով:

Աւժեղ Հէրմանը զգուշութեամբ պահպանում էր աղջկան, որ մանապարհին անտեղեակ լինելով՝ յանկարծ սացթաքեց, ոտը ճում անցրեց և փոքր էր մնում, որ վայր ընկնի, բայց այդ միջոցին ազնիւ երիտասարդը ալարգեց իր թել և բռնելով նրան՝ չժողեց որ իր սիրածը վայր ընկնի: Աղջիկը յենւեց Հէրմանի ուսին այնպէս, որ կուրծքը կուրծքին էր հաւում և այտն այտին: Հէրմանը մի բոլէ անշարժ կանդնեց որպէս մարմարինի արձան, բայց զըսպելով իրեն՝ չսեղմեց նրան, այլ միայն նեցուկ գառաւ նրա համար: Նա զգում էր աղջկայ քաղցր ծանրութիւնը, սրտի բաբախիւնը և շնչառութեան բալասանը, որ բուրում էր Հէրմանի շրթունքների վրայ և այրական զգացմունքով զիմացաւ օրիորդի ծանրութեանը: Աղջիկը թաքցնելով իր սրտի ցաւը՝ կատակով ասեց. Խորամիտ անձինք վատ նշան են համարում, երբ տուն մտնելուց առաջ՝ շէմքի մօտ մարդու ոտը ճում է անցնում: Ես ինձ համար աւելի լաւ նրան կը ցանկացի: Թողէք փոքր ինչ հանգստամանք, որ ձեր ծնողները չմեղադրեն ձեզ, որ կադ աղախին էք բերել, ու ձեզ վատ տնարար չհամարեն:

### Ո Կ Բ Ա Ն Ի Ա 1)

#### Հ Ա Ի Ա Ն Ո Կ Թ Ի Ի Ն

Մուսաններ, դուք որ ուրախութեամբ հովանաւորում էք անկեղծ սէրն, առաջնորդեցիք ազնիւ երիտասարդին այդ մանապարհով և նշանադրութիւնից առաջ սեղմեցիք աղջկան նրա կրծքին, օգնեցէք, որ այդ սիրահար զոյգի կապը հաստատի: Ցրեցէք այն ամպերը, որոնք ծածկում են նրանց բախտը:

Բայց նախ և առաջ ասեցէք, թէ այժմ ինչ է պատահում Հէրմաննեց տանը:

Մայրն երրորդ անգամ անհամբերութեամբ մտաւ այն սե-

<sup>1)</sup> Ուրանիա՞ն երկնակին է, Ցէլսի և Մոնոպինէ՛ի աղջիկն է, աստղաբաշխութեան մուսան է, այդ պատճառով էլ նրան նկարում են երկնադունդը ձեռքին,

նեակն, ուր նստած էին տղամարդիկ, մի քանի խօսք ասեց մօտալուո մըրկի մասին, լուսնեակի ամակերով ծածկւելու մասին և երկիրը խաւարով պատուելու մասին. յետոյ ցաւելով յայտնեց, որ Հէրմանը չի վերագարձել և որ գիշեր ժամանակ կարող է մի վտանգ պատահել, յանդիմանեց իրենց երկու բարեկամներին, որ առանց աղջկան տեսնելու և խնամախօսելու՝ թողեցին այնոեղ Հէրմանին և իրենք եկան:

Դրացի գեղագործը հանգստութեամբ ասեց՝ այսպէս անհանգիստ ըոսկէներում ես երախտիք եմ զգում գէպի իմ հոգելու հայրը, որ երեխացութեանս ժամանակ արմատախիլ արաւ իմ անհամբերութիւնս այնպէս, որ զրանից մի հետք անգամ չմնաց և ես սովորեցի համբերութեան, որպէս ոչ մի փիլիսոփայ:

Ասեցէք, հարցրեց քահանան, Զեր հայրն ինչ ճարպիկութիւն գործ դրեց, որ կարողացաւ իր նպատակին հասնել:

Ես այդ ուրախութեամբ կը պատմեմ, ասեց գեղագործը, որովհետեւ ամեն մարդ կարող է միտք պահել և օգտաել: Երբ փոքր էի, մի կիւրակի մեծ անհամբերութեամբ սպասում էի կառքին, որ պէտքէ մեզ տանէր գէպի այն աղբիւրը, որ գանւում է լորենիների տակ: Կառքն ուշանում էր, ես վազվզում էի աքիսի նման այս ու այն կողմն, իջնում, ելնում էի սանդուղքները, թռչում էի լուսամուտից գէպի գուռը, ձեռներս եռում էին, բարկութիւնից չանգուստ էի սեղանները, ոտներովս տրոփում էի և պատրաստ էի լուսամուտից: Այդ անկարգութեան վրայ հայրս նայում էր հանդարտութեամբ, բայց երբ անկարգութեանս սահմանը անցաւ՝ նա բռնեց թեիցս, տարաւ ինձ լուսամուտի մօտ և ասեց, տեսնմամ ես այն տեղ, հիւսնի կողպած խանութը, էգուց կը բացւի, այնուեղ առաջ գործում մինչեւ երեկոյ գործում է ուրագն ու սղոցն. Իմացիք, որ լուսից մինչեւ երեկոյ գործում է ուրագն ու սղոցն. Այդ բոլորն իսկո՞ն էգուց լոյսը կը բացւի, վարպետն իր աշակերտների հետ միասին դագաղ կը պատրաստին, որ ծանր խուփ ունի և որով կը տանեն առաջ անհամբերներին և յետոյ համբերողներին: Այդ բոլորն իսկո՞ն պատկերացրի երեակացութեանս մէջ, տեսայ միացրած տախտակները և պատրաստած սև ներկը, նստեցի և համբերութեամբ սպասեցի կառքի գալուն: Այժմ երբ տեսնում եմ, որ մարդիկ անհամբերութեամբ վազվզում են՝ ես դագաղն եմ մատաբերում:

Քահանան ծիծաղելով ասեց, իմաստուն մարդու համար մահը զարհութելի է, իսկ հաւատացողի համար վերջնական վախճան չէ: Առաջիններին մզում է կեանքի մէջ և սորիպում է գործել, վերջիններին տալիս է ոյժ յաւիտենական փրկութեան համար, իսկ թշուութեան ժամանակ տալիս է յոյս: Մահը երկուսի համար էլ կեանք է: Հայրդ սիալմամբ է ցոյց տւել քեզ, զգացուն երեխայիդ, որ մահը—ոչնչանալ է: Աւելի լաւ կը լինի ցոյց տալ երիտասարդին ազնւութեամբ մեծանալու արժանաւորութիւնն, իսկ ծերերին յիշեցնել երիտասարդութիւնը, որպէս զի երկուսն էլ ուրախութեամբ տեսնեն այդ մշտնջենաւոր շրջանն, այն է՝ որ կեանքին կեանք է հետևում:

Դուռը բացւեց և գեղեցիկ զոցգը ներս մտաւ, բոլորն էլ զարմացան հարսն ու փեսայի կազմւածքի և գեղեցկութեան վրայ: Երբ երկուսն էլ շեմքից միասին անցան՝ զուռը նեղ էր երկում երկուսի համար: Հէրմանը ներկայացրեց աղջկան իր ծնողներին՝ ասելով, ահա այն աղջիկը, որ կամենում էիք ձեր տանն ունենալ: Սիրելի հայր, բարեսրտութեամբ ընդունեցէք սրան, սա արժանաւոր է. և զուք, սիրելի մայր, քննեցէք տնարաբութեան վերաբերմամբ, որ տեսնէք արժանի է արդեօք ձեր մօտ լինելու: Եւ հրաւիրելով քահանային մի շկզմը՝ ասեց, պատւարժան Հայր, օգնեցէք ինձ այս գժւար բուդիում և գուրս բերէք ինձ այս ծանր դրութիւնից, որից ես սարսափում եմ: Ես աղջկան շեմ բերել որպէս հարս, նա կարծում է, որ եկել է մեղ մօտ որպէս աղախին, ես վախենում եմ, որ նա զնայ, եթէ իմանայ, որ մենք պատկի մասին ենք մտածում: Բայց հենց այժմ վերջացրեցէք գործը: Աւելի երկար չպէտքէ պահնել նրան մոլորութեան մէջ, ես էլ այլ ևս չեմ կարող մոլորութեան մէջ մնալ: Նուալեցէք այստեղ էլ ցոյց տալ Ձեր իմաստութիւնը, որ մենք յարգում ենք:

Քահանան կամենում էր խօսել, բայց տարաբախտաբար տանտիրոջ խօսքերն արդէն վիրաւորել էին աղջկայ սիրտը: Տանտէրն իրախուսելով և լաւ մտադրութեամբ ասել էր, այ՞ս, ես հաւանում եմ, որդեակ, ես ուրախութեամբ տեսնում եմ, որ որդիս իր հօր նման լաւ ճաշակ ունի, ես երիտասարդութեանս ժամանակ պարելու համար վիճորում էի ամենագեղեցիկ աղջկան և վերջապէս

ինձ համար գտայ մի ամենասիրուն հարսնացու և որպէս կին տուն բերեցի, ահա զա մայրիկն էր: Հարսին նայելով մարդ տեսնում է, թէ փեսան ի՞նչ հոգեկան և մոտաւոր արժանաւորութիւններ ունի Բայց միմեանց հաւանութիւն տալու համար շատ քիչ ժամանակ էք գործադրել, միայն ինձ թւում է, որ Հերմանի համար շատ դժւար կը լինէր չհետեւել իր այդ որոշմանը:

Հերմանը հազիւ լում էր խօսքերը և ներքուստ դողում էր Յանկարձ ամրող հասարակութիւնը լսեց:

Նազելի աղջկան թւաց, որ ծիծազում են նրա վրայ. շատ վիրաւորւած, կարմրած վեր կացաւ և զսպելով իրեն՝ առանց թագանելու իր վիրաւորանքն՝ այսպէս խօսեց. ուղիղն ասած՝ ձեր որդին՝ չնախապատրաստեց ինձ այլպիսի ընդունելութեան, նա նկարագրեց ինձ իր հօրը, որպէս մի պատւական քաղաքացի: Ես գիտեմ, որ կանգնած եմ մի խելացի մարդու առջեւ, որ գիտ արժանաւորապէս վարւել այն մարդու հետ, որի հետ նա խօսում է: Բայց երեսում է, որ դուք բաւարար կարեկցութիւն չունեք գիտի մի աղքատ, որ անցնելով ձեր տան շեմքը, պատրաստ է ծառացի ձեզ, հակառակ գէպքում դառը հեգնութեամբ չէիք հասկացնի ինձ, թէ որքնն հեռու է իմ գրութիւնը ձեր որդու և ձեր գրութիւնից: Իրաւ է, որ ես եկել եմ ձեր տուն՝ որպէս աղքատ, մի կապոց ձեռքիս, իսկ ձեր տունը լիքն է, որ և ձեզ ուրախ և երջանիկ է դարձնում, բայց ես ինձ վրայ վստահ եմ և հասկացողութիւն ունիմ՝ մարդկանց յարաբերութեանց վրայ: Տիթէ լաւ է, որ հնաց սկզբից վիրաւորում էք ինձ այնպիսի հեգնութեամբ, որ հազիւ չէմքը հասած՝ քշում է ինձ ձեր տնից:

Հերմանն աչքով արեց քահանացին, որ խօսակցութեան մէջ մտնի և սիսալն ուղղի:

Քահանան առաջ անցնելով տեսաւ աղջկայ լուռ տրտմութիւնը թազցրած վիշտը և աչքերի արտասուքը: Նա մտածեց, որ աւելի լաւ կը լինի ոչ թէ կասկածը փարատել, այլ քննել աղջկայ վրդով ւած հոգին:

Կամենալով փորձել նրան՝ քահանան ասեց. օտարուհի, երբ վճռում էիր ծառայութեան մանել, լսու չէիր մտածել, թէ ի՞նչ է նշանակում մանել մի տուն, ուր պիտի հրամային քեզ: Եթէ, որի-

նակ, մէկը խոստանում է ծառայել մէկ տարի, ծառայի այդ տարայ վճիռը որոշ է և համաձայնութիւն տալը ստիպում է նրան շատ բան համբերութեամբ տանել: Ծառայութեան դժւարութիւնը քրոնաբեր աշխատանքը չէ, որովհետեւ ծառայի հետ աշխատում են նոյնպէս միւս մարդիկ, այլ տիրոջ քմահաճութեան համբերելն է, երբ նա անարդարութեամբ է յանդիմանում կամ փոփոխում է իր ցանկութիւնները, այլ և կանանց տաք բնաւորութիւնը, որոնք երբեմն, անկիրթ և հպարտ երեխաների նման շատ շուտ բարկանում են. ահա դրանք են դժւար տանելի, բայց այնուամենայնիւ պէտք է պարտքը շուտ կատարել և դժգոհութիւն ցոյց չտալ: Ինձ թւում է, որ դու այդքան համբերութիւն չունիս, որովհետեւ տան տիրոջ կատակները քեզ խիստ վիրաւորեցին: Այն ինչ, շատ սովորական բան է, երբ բարկացնում են մի աղջկայ, որ հաւանում է մի երիտասարդի:

Աղջիկը լաւ հասկացաւ քահանայի խօսքերը և այլ ևս չկարգացաւ զսպել իրան, նա վրդովւեց, նրա կուրծքն սկսեց բարձրանալ և մի խոր հոգւող հանելով՝ արտասւեց ու ասեց. Ո՛հ, նաև խելացի մարդը, որ կամենում է դժբախտութեանս ժամանակ բարի խորհուրդ տալ, չղիտէ, թէ սառնասրութեամբ արտասանած խօսքն ինձ չի մսիթարիլ, որովհետեւ ճակատագիրը ինձ թշւառութեան մէջ է զլորել: Դուք ուրախ և երջանիկ էք, ինչպէս կարող է կատակը ձեզ վիրաւորի: Երեւալ, բայց պէտք է գիտենաք, որ վիրաւորւածը խիստ ցաւ է զգում, երբ նրա վէրքին անգամ մի թեթեւ ձեռն են տալիս: Ո՛չ, ինձ ոչինչ չի կարող օգնել, եթէ նաև կեղծել կարողանացի: Թող հէնց այժմ յայտնւի ինչ որ յետոյ կարող է աւելի ցաւալի թւալ և, կարելի է, որ ինձ շատ մեծ թշւառութեան մէջ դցի: Թոցը տւեք, որ յետ գնամ: Ես չեմ կարող այս տանը մնալ: Ես կը գնամ որոնելու իմ աղքատ բարեկամներին, որոնց ես թշւառութեան մէջ թողեցի, ցանկանալով բարւոքել իմ դրութիւնը: Ես այդ վճռել եմ և յայտնելու եմ ձեզ այն, ինչ որ տարիներ շարունակ պէտք է մնար սրտում: Այն, տանտիրոջ հէգնութիւնն ինձ շատ վիրաւորեց, ոչ այն պատճառով, որ հպարտ կամ զգացուն եմ, որ անվայել է մի աղախնի համար, այլ որովհետեւ մի առանձին համակրութիւն զգացի դէպի այս երիտասարդը, որ

այն օրը յայտնւեց որպէս մի փրկիչ։ Երբ նա հեռացաւ՝ ես չէի կարողանում հանել նրան իմ ցիողութեանս միջից, ես մտածում էի այն բախտաւոր աղջկաց մասին, որին նա կարելի է որ սրտանց ընտրել է իր համար, և երբ նրան կրկին տեսայ աղքիւրի մօմա այնչափ ուրախացայ, որ կարծես թէ երկնացիններից մեկն իջաւ ինձ համար։ Բայց ճանապարհին սիրոս ասում էր (աղէոք է խոստովանւիմ), կարելի է որ նրան արժանի լինիմ, և թէ երբ և իցէ կարողանամ այս տան համար արժանաւոր նեցուկ դառնալ. բաց ախ, այժմ միայն տեսնում եմ այն վտանգը, որի մէջ ինքս ինձ գրած կը լինիմ, եթէ ապրեմ իմ դաղոնազողի սրտով սիրածիս հետո։ Այժմ միայն զգում եմ որքան հեռու է աղքատ աղջկը. մի հարուստ երիտասարդից, եթէ նա մինչև անդամ ունենար պահանջւած ամենալաւ յատկութիւնները։ Այս բոլորն ասեցի, որպէս զի ճանաչէք իմ սիրոը, որ միայն պատահմամբ վիրաւորւելով վրդովից զգայութիւնս։ Ես լուս թագցնելով զգացմունքներս, պէսք է տեսնեի թէ ինչպէս նա իր համար մի ուրիշ հարսնացու տուն կը բերէր։ Այն ժամանակ ես ինչու պէտք է կարողանացի տանել ծածկաբար սուացած ցաւերս։ Յաջող գէպքն ինձ նախազգուշացրեց և այժմ բարեբախտաբար այդ խորհուրդը դուրս եկաւ սրտից և այդ ցաւը բուժւել է։ Այդ բոլորը լսեցիք և այսուհետեւ այս տան հետ ինձ ոչինչ չի կապում, ու. ես այժմ լի ամօթով և անհանգըստութեամբ գտնուում եմ, որովհետեւ խոսանվանեցի սէրն և անմիտ յոյսս։ Այժմ ինձ չեն կարող արգելել տուն գնալու ոչ գիշերացին մթութիւնը, որ տարածւել է խոնարհւող ամպերի տակ, ոչ ամպերի որոտումը (որ լսում եմ), ոչ անձրեկ սաստիկ տարափը, որ գրսում թափում է և ոչ էլ հողմի մանչինը չի կարող ինձ արգելել գնալ։ Այդ բոլորը կըել եմ ես մեր ողբալի փախուստի ժամանակի, երբ թշնամին անմիջապէս հալածում էր մեզ։ Այժմ ճակատագրիս որոշմամբ և ժամանակի հոսանքով գերւած՝ սոխպւած եմ բաժանւել և հեռանալ։ Մնաք բարե, այլ ևս մնալ չեմ կարող, ամեն ինչ կատարւած է։

Այս ասելուց յետոց իր հետը բերած կապոցը ձեռքին դիմեց գէպի դուռը։

Բայց տանտիկինն երկու ձեռքով գրկեց աղջկայ մէջը և

զարմանալով ու ապշելով գոչեց. ասա՞ այդ ինչ է նշանակում, ինչու համար է այդ արտասուքը: Ա՛չ, ես քեզ չեմ թողնիլ, դու իմ որդու հարսն ես:

Տանտէրը նայելով արտասւողի վրայ՝ դժկամութեամբ վերկացաւ և խոժուած ասեց, ուրեմն այդ է իմ դէսի ձեզ ունեցած զիջողութեան փոխարէնն, որ հէնց երեկոյեան ինձ այլովէս մի անախորժութիւն էք պատճառում: Ինձ համար անամնելի է կանանց արտասուքը և յուզմոնքը, այն ինչ՝ եթէ փոքր ինչ խելացի վար ւէիք՝ կարելի կը լինէր ամեն ինչ հանգարառութեամբ կարգադրել. ինձ համար ծանր է ականատես լինել այլովիսի տարօրինակ սկզբնաւորութեանը, վերջացրէք ինքներդ, ես գնում եմ հանգստանալու: Այդ ասելով շուռ եկաւ և զիմեց դէսի իր ննջարանը, ուր նու սովորաբար հանգստանում էր: Բայց որդին աղերսական խօսքերով կանոնեցրեց նրան՝ ասելով. հայր, մի՛ շատպէք և մի՛ բարկանք աղջկայ վրայ: Այս բոլոր թիւրիմացութեան պատճառը միայն ես եմ, որ մեր բարեկամն անսպասելի կերպիւ բարդեց: Խօսեցէք, պատճական հայր, ձեզ եմ վստահանում այս գործը: Մի վախենաք և մի՛ նեղանաք: Բոլոր գործը մի անգամից վերջացրեցէք: Ապա զայում ես ձեզ այնքան բարձր չեմ համարի, եթէ դուք իմաստութեան տեղ չարամութիւն գործադրեք:

Յարգելի քահանան ժամանակ ասեց. ինչ տեսակ հմտութիւն հարկաւոր էր, որ կարելի լինէր դուրս քաշել այս բարեսիրա աղջկայ խօսուովանութիւնը և նրա սիրտը բաց անէր մեր առջև: Միթէ այժմ այս հոգսը քեզ չի զմայլեցնում և ուրախացնում, դէ՞հ, ինքդ խօսիր, ինչու են պէտք ուրիշի բացարութիւնները: Այդ ժամանակ Հէրմանը քաղցրութեամբ ասեց, թող արտասուքը և բոսկական վիշուը չանհանգստացնեն քեզ, որովհետեւ դրանք ծառացում են քո և իմ բախտաւորութեան համար: Ես չեկայ աղբիւրի մօտ, քեզ, սքանչելի աղջկադ, աղախին վարձելու, այլ եկայ քո սէրը գրաւելու: Բայց միս, ամօթխած աչքս չէր կարող տեսնել քո սրտի համակրութիւնն, այլ աչքերիդ մէջ տեսայ միայն սիրալիրութիւն, երբ աղբիւրաջրի հայելու մէջ ինձ ժապառում էիր: Պեղ մեր տուն բերելն արդէն իմ երջանկութեանս կէսն էր: Կատարեալ արա իմ բախտաւորութիւնս, թող քո մուտքն օրհնութիւն բերէ տանս վրայ:

Աղջիկը սրտաշարժ նայեց երիտասարդին, երկուսն էլ գրկեցին և համբուրեցին միմեանց, որ նրանց ամենաբարձր բաղձանքն էր, որ և սիրահարւածների համար տենչալի գրաւական է կեանքի ապագայ և անվերջ բախտաւորութեան համար:

Այդ միջոցին քահանան միւսներին ամեն ինչ բացատրել էր:

Աղջիկը մօտեցաւ իր ապագայ կեսրացրին և սրտամց խոնարհ. տելով համբուրեց նրա ձեռքը և ասեց՝ զուք արդարասուքին և ուրախութեանս արցունքին: Ո՞հ, թողութիւն տւէք իմ զգացածիս համար և թոյլ տւէք վայելել այն բախտաւորութիւնը, որ այժմ պարզեցիք: Այո՛, առաջին դժկամութիւնը, որ ես շփոթւելով պատճառեցի ձեզ՝ թող վերջինը լինի: Ի՞նչ պարտաւորութիւն որ աղախինը հաւատարմաւ թեամբ յանձն է առնում կատարել՝ ես ձեր գուտրն եմ, ինձ վրա եմ վերցնում:

Հայրն իսկոյն արտասելով գրկեց նրան: Մայրը մոերմաբար մօտեցաւ և սեղմելով նրա ձեռքը՝ համբուրեց նրան:

Խելացի և բարեսիրած քահանան յանկարծ բռնեց տամնալիով ձեռքը և մատից հանեց նրա պատկի մատանին, յետոց առաւ տան տիկնոջ մատանին և նշանեց սիրահարներին՝ ասելով, թող այս ոսկի մատանիներն երկրորդ անգամ այսպէս ամուր կապ լինեն՝ ինչպէս հինն էր: Այս երիտասարդը կատարելապէս սիրահարւած է այս աղջկայ վրայ և աղջիկն էլ յայտնեց իր սէրը: Ուրեմն, նշանում եմ ձեզ համաձայնութեամբ ծնողների և ներկայութեամբ մեր բարեկամի, օրհնուած լինիք յաւիտեան: Դրացի գեղագրութն էլ տւեց նրանց իր օրհնութիւնը: Բայց երբ քահանան ոսկէ մատանին հազցնում էր աղջկան զարմանալով տեսաւ նրա սատին մի երկրորդ մատանի, որ Հէրմանն դեռ ևս աղբիւրի մօտ էր տեսել Քահանան բարեկամաբար կատակ անելով՝ ասեց. ի՞նչո՞չ դու երկրորդ անգամ ես նշանուում: Զգոյշ եղիր, որ առաջին նշանածդ սեղանի առջե չչայտնելի և չընդգիմաբանի:

Աղջիկն ասեց, ո՞հ, թոյլ տւէք մի բոսէ նւիրել այդ միշտակին, որովհեաւ այն բարի մարդն արժանի է յիշատակութեան, որ բաժանւելով ինձանից՝ տւեց ինձ այս մատանին և այլ ևս չփերա դարձաւ իր հայրենիքը: Նա բոլորը նախազգում էր, երբ ազատաւ-

թեան սէրը և նոր հանգամանքներում գործելու ցանկութիւնը տարաւ. նրան դէպի Պարիզ, ուր նրան բանտարկեցին և մահացրին: Էախտաւոր եղիր, ասեց նա. ես զնում եմ, որովհետեւ այժմ աշխարհումն ամեն ինչ սկսել է շարժւել և բաժանել: Ամենահաստատ թագաւորների հիմնական օրէնքները քայլայում են, հին հողատէրերի կայքերը խլում են, բարեկամը անջատում է բարեկամից և սիրահարը՝ սիրահարից: Ես քեզ այսակ եմ թողնում ե, ով զիտէ, ուրանեղ պէտքէ քեզ կրկին զտնեմ: Կարելի է, որ վերջին անգամն ենք խօսում միմեանց հետ: Աղիղ է, որ ասում են թէ մարդս այս երկում օտար է: Այժմ ամեն մէկս աւելի օտար ենք դարձել քան թէ երբ և իցէ: Մեր հողն այլ ես մեզ չի պատկանում, գանձերն սկսել են տեղափոխել: Ասկին և արծաթը ձևափոխում են: Ամեն բան շարժողութեան մէջ է. կարծես թէ արդէն կազմակերպւած երկիրն ուզում է կրկին խաօսի փոխել և երկնի վրայ նորից խաւար տարածւել: Դու քո սէրն ինձ համար պահիր և եթէ մի օր երկրի վլատակների վրայ միմեանց գտնենք, մենք կը լինենք նորոգւած, կերպարանափոխւած, ազատ և ճակատագրից անկախ էակներ: Խնչը կարող է ինձ արգելել գնալու, քանի որ այս տեսակ օրեր ենք քաշում: Բայց եթէ անկարելի լինի մի որեւէ անգամ յաջողութեամբ ազատւել այն վատանգներից և խաղաղութեամբ առլեն՝ այդ գէպքում պահիր յիշողութեանդ մէջ իմ պատկերը և քաջութեամբ զին ած՝ պատրաստ եղիր թէ բախտաւորութեան և թէ զժբախտութեան հանգիպելու: Եթէ մի նոր բնակարան և մի ուրիշ կապակցութիւն հրապուրի քեզ՝ շնորհակալութեամբ վայելիր այն՝ ինչ որ ճակատագիրդ քեզ համար պատրաստած կը լինի: Անարատ սիրով սիրիր քեզ սիրողներին և բարիքի համար միշտ շնորհակալ եղիր: Բայց և զգոյշ կացիր, որովհետեւ մի նոր կորուստ կրկնակի վիշտ կարող է պատճառել քեզ: Թող կեանքը քեզ համար նւիրական լինի, բայց կեանքը մի՛ գերագասիր մի այլ բարիքից, կայքն ինքն ըստ ինքեան ոչինչ է: Այս խորհուրդները լսելուց յետոյ այլես չտեսայ այն ազնիւ մարդուն:

Այս խօսակցութիւնից յետոյ՝ ես ամեն ինչ կորցրեցի և հազար անգամ մտածել եմ նրա նախազգացումների մասին: Այլ և յիշում եմ նրա խորհուրդները, որովհետեւ այսուղ նորից ներկա-

յանում են ինձ սէր, բաղդ և ցանկալի յոյսեր։ Ներիր, իմ սիրելի ընկեր, որ ես թես թեհիդ զցած ուրախութիւնից գողում եմ նոյնը պատահում է և նաւորդին, երբ նա վերջապէս հասնելով ցամաք՝ զգում է, որ մինչև անզամ հաստատ հողի վրայ էլ երերում է։ Այս ասելուց յետոյ մատանին հազար ունեցած մասնաւորաց։

Հերմանն այրական գւարթ շարժւածքով վրայ բերեց՝ Պորթէա, այս ընդհանուր խառնակութեան ժամանակ թող մեր միութիւնն աւելի հաստատ լինի։ Մենք կը դիմանանք, միմեանց նեցուկ կը լինինք և կը ամրենք մեր սիրուն կալւածքն, Եթէ խառն ժամանակներում մարդ ինքն էլ անհաստատ լինի՝ չարիքը կաւելանայ, որ յետոյ ինքն իրեն առաջ է գնում։ Բայց ով իր խելքն իր գլխին է պահում։ Նա իր համար մի նիւթական և բարոյական աշխարհ է ստեղծում։ Գերմանացուն վայել չէ այս շարժումներին ուղղութիւն տալ և տկարացած թափառել զանազան կողմեր։ Մեր երկիրը մեզ է պատկանում, այսպէս պէտքէ ասել և պահպանել։ Քաջ ժողովուրդները միշտ գովելի կը լինեն, եթէ Աստուծոյ և օրէնքի, ծնողների, կանանց և երեխաների համար կը պատերազմեն թշնամու դէմ և միասին կը լինեն։ Դու իմն ես. Խոկ իմն ինձ է պատկանում։ Ոչ թէ երկիւզով կը պահպանեմ քեզ և հոգալով կը վայելեմ, այլ քաջութեամբ և զօրութեամբ։ Եւ եթէ թշնամիներն այժմ կամ երբեիցէ վտանգ սպառնան՝ ես ինքս կը զինեմ և ուրիշներին ել զէնք կը տամ։ Գիտեմ, որ դու կը պահպանես տունը և կը հոգաս մեր ծնողների համար։ Ա՛հ, այդպիսի դէպքում կուրծքս վահան կը դարձնեմ։ Եթէ ամէն մէկն ինձ նման մտածէ՝ ոյժի դէմ ոյժ դրան կը լինէինք, բոլորս էլ խաղաղութիւն կը վայելէինք։

## ԲԱՐԻ ԳԻՇԵՐ...

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Լուռ գիշեր է, որպէս նսեմ ուրւական  
Թափառում եմ ես «նրա» տան առաջին,  
Նուտով պէտք է քայլամոլոր հեռանամ,  
Նոր ոյժ տալով իմ այս սիրոյ տանջանքին...

Բարի գիշեր... ահա հանգաւ ճրադը,  
Պատուհանը մթութեան մէջ թողնելով.  
Խորհրդաւոր, լուռ է «նրա» սենեակը,  
Որպէս տաճար, նւիրական, անվրդով...

Բարի գիշեր... տես լուսինը գալկացած  
Մեղմ ննջում է այն ձիւնազոյն ամպերում  
Եւ թախծալի սուերներով փաթաթւած  
Բարդիները լուռ քնում են պարտիզում...

Բարի գիշեր... ահա լոեց ամեն ինչ...  
Օ՛ ամենքին բարի գիշեր պէտք է գայ—  
Միայն սիրաս տառապում է տանջանքից,  
Միայն սիրոյս բարի գիշեր էլ չկայ...

## ՄՐՏԱՌՈՒԶ ՊԱՏՍՈՒԹԻՒՆ

(Պատմուածք, վերցրած—Ժերոմ—Ժերոմի համանուն զրոյցից)

Թարգմ. Միք. Տէր-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

—Ես ուզում եմ, սիրելի բարեկամ, որ գուք, եթէ կարելի է, մի սրտառուչ պատմութիւն գրէիք Ծննդեան համարի համար,— ասաց ինձ մի քանի տարի առաջ Նարաթնօր եաց թերթի հրատարակիչը. երբ ես մի յուլիսեան գեղեցիկ առաւոտ մուայ նրա սենեակը: —Թոմասը յանձն առաւ պատրաստել մի կոմիկական զրոյց նա ասում է, որ անցեալ շաբաթ մի հանաք է լսել, որը կարող է մշակել: Ես կարծում եմ, որ ինձ է մնում գրել մի ուրախ պատմութիւն երկու սիրահարների կեանքից և այն մարդու մասին, որին թէն բոլորը մեռած էին հաշւում, բայց նա յայտնուում է ծննդեան նախընթաց օրը և ամուսնանում մի երխասարդ աղջկաց հետ: Յետոց, ես կարծում եմ, մենք կ'ստիպենք Սկիուտելսին մի ամբողջ սիւնակ գրել Ծննդեան համար գնած իրերի ու շատակերութեան մասին: Նա միշտ այս մասում շատ լաւ է. լաւ մշակուած ձեւը ունի, ինչպէս գիտէք, և խօսում է այնպէս, որ ինքն էլ լաւ չէ հասկանում, թէ ինչ է ուզում ասել:

—Մի ուշացնէք, —ասում էր ինձ մեր խմբագիրը, —ուզար կեցէք ինձ անպատճառ օգոստոսի վերջերքին. ես կ'աշխատեմ Ծննդեան համարը աւելի շուտ լոյս ընծայել: Մենք անցեալ անգամ նոյնը չկարողացանք անել հոկտեմբերից առաջ: Ես չէի ուզ զիլ, որ Կլիպպերը մեզանից կրկին առաջ անցնէր:

—Օ, մի՛ անհանգստացէք, ամեն ինչ կարգին կը լինի, —ասա-

ցի ես անհոգութեամբ,—ես բոլորը կ'անեմ: Ես այս շաբաթ՝ ազատ իմ և անմիջապէս դործի կը ձեռնարկեմ:

Հենց որ տուն եկայ, սկսեցի սրաառուչ նիւթեր ընտրել, բայց իմ մաքով ոչ մի սրտառուչ պատմութիւն չանցաւ: Հակառակի նման ամենածիծաղելի երեակայութիւններ ծնեցին զլիումն:

—Ակներեւ է, որ ես այժմ տրամադիր չեմ զգացուն լինելու,— ասացի ինքս ինձ. Ստիպել իրեն տիրութեամբ համակւելու—անօգուտ է: Իմ առաջ գեռ շատ ժամանակ կայ: Կը սալասեմ, մինչեւ որ ինձ ախուր զգամ..»

Բայց ժամանակն անցնում էր, իսկ ես ինձ աւելի ու աւելի սրախ էի զգում: Օգոստոսի կիսում լրութիւնս արդէն սկսում էր լուրջ կերպարանք լնդուննելու Եթէ ես այս կամ այն միջոցով մի շաբաթւայ կամ տասն օրւայ լնթացքում չկարողանամ մաղձութեան մէջ լնկնել, ոչինչ չի լինիլ մեր Նաբաթնօրեւ յթերթի Ծննդեան համարում, որ և կը տիրացնի բրիտանական հասարակութեանը և լնտանեկան լնթերցանութեան համար հրոշակած հրատարակչական անունը կը կորչի անդառնալի կերպով:

Այդ ժամանակ ես մի բարեխիղճ երիտասարդ մարդ էի: Ես խօսացայ մի սրտառուչ պատմութիւն գրել չորս ու կէս սիւնակի չափով օգոստոսի վերջերքին հասցնելու համար: Վրքան մտաւոր ու ֆիզիքական նեղութիւններ պէտքէ կրէի, քանի որ դործ պիտի կատարել և չորս ու կէս սիւնակ գրւածք պատրաստ պիտի լինի իր ժամանակին:

Ես սկսեցի կարգալ բոլոր այն սրտառուչ պատմութիւնները, որնք կարող էի ճարել: Բայց այդ չօգնեց: Վուզսվորտի «Ծենք եօթով» ոտանաւորի փոքրիկ աղջիկը ինձ միայն գրգռում էր, այնպէս որ ես ուզում էի նրան սպանել: Բայցընի պօէմաների ծովահնաները ինձ միայն զգւացնում էին: Երբ որևէ վէպում մի հերոսուհի էր մեռնում, ես ուրախանում էի, իսկ երբ հեղինակը հաւատացնում էր ինձ, որ հերոսը իր կեանքում այլ ես չծիծաղեց, ես չի հաւատում:

Իբրև վերջին միջոց, ես վեր առայ իմ սեպհական մտաւոր արտադրութիւնները: Նրանք ստիպեցին ինձ ամաչել, բայց ինձ չանբաղդացըն գոնէ այն ձևով, որպիսին ես էի ցանկանում:

Այն ժամանակ ես գնեցի բոլոր աչքի ընկնող զւարճալի հե. զինակութիւնները և բոլորն էլ քաջարար կարդացին նրանք բաւա. կանաչափ իշեցրին իմ տրամադրութիւնը, բայց ոչ այնքան իմ ու բախութիւնը ոչնչի չեր հապատակւում:

Նշանակած ժամանակից մի շաբաթ առաջ ես եկայ մեր խմբա. գրի մօտ և յայտնեցի նրան բոլորը:

—Տէր Ասուած, ի՞նչ է պատահել ձեզ, —ասաց նա: —Դուք միշտ լաւ էք եղել այդ մասում: Մտածել էք արդեօք աղքատ աղ. ջկայ մասին, որ սիրում է երիտասարդ մարդուն, իսկ վերջինս գնում է և այլես երբէք չի վերադառնում, իսկ աղջիկը միշտ սպասում է և սպասում և ոչ ոք չգիտէ, որ նրա կեանքը փշ. ւած է:

—Ի հարկե, —վրաբերեցի ես մի ահասակ բարկութեաւը, —ի՞նչ միթէ դուք ինձ իւր մասնազիսութեան հիմնական կանոնները չիմացող մի մարդու տեղ էք զնում:

—Հապա ի՞նչ, —նկատեց նա, —այդպէս չէ:

—Ոչ, —պատասխանեցի ես, —երբ ամսւանութիւնը ներկա. յանում է ամենքի համար այլպիսի մի գժբաղութիւն, ինչպիս ներկայ ժամանակներում; ի՞նչպէս կարելի է վիշտ գտնել այն մարդ. կանց սրտում, որոնք այնքան բազդաւոր են, որ կարողացել են խո. տալ ամուսնութիւնից:

Հը, —շտապեց նա մոտիսհ կերպով, —իսկ ի՞նչ կ'ասէք այն երեխացի մասին, որը խնդրում է իրեն շրջապատողներին լաց ոփ. նել, մինչդեռ ինքը մեռնում է:

—Ասուած ձեզ հետ, —ասացի ես անբաւական ձախով, —առանց այն էլ աշխարհումն չափազանց շատ երեխաներ կան, նա. յեցէք թէ ի՞նչպէս են նրանք աղաղակում և թէ որքան փող են փչացնում հէնց միայն ոտնամանների համար:

Իմ հրատարակիչը համաձայնեց, որ ես մանուկների կեանքից սրտառուչ պատմութիւն գրելու պատշաճ տրամադրութիւն չունիմ:

—Յարմար չէ արդեօք մի շան պատմութիւն, —կրկին փորձեց նա, —մի բան անյացացած շան մասին: Այզպիսի նիւթը միշտ հետաքրքրութեամբ է կարդացւում:

—Այդ չի ասզիլ ծննդեան պատմութեանը, —վրաբերեցի ես:

Առաջարկութիւն եղաւ նոյնպէս դրել խաբւած աղջկայ մասին, բայց մերժեց, որովհետեւ դա չափազանց անհամապատասխան նիւթ էր առնացին շրջանի արբանեակի նշանաբան կրող մի հրատարակութեան էջերի համար:

—Դէ, մտածեցիք այդ բոլորի մասին մի օր ևս, — ասաց իմ հրատարակիւը:

—Ես չեմ ուզում գիմել Զէնէսին. Նա զգացւող չէ և մեր ընթերցողները նրա ոճը միշտ չեն սիրում:

Ես մտածեցի, որ լաւ կը լինէր գնալ և խորհրդակցել իմ բարեկամներից—նոյն ժամանակի ամենայացանի և ժողովրդական հեղինակներից մէկի հետ: Ես շատ էի հապատանում նրա բարեկամութեամբ, որովհետեւ նա խսկալէս մեծ մարդ էր, սակայն ոչ «մեծ» բառիս խսկական և պատմական նշանակութեամբ, այլ երբ նա գրում էր մի գիրք, հրատարակւելուց յետոյ առաջին մի քանի շաբաթների ընթացքում տարածւում էր հարիւր հազար օրինակներով, և երբ խաղում էին նրա գրած որ և է պիէս, թատրոնը հինգ հարիւր անգամ անընդհատ կերպով լինքն էր լինում: Նրա իւրաքանչիւր նոր արտադրութեան մասին ասում՝ էին, թէ դա աւելի խելօք, աչքի ընկնող և նշանաւոր գրւածք է, քան թէ նրա առաջ գրած արտադրութիւնները: Աւր որ անդլիւրէն էին խօսում, նրա անունն էր հնչում իրեւ յայտնի և յարգւած անուն: Աւր որ զնում էր, ամեն աեղ նրան սիրով ողջունում էին, նրա առաջ խոնարհում էին և նրան պատւանդանի վրայ էին կանգնեցնում: Նրա թովին կացարանի, թովին խօսակցութեան և վերջանդէս նրա թովին անձնաւորութեան նկարագրութիւններովն էին զբաղւած բոլոր լրագրերը: Եէկոպիրը իր ժամանակին կիսով չափ ժողովրդականութիւն չէր վայելում, ինչպէս ՆՆ, իր ժամանակին:

Բարեբազարաբար նա զեռ քաղաքումն էր. երբ ինձ տարան նրա փառահեղ կերպով կահաւորած պարապման սենեակը, ես նրան լուսամուտի առաջ նստած գտայ յետնաշեան սիգարը ծխելիս:

Նա ինձ սիգար առաջարից հէնց նոյն արկղից: Իմ բարեկամի սիգարից հրաժարւել չէր կարելի: Ես գիտեմ, որ նա իւրաքանչիւրին էս կոսն է տալիս: Եւ այդպէս ես վերառաջ ծխեցի և նրա հանդէս նստելով, յայտնեցի իմ ցաւը:

Երբ ես վերջացրի, նա խկոյն չպատասխանեց, և ես հէնց նոր սկսում էի մտածել, որ նա ինձ բոլորովին չի լսում; երբ նա յանկարծ սիդարը վերցնելով քերանից և բաց լուսամնութից նայելով հեռաւոր հորիզոնին, ուր ծխող քաղաքի վերացից դեռ երեւում էր վերջալոյսի կարմիր ցոլերը:

—Ձեզ խկական սրտառուչ մի պատմութիւն է հարկաւոր եթէ այսպէս է, ես կարող եմ պատմել. դա շատ երկար չէ, բայց բաւական տխուր է: Նա այնպէս լրջաբար ասաց, որ ամեն մի պատասխան կարող էր անտեղի երեւալ, այդ պատճառով էլ ես լսեցի:

—Այս մի մարդու պատմութիւն է, որ կորցրել է իր սեպհական «եսլը», — շարունակեց նա միշտ նախկին ձեռով նայելով հորիզոնում հանգչող լոցսին, որպէս թէ այնուեղ կարգալիս լինէր այն պատմութիւնը, — մի մարդու պատմութիւն, որը կանչնել է իր սեպհական մահւան մահճի մօտ և տեսնում է, թէ ինչպէս է ինքը դանդաղ կերպով մեռնում և գգում, որ ինքը մեռնում է ընդ միշտ երթեմն մի աղքատ տղա էր ապրում: Միւս երեխաների հետ ընդհանուր քերագել ամբողջ օրերով: Այդ չի նշանակում, թէ նա հաղորդակցութիւն չունէր իր ընկերների հետ կամ թէ չէր սիրում նրանց, այլ ինչ որ մի ձայն շշնջում էր նրա մանուկ սրտին, որ նրան վիճակած է լուծելու իր աշակերտ-բարեկամների խնդիրներից աւելի բարդ խնդիրներ: Իսկ անսուսանելի մի ձեռք որպէս թէ նրան հրաշիրում էր դէպի միայնութիւն, ուր նա միայն կարող էր հասկանալ կեանքի խորհրդի նշանակութիւնը:

«Փողոցացին աղապակի ու աղմուկի միջից նա լսում էր զօրիկ, խորհրդաւոր ձայներ, որոնք նրան կանչում էին, ուր էլ նա լինէր, և խօսում էին նրա հետ այն մեծ գործի մասին, որը մի ժամանակ նրան պիտի վլիճակւեր անելու. յանուն ճշմարտութեան այն դրծի մասին, որը վլիճակւելու է ընտրեալներին անելու, աշխարհում Աստուծոյ մանուկներին օգնելու ջանքի մասին, նրանց աւելի ուժեղ, ճշմարտասէր և խելօք դարձնելու համար: Մի որ և է մոլարոտի փողոցում, ուր նա մենակ կանգ էր առնում մի քանի վայրկինաշչափ, իր մանկական ձեռքերը դէպի երկինքն էր բարձրացնում և շափ, իր մանկական ձեռքերը դէպի երկինքն էր բարձրացնում և շնորհակալութիւն անում աստւածութեանը այն մեծ շնորհի հա-

մար, որ նրան էր խոստացւած, վեհ կեանքի շնորհ յօդուո ու-  
րիշների և ազօթում էր այն մասին, որ ինքը միշտ արժանի լինի  
այդ մեծ շնորհին: Եւ այդ սպասողական խնդակցութեան միջոցին  
կեանքի մանր անսախորժութիւններն անցնում էին նրա մօտով, որ-  
պէս տաշեղները քշում-տարւում են զօրեղ գետի ընթացքով:  
Ցղայի հասունանալուն համեմատ ևս ձաշները խօսում էին նրա հետ  
հետզհետէ բարձր ու բարձր մինչև որ նա տեսաւ գործը մօտ և  
պարզ իր հանդէպ, ինչպէս որ ճանապարհորդը սարից տեսնում է  
հովտի մէջ ձգւած շաւիղը:

Այդպիսով տարիներն անցան, նա հասուսանացաւ և նրա ա-  
ռաջ բացւեց իր կեանքի մեծ գործը: Այն ժամանակ յայտնւեց  
շար դեւ և փորձեց նրան, այն դեւ, որ վազուց շատ յայտնի  
մարդկանց էր ոչնչացրել, այն դեւ, որը դեռ պիտի սպանի շատ  
մեծ մարդկանց—աշխարհի յաջողակութեան դեւ: Դեւ շշնչաց  
նրա ականջում չար խօսքեր և—թող Ասուած ների նրան—նա  
հնագանդէց այդ խօսքերին:

Խ՞նչ օգուտ քեզ, եթէ դու գրես մեծամեծ ճշմարտութիւն-  
ների ու վեհ մոքերի մասին: Աշխարհը թնչով կը փոխարինէ նը-  
րանց: Այն մարդկի, որոնք եղել են երկրի ամենամեծ դաստիարակ-  
ներն ու բանաստեղծները, որոնք իրենց կեանքն անդամ դրել են  
մարդկութեան համար, արդեօք սոտացան ուրիշ վարձատրութիւն,  
բացի արհամարանքից, մոռացութիւնից և աղքատութիւնից: Նայիր  
շուրջդ: Միթէ շատ իսկական նահատակների վարձատրութիւնը,  
համեմատած ամբոխի ճաշակով հասկացւած հարստութեան հետ,  
ի կարելի աղքատութիւն անւանել բառիս բուն նշակութեամբ:  
Այս, ներկայ երգիները պատիւ են ստանում, երբ արդէն մեռած  
են լինում, իսկ այն մոքերը, որ նրանք մի ժամանակ մոցրել  
են ժողովրդի մէջ, յառաջ են բերում խլրառնն, որն յնդարձակում  
է աւելի ու մեծ շրջանակով կեանքի ովկեանոսի մէջ: Բայց սրանից  
ի՞նչ օգուտ այն մարդկանց համար, որոնք սովից են մեռել: Դու  
տարանդ ու հանճար ունիս: Դու կարող ես հռչակ ունենալ աշխարհում:

Հսրատութիւնը, փառքը, կարողութիւնը քօնը կարող են  
լինել: Դու կարող ես ունենալ փառահեղ սարգ ու կարգ և ճոխ  
նաշ: Դու կարող ես մեծ լինել այն մեծութեամբ, որն ընդունում է

աշխարհը, փառաւորւել այն փառքով, որը աչքերովդ կարող ես  
տեսնել: Աշխատիր աշխարհի համար, և աշխարհը շուտով կը վար-  
ձառրէ քեզ, աստւածների վարձառութիւնը ցետաձդում է երկար  
ժամանակով»:

«Ներ յաղթեց նրան և նա ընկա: :

«Եւ Աստուծոյ ծառան լինելու փոխարէն, նա դարձաւ մարդ-  
կանց ճորտա:

«Նա գրում էր ամբոխի համար այն բաների մասին, ինչի մա-  
սին ամբոխը սիրում էր լսել. ամբոխը ծափահարում և փող էր  
շպրոռում նրան, որը նրանց վերառնելու համար կռանալով, ժպառում,  
խոնարհում և փառաբանում էր ամբոխի մեծահոգութիւնն ու  
առատաձեռնութիւնը: Իսկ արտիստական ստեղծագործութեան ողին,  
որն ենթարկւած է մարդարէական հանձարի ողուն, թողեց նրան,  
և նա դարձաւ խելօք խաբեբաց, ճարովիկ մանկավաճառ, որի միակ  
ցանկութիւնն էր հասկանալ ամբոխի ճաշակը՝ ըստ այնմ մտածելու  
և գործելու համար:

«Ինձ ասացէք միայն, թէ ի՞նչ է ձեզ գուր գալիս, — մտածում  
էր նա, — որպէս զի կարողանամ՝ զրել ձեզ այն մասին, ով բարի  
մարդիկ: Կրկին նախկին խաբէութիւնն էք ուզում: Սիրում էի զեռ  
ևս հին փթած պայմանաւորութիւնները, որոնք կրում են կեանքի  
ֆորմուլեները արգելում են ծաղիկներին թարմ օդ շնչելու: Ար-  
դեօք կրկնեմ մանկական թոթոփանքը, որ գուրք միլիոն անգամ  
լսել էք: Պաշտպանեմ արդեօք ստութիւնը, անւանելով նրան ճշշ-  
մարտութիւն: Ի՞նչ, ծածկեմ ձեզ մօտ ճշմարտութիւնը կամ գովա-  
բանեմ նրան: Ի՞նչպէս, շողոքորթեմ՝ ձեզ այսօր և ինչպէս վաղ  
կամ միւս օրը: Ասացէք ինձ միայն թէ ի՞նչ էք ուզում, որ կար-  
զանամ՝ մտածել ու ասել ձեզ և ստանամ գրոշներն ու ծափահարու-  
թիւնները:

Ազգպէս նա հարստացաւ, փառաւորւեց և մեծացաւ: Նա ու  
նէր շքեզ շորեր և ձոխ ճաշ. ինչպէս խոստացել էր զել, նա ունէր  
ծառաներ, ձիեր և կառքեր. և բաղդաւոր էր այն չափով, որքան  
որ այս բոլորը կարող է բաղտաւորութիւն բերել, եթէ միայն նրա  
գրասեղանի ամենահեռաւոր սրկում զեռ չգտնուէր մի փոքրիկ փա-  
թեթ (որը ոչնչացնելու քաջութիւն չունէր նա), — զեղնած ձեռա-

զրերի մի փաթեթ, որը զբւած էր պատանեկական ձեռագրով։ Այդ  
թերթերը նրան պատմում էին աղքատ պատանու մասին, որ եր-  
թեմն թափառում էր քաղաքի փողոցներով և ոգեսորւում իրեն խոս-  
տացւած մեծութիւնով, որը արւում է երկնքի հրեշտակներին մի-  
այն։ Այդ պատանին մեռաւ յաւիտեան և թաղւեց ընդմիշտ։»

Այդ մի շատ տիսուր պատմութիւն էր, բայց ոչ այնպիսի  
սրտառուչ պատմութիւն, որը պահանջում է հասարակութիւնը  
Ծննդեան համարից։ Եւ ես վերջ ի վերջոյ սոլիպւած եղայ կրկին  
դիմել սրտով փշրւած աղջկայ պատմութեանը։

# ՔԱՂԱՔԱՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՈԽՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ՄԻՐԱԲԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

## 4. Նահապետական դար

Քրիստոնեալ բոլոր քաղաքակիրթ ու կիսաքաղաքակիրթ ժողովրդ  
ները, իրանց կրօնի արմատները հրէական Հիմ-Ավասի մէջ տեսնելով, հարկ  
են զգում ոչ միան եկեղեցիներում, այլ և կթրական հաստատութեանց ու  
ընտանիքների մէջ, եթէ ուսումնաբարաններում չի աւանդւում կրօնագիտու-  
թիմ, աչդ Ս. Դիրքն իր կրօնական-քարոզական դաստիարակութեան  
գլխաւոր հիմքերիցն ընդանել Հրէաների տիպար նահապետովման  
կեանքն իր պարզութեամբ ու գեղեցկութեամբ խոր տպաւորութիմ է  
թողել ժողովրդների վրայ այդ կեանքին վերադառնալը մի սիրելի իդէ  
դառել նրանց համար: Բայց իհարկէ նոնիսկ աչդ տիպար համարած  
կեանքը հեռու չէ քարոզական խոչոր թերութիւններից, որքան էլ ինչ  
պէս Լոցէն դիտում է, ժամանակի հեռաւորութեան լոգէալականացնող ոժի  
և բանաստեղծական նկարագրութեան միջոցով նա պաջառ չիրևար: Այս  
գրափիչ կեանքի բնորոշ լատկանիչն է ընտանիքի անդամների ան-  
պական հնագանդութիւնը մեծին՝ հօրը կամ նրա բացակալու-  
թեանը՝ մօրը: Հիմա աչդ առանց կատողութեան հնազանդելը մենք տես-  
նում ենք հոգեբանօրէն նրանց վիճակից մանկան կեանքում, մենք պա-  
հանջում ենք աչդ իբրև ծնող ու զաստիարակ, քանի որ նա տականի  
կարողութիւն չունի «իր չարն ու բարին ճանաչելու»: Դ հարկէ, նախը

1) Տես «Այուրձ» 1895 թ. № 1 և 2:

հեղինակոթեան տիրոջ, զօրաւորի բարոյական զարգացման աստիճանին՝ անզօրի իրաւուքները կարող են զոհ գնալ բռնութեան ու կամացականութեան։ Բայց նահապետական կեանք առելով միայն աչս նեղ ընտանեկան շրջանը է; որ համայսւում է քաղաքակրթութեան պատմութեան մէջ, ալ նաև իշխանական ու թագաւորական որոշ վարչուկան ձեզ։ Երբ իշխան ու նպատակ մի ընտանիքի անդամ լինելու գիտակցութիւնը դեռ պահանջութիւնը դեռ պահանջնել են, երբ մինը միւսի պէս է մտածում, նահապետական պետութիւնը ակսպահով ներկայացնում է մեզ մի ընդարձակ ընտանիք։ Նահապետի մէջ միայած են բոլոր բարձրագողն պաշտոնները՝ զօրապետութիւն, դատաւորութիւն, քրմապետութիւն և ալին, երբ կենսական պահանջներն առանց աշխատանքի բաշխման էին կատարում, երբ դեռ երեան չէր եկել մրցակիցների չարասե մաքաւումը, նահապետական մարդու ճանապարհը, ինչպէս ասում է Լոցէն, «որոշ գծւած էր, որի մէջ իւրաքանչյւրն, այնպիսի կանոնաւորութեամբ էր ոտք դնում, ինչպէս բնութիւնը զարդացնում է մարմնական կեանքը»։ Այս պարզ բնուանիկան չարաքերութիւնները ոչ միայն բարութեան, ալին կրօնական զգացմունքների աղբիւր պէտքէ դարձած լինէր, երբ նահապետն իր ստորագրեալուերի համար մի թանձրացեալ օրինակ պէտքէ հանդիպացած լինէր աստածաչին հեղինակութեան, գթութեան, հոգատարութեան և ալին։

Այս դարու գլխաւոր պարապմունքը՝ խաչնարածութիւնը իր բոլոր պարագաներով ու շրջապատող հանդամանքներով՝ պէտք է պարզւի մտնիկան, նա կենդանիների խնամատարութեամբ պէտք է գէթ մասամբ մտնի աչդ կեանքն և որ, ինչպէս Schulpjահր-ների հեղինակները ասում են, «երբ փոքրիները նահապետների զգացմունքների, ցանկութեանց, կ ամքի աշխարհն են տեղափոխում, նրանց արտաքին աշխարհին էլ օտար չպէտքէ մնան ասները։ Որովհետեւ համաձան ներքին կեանքին կազմում է մարդուս արտաքինը և առանց սրան այն չի կարող հասկանալի լինել։ Ուրեմն փոքրիկները պէտքէ ճանաչեն ամբողջ արտաքին կեանքը, իր ձեռքով ու կարիքներով, հանդերձանքը, ուտելիքն ու ըմպելիքը, նրանց պատրաստելու կերպերը, բնակարանը, ընտանի կենդանիներն և ալին։ Մանակները պէտք է, որքան հնարաւորէ, ընտանի դիմումն ան նահապետական կեանքի հետ։ Մի

Հայկական նահապետական դար։

Մեզ հասած պատմական տեղեկութիւններին նայելով մեր նախահայրերի կեանքը նոյն իսկ Հայկի ժամանակներից այնպիսի քաղաքակրթական առանձնապատկութիւններ է ներկայացնում, որ մեզ դժւարացնում է նրան համեմատել հրէական նահապետական կեանքի հետ։ Մի

աղպիսի կեանք կարող էին մեր նախնիք վարած լինել մինչև Արամ, որից սկսում է միապետական իշխանութիւնը, որը, տեղական չմնալով, մի տեսակ դատաւորական վարչութեան է վերածւում ասորեստանցիների գերիշխանութեան ժամանակներում:

Մերոնք էլ հաւանականաբար անցած պէտք է լինէին էնտոդամիալի (իրանց ընտանիքից կին առնելու) և էքսոդամիալի (հեռաւորներից կին առնելու) շըրջաններից, ինչպէս Ս. Բահաթթեանցն վիշտմ «Մուրճուում, 1) Հայկի ժամանակ առաջին տեսակ ընտանեկան ձեն էր զուութիւն ունեցողը, «դուստր» նաև կնոջ տեղ էր գործ ածւում Բաղմակնութեան ու մերձաւորներից կին առնելու սովորութեան հետքերը մնացել էին մինչև Արշակունեաց ժամանակները: Բայց կան հետքեր, ինչպէս օրինակ արնու գաղթականների «մամոնց ու մարանց տուն» բառերը, «տնիթեսալ» ընդունելու սովորութիւնը, որոնք ցոց են տալիս որ մեզանում էլ պէտք է նախ մասք ական ընտանիքը կազմակերպած լինէր կալւածական կամ տանուտիրական կառավարութիւնը, որ, ինչպէս Պալատանեան ասում է, «աւրոց էլ իբրև հովական ու երկրագործական ժողովրդի՝ սեպհական էր սկզբնական ժամանակները»: Նա, աւս կեանքը հրէական նահապետականին նաև նկարագրելով, եղբակացնում է, «արանից երևում է, որ զլխաւոր նահապետի իրաւունքը շատ չէր զանազանում երկրարդական նահապետների կամ ցեղապետների ինաւոնաքններից»: Նոյնը «Փորձուում ասում է. «Մարաքասի մի երկու ակնարկութիւններից երևում է, որ մեզանում առաջն նահապետները միանդամալն քրմապետներ են են եղելու: Այս նոհապետական ընտանիքները, բազմանալով ու ծիւղաւորւելով պէտք է նախ ծնունդն երի բաժանւէին, սակայն, ինչպէս Բահաթթեանց 1) դիտում է, «դրանց ներքին կապը չքանդեց, ընդհակառակը Հայկը և Տրանից ուղիղ գծով առաջացած լաջորդները առաջնորդում էին բովանդակ ազգը: Այս տեղ նա ասում է. «Հայկազունիք վաղ բաժանւեցան ցեղերի, հարազատ և սառը ագրեալ ցնող երի, առաջնորդները ազնւական էր էն երի, երկրորդները չիների կարգն ընկան»: Եւ մի այլ տեղ, «Խորինացու ասելով Խոռից սերւեց Խորիսուանի մեծ նախարարութիւնը... Մեծ ցեղերի և ծնունդների զլուխի կանգնածները իրենց անկախութեան ժամանակ նախարար էլ են անւանում: Հետեւաբար նախարարութեան ու տէրութեան իրաւունքը մէկ էր: Ուրեմն նաև պետական կազմակերպութիւններ ունէր Հայկազանց կեանքը: Ահա՝ զմւարութիւններ մեր քաղաքակրթութեան ազս աստիճանը սահմանելու գործում:

Մեր նախահայրերի նահապետական կեանքի բարուչական կող

1) Հողակին և անձնական իրաւունքը Հին-Հայաստանում, Մուրճ 1894

մերն աւելի քիչ լիշտատակարաններ են թողել: Յակոնի է, որ հայրենասիրական ու անկախութեան ոգին, կրօնական զդացմունքները, զարգացած էին նրանց մէջ: Արագի և Հայկի մասին մեացած երախտազիտական աւանդութիւնները, աստւածներին, ալս մտաւոր, բարուական ու ֆիզիքական բարիմանութեանց լիդէալներին բազմակողմանի ճիւղաւորւած ցեղագրութիւնն և այն ֆակտեր են:

Նահապետական զարում, ինչպէս հրէաները, մեր Նախահայրերն ել խաչն արածութիւն ի ց զատ հոգած ործութե սմբ էլ էին պարապում: Խոկ թէ սկսեալ որ ժամանակներից նրանց արգաւանդ դաշտերը լցւեցին տեսակ-տեսակ արսուրով, ալգիներով, պարտէզներով, որոնց մասին Ներողութիւնների ամենատափական պատմում է, չալոնի չէ:

Այս զարու հայերի արւեստագիտական հմտութիւնը, ինչպէս երեսում է, շատ ստոր աստիճանի վրայ պէտքէ կանգնած լինէր: Յակոնի է որ Նամիրամ Ժ. Պ. զարում Ք. ա. Հայաստանում հարկաւոր ճարտարապետներ ու մինչեւ անդամ գործաւորներ չգտնելով, առաջիններից 6000, խոկ երկրորդներից 12000 Ասորեստանից բերեց հրաշակելու Վանը չինելու համար:

### Դատաւորների դար:

Հրէական ժողովրդի անդամները ճակատագրի բերմամբ արդէն նգիալտում սկսեցին միմեանց հետ ընդհանուր շահերով ուրատ կապւած զգաւ և երբ նրանց կեանքն անսպատում աւելի բարդ կազմութիւն ստացաւ, ազդաչութեան գիտակցութեան հասաւ, նրանք ալես չէին կարող նախական պարզ նահապետական եղանակով ապրել: Մովսէսին ալես անհարին լինելով հասնել ժողովրդի բազմաթիւ վէճերի գատաւորութեանը, հարկադրեց իրան զանազան աստիճան ի օգն ական զատաւորներ նշանակել և զատական միաճ ամեն ագլ խաւոր գործերն իրան վերապահ անդ գատաւորի օրով ու վերջացաւ Սամուէլով: Այս շրջանում Խորացելացիների միտքն ազատւելով ճնշիչ կապանքներից՝ նրանց երևակ ական զարդ թողովրդի առաջնորդներին հերոսների բարձրութեան է հասցնում ու նրանով ոգերուում, թէն՝ իբրև անփորձ պատանիք՝ ալս դարը մէծ դատաւորութիւններից: Ալսպէս սկսում է պատմական աւելի որոշ շրջանը չնորոնդ պետական կազմակերպութեան, որ սկսում է գրաւել ժողովրդի ու չափարարութիւնը և նրան ձգտել տալիս դէպի մի ալգալիսի կեանք: Բայց մէնք՝ ի հարկէ աւելի զուր ական կերպով պէտքէ ալս հասակի սաներին բացադրենք մի ալսպիսի կազմակերպութեան առաւելութիւնները, նրա բազմակողմանի ուսումնասիրութիւնն աւելի բարձր գասարանների վերապահնելով: Առ ժամանակ տառն արան եալ պատ իրան երի ոգին պէտք է ըմբռնեն սաներն իբրև հակակչու նախորդ դարերի անարդա-

բութեան և բոճութեան Միւս կողմից աշակերտները պէտք է հասնեն այն գիտակցութեանը, որ ան ժողովրդի կեանքը չէր կարող ալսպիսի կերպարանափոխութեան համեմ՝ առանց հաստատուն բնակութեան, որ իր հետ բերեց հողագործութիւնը:

Հայկական դատաւորների դար:

Մենք զերն ասացինք, որ Արամի հաստատած միապետական իշխանությանը տեսողական չմնալով՝ մի տեսակ դատաւորական վարչութեան է զերած և ու ում Ասորեստանցիների զերիշխանութեան ժամանակ։ Հմաս տեսնենք, թէ մեր ձեռին եղած պատմական տեղեկութիւնները որքան մեզ թուզ կը տան մեր նահապետական համբաւած զարին աշխորդող ցոչանն իբրև զատաւորների դար բնորոշել։ «Համեազանց թագաւորութիւն» անւանեալ շրջանը՝ մինչև Արշակունիաց սկիզբը՝ մենք այս խորհրդածութեանց ժամանակ՝ ի նկատի պիտի ունենանք Պարուր, Տիգրան Ա. Վահագն, մինչև Վահէի մահը (606-330 Ք. ա. մ.), Մակենդոնական Սկավեան իշխանութեան ժամանակները (330-150 Ք. ա.) մեղ ներփառացնում են բուն թագաւորական ից տարբեր, որ այս ու նահապետական կեանքի միջին դիրքն է բանում պատմութեան մէջ։ Այդ թագաւորներն լունական նահապետական թագաւորների պէս կամ աւելի ճիշտ՝ նրանցից էլ աւելի սոոր քաղաքակրթութեան երկրի տէրեւը պէտք երեւակալէնք։ Յալտնի է որ Մակեդոնական-Սելևկեան իշխանութեան ժամանակ հաւերն ընդդիմացան լունական քաղաքակրթութեանը, իսկ Պար թեների ժամանակ՝ ընդհանակառակը նրանք կապւում էին աւելի արենեան, ցեղերի հետ։ Արևմուտքին հետամտել սկսեցին մեր նախնիք Քրիստոնց լուսու։ Պատմական անաջող հանդամանքները միշտ արդեւք էին լինում հաւագի բարովական, մտաւոր ու քաղաքական զարգացմանը։ Օտար ազգերի լուսաւորութիւնը աջողութեամբ չէր կարող Հակաստանի մէջ թափանցիլ որովհետեւ հզօր պետութեանց լարաբերութիւնները նրա հետ գրեթէ միշտ թշնամական էին։ Արսպիսի հանգամանքներում, այնէլ հաղորդակցութեան դժւարութեանց, քաղաքակրթութեան նպատակալարմար եղանակների բացակալութեան ժամանակներում կարելի է երեակացնել թէ ինչ պիսի քավերով կարող էր ընթանալ ժողովրդի քարգացումը։ Հին զարերում մեր ժողովրդի բարձր դասը, զինուորականը, զիմաւորապէս զբակած էր պատերազմներով ու ռազմավիտական վարժութիւններով, միջին դասը (քաղաքացիները), սակաւաթիւը, երբեմն մեծ մասով հրէ աներից բաղկացած, չէր կարող առանձին ազգեցւութիւն ունենալ ռամիկների վիրայ Հաւանական է որ, ինչպէս հիմա, քաղաքացին լոկ նիւթական շահ է բռով կապւած լինէր գիւղացու հետ։ Զնակելով որ Տիգրանի ժամանակ հաւագաւանում կատարացական առանձին կարգ ու կանոններ են

սահմանւում, վաճառականութիւն ու արևեստներ լառաջաղիմում, ընտանիքան կեանքի պարմանները փոխւում, փարթամութեան առաջին նշանները երեան են գալիս, այնուամենալինիւ գիւղացին անհազորդ է մնում ալդ շարժումներին, 'Կա շարունակեց իր նահապետական պարզ կեանքը, փոխանակ քաղաքական դատաւորների՝ իւրաքանչիւր գիւղ կամ աւան ունէր, ինչպէս հաղորդում է Դ. դարու ականատես Քանոնփոնը, իր աւան ապետը, որ կառավարում էր հին նահապետական օրէնքներով, Նրանց բնակարաններն գետնափոր էին ալս օրւաչ հաէ ալն գիւղացիների աների պէս, որոնք հեռու են մնացել մեծ քաղաքներից ու ճանապարհներից:

Թէս փառաեր ունինք որոնք ցոյց են տալիս հալոց գրի գոյութիւնը Քիլստուլից 700 տարի առաջ, երբ նա ասորեստանցոց գրի զրութեանը փերածւեց, սական, ինչպէս երեսում է, նրանք աշնքան անդործածական են եղել որ վերջապէս բոլորովին մոռացւել են մինչի Յ. դարը, երբ այնքան մեծ կարիք զգացւեց նրանց նոր գիւտին:

Հայ խաչնարածների և երկրագործների ժառանգական կալւածական ու տանուտիրական կեանքը տեսնեց մինչի Արամ, որ, միացնելով բոլոր ցեղերը, մի ապետական իշխանութեան սկիզբը դրեց, բաց ասորեստանցիք ժողովաւրդը կրկին ցեղերի բաժանեցին բնիկ իշխաններով կառավարելով: Սրանք իրանց ձեռքի տակ ունէին բազմաթիւ դատաւուրներ, ինչպէս մեծք տեսանք Խորակէլացիների կեանքի Մովսիսի ժամանակներից սկսած: Նուն զերը կատարում էին նաև մեր նախարարները, որոնք երկրի տէրերն էին համարում ու ազգպէս էլ անանում: Գիւղացիներն ալս «ատէրանց» ու իշխանների ծառաներն էին: Սրանց թիւը 400-ի էր համարում և ներքին, ինչպէս նաև գատական գործերում, թագաւորի միջամտութիւնը չի երևում: Թէս երկիրը նախարարների մէջ բաժանեած էր, սական ժողովուրդը նրանց սարուկը չէր իր կեանքով ու ինչքով, ազ նրա ձեռքն էր կալւածքի սեպհականութիւնը<sup>1)</sup>: Գեռ հեթանոս Արշակունեաց ժամանակ մեր քրմաքետներն էլ կալւածատէր էին ու առանձին զօրք ունէին: Ընդհանուր պատմութեան տեսակէտից դատելով՝ պէտքէ ենթադրել, որ սրանք պէտք է դատաւուրը և թե ամեր պարապած լինէին, մի իրաւունք որ քրիստոնէութեան ժամանակներից անցաւ կաթողիկոսին և առհասարակ կղերականութեանը: Մարտիրասի տեղեկութիւնից, ինչպէս վիել ենք, մեզ չայանի է, որ մեզանում նահապետի և քուրմի պաշտօնը միացած էր եղել, Բաստամեանցը Մխիթար Գօշի գատաստանագրքի հետազոտութեան մէջ անում է հետեւալ ընդհանուր եղբակացութիւնը: «Առհա-

<sup>1)</sup> Այս խնդրի մասին Ս. Բահաթրեանի մանրամասն հետազոտութիւնը անս «Մուրճուում», 1894 թ.

սարակ պարզ երեսում է, որ մեր ազգին և պետութեան իրաւաբան նական և օրէնսդրական զարգացումը շատ նւազէ եղել և ճնշւած է մնացած նախարարական իրաւունքների և դրացի պետութիւնների, մանաւանդ Յունաստանի և Պարսկաստանի օրէնքների ազբեցութեան տակ. Հայկական պետութիւնը ոչ Փօչից առաջ և ոչ նրանից լետով չուներ իր սեպհական ազգային օրէնքներին. Մի այլ տեղ նա դիտում է, որ նոյն իսկ Փօչի տեսակէտները շատ սոսոր են և զորկ քաղաքակիրթ ժողովրդների իրաւաբանական տէսակետներից. Նա առանձին դատաւորներ չի կարդում, այլ դատաւորութիւնն ուզում է ըստ նահապետականի, թողնելով հոգեոր ու մարմնաւոր իշխանների ձեռքը:

### Թագաւորների դար:

Աղջերի պատմութեան մէջ նահապետի և ապօ դատաւորի զեր կատարագ թագաւորների շրջանին լաջորդում է իսկական թագաւորների գարը, երբ ժողովուրդը ոչ միայն բարձր է լինում կոչ հնագանդութիւնից, այլ և նա դիտակցական հնագանդութիւնից անցնում է լի ակատարինքն ազիտակ կցութեան աստիճանին. Նրա կամքի համար օրէնքը ոչ թէ ճնշումն է, այլ ներքին ազատութեան ազրիւր. Նա լարգում է ուրիշի իրաւունքները, արտարութիւնը, Ցմարառութիւնն՝ ուղղակի ներքին մղումից զրդւած. Այս բարուական ներքին աղատութեան աղբիւն է «աղբազարձ մտածումը», որ այլ ես գերի չի դառնում զանազան բաղձանքների ու զրդիւնների, այլ իր հասուն մատախոռնութեամբ իրան բարձր է պահում նրանց ազգեցութիւնից. Սական, ինչպէս անհամի, անպէս էլ ժողովրդների մէջ, այդ ներքին լիսկատար աղատութիւնը մի բարձր իդէալ է, որ նոյն իսկ ներկալ քաղաքակիրթ աշխարհներում զիս չէ իրականացել. «Տնտեսական արդարութիւնն» որ լինելու է հարտադի աղքատի մէջ զողութիւն աւելիցը անդունզը, մեծ ու վարք աղզերի ցեղերի և այն իրաւունքների հաւասարութեան. . զեռ. ներխաչ քաղաքակրթութեան վասիս քներն են.

Հիմա նորից խրախէլացաց ժողովրդի պատմուկտն օրինակին զառնալով՝ մենք ակնումնենք որ նա ինքնազիտակցութեամբ է հնթարկում թագաւորի հեղինակութեան թեանը. Մա ժողովրդի աչքում ասուած ծին ներկաչաց ցուցի չեն երեսում նա մանաւանդ իրաւունքի և վարագաւութեան գործում:

Հերբարտ-Ցիլլէբեան շլոլաչի տեսութեանց համապատասխան կազմւած Ռախնի և Աշխատակիցների ուսումնարանական Դ. աւարումն չը ական զատաւորների դարու հետ վեր էաւնաած նաև նրանց թագաւորների դարը և սրանց զուզընթաց աւանդում մեզ էաւանի գերմանական նիբելունից.

ները, որ իսկապէս պատմութեան նախաշաւիդ է։ Մենք, ինչպէս պէտք է տեսնենք հետեւեալ հատւածում, հրէական թագաւորների դարուն զուգ ընթաց առաջարկելու ենք մեր թագաւորների դարը, մի առաջարկութիւն, որ կարող էր շատ քննադատելի կետեր ունենալ։ Նիբէլունդների և հրէական այս երկու շրջանների առնչութեան իրը գլխաւոր հիմք ընդունում է վերաբիշեալ երկը այս երկու ժողովրդների գիւցաղնական ժամանակների բնորոշիչ լատկութիւնները, որոնք արտափալում են այս պատմութեան մէջ։

Թագաւորական դար:

Քաղաքակրթութեան այս աստիճանը մեր ազգի զարգացման վերջինն է ու մինչն ժամանակ, գէթ նաևելով մեղ հասած պատմական տեղեկութեանց, ամեն ափոփոխ ակ ան է երեսում։ Նա ներկայացնում է մեղ նախ հին հայոց հեթանոսական կեանքը, ապա քրիստոնէ ակ ան ու իրեն հետեանք այս վարդապետութեան՝ կրօնական, գրական ու քաղաքական շարժումները, որոնք ժողովուրդը դէպի փակում ոսկէ գարը տանելով, ապա տեղի են տալիս մտաւոր անկման, քաղաքական ու կրօնական կեանքը մերթ ընդ մերթ թով կամ ուժեղ հասնքների ենթարկելով։ Բայց և աջնպէս մեր ժողովուրդը համազգի իշխանների և թագաւորների հպատակութիւնից օտար ազգի աւելի բարձր կամ օտար քաղաքակրթութեան տէր ազգերի հպատակ է զառնում և ֆում է համարեւա նոյն աստիճանի վերաց և կամ թէ չէ, ինչպէս ուռափատակ և այլ երսպական երկրներ գաղթող հաջերը, ձգտում են մասնակից լինել այդ երկրների լուսաւորութեանը։ Եւ նրանք համարեա բոլոր առարքէներում աջողութիւն են դանում ու իրեն քաղաքակրթիչ ոչի տէր դործոններ՝ արժանապէս գնահատում, սական որքան էլ մեծ ու նշանաւոր լինէին նոյն իսկ Եւ և ներկաց զարու հաջերի քաղաքակրթական շարժումը, աջուռամենանիւ նրա ազգեցութիւնը բուն ժողովրդական կեանքի վրաց շատ անշան է եղել, ուստի և ազգի ամբողջութիւնը կարծում ենք տակաւին նոյն թագաւորական դարու առաջին անկատար աստիճանների վերալ կամնածած պէտք է համարել։

Հաջ թագաւորական դարու առաջին շրջանը մենք կարող էինք ընդհանրապէս նախաքրիստոնէ ակ ան համարել, որ Արշուկունեաց օրով մկանելով տարբեր է նախընթացից, Արդէն Ցիգրանների և Արտաշէսների ժամանակներից մեր թագաւորներն ու թագաւորական տունը դուքան զալիս իրանց պարզութիւնից, սահմանում են թագաւորական տան ջրքերին և իշխաններին վերաբերեալ առնշնորթ պայմաններով օրէնքներու։ Նեթանոս Արշակունեաց քաղաքական ու զինւորական պաշտօնէութիւնը խիստ բազմապիսի ու բարդ կաղմակերպութիւն է ստանում թագաւորի

արդ ու զարդը գեռ առաջ էլ Ասորեստանի թագաւորականից աւելի չքեղ  
էր՝ նման Մարաց ու Բաբելացոց միապետներին։ Հեթանոս Արյակաւ-  
նեաց կառավարչական ձեր Պարսից ու Ասորոց նման սղն և ապետա-  
կան էր, միան մեր թագաւորների իշխանութիւնը սահման ափակ-  
ւած էր նախարարականով, համագոգացին օր էն քներով ու  
գաշն ագրութեամբ։

Բայց ժողովուրդը արհամարհած ով չէր, նոյն իսկ թագաւորական շքեղ հանդէսներին մասնակից էր ուստիկը և «ոչ էր անարդ և ստրուկ որպէս առ ալզ ոմանս աղինսո» Ժամանակի ուսումնավարերի՝ թագաւորական գլւանատների և մենեանների դռներն ինարկէ փակ էին ժողովրդի համար. Նա մինչդեռ շարունակում էր այս իր անհաղորդ կեանքի ընթացքը, այնտեղ, թագաւորական պալատում, շքեղ թագուններում լոյն դերասաններն իրանց անմահ բանասենդների ողբերգութիւններն էին ներկաւացնում. Այս պատճառով Վաղարշակի օրէնքները պաշտօնէութեան, ժառանգութեան և այլն մասին արմատ չգտնեցին ինչպէս նաև նրա լաջորդներից օրինակ Արաւաշէս Բ.-ինը, և նրանց աշխարհակալութեան սիառ քալերն աւելի վատանգեցին ժողովրդի կեանքը:

Քրիստոնէութեան հաստատելուց մինչեւ Արաբացոց արշաւանքները ժաղվուրդը կրում է իր նոր հաւատքի պատճառով ւարուցած հալածանքները, նրա առաջադիմութեան արգելք են լինում տարթեների և սատանաների մրցումները մի կողմից, չունական ու սասանեանը միւս Ազադրակ են համուռմ կրոնական պատերազմները։ Քրիստոնէութեան հետառնքն եղաւ՝ ի միջի ալոց Լուսաւորչի և Սահակ-Մեսրոպի դպրոցների հիմնադրութիւնը, որոց վերջինների կրթութիւնն աւելի ժողովրդական կերպարանք աւելէր, թէ իրօնական ուղղութեամբ։ Գ. դարու հայ առաջաւոր գործիչների լուսալի և սիրելի ուսանողութեան ճիւղերը շատ քիչ հետքեր թողին, Յ. դարու շարժումը նույն իսկ հոգեորականութեան միայն փոքրիկ շրջանի վերակ ազդեցութիւն ունեցաւ։ Արտաքին ու ներքին շարաբաստիկ հանգամանքները խեղտեցին աչ մոտաւոր շարժումը։

Արաբացիների արշաւանքներից սկսած մինչև քաղաքական կեանքը անկումը ժողովրդի կեանքը սաշում է երկու գլխաւոր հարստահարիչ ովքերից, մի կողմից արաբացիների նիւթական հարստահարութիւնից միւս կողմից նոյա կրօնական հալածանքներից, Աչս շրջանումն էլ Աշոտի օրովհ է հոգ տարւում երկրագործութեան, վաճառականութեան ու արևասաների համար, հարիւրաւոր գիւղեր ու քաղաքներ նորոգուում, վերանորոգութիւնների մանում պալատի, զօրքի և բոլոր վարչութեան մէջ՝ Յոյն լեզուն ու գրականութիւնը վերատին սկսում է արձարձեւել է, զարում, թէն ոչ նոյն եռանդով, և ահա նոյն դարու վերջերին արաքական գրականութիւնն ու գեղարւեստն է սկսում գեր խաղալ մի՛ր

կրկի մէջ, նրա զլիսաւոր ազդեցութիւնն երևացել է մեր լեզւի ոճի վերաչ, պատճառ զառնալով ոսկեղարի լեզւի աղաւազման սկզբ-նաւորութեան։ Պատմազրութեան այս շրջանի էական տարբե-րութիւնն ան է, որ նա զորկի է ն. զարու հելլենական հմտութիւնից և իմաստասիրական ուղղութիւնից, բայց և անսպիս է. զարու պատմաբան-ներն էլ ճանաչւած են իրեն ճշմարտաս էր ու ժամանակագրական ճշտութեամբ դրոզներ։ Այս շրջանը հարուստ է բուն վարդապետական գրաւածքներով ու ապա կրօնական բանաստեղծութեամբ։

Կիլիկիալի շրջանում եւրոպական ազգեցութիւնը, աշխարհագրական ու ժամանակակից բնդիանուր պատմական հանգամանքների չնորհով, զօրեղանում է մեր հայրենիքի ազ մասում։ Յախոնի է որ Կիլիկիալի առաջարկիութեան գլխաւոր պատճառներն էին վաճառ առաջական մօտ զարքերութիւնն երը։ Ներքին կեանքն ընդհանրապէս եւրոպական միջնադարեանի նմաննել է ձգում, թէ այն բոլոր կարգ ու կանոնները դու չմատձ՝ կրօնական խոնդիրների վիրատին լուզւելը նորից արգելք եղաւ ժողովրդի լառաջադիմութեան, ու Ներս Գ. հրամանով հայկական գրականութեան նշանաւոր արդինքների օրինակել տալն ու զանազան տեղեր յրեւելը ուսումնարամների գործածութեան համար՝ եղական ու անհետեանք պիտի մնար։ Մեր եկեղեցու անկախութեան սպառնացող վտանգը Հռոմի և Բիզանդիոնի կողմից այտաք է զրաւէր հայ ժամանակակից լաւագոյն մտքերն ու ալդպիսով միակողմանի ընթացք տար ուսաման ու զրականութեան զարձեալ վարդապետականի տուղարակութեամբ։ Ոսկի դարի լեզուն էլ ԺԲ. զարում վերջին անգամ փազլելով պիտի տեղի տար նոր ժողովը դականին թէ կեանքում և թէ դրականութեան մէջ։ Ակս շքանի պատմագրութիւնն էլ, չնայելով ձեական ու իմաստի թերութեանց մեծ արժէք ունի, արեմտեան ազգերի պատմութեան նկատմամբ։

Մեր պատմական կեանքում վերջին քայլաչման գործը կատարում են վրաց, թուրքաց ու պարսից սպատերազմները: Ճի. զարում միան հակական իշխանութեան մնացորդներն ենք տեսնում և ապա ԺԵ. դարում Միւնեաց և Արցախու մելիքների անկախութեան ձգտումները: Հայոց բազմաթիւ ու բազմապիսի զաղթականութիւնները թէե սկսւել էին նախապատմական Տամանահիներից, ոսկան ալդ շարժումը, նոյն Փոքր-Ասիաի մէջ տեղի ունենալով, այնքան վտանգաւոր չէր Սական բազմամարդ գաղթականութիւններ Քրիստոնից լիտու սկսւելով դէպի հեռաւոր ու կորստաբեր երկիրներ՝ տեսում են մինչեւ ալար լոգուտ օտար ազգերի և իմ մէծ վեաս հայութեան: Հայերի քաղաքական թիւ չէ, օպտակար, համակրելի, վստահելի, աշխատանքը և ալին բարեմասնութիւնները գրաւած են

եղել՝ի բնէ զանազան պետութեանց ուշագրութիւնը, նրանց մեծ արտօնութիւններ են տւել ու շացնելով՝ մեծ մասով խառնել իրանց ազգութեանց հետ:

Ակսպէս ուրիմն մեր բազմազարեան ժողովուրդն, իր կեանքի այս վերջին շրջանում ալսպիսի բազմադիմի հոսանքներից անցնելով, հասնումէ ներկայ լուսաւոր դարը և կարծես նոր մէկանց ուշքի գալով առանձին եռանդով ձգտում է քաղաքակրթութեան նոր հոսանքին վերստին մասնակից լինել՝ չնայելով մեծամեծ խոչնդոտների և ճգնաժամներին ։ Լուսով տարածիլը ժողովրդի մութ խաւերի մէջ; ուստիմնազուրկ և ուսեալ դասերի մէջ առնչութիւն առաջացնելը, նրանց ուժերին գիտակցական ու համընթաց ուղղութիւն տալն է ներկայ սերնդի առաջաւորների կատարելիք դերը: <sup>1)</sup> Այլ կերպ իսկապէս անհնարին է որոշել մեր ժամանակակիցից ժողովրդի քաղաքակրթական աստիճանը, նրա ուժերին որոշ արժէք տալը քանի որ տակաւին ալսպիսի ծալքանդութիւններով, ալսպիսի խոր վիճերով է բաժանւած երկու մասերի կեանքը. Ահա այս խորհրդածութիւններով ցանկացինք հարցասէր ընթերցողին ներկալացնել մեզ զբագեցնող մտքերն ու տարակուսանքները: Թող ձեռնհասները չլլանան մեզ աջակցել՝ որոշ աստիճանով պարզելու համար այս խնդիրները, թէ մեր պատմական կեանքն իր գլխաւոր հոսանքներով ինչպէս պէտք է առնչութեան մէջ դնել ընդհանրականի հետ, թէ ուր է հասել մեր քաղաքակրթութիւնը և ուր կարող է նա երթալ, միանալով ժամանակակից տիրող հոսանքների հետ:

<sup>1)</sup> Համեմատէք այդ առարկակի մասին Ա. Արասիսանեանցի լոգւածը «Ժողովուրդը որպէս քաղաքակրթական ոլմ», «Մուրճ» 1890 թ. № 11. Պ. Խմբ.

## ՍԱՍՈՒՆ

(Հմբ յիշատակարանից)

ՆԻԽԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ս Ե Յ Լ Ա Ն Ի

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

Դ Ա Լ Ի Ռ Ի Կ

Դալորիկ մի փոքր գաւառակ է, եօթ դիւղերից բաղկացած, բոլոր բնակիչները արիւնախանձ հայերենն, նման Հօլոցեանց անասնաբուծութեամբ են զբաղում։ Բայց չունին նոցա ազնւական վեհանձնութիւնը, հպարտութիւնը, այլ անկու շտ աւազակներ, մարդասպաններ են աւելի։ Դալորիկ Շատախի և Բերմի մէջ տեղ խրոխո սարերով ու խոր ձորերով ահարկու դիրք է բռնում։ բնակիչներն օգտաելով այս հանգամանքներից, օրհասարեր ոգիներ են եղել իրենց մնասիլ խորհող տարրերքին։ Արդ՝ Դալորիկու նախահայրն է մի Նազար կամ Խզրո անունով «Ճուռ» (խենթ) Զէյթունցի։

Մի Սասունցի որ հաւանական չէ թէ Հօլոցեանց լինի, Դաւիթի կամ Դաւթիկ անուն մարդ դնում է Հալէս ջրաղացական լինելու։

Այնոեղ ապրում է մի քանի տարի, շարունակում իւր գործը։

Մի օր դուրս ելած ատեն նկատում է մի խումբ զինավառ վէլահ արտարներ (դիւղացի) որ բոլոր զօրութեամբ կուռում էին մի

<sup>1)</sup> Տես «Ամուր» 1894 թ. № 10, 1—12 1895 թ. № 1 և 2.

անզէն մարդու հետ: Դաւթիկ մեքենապէս վազում է կռւի տեղը և տեսնում: Արաբները կատաղութեամբ՝ չորս կողմից սպաշարած, նետում էին միակ մարդուն վերայ դաշոյններ, շեշտակի շամբելու մոօք. սպաշարւած կորիճը միայն խոր ձեռնափայտը վարպեռութեամբ իբր վահան գործածելով վանում էր սրերը: Դաւիթ հիացումով մի քանի բոսէ դիմեց թէ որպէս անխոցելի ախոյխանը վանելով սրերը՝ տակաւ առ տակաւ առաջ էր գնում:

Այլ ևս չհանդուրժեց Դաւթիկ, իսկոյն դաշոյն ձեռին խոյացաւ ու շամբեց մի ֆէլլահ, խլեց նորա նիզակն ու սուրը և ընկերացաւ միակ մարդուն,

—Մի քոմակ էնիմ.՝մրմուալով:

Երկու քաշերը սպատերազմելով ութ զինւած ֆէլլահների դէմ, մի ժամնում տապալեցին երեք հոգի, միւսներին էլ վիրաւորելով հալածեցին: Երկու քաշերը իսկոյն դիմակները կողոպաեցին և իրար մօտ նստեցան հանգչելու:

—Գիննա Ասւած,—մրմուաց անծանօթը Դաւթիկին նայելով, —վըր զու լը հայիս... ծի քօմակ իրիցիր....

—Խ'ըխ, պասօ, —պատոսիանեց Դաւթիկ»—իս հայիմ, իր ցուլը նիժիմ... զու ժխո հայիս, յնւաս իս, իմըլի զքո անուն...»

—Իս Զէյթունցի իմ, Հառւց թագաւորի ծառէն, զիմ անուն ծուռ Ղազար ի... փախուկ իմ յիմ իրկրաց:

Իսկոյն Դաւթիկ Հայոց թագաւորի ծառացին ներս հրաւիրեց իւր բնակարանը: Դաւթիկ և Ղազար երկու տարի նոյն ջրազացում ծառացեցին, քրդեր, արաբներ կողոպաելով բաւական հարստացան: Մի օր Դաւթիկ յացանց Ծոխն թէ ցանկանում էր երթալ Ասուն, ուր սպասում էին իւր սիրելիները: Ղազար ասում է թէ չէ կարող վերադառնալ Զէյթուն քանի որ ինքն հայրասպան էր և Զէյթուն վճռած էր իւր մահը. ուստի ընկերանալ է ինզրում Դաւթիկին:

Վերջինս 50 տարեկան մի մարդ էր, տէր ընտանիքի, ունէր կին, որդիք՝ որ իւր ներմից բաժանւած, հաստատւած էր Դաւթիկ: Ոինչգեռ Ղազար ՀՀ տարեկան ծուռ, արիւննախանձ, իւր նորատի կինն թողած սգոյ և արտանութեան մէջ անսուն և անօթեւան թափառական էր:

Ծուռ-Խզրօ երկու տարի մնում է Դաւթիկի տան մէջ և այս-  
տեղ գտնում սիրոյ առարկաց հիւրընկալի գեղանի գուստորը։ Սի-  
րահարեցաւ, ապօրինի միջոցաւ մի գաւակ էլ ունեցաւ։ Երբ մա-  
նուկը ծնաւ, Դաւթիկ Ծուռը իւր մօտ կանչելով՝ ասաց։

—Իս քզիք մկայ կիսպաննի՝ Խզրօ, հըմա իմլ՛լ էնիմ, զիմ  
աղ ու հաց կիրիիս, խիորաց կռւիր ինք հայլրի հետ, բրաօխ  
եղի, զէտ խապուլ կէնիմ, չունքի ըս քզի ախպրուկ իւր էրի...  
Հըմա, ստից էտիւ իմ աղջկուկ գքո քուրնի...»

Ծուռ-Ղազար երդւեցաւ այնուհետև իւր սիրուհուն չմերձե-  
նով, այլ քոյր անւանել, մինչև ՚ի մահ բնակւել Դաւթիկի տան  
մէջ։ Հետզհետէ գրեթէ ջնջւում է Դաւթիկի ցեղը և Ղազարի  
միակ որդուց կազմւում է մի խոշոր ընտանիք։

Անցնում են տարիներ, զարգանում է ապօրինի մանկան ցեղը  
և այսօր կազմում Դաւլորիկի եօթը գիւղերը, քրջի մշտնջենական  
սոսխը, Հոլոյեանց դաշնակիցը։ Միայն Դաւթիկի ցեղից մնում է  
մի ընտանիքի մշտնջենական քահանայական ցեղը, որը ունեցել  
է 27 երեցնէր։

Ափսոս կորած է ժամանակի ձախիչ հոսանքում այս քաջ, ան-  
վախ ցեղի պատմութիւնը, որը, ըստ իրենց աւանդութեան, ոչ  
նւազ փայլուն է եղել Հոլոյեաններից։ Միայն մնացած են նշխար-  
ներ երեսելի արկածների, առանց թւականի, առանց կարգի։ Սոցա  
անօրինակ յանդգնութիւնը, անվախութիւնը, Հոլոյեաններից աւելի  
արիւնարբու վրէժինդրութիւնը փաստեր են փառաւոր անցեալի։

Նատ անգամ 10 մարդ 100 տնից բաղկացած քուրդ գիւղեր  
կողոպտել, այրել, կոտորել են մեծ ու փոքր, անխնայ իսպառ աւե-  
րակ դարձնելով։ Մինչև այժմ սովորութիւն ունին իրենց պաշարը  
քրդից առանալու։ Աշնան եղանակին քանի՞քանի քուրդ գիւղեր  
կոչնչանան, բոցերի, աճիւնի մէջ, նոյցա աւ արը, եզն ու ոչխարը  
լիցում են դալուրիկցու փարախներն։ Փանի անգամ կառավարու-  
թիւնը յազմւած է նոցա ձեռօք, կորցնելով հարկահաններ, պաշ-  
տօնեաններ և զօրք։ Սնկարելի է թւել այսպիսի մարտեր։ Արդի  
Պալորկաց ուէսը (տանուտէր) կամ իշխանը պատասխանում է հար-  
ցերիս այս խօսքով։

—Հըլքանիքի, բրաօ, ամին ուր միր գուրծնի իրիցուլ գքուրդ։

մինք ժխօ ընունց աւատի գուղնանք, հըլալ ուտինք, ըզմըր պանուց խրատն էտի...»:

Ամենաելուզակ ցեղեր սարսափով են՝ անցնում Դալւորկայ սահմաններից, մի է յանդգնում Ծուերի հետ կռւել: Երբ լսեն մինի դալւորիկցի լինելը, իսկոյն հեռանում են նորանից:

Դալւորիկ անմահ է պահում և մի պատմութիւն:

Խզրօի յաջորդների մէջ խիստ երևելի է եղել Ծուռ-Խզրօ:

Միր-Խզրօ մի անվախ քահանացի որդի է եղել Դաւթիկի զարմից: Տէրտէրը, քահանաց և զօրավար, պետ լինելով, երկար տարիներ եօթը գիւղերն անկախ ու ազատ է կառավարում:

Տէր-Քաջէն, —առհասարակ պատերազմող քահանաներին կը տանայս տիտղոսը, —ունէր մի յատուկ դղեակ, ուր իշտ սպասում էին քսան զինւած կտրիմներ և պատերազմի ժամանակ մի քանի հարիսր քաջեր. Տէր-Քաջէ մզում՝ է երկար պատերազմներ այլ և այլ էշիրէմների զէմ, որոց մէջ նշանաւոր է հետևեալ արկածը: Մուտլցի Նէյխ-Դպատառուլահ մի քանի հազարով յանկարծ չարձակում է Դալւորկայ վրայ: Տէր-Քաջէ պատարագիչ էր, ժողովուրդը, անդէտ քրդերի արշաւանքին՝ աղօթում է: Թշնամին գերում է փոքր բերդին, եկեղեցուն, ձերբակալելով Տէր-Քաջէն և ուրիշներ, շատերին կոսորում, հարս, աղջիկ, պատանի գերի վարում, իսկ մննկին ները քարերի զարնելով՝ սպաննում են բարբարոսները:

Երբ գերիների կարաւանն էր պատրաստում ճանապարհ ընկնելու, յանկարծ Տէր-Քաջի հաւասարիմներից մի խումբ, որ բերմացոց օգնութեան էին ուղարկւած, վերահանում, մեծ ջարդ տալով ազատում են իրենց պետը վիրաւոր, իսկոյն ուսերի վրայ առնելով փախցնում են անմատչելի քարայրերի մէջ:

Այս դէպքում սպաննում է քահանացի կինը, երկու աղջիկները քաջաբար կռւելով, իսկ ամենափոքրը, միակ արու զաւակը, Խզէն, որ երեք տարեկան էր, անցացուանում է. նորա դիակը չի գտնւում մեռելների մէջ...

Նէյխ-Դպատառուլահ աւար, գերիներ Մոսուլ է ուղարկում, իսկ ինք բազրանցոց օգնութեամբ ասպատակում է Մշու դաշտը, կողուպտում, այրում և ճոխ աւարով վերադառնում Սասուն:

Տէր-Քաջէի վէրքերը լաւանում են նա, առիթից օգուտ քաղե-

լով, անմիջապէս կազմակերպում է իւր փոքրիկ գունդը, իւր ժողովրդի փախստականներից և քաջ Հոլոյեաններից, մօտաւորապէս 250-260 քաջերով պաշարում է Նատախն ու Դալորիկ բոլորող կիրճը, որից պիտի անցնէր շէցիւր: Արդէն լրտեսներ Գալէ-Կուգանի դարաւանդները պաշարած սպասում էին նորա վերադարձին:

Խօթը ժամ կը տեղան հայոց գնոտակները չորս կողմերից պաշրւած թշնամու զլիսին, ապա մեկնազէն սուր սրի են խփում մինչև դիշեր: Տէր-Քաջէ տանում է յաղթութիւնը, անթիւ վիրաւոր ու մեռած թողնելով ձորի մէջ և շէցիւ Խպնուլլահ և Բագրանցի Սլո-Բէկը գերում...:

Քաջէ սոսկալի կերպով գանակոծելով նոցա սպառնում է երկրուսին էլ մասմաս կորատել, եթէ չվերադարձնեն Դալորկայ գերեանները: Յաջողում է: Խպնուլլահ ճարահատեալ մարդ է ուղարկում և Մէրտինից վերադարձնում գերի և աւար: Դժբաղվաբար քահանացի միակ որդին չգտնւեց գերւածների մէջ: Որդեկորյս հայրը այս դառն իրողութիւնն իմանալով, ցատկում է իւր աթոռից, մռնչմամբ յարձակելով Սլո-Բէկի վերայ, խորտակում նորա շղթաները:

—Նան գաւակի,—ասում է նա,—քանի որ կորուցի միակ ժառանգս, այլևս գործ չունիս աշխարհի հետ, ափսոս է արեգի լոյսին, երկրին, հերիք է ապականես նոցա... վրէժ է աղաղակում որդւոյս սոււերը, վրէժ գոչում է հայրենի սիրաս... կամ պիտի մռնիս, կամ ինձ ուղարկես որդուս մօտ:

—Առ, ընտրիր սոցանից մինը,—երկու սուր ներկայելով շարունակում է Տէր-Քաջէ բուռն յուզմամբ,—գիտցիր, վաս չէ հայր, անզէն մարդ չէ սպանում, քաջի պէս ելիր ՚ի հանդէս... սուրը իլիր, նորա հետ գլորւիր ոտներիս տակ... այն, պիտի գլորւիս, մի որդեզուրկ հօր վճիռ է դա:

Սլո-Բէկ ուրախութեամբ քաշում է սուրը, սկսում է մենամարտել: Սպանում է Սլո և ծանրապէս վիրաւորում է Տէր-Քաջէ: Նէլի-Խպնուլլահ մի քանի քիսա և հաշտութեան պայման տալով ակատում է:

Տէր-Քաջէ առողջանում է, բայց՝ առաջւան ընտիր զօրա-

ւարը չէ մնում: Արտասուք, աղօթք, ալէլուք որդեկորոյս հօր ավո-  
փանքն ու մսիթարութիւնն են լինում:

Այս գէպքից տասնուհինդ տարի յետոյ, երբ Տէր-Քաջէ իւր  
կիսաւեր գդեակի մօտ, հինաւորց կաղնու հովանու տակ նստած,  
միտ ածելով իւր կինն ու մեռած գտոերքը, քնքուշիկ որդին Խօ,  
արտասւում էր լոխն, նրան մօտեցաւ մի տասնութ տարեկան, լաւ  
հագնած ու զինւած մի պատանի, որ համբուրելով Տէր-հօր աջը  
կանգնեց նորա գէմ:

—Ասուած օրնի, լաօ, յնւստ կի գիս. դու յնւստ իս. քիզ  
տիսիրիմ ժխօ, չլմ գիննա տեօր:

—Մի հարցու, էրէց, իսլը չըմդիննա. իս Դալորկաց եմ էղի:

—Ի Դալորկաց կ'իսիս:

—Խը՛խ:

—Վի՞ր լաճն իս:

—Տէր-Քաջէի.

—Տէր-Քաջ... է:

—Խը՛խ, էրէց, իս իրիք տարեկնիկ ձիժ (ժանուկ) իմ եղի,  
վըր Եէխ-Խպնուլահ, Դալորիկ կ'աւերի, զի լը եէսիր կի քշի. զիմ  
կաթ-մէր (սանսու) ուզիս կի ծախի մէր տնու ըզ մի եզ Թարվեցի  
հայու մի: Զիմ կաթմէր ըսունի հըմէն լը պատմիրի հատուն:

—Լօ, Պաւօ, հըյրանիմքի, զիննաս ըզ ձըր անուն:

—Իմը չը գիննամ: կաթ-մօրս անուն Հոռով իր, միրն լը Խզ:

—Վաւլէր, մեռնիմ զքո արեւուն, Խզօ՛ջան, իս քու պապ Տէր-  
Քաջն իմ:

Պատանին փարեցաւ ալեոր երէցին, որի հարազատ զաւակի  
էր ինք: Տէր-Քաջ ուշաթափ եղաւ, երբ աշքերը բացեց՝ ինք զինք  
Խզէի զրկին մէջ զտաւ, ուրախութեան արտասուք Տէր-Քաջի սպի-  
տակ ալիքն օծեցին:

Դալորիկ մեծաւ ուրախութեամբ հնազմուեց Տէր-Քաջէի  
յաջորդին, որ իւր ստացած կրթութեամբ, քաջութեամբ և աղ-  
նիւ սրտով բարձրացուց Դալորկաց վիճակը: Նա սկսեց երկաթի  
հանքը բանալ, որի արտավրութեամբ զինւորեց իւր ցեղը, նիզա-  
կակցութեան դաշն կապեց Տէրմի, Հոլոյեանց միրերի հետ:

Սորա թոռնիկներից էր միր-Սատօի զինակից վայրագ միր-Աւեն, որին մասամբ ծանօթ է ընթերցողը:

Սա՝ անվախ, յանդուզն, մի քիչ զարգացած մարդ լինելով, բոլոր Սասնեաց սէրբ գրաւեց, յաջողեցաւ Սատօի, Գալէի աջակցութեամբ բարեփոխել Սատունը, նոր զէնք, նոր վառօդ, նոր կարգեր մուծանելով:

Եթէ բարձրացաւ սորա անունը, պատճառը իւր անկաշառելի, ճշմարիտ բարեկամներն էին՝ հզուցի զիւանագէտ Միր-Յակօ, Բերմազի կարիճ Յարօ, խիզախ Սատօ խորամանկ Գալէ, առիւծասիրտ, Քաջալը Սիմէօն վարդապետ: Այս աննման «ծռերը» միմեանց բարձրացնելով, անկեղծօրէն սիրելով՝ բարձրացուցին նաև Սատունն իրիւ յաղթական: Երանի թէ հոդ տանէին և բանացին նաև դպրոցներ... Արգ՝ Աւէ շարունակ կռւելով քրդի և թիւրքի հետ՝ պտհեց աւանդական ազատութիւնը և աւելի կապեց ժողովուրդը իրաւանց սկզբունքով:

Նատ գաղտնագողի գաւեր, ծուղակներ լարեց կառավարութիւնը, ապա ամօթապարտ մնալով չնորհեց շքանշաններ և ծնկան տեղ Մէծլիսում: Միր Յակօի սովանւելուց յետոց, 1882 թ. Հզու քաղաքին մէջ, գայմագամի ձեռօք, անզիտակցաբար ըմսեց մահատութոյնը, ի մեծ կորուստ հայրենեաց, ի սուզ համակելով բովանդակ Խատունը: Նա թաղւեց իւր պատերի մօտ, աննշան քարի տակ զիւորական փառքով:

Այժմ Դալւորիկ ացցելողը, մի դարեւոր կաղնիի տակ, Տէր-Քաջի հիմնւաքից աւերւած բերդի մօտ, փշերով ու թփերով ծածկած է գտնում: մի սե քար, անկոպար, անարձանազիր. դա Սամոն փառքի միբեկորը, ահարկու Միր-Աւեն է: Նա «միր» տիազոսով յաջորդ չունեցաւ, այլ «ուէս» բայց՝ նոյնն է Ղազարեան տոհմը, նոյն է երկիրը: Ի վրէժ Աւէի ծածուկ ձեռով խողխողեց դայմագամը և մէծլիսի մի քսնի էֆէնտիները անկան ի գուբ մահու՝ ձեռամբ կատաղի Դալւորկայ քաջերին...

Այս տարի (1887 թ.) ուզում էր Հզուայ գայմագամը Դալւորկայ շահու ազբիւրը գոցել, արգելել երկաթի արտածութիւնը, բայց մահից զարհուրած հրաման տւեց, բայց՝ արժէք չունէին ոչ արգելի, ոչ արտօնիչ զրերը, Դալւորիկ գիտէր իւր դործը, միշտ

յացանի, նոյնիսկ Հզուի մէջ տանում էին ծախսելու։ Այս երկաթից շինուում են խիստ պատւական հրազդնք, որ չի ճացթում, ընտիր թրեր ու դաշոյններ, որոց և քաջ վարպետներն են մեր «Ճռ ե ըլ»։

## Բ Ե Ր Մ Ա Ց Ի Ք

Մեր սասնցի ցեղերի անցեալները մին միւսից փառաւոր, հիանալի և անհաւատալի են թւում լսողին, և այն ժամանակ համոզւում ենք մենք, երբ աչքով ենք տեսնում անցքերը։ Արդ այժմ՝ ազնիւ ընթերցնդ, Զեզ պատմածներից շատերին ականատես լինելով, ամենայն վասահութեամբ տալիս եմ պատմութեան անուրանալի իրողութիւններ, որոց փայլը Խամսայի մելիքներին հետ կարող են խառնւիլ, գորանով արդ ազատել վէճի ենթակայ պատմական մեծ դէմքերու անցքերը, քանի որ նւաճման ժամանակ իսկ չէ շիջած հայքաջի կրակն ու բոցը անթիւ բարբարոսների ծորեցուցած արեան լճերի մէջ։ Բերմ Սասնոյ պարծանքն է, դասակից Զօլօյեանց, Դալուորկայ տակաւին իւր վաւարանով ջերմացնում է թմրած սրտերը...։ Բերմ մի գիւղ է, Բշերիկի աշհմանին մէջ, Դալուորիկից 4 ժամ հեռի Նա շինւած է մի գարւաւանդի վերայ քամակը տւած ապառաժոս մի սարի, շրջապատւած ացդիներով, արտերով, որոց փշոտ ցանկերը յօրինում են մի սիրուն մահիկ և երկու կողմից միանալով ժայռերին՝ կազմում օղակ կամ պատնէշ, այնպէս որ անձանոթ անցորդներ իրեն լաբիրինթոսի մէջ մի ժամից աւելի պիտի շրջեն դիտմամբ յօրինւած ուղիով, որ մերթ այս մերթ այն կողմն է գնում, և ասպա մտնում Բերմ։ Ունի 100 տուն բնակիչ...։ Բոլորն էլ հայ։ Սոցա բարմաթիւ արկածները, քրդի թիւրքի գէմ մզւած կախւները ծածկւել են մուացութեան մէջ քանի որ չունին կարգալ գիտող քահանայ, տիրացու կամ ուսուցիչ, չնացելով իրենց խորին ուսումնասիրութեան՝ զրկւած են, նման Դալուորկայ, Զօլօյեանց գիտութեան լոյսից։ Ուստի հակառակ իմ բուռն ջանքին, չկարողացայ անցեալից որևէիցէ բան լսել բացի մանր մունր կոխւներից, որոց նմուշները դրւածեն Զօլօյեանց պատմութեան մէջ։ Միայն 1879 թ. անցքը և միւսները ստուգելով համեմատելով գրած ենք, թող սոցա անցեալը մեզ տան ուրիշ այցելուներ, ես բաւականանում եմ այսչափը պատմելով։

Օսմանեան կառավարութիւնը Արևելեան պատերազմին յաղթ-  
մելով, մեծ պարտքի տակ լնինելուց յետոյ՝ կնքելով հաշտութեան  
կամ զինադուլի գաշնագիրը, սկսեց «դիւանագիտական հարստա-  
հարութիւն»։ Մանաւանդ Բերլինի 61 յօդւածը փութացուց նախ  
կայծերը շիջուցանել, որ հայից գրեթէ ծածուկ ծխում էին տա-  
կաւին աւելակների մէջ։ Հայոց սարերի ծոցերը կը սպառնաչին  
մի օր բորբոքել, մի օր աչըել ժանրո փուշերն ու տատասկները.  
աղէտք է շիջուցանելը որոշեց պապ-Ային։ Առաջին փորձը իճակւեց  
Հոլովեանց և Բերմացոց։ Ընթերցողը կարող է Հոլովեան արկածը  
տեսնել Գորպէի մէջ, <sup>1)</sup> իսկ Բերմինն ահաւասիկ։

Սասնոյ հայք օգնում են իրար, մինի հայարը միւսից ստա-  
նում է մահ, Դալւորիկայ ձայնը զինում է Հոլօի որդիք ու Բերմը,  
Քաջարինք, Խիանք ի սուր ձեռ թռչում են կուի գաշտ, մի խոս-  
քով բովանդակ Սասուն՝ կամ հազարաւոր քաշեր կրում են մի  
սիրտ, մի ցաւ, մի անյոզգողդ կամք։ Ո՞ր ձեռներն հիւսել էին  
այդ նախանձելի ուռկան, որ ժողովում էր բոլորը, ուր մարդիկն  
էին նոյն գործածող, զեկավար, զօրավար. — մի բերը Աւրեմն  
աղէտք էր նախ միրերը ջնջել Որբ էր Հոլօի ցեղը միր-Սատօի նման  
պես չունենալով, բայց Դալւորիկ, Բերմ կանգուն էին անհնուրաց,  
քաջուն միրերով։

Բերմայ իշխանն էր հզուցի միր-Յակօն, որ ամեն ժամանակ հաս-  
նում էր իւր սիրական ժողովրդեան հետ կուելու։ Այս ազնիւ մարզը  
զիտէր հայերէն, տաճկերէն կարգալ, գրել, զիտէր իւր ազգի բոլոր  
անցեալը պատմիչի չափ, ուսած էր զիտական մի քանի սկզբունք-  
ներ և զարգացած ինքնաշխատութեամբ։ Ի՞նչ ասաիձան բարձր  
մարդ լինելու էր միր-Յակօ, որ Սատէ, Գալէ, Աւէ, Քաջայր, Տէր-  
Քաջէ, Պետօ և այլն խոնարհէին նորա ոտքին տակ... Սոքա վերին  
աստիճանի գրվեստով են խօսում նորա մասին և աւելացնում թէ  
այնպիսի կատարեալ հայ, հազւագիւտ զօրավար այժմ չունի  
Սասուն։

Միր-Յակօ, իրրեւ ներկայացուցիչ Հզու, Բշերիկ գաւառների

<sup>1)</sup> Այդ վէպն է մեզ մօտ և ոչ «Ֆերիդէ»-ն, ինչպէս սխալմամբ չաւտ-  
նել էինք «Մուրճ» 1894 թ. № 10, էջ 1470-ի ծանօթութեան մէջ։

Հայոց, նստում էր մէջլիսի մէջ. նորա պատկառելի դէմքը, հասակը, վայելուչ կազմը, արժանի էր ուշադրութեան:

Հզուի գայմագամը յատուկ հրահանգ էր ստացած հայոց միքերի նկատմամբ, որոց ոխերիմ թշնամին էր ինք: Սա զգուշութեամբ քննում է միր-Յակօի գաղափարները և աշխատում կաշուելով որսալ նորան, գործիք դարձնել Սասնոյ կործանման: Ոչ միայն Յակօ մերժեց այդ անարդ առաջարկը, այլ և ծածկաբար հաղորդեց հայոց միրերին, ոչսներին գայմագամի խորհուրդը, ազգարարեց կազմ և պատրաստ մնալ: Մանաւանդ միր-Աւէին յատուկ իւր նամակով պատվիրում էր, որի մի հատւածը միայն կարող ենք մէջ բերել քրքրւած բնագրից:

Աւէ, իմ աչաց լուս, լզմեր բան կուզեն բուսուցել, Սատէ մեռաւ, Գալէ, զու, ես ինք մանցիլ... Աւէ, զգուշ եղիր Հզու գալուց, քո խաթրուն ջոկ մի խաֆիեք (լրտեսեր) զօրն ՚ի բուն կը թափառին չարսիներ... Ասի միր ջոջերու թըլս (մնծերին թող) զխորթիր զուգին նոր ճպիրով...»:

Ափսոս որ այս նամակ քրքրւած է միր-Աւէի ծոցին մէջ, որ կրում էր մինչեւ իւր մահւան օրը...: Սա բաւական լոյս պիտի սփուէր ինչ ինչ հանգամանքների վրայ:

Երբ գայմագամը նկատեց միր-Յակօի հաստատութիւնը, չը գտաւ մի դաւաճան Սասնոյ մէջ, հրաման տւեց մի քանի քրդերի սպանել նորան:

Մի զիշեր երեսնի չափ քրդեր փորձեցին մոնել նորա տունը, կողուպտել և մարել Յակօի տան ճրագը, բայց՝ չյաջողեցան. որչափ որ խելք, այնչափ էլ ձեռք ունէր Յակօ, իսկոյն դիմագրաւեց, ուժ մարդ ձերբակալելով բանտ ուղարկեց, միւսներն էլ փախուց գայմագամը զայրացաւ, բայց չէր կարող քրդերն արձակելով իւր թելադրութիւն ու մասները ցոյց տալ ժողովրդեան այս կոպիտ դաւի մէջ:

Մի քանի օր յետոց մի խումբ քրդեր իբրև պատգամաւոր ուղարկւեցան միր-Յակօի մօտ: Միրը իբրև հայոց ներկայացոցին իւր յատուկ սենեակն ունէր սերացի, մէջլիս-օտացի (ժողովարան) և գայմագամի տան մէջ: Այդ օր նա նստած գրասեղանի առաջ պատրաստում էր առ ամենալավարիւ Տ. Ներսէս Պատրիարք և

Տ. Դուռն յղելի տեղեկագրերը, որոնցով գանգառում էր հարստա-  
հարութեանց մասին, գայմագամի մասին։ Յանկարծ բացւում է  
դուռը և ներս են մանում ուժ հատ զինւած քրդեր, միրի տանը  
մանողների եղբայրներից ու մտերիմներից։ Նոցանից մինը ակնա-  
ծելով մօտեցաւ Յակօին, տաճիկ շողոքորթ քաղաքականութեամբ,  
համբուրեց նորա քղանցքը ասելով։

—Միրը ողջ մնաց, մեր երիտասարդները Զեր վսեմութեան  
տան վերաց յարձակւելու գործում սխալւած են մեծապէս։ Նոքա  
չեն իմանում մարդու արժէքը, ուստի մենք,—ընկերները ցոյց տա-  
լով, —եկած ենք նորա արեան կաթիլները խնդրել ձեր դռնից։  
Ազատեցէք նոցա և երախտագէտ թողէք մեզ։

Միր-Յակօ, լսելով այս փաղաքուշ խօսքնը, բոլորովին ան-  
կասկած, առանց նոցա երեսը նայելու, իւր գիրը շարունակելով  
հանդերձ, ժապտելով պատասխանեց։

—Զեզ են ընծայւում, միայն այն պայմանաւ, որ միւս ան-  
գամ չհամարձ……։ Պարբերութիւնը կիսատ մնաց։

Յանկարծ խօսող պատգամնաւորը նաճախով ճղեց գլուխը, իս-  
կոյն միւսները վրաց տալու խողխողեցին Սամոց իշխանը, ներկա-  
կացուցիչը……։ Գայմագամը դիտում էր դրան արանքից իւր անպար-  
տակիր գոհի մարտիրոսութեան արենավառ հանդէսը։

—Մենք մեր զաւակները, —ազագակում էին մարդուսպանները  
հայնոյելով ու կորատելով միրը, —մեր զաւակները առանց քեզ էլ  
կարող ենք ստանալ։ Արգարե այն օրն իսկ ազատում են աւա-  
զիները բանախց, մարդասպաններին հետ շրջում են փողոցները  
իբրև պատերազմից զարձած հերոսներ։

Այս շարագուշակ գոյժը իսկոյն շանմթահարում է բոլոր զա-  
ւաները, Տիգրանակերտ, Ռերֆա, Բաղէշ, Մուշ հասնում է մեր  
պատմած իրողութեան լուրը մանրամասն։ Սակայն՝ բորբոքում է  
Սառուն, սուգ են առնում Բերմ, Դալւորիկ, Շատանս, Խիանք։ Մի  
քանի օր յետոց երեսուն քրդեր, Բերմից մի ժամ հեռի, մորթոս-  
ուում են հաւել նման, կառավարութեան տասներկու պաշտօնեաներ  
անդթօրէն կորատում են մատաղացու խողերի նման և նւիրում  
զուռանի սրբութեան։ Աննկարագրելի է Սասնեաց զայրոցթը, կա-

տաղութիւնը։ Մի ամսում պատահած այս կոսորածները բարդում են բերմացոց և դալորիկցոց վզին։

Գայմագամը յատուկ հարանգներով ճանապարհ է դնում մի՛-Ալայ (պոկովնիկ) Ալի-բէկը 1,500 զինւորներով։ Սա իբրև անգիտակ անցուդարձին գնում է Բերմ։ Ոչս-Յարօ, որ մի քաջ, խոհեմ մարդ է, իւր հետն առած Գալէի Նարօն և այլ պատւաւոր շինականներ, գիւղից դուրս, դիմաւորում են միր-Ալային խնդրում գիւղը չմտնել, վերադառնալ ուստի որ եկած է։ Սակայն՝ միր-Ալայն ամենեին արժէք չտալով՝ ասում է.

—Այն ասացէք, գեաւուրնե՛ր, (եզակաշտ, հեթանոս) գեղանի են ձեր հարսները, աղջիկները, որ այս երեկոյ հաճոյանան իմ քաջ գորքին, որք ձեր հօրեղբօր (ռուս) սալդաթներին (սոլտաթ) կոտորելուց են վերադարձել՝ այժմ՝ էլ, ձեր ապագայ իշխանութեան զինւորներ շնորհելու են գալիս իբրև բարի հիւրեր։ Այն, ձեզ զինւորներ պէտք են 61 յօդւածը իրագործելու ժամանակ. գո՞չ չէք որ եկած ենք այդ պէտքը լրացնելու։

—Տմնարդ, — գոււում է ռէս Յարօ կառաղութիւնից, դողալով, ատամ-ատամի խիելով, — զքո կղառուտ արուն միրնէ ծախու առ, Դալալ-Սըբ-Գորգ, սպիտկերէս Սըբ-Աղբերիկ, Սըբ-Մըբթուկ գինայ, թըհ մըր խորթիր իման զքո հըմալմժուլ էնիլ, վալմհ, բիլմհ, ըզքզի կուտին հում-հում, կուտին, ըզքո լաշկրնիր լէ կիրիցուն... առ զլոխդի միրն հողից գնաս...

Ուսի անվախ պատասխանը աւելադրութեամբ, փառազօծելով թարգմանեց մի զապիթ (աստիճանաւոր) որ հայից դարձած էր։ Միր-Ալայը կարեսրութիւն չտալով սլացաւ առաջ։ Հայք իրենց վերջին և առաջին պատասխանը տւած լինելով, հանգարտ սրտով մոսն այգիներն ու աներեւութացան։ Զօրքը կէս ժամ լսում էր շւշոցը

Բերմի այգիները զարդարւած դարեւոր կաղնիներով, երկնուզէլ նոճիներով, սօսիներով, պաղատու և անպտուղ ծառերով պահում են գիւղը անցորդի աչքից, ահազին պարսպի նման շրջագծելով իբրև մի չքնաղ դարաս։ Միայն մի նեզ ոլոր մօլոր ուզի ունէր, որից փորձում էր միր-ալայն գիւղ մտնել։ Նաև չտառաջած, յանկարծ որոտացին Մարտինի հրացանները, ցանցերի ետևից ուղին զոցելով վառօղի ծխով։ Որովհետեւ ոէս Յարօ և լնկելք

կորուկ շաւիզով, միայն իրենց ծանօթ գիւղ սլացան և հրամայեց տասը կտրիծների նոր զէնքով, դարանամուտ, սպանելով զօրքից՝ մինչև գիւղ հետևել, ծածկւելով մացառուտ թաւուտների մէջ։ Խսկ ժողովրդին պատւիրեց միայն երկու աւուր ուտեստ, ամենակարևոր իրեր միայն առած իսկոյն անմատչելի լեռը բարձրանալ։ Երբ այս հրամանը լսեց գիւղի գւարթ տէրտէրը, վազեց եկեղեցի, հասկմէպով Ս. անօթներ, պատկերը միասին ժողովեց, ծրարեց հրամայեց սարը տանել. գոյցեց սուրբ տաճարի գուռը, թիթեօրէն մի քանի խաչ հանեց, խլեց զէնքը, տասը գողերի գլուխն անցնելով սլացաւ ընդ առաջ։

—Ըծօ, Տէրտրուկ, մալը միրըթ հըցրանիմքի թուղ միր խորթիր իրթան, դու ժխօ ճիժզիս, միրն հիտ արի, ծուռ—զոզալ (սիրուն)։

—Հայնէ, —գոչեց տէրտրուկը (նորլնծայ) երեսը խաչակնքելով ու վազելով, —յօրեն ձիր հետ գամ, Սլբ-Գն՛րդ, իս հըմկազնունց Մամաի ջօջ ոսկու տանք, ճօջ-մամու ամօթոյ միզար, ուրանց ծուռ տնի թամալ... ե'ա սպիտկիրիս սըբ Ախովիրիկ, սըբ-Դալալէ, սըբ-Խաղթրիկ, Առաքեալք, Հառւց սըրբիր, դուք ժխօ մըր թուռ կտրուկ կէնիք, —քէլէք, Բերմայ գաջեր, քէլէք՝ ըզտաճիկ խոսու աւայ ընձինք...։

—Լօ, պաւօ, —որսոտաց ոէսը, —Դալալ սըբ (սուրբ) Գորդ գիննա, դու ծուռ իս, մզիք ՚ի կրակ տի թալիա:

Տէրտէրը ամենեին չլսեց, խւր սոսկալի հայհոյանաց հանդոյցները թւելով՝ որոց մի փոքրիկ նմուշը դրինք, սլացաւ, կորաւ կորիծների հետ պրակների խորերը. շատ չտեսեց, հրազէնքի գուոցը որոտացուց Բերմայ ապառաժու սարին ծոցերը տիսուր արձագանքով։

Անտարակոյս ընթերցողը փափագում է ճանաչել այս քաջ հովել իւր արժանի ժողովրդին։ Մի քանի խօսք միայն կարող ենք քրել առանց բուն անունը դնելու։ Տէրտրուկը ձեռնադրւած է նամաս-Հըլուպից (հրաշագործ Մկրտիչ եպիսկո. Տիգրանեանից) 1870 կամ 68 թւերին։ Կարդացած է Սաղման, Ժամագիրք կակազելով, գրել և այլն զգի քո է կարողութիւն...։ Ուստի՝ շաբաթը մի անգամ բաց էր անում եկեղեցւոյ գուռը, բիւրաւոր սխալներով կատարում էր ժամ-աղօթք առանց պատարագել կարողանալու։ Մի

քանի տարի սորանով Բերմ գոհացաւ՝ մինչև 1884թ. Հայրիկ ձեռնադրեց քիչ շատ բանագէտ և քաջ մի սասնիկ Բարմացոց համար:

Մեր տէրտրուկ անխոհեմ ազգասէր է, առանց մտածելու զուէ տալիս թրի, հրացանի, այնպէս որ նման Գալէ-Կաւզանի Տէր-Քաջին հազարաւոր սպիներով ծածկւած է բոլոր մարմինը: Զարմանալի քաջ, անվախ մարդ է այս զւարժ երէցը, ափսոս որ չոնի Ղեռնդի զարգացումը և խելքը: Մի քիչ ծուռ լինելով շատ անգամ կոտորածների, կոխների պատճառ է դառնում, քանի անգամ քրդեր զանակոծել, սպաննել է առանց պատճառի, քանի հայեր տուժել են իրենց կեանքը տէրտրուկի խարազանին տակ պաւածանութեան» մեղքով: Քանի քահանաներ (մշեցիներից, Սասուն այսպիսիներ չկան) ծեծ են կերել հետեւեալ խօսքերը «անձիշտ քարդելուն համար:

«Ո՞ր խնդրէ զշապիկ քո, տուր նմա և զբանկոն քո, ո՞ր յարկանէ յաջ ծնոտ քո, մատան նմա զմիւսն: Այդ նախագասութիւններով—տսում է տէրտրուկը,—ինձի պէս յիմարները, նոցա խմասոր չըմբռնելով, գայթակղեցնում են ուամիկ սասնցին: Մենք սովորած ենք տուր զաննել միայն հայի դէմ, ներել նորա թեթև յանցանքը ոչ թէ բարբարոս քրդին տոււարի նման կամ յիմար, երկչուտ մշեցոց պէս տալ ունեցածներս, մեղք համարել նորանց սպաննելը: Մեր գիտցածն է այս, — «ակն ընդ զոյզ ական»: Միթէ միայն մշեցի տէրտերները իմանում են ամենասուրբ կրօնի օրէնքը, չեն իմանում բոլոր քրիստոնեացք, (372 միլիոն), չէ որ նոքա սրով, թրով գնում են արքայութիւնն: Այս կարծիքները նա առած էր իւր ժողովրդից և համոզւած:

Տէրտրուկը 10 կարիճներով գարանամուտ, փոխանակ ահ սփռելով, մահ սփռեց, զօրքը զարհուրեց, նեղ շաւիդը ողոլեց ծխով, դիակով, վիրաւորով: Գնդապետը զոհեր տալով չշեղեց նազատակից: Աներեւոյթ թշնամիները խազալով տուաջ, մինչև գիւղ մաննեները տասերկու զինւոր մեսաւեցին ու անյացացան:

Գիւղը զադարի է, միր-Ալայը զարմացաւ, ուստի ապահովաց ավէս հրամայեց զինւորներին հանգստանալ, ապա կերակուր ճարել ամեն տեսակ նիւթական վնասներ հասցնել, ոչնչացնելով պաշարի զէն և այլն: Զօրքի գիւղ ժամանելուն հետ, տէրտրուկը ու քա-

չերը բարձրացան լեռ ու մանրամասն պատմեցին ժողովրդին պատմածները:

Գիշերը վրա հասաւ: Աև ամպեր ծածկեցին Սասնոյ սարերը, շրջում էր փայլակի զիկզակը ամպերի հաստ մկանունքին մէջ, որպառում կայծակը լերկ ու մերկ ապառաժների կոները ջախջախելով: Սաստիկ անձրեւը հեղեղներ հանեց: Ալի-բէկ այլ ևս բոլորովին ապահովեց, հրամայեց թաղած իւղերը հանել, փիլաւ եփել:

Կարելի չէ մանրամասն պատմել զօրքի հասուցած չարիքը. Անկողին, կորկոտ, ալիւր թանի մէջ լեցուցին, իւզն ու մեղրը այդ տարօրինակ խմորին խառնեցին, զիւրաբեկ առարկաներ փշեցին, այրեցին, իսկ գիւղը բոլորովին աւերակ դարձնելլ թողւեց առաւոտեան:

Ոէս-Յարօ այդ ամենը գուշակած լինելով, ջանաց կէս զիշերին գործը գլուխ բերել: Հայք վառօդ, գնդակ չունէին: Տէրտրուկը մինչև այդ Ժամանակ, մօտակայ դրացի և կառավարութեան թշնամի քրդերից բերած էր մի քանի բեռ ուազմամթերք. իսկոյն բաժնեւեց կորիճներին, ուէսն ու տէրտրուկը առաջնորդեցին ժողովուրդը դէպի գիւղ:

540 Երիտասարդ կամ կարող մարդիկ չորս-չորս կարգաւ շարժեցան իբրև խիստ վարժ զինուո՞ներ, նոյց իւրաքանչիւր խմբի ետել նոյնչափ հարսներ և օրիորդներ, այնպէս որ հայոց գունդը բազկանում էր մօտաւորապէս 1150 հոգուց: Ամենայն արագութեամբ հրազէնքը ուսերին դրին, համերաշխ քայլերով սեպացած ապառաժներից իջան վար մրջիւնների պէս: Ո՛չ մի ձացն և ո՛չ մի աղմուկ:

Մեսս բարեաւ չասացին սիրելիներին, ամուսիններին, կարծես հարանեաց հանգիսականներ լինէին, իւրաքանչիւրի դէմքը շողշողում էր մոայլ վրէժի ժպիտով, երբ փայլակը մերթ ընդ մերթ դալուկ լուսով ողողում էր լեռ ու ձոր: Ոտնաձայն չէր լուսում, և չէ ցեխի ճխողիւն. եթէ մի ամենավարպես քիւրդ ականջը գետնին մօտեցնէր լրտեսելու, ոչինչ լսելու չէր: Կարծես հողմով լցւած նու էր հայոց գունդը. անաղմուկ, լոին բայց արագ, շեշտակի պահում է ծփացող ալիքների ծայրասուած գագաթներով դէպի ծովի բացերը:

Միթէ միայն էին կորիճները. ոչ, որպէս ասացինք, կիներ,

գեռատի հարսներ, աղջիկներ, տասնուշորսից վար, մինչև տասը տարեկան պատանեակներ, ընդամենը թւով 650 կամ 610, մի-մի հրացան ուսերին, Հալէպի վահաններով, նաճագներով, մանգաղաձև թրերով, ջիւհերտէր Դալւորիկի դաշնակներով զինւած հետեւում էին իրենց սիրելիներին. նոքա ևս գերեզմանական լրութիւն են պահում. միայն թեթև քամին, որ անձրւեի հետ կը գար, իրենց սպիտակ շրջազգեստների, երկայն քօղերի հետ խաղալով, նոցա ծալքերի մէջ իւր ողերը խորտակելու ժամանակ հեծեծում էր մեղմիկ:

Միայն ապերջանիկ մայրերն էին, մայրերն էին՝ որ պարտաւոր էին իրենց անմեղ մանուկներին ծիծ տալ, յուզւած ու բորբոքւած, ճիշտ այն ժամուն, որ այդ մանկանց կենդանութեան, երջանկութեան, բարոյական և նիւթական ապահովութեան համար քաջակորով հայրերն իջնում էին ՚ի հանդէս, պատերազմի արիւնոտ գաշո, հպարտ ու անխելք թշնամուն դէմ, իրենց կեանքը զոհ բերելու հայրենեաց և ընտանեաց:

Այս երկու պաշտելիներ, հայրենիք՝ միշտ քաջերի ծննդավայր գոլով՝ անձնուրաց զիւցազուներ էր կրթում: Հայրզջիկը միան կտրիմ ամուսնի բազուկներին մէջ կարող է իւր բոլոր հոգեկան, Փիզիքական հաճոյքները գտնել: Աւրեմն, ստիպւած է այր մարդը զիս զազնաւական աշխարհին որդի հանդիսանալ, ընտանեաց արժանի հայր հանդիսանալ... Ահա հայրենիք՝ պշուցած, ընուանիք՝ յուզւած հետեւում են իրենց սիրելի քաջերին մինչև աղջամուղջի մէջ կորսւիլը... Մայրեր, իրենց զգացած բուռն խանգով, միթէ Յե՞ն ներշնչում մանուկներին հէնց կաթի հետ այն զգացումները, որոնցով հպարտ է սասնիկը: Այն, թէե մանկիկներ բոլորովին անտարբեր թուլիկ թաթիկներով խաղում են կորիւնների նման քաջուհեաց ստինքներով, ժպտում են, ճշում են, լալիս են, երբեմն էլ հրիշտակային չգիտեմ ինչ են որոնում մութ այերքի, կամ՝ մայրերի բոցավառ աշերին մէջ... Մայրեր անտարբեր, կորիւնների անուշ խաղերին, մոքով սլանում են կութի դաշտ, գիղիոց վերայ առաթուր տեսնում, բոցի, ծխի, գնդակի տարափին մէջ տեսնում իրենց յաղթական սիրականները զինավառ և արիւնաներկ: Ահա այս ժամանակ քնքուշիկ ճակատը փայլում է մի տեսակ անմեկնելի ժպիտով:

Միր-Ալայ-Ալի բէկ ապահով լինելով ուղում՝ է քաղցը յագեցնել։ Զրի կերակուրներ նորա ախորժակը գրգռում էեն, քուրդ լինելով վարժւած էր Փլայի հացն ուտել և միանգամայն նորա խաչը հայոցել։ Որչափ մեծ եղաւ նորա սարսափը՝ երբ յանկարծ մի ահանի որոտում լսւեց։ Օդը լուսաւորեց ու խաւարել նոյն րոպէին, վառովի ծուխն ու հոտը ծաւալեց ամենուրեք։ Գնդապետը խկոյն վեր թռաւ, հրամացեց զէնք խլել։ Բայց ուր երթային, զմւրս, կարելի չէր. վայրագ մռնչիւններ սարսափով էին լեցնում այրերքը. պահում էր տան մէջ, ոչ, կարծես ուրուականներ, շամանդաղ խօսկաններ դուրս էին խուժում մթին անկիւններից։

Որոտումը կրկնաեց։ Ծխին հոտը աւելացաւ ու մօտեցաւ, դուռը, գոչումները սաստկացան, իւր բնական տունը կարծեց թէ՝ դողում էր հիմունքի վերայ։ Նորան շրջապատղները սարսափից քարացած նայում էին նորան. անմիջապէս որոշման պէտք կար։

— Ի՞նչ անենք, — վերջապէս աղաղակեցին զինւորները։

— Փախչենք, — կակազեց պոռոտախօս միր-Ալայը։

Տաճկաց ամենամեծ քաջութիւնն այդ է։ Փախչել, երբ թըլշ-նամին զին ած է և յանդուզն Հազիւ արտասանած էր՝ ւփախչենք, բառը՝ որ սպաներ, զինւորներ անկարգ, խառն ՚ի խուռն դուրս ելան, որոց օրինակին բնաբերաբար հետևեցան և միւս տների մէջ եղողները, զէնք, ձի թողնելով այնտեղ բռնեցին միակ ուղին, քամաները հայ գնդակներին տալով՝ աճապարեցին կեանքներն ազատել։

Հայոց խումբը գիւղի վերև գալու ժամանակ յանկարծ արձակել էր հրացան, որ անմիջապէս հետեւակ խումբը՝ հարսներ, օրիսրիներ, պատանիներ, — պատրաստի լեցուն հրագէնքը տալով՝ դատարիների մէջ լեցրել էին շտապով։

Երբ զօրաց նահանջը նկատեց ռէս-Յարօ, հրամայեց՝ միայն վախ տալով հալածել։

— Յօրի՞ն, — գիտեց տէրտրուկը, — էրթինք, կտրինք. ուր էլ գեախ մշշնան ըզմը գիղ գալ։

— Զէ, չէ, տէրտրուկ, թըլս իրթան, կուրուցին։ Մի սպանիք, չունքի չինք ուզիլ զսուլթանն կատղիցուլ։

— Պատերազմենք, պատերազմենք, — քրդերէն լեզւով որոտաց տէրտրուկը, որովհետեւ հայերէն խօսել գժւարանում էր, — վախե-

նո՞ւմ ես կտորելուց: Սասուն անմատչելի է. չեն կարող թնդանօք բերել. եթէ բերեն իսկ, կարող ենք փշել: Միայն, զօրքը գիտ սպառերազմել: Նոցա 1,000 մարդը, մեր 50-ը, կամենմք, հիմայ լուր ուղարկեմ միր-Աւէր, Գորպէին, շէյխ-Ամարը կորակոր ո՞ն շացնող քաջին, Սասնոց զանազան կողմերից թափեմ 25,000 զին ւոր: Խէջու ես երկնչում, ռէս-Յարօ, էլ ժամանակ է. թօթափնչք սոցա լուծը:

—Ե՛հ, տէրտրուկ, տաւարի շափ խելք շունիս:

—Կտրիճներ, —յարեց Ծուռ-երէցը, —Անխնայ, կոտորեցէք:

—Մեր աշքին վերայ, երէց, աղաղակեցին երիտասարդները:

Բոլորը հետևեցան եռանդաբորբոք ծուխն: Կարծես վայրենի գազաններ էին հալածում: Անդադար զէնք պարպելով հալածեցին այգիներից դուրս: Ճանապարհին լնկաւ միր-Ալայը, 3 սպաններ, 42 զինւոր մեռան, 60—70 էլ վիրաւորներ:

Ռէս-Յարօի թախանձանօք տէրտրուկը թողեց հալածանքը և իւր յաղթական լնկերներով վերադարձաւ գիւղ և ոչ մի վիրաւոր կենդանի թողնելով: Խւրաքանչիւր տան մէջ մնում էին զինւորների զէնքն ու ձիերը, լսու թրքաց ասութեան, բայց հայք հակառակն են պնդում: ասելով՝ Մենք ճաք չընք տեսին, այլ՝ զրադարտում է կառավարութիւնը: Հայերը վիրաւոր կամ մեռած չունին: Ուստի նոյն գիշեր մի քանի պահապաններ կարգելով անուշ քուն քաշեցին:

Զօրքը բաւական հեռանալուց յետոյ՝ կանգնեց, տեսաւ որ այլ ևս հալածող չկայ, ապահովագէս հաշւեց իրենց կորսւած լնկերների թիւը. բոլորը 125 հոգի:

—Զինւորներ, —ասում է միր-Ալայի օդնականը, —վերադառնանք գիւղ, ոչ թէ կոււելու, այլ՝ մեռած լնկերները, մեր մեծը դտնելու, մաքրելու թագաւոր-կայսեր նախատինքը:

Ումանք գառնում են, ոմանք էլ աճապարում փախչել:

Բերմի հարաւային կողմը մի նեղ ու խոր ձորակ կայ. սա իւր բնական յօրինւածով աւելի վհի է նմանում, այժմ ծածկւած է ահա գին ժայռի հատորներով, ահա այնուեղ թաղւեցաւ մեռելների մի մասը, մնացածներն էլ դաշլերի, բորենիների կերակուր եղան: Միր-Ալայի դիակը թաղւեց մի քրդական գիւղի մէջ, ապա ոսկերուին փոխադրւեցան Հզու:

Ահա այսպէս զւարձացաւ միր-Ալայը «Հայոց գեղեցիկ աղջիկների հետ»։ ապագաց իշխանութեանը, որ պիտի ձու լւէր 61-րդ յօդածի. տրամադրութեամբ, լնծացեց կիրթ զինւորներ։ Նորան կըրթեց Սասուն գեղեցիկ դասով։

Իրողութիւնը տեղեկագրւեց Կ. Պոլիս պապը-սերասքէրին, (ընդհանուր զօրավար) Միւշիրին, (մարշալ) պապը-Ալիին։ Արգելաց այս դէպքի մասին խօսել։ Միայն փութացին բերմացիներից իբրև գին միր-Ալայի արեան 50 քիսա ոսկու փոխարէն ստանալով եղ, ոչխար, իւղ, պանիր և այն՝ հաշտութիւն անել և հարկ չպահանջել մինչեւ 1886 թ., որին տէրտրուկը բնաւ յօժար չէր, այլ շարունակել էր ուզում եթէ միր-Աւէ չհամոզէր Ծռին։

(Շարունակելի)

## ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ Գալուստ, միաբան ս. Էջմիածնի. — Հայկականք.  
Ա-ԺԲ. (Արտասկած «Արարատ» ամսագրից 1894 թ.) Վաղաշապատ:

Միաբան Գալուստ Տէր-Մկրտչեանը  
պատկանում է Էջմիածնի միաբան-  
ների ան սակաւաթիւ խմբին, որոնք  
ապրում են մի կողմից իրանց  
ուսումնասիրական տեհնը չագե-  
ցնելու, միւս կողմից նպաստելու  
մեր ազգակին և կրօնի պատմութեան  
լուսաբանութեանը՝ օգտելով Էջ-  
միածնի ձեռագիր հարստութիւն-  
ներից. Վերռիշեալ տեսրակը, որ  
շարունակութիւն է հեղինակի ընդ-  
հատած «Խորենացու պատմութեան  
ուսումնասիրութեանց», արդիւնք է  
նստակեաց, լուռ և մանրակրկիտ  
պարապմունքների Էջմիածնի մատե-  
նադարանում. Վրւածքը լի է լուրջ  
դիտողութիւններով և սրամիս ու  
լաջող բացազրութիւններով Խորե-  
նացու ընագրի անբացատիր և  
կասկածելի մնացած դարձւածների  
և բառերի. Ազ մութը կէտերի վե-  
գերաբերեալ Պ. Տէր-Մկրտչեանը  
մասամբ ինքը իր սեփական եղբա-  
կացութիւններն է տալիս, մասամբ ա-  
մելի պարզաբանում կամ հաստատում

է գիտնականներից մէկի կամ միայ-  
կարծիքը. Ուս դիտողութիւնները  
լամենայն դէպս թանկագին են,  
Բայց ամենից գնահատելին և հետա-  
քրքիւր պէտք է համարել Խորե-  
նացու ձեռագրերի համեմատական  
հետազոտութիւնը, որ բանձն է առել  
Պ. Տէր-Մկրտչեանը. Հեղինակը, հիմ-  
նած Խորենացու իր ձեռքի տակ  
գտնւած զանազան ձեռագրերի չափ-  
ունի կտորների զանազան ընթերցում-  
ների վրան՝ այդ ձեռագրերը բաժա-  
նել է զանազան զասերի և խմբերի:  
Ազգային մի փորձ արել է և Բա-  
ռամզարանէրը, բայց վերջինիս փորձը  
անդաշող պէտք է համարել նրա հա-  
մար, որ նա ի նկատի է ունեցել ոչ այն  
քան անմիջական աղբիւրները—ձե-  
ռագրերը—, որքան երկրորդականնե-  
րը—տպագիրները, որոնց մանաւանդ  
հին հրատարակութիւնների, արժեքը  
շատ լաւ ճանաչած են Խորենացու  
քննութեամբ պարապողները: Պ. Տէր-  
Մկրտչեանի պարապման տեղն ա-  
մելի պարզաբանում կամ հաստատում

շաջող լուծման, Հեղինակն անմիջապէս իր ձեռքի տակ է ունեցել իր հետազոտութեան ժամանակ 17 կնմիածնապատկան ձեռագրեր և միքանի տպագիրներ իրանց ծանօթութիւնների մէջ ունեցած վարիանաներով Անա աչտղիսի համեմատաբար մեծ քանակութեամբ աղբիւրների ուսումնասիրութիւնը հիմքէ տւել նրան Խորենացու օրինակները (տպագիր և ձեռագիր) երկու մեծ դասերի (չորս խմբերի) բաժանելը Մական աչտղիսի բաժանումը դեռևս մօտաւրապէս միան ձիշտ կարելի է համարել, որովհետև նրա հիմքերը գեռևս շատ քիչ են և ոչ բոլորովին համոզեցուցիչ բացց գործի լաջող վախճանը աղ սիստեմով փակած նոր հետազոտութիւնների վրայ անկասկած կարելի է համարել Այս խմբերի իրար հետ ունեցած լարաբիրութիւնն անկասկած մեզ կը վերականգնի Խորենացու ձեռագրիների պատմութիւնը՝ մօտենինը մեզ սկզբնական բնագրին, հետերաք նպաստելու Խորենացու մինչ ացմ մութ մուացած տեղերի պարզութեան և ամբողջ պատմութիւնը լուսաբանելով բոլորովին մի

նոր կողմից Սական մի բան, որ աչքի չէ ունեցել պ. Տէր-Մկրտչեանը ձեռագիրների դասակարգութեան գործում և որն աջնուամենակնիւ ահազին նշանակութիւն ունի - ազդ ձեռագիրների հետազոտութիւնն է նրանց պալէօդրաֆիական-դիպլոմատիկական տեսակէտից Զեռագիր օրինակի ազդեցութիւնն ընդօրինակածի վրա երեսում է շատ անգամ ամենահասարակ շտրիխի մէջ բացի դրանից զրի մէջ երեսում է մինոց ժամանակ և զարի ազդեցութիւնը որը չի երեսում բառերի և զարձւածների ընդօրինակման մէջ Այդ կողմից ընդօրինակողները կոչ աւաճդապահներ են եղել եթէ նկատի չունենանք այն շնորհները որոնք առաջացած են եղել տղիտութիւնից - օրինակի սխալ ընթերցումից Մէկ խօսքով եթէ պ. Տէր-Մկրտչեանը Խորենացու օրինակների դասակարգութեան գործում աչքի առաջ ունենար նրանց հնագրական դիպլոմատիկական կողմը այն ժամանակ նրա սիստեմը բոլորովին լաջող կարելի էր համարել և կը հասցնէր շատ հետաքրքիր հետեանքների ։

Դ. Ա. Ա. Պ.

## ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

(Յօդւած երրորդ<sup>1)</sup>)

Անգլիական ազգը քաջութեամբ առաջ է տանում Հայկական խնդիրը. դա այն սովորական պաշտպանութիւններից չէ, որոնց այնքան սովոր են դիւանագիտական շրջանները, երբ նոքա կանգնած են լինում մի մարդասիրական խնդրի առաջ, որի լուծման համար նոքա, սակայն, իրանց ձեռնհաս չեն համարում, և կոմերք խնդրի լուծման համար նաև իրանց երկրին շահաւետ կոմիտինացիաներ չեն գտնում: Ացրպիսի դէպքերում դիւանագիտական շրջանները ուրախ են լինում, երբ մի որ և է այլ դէպք գալիս է հերթական դառնում, իւր վրաց կենդրոնացնում ընդհանուրի ու շաղրութիւնը, մոռացութեան տալով նախկինը, որը իւր ընթացքը շարունակում է լոկ այնպիսի յանձնաժողովների մէջ, որոնց գործունէութեան մասին այլ ևս հաշիւ ու համար չի պահանջում և, ձգձգւելով, մոռացում է ու գնում կորչում արխիւների փոշու մէջ:

Ոչ, հայկական խնդիրը ներկայումս, և ամիսներից ի վեր, դռնել է անգլիական խնդրի: Անգլիան այդ գործի բաւարար լուծման համար դրել է արդին իւր, իբր հզօր պետութեան, պատիւը Այդ խնդիրը լոկ դիւանագէտներին չի վերաբերում: Նա ծաւալել է

1) Տես առաջին յօդւածը «Մուրճ» 1894 թ. № 11—12, երկրորդը «Մուրճ» 1895 թ. № 1 և յաւելւած «Նիւթեր հայկական խնդրի նորագոյն գարզացման պատմութեան համար» «Մուրճ» 1895 թ. № 2.

և ընդդրկել զրեթէ ամբողջ ազգը ձիշտ է, որ այդ ազդի երկու մեծ կուսակցութիւններից յառաջդիմական և պահպանողական — ամենից շատ գործին կավածը յառաջադիմականն է. բայց, ինչպէս մեր ընթերցողները կը նկատեն մանաւանդ մեր այսանդամեաց Տեսութիւնից, ներկայումս հայասէք քաղաքականութիւնը արդէն իւր զիրկն է ընդունել նաև պահպանողական կուսակցութեան մի մասը: Եւ այդ բանը այժմ ճիշտ է շատ աւելի զգալի չափով, քան այդ կարող էինք վկայել մեր անցեալ երկու Տեսութիւնների մէջ:

Պատիւը՝ խնդիրը ուժեղ արծարծելու և ընդհանուր եւրոպական զբաղմունքի առարկայ դարձնելու — այդ, անկասկած, պատկանում է անգլիական The Daily News օրաթերթին, որպէս և առաջներում ասել ենք. բայց պատիւը՝ նոր զարկ տալու խնդրին և զինաթափ անելու հայկական դատի հայկառակորդներին, — այդ արդէն պատկանում է անգլիական մի պահպանողական թերթին — Daily Telegraph (Դէյլի Տելեգրաֆ) նոյնպէս նշանաւոր օրաթերթին, որպէս և կը տեսնեն ԱՄուրճա-ի ընթերցողները նիրկայ Տեսութիւնից:

Դէյլի Տելեգրաֆի ասպարէզ գալը որ քան անսկնկալ էր, նոյնքան ևս աւելի զօրեղ էր նորա ձայնը: Մինչդեռ սուլթանի նշանակած թբքական եւրոպական քննիչ յանձնաժողովը ստիպւած էր գործել լուսութեան մէջ ձիւնաթաւալ երկրում, հեռու մեծ կեղրոններից, մինչդեռ Թիւրքիան և Եւրոպայի ոչ-հայկական շրջանները իրանց օգուտներն էին սպառում յանձնաժողովից, մասնաւանդ որ շատ հիմքեր կացին կարծելու որ Թիւրքիան իւր բոլոր ջանքը գործ պիտի դնէր ճշմարտութեան ձայնը խեղդելու, — մի ացլովիսի ժամանակի, անսպասելի կերպով, Դէյլի Տելեգրաֆի քաջարի թղթակիցը Մուշից Լոնդոն է հասցնում իրողութիւնների մի նկարագիր, որ սուլթի պայթիւնի պէտ նորից թնդեցնում է քաղաքական մթնոլորդը:

Այդ յայնաւթիւնները իւր տեղում՝ նոյն այս Տեսութեան մէջ մեր ընթերցողները կը կարդան, բայց չպէտք է մռուանալ, որ հակառակ թբքամոլների և կասկածուների սպասածին, հայկական խնդիրը իւր նոր զարթնելու առաջին ամսից ի վեր, Անգլիայում մի բոլիք անգամ չհանդաւ. ընդհանրութիւնը հէսց էն սկզբից համոզւած էր որ առսկալի և անթուլատրելի գործեր են կատարւել,

և թէե յանձնաժողով կազմեց՝ գործը տեղն ու տեղը քննիլու, իսկութիւնը իմանալու համար, բայց գոնէ հայասիրական շրջանների համար վճռւած խնդիր էր որ աւելի շուտով քննիչ յանձնաժողոյթ կարող էր իսկութիւնը թագցնել, քան թէ հասարակաց կարծիքը կարող էր ացգքան յուղել և լարւել սուայօդ պատմութիւններով չեղած նախճիրների ու մտացածին արսափների մասին:

Եւ անուրանալի է, որ եթէ լինէր անգլիական արթուն հասարակաց կարծիքը, որը իւր արտայայտութիւնն է գտնում թէ մամուլի և թէ Անգլիայում անգքան սովորական բազմամարդ միտինդների (ժողովներ) մէջ, — ճշմարտութեան որ և է արտայայտութիւն ընդունակ չէր լինիլ այնքան յուղել հասարակաց կարծիքը, որքան այդ եղաւ ամիսներ առաջ Դէյլի Նիւսի և աչժմ Դէյլի Տելեգրաֆի յայտնութիւններով:

Ապահն հասարակաց կարծիքի արթնութիւնը դէպի հայկական խնդիրը Անգլիայում պէտք է մեկնել այն քաղաքական կապերով, որոնց մէջ դրւած է Անգլիան՝ Թիւրքիացի նկատմամբ, այն Թիւրքիացի, որի սահմանների ամրողջութիւնը երաշխաւորած է Անգլիան Կիպրոսի դաշնագրով 1878 թւականին։ Որովհետեւ, բայց այն, որ ամօթալի կը լինէր եթէ Անգլիան պաշտպանող գորս գար մի պետութեան, ուր Սասունի կոտորածի պէս նախճիրներ են կատարւում, բայցի այդ, առում ենք մենք, Անգլիացի համար անկասկած է, որ Սասունի դէպքից յետոց՝ եթէ երկրի առահովութիւնը երաշխաւորող մի հիմնական ուժքորմ չկատարւի՝ Թիւրքիական Ասիայի հայկական նահանգների գրաւումը Ռուսաստանի կողմից վճռւած խնդիր պիտի համարել, և այն ժամանակ այլ և ոչ մի պայմանագիր չի կարող բաւականաչափ զօրութիւն ունենալ պատմական անխուսափելի անհրաժեշտութեան դէմն առնելու համար։

Եւ հէնց այդ բանի խորը դիտակցութիւնն էր, որ սովոր Անգլիացին՝ Կիպրոսի անգլո-թրքական պայմանագրի մէջ, որ կապէւեց 14 յունիսի 1878 թ., պարտաւորեցնել Թիւրքիացին հայկական (ուրիշն Ռուսաստանին սահմանակից) երկիրներում ու եփորմներ կատարելու համար կապրոսի դաշնագրի այդ յօդւածը, որ այնքան յաճախ վիշտում է այժմ, հետևեալն է։

« Եթէ Բաթումը, Կարսը և Կամը դոցանից մէկը ուուսաց

« ձեռքին մնալու լինի, և եթէ երբ և իցէ Ռուսաստանը որ և է փորձ անէ գրաւելու՝ հաշտութեան վերջնական գրով նորին կայ- սերական Վեհափառութիւն Սուլթանին Փոքր-Ասիացում պատ- կանող գէթ որ և է երկիր,—Անգլիան ուարտաւորւում է միանալ Նորին Վեհափառութիւն Սուլթանի հետ՝ այդ երկիրը գէնքի զօրութեամբ պաշտպանելու համար»

« Դորա փոխարէն Նորին Վեհափառութիւն սուլթանը խոս- ւանում է Անգլիացին մոցնել երկու պետութիւնների հաւանու- թեամբ անհրաժեշտ գոնսելիք ունչորմները կառավարութեան մէջ՝ այդ երկիրներու՝ բնակող քրիստոնեաների և Բ. Դուան միւս հպատակների հովանաւորութեան համար։ Եւ որպէս զի հնար տրւի Անգլիացին անհրաժեշտ պատրաստութիւն տեսնելու իւր յանձն առած սարաֆը կատարելու համար՝ Նորին Վեհափա- ռութիւն Սուլթանը յօժարւում է նաև սահմանել, որ Կիպրոս կղզին գրաւեի և կառավարւի Անգլիացի ձեռքով։»

Կիպրոսի գաշնագիրը կապւեց Անգլիացի և Թիւրքիացի մէջ խանգարելու համար որ Բերլինի կոնգրեսում Ռուսիան չպնդէ Սան- Ստեֆանոսի գաշնագրի 16-րդ յօդւածի վրայ, որ հետևեալն էր.

« Նկատ առնելով, որ ռուսաց զօրքի զուրս ելնելը Հայաս- տանում գրաւած և Թիւրքիացին վերադարձնելիք գաւ առներից կարող կը լինի այդ երկիրների լաւ յարաբերութիւններին վնասող ընդհարումների և վէճերի տեղիք տալ, Բ. Դուռը պարտաւոր- ւում է անցապաղ իրագործել հայարնակ նահանգների տեղական կա- րիքների պահանջած բարեփոխումներն ու ունչորմները և երաշխա- ւոր լինել հայերի ապահովութեան քիւրդերի և չերքեզների դէմու»

Ահա Ս.Ան-Ստեֆանոսի գաշնագրի այդ յօդւածն էր որ սոխակեց Անգլիացում այն ժամանակ իշխող պահպանողական առաջին մի- նիստր լորդ Բիկոնսֆիլդին՝ Թիւրքիացի հետ վերը յիշած Կիպրո- սեան դաշնագիրը կապւել։ Անգլիան վախենում էր որ Ռուսիան իւր զօրքերը զուրս չբերի տաճկահայկական նահանգներից՝ մինչեւ որ պահանջւած ունչորմները չմոցւեն։ բայց Անգլիան զիսէր նաև որ Թիւրքիան ունչորմներ իսկոցն մոցնող չէ, հետևապէս Ռուսիան կօգտէր զորանից՝ իւր զօրքերը Թիւրքիացի հայկական գաւառնե- րում պահելու համար, և մինչեւ երբ...

Եւ ահա մինչդեռ եւրոպական մեծ պետութիւնների նիրկայացուցիչները ժողովւած էին Բերլին ում (նոյն 1878-ին)՝ Սան-Ստեֆանօի դաշնագիրը վերափոխելու համար, Անգլիան կապեց Կիպրոսեան դաշնագիրը Թիւրքիայի հետ, որպէս զի Բերլինի կոնգրէսում կարողանաց Սան-Ստեֆանօի դաշնի 16-րդ յօդւածը փոխել տալ, ասելով որ Անգլիան երաշխաւոր է Թթքահայկան նահանգներում ու Փոքրմաներ մայնելու համար, հետեւ ապէս աւելորդ է որ Ռուսիան իւր զօրքերը պահէ Թիւրքիայում այդ նպատակի համար:

Եւ Անգլիան այցպիսով յաջողցրեց, որ Սան-Ստեֆանօի դաշնագրի 16-րդ յօդւածը Բերլինի կոնգրէսում փոփոխւի այս կերպ, որ և եղաւ յօդւած 61-րդ Բերլինի դաշնագրի.

«Բ. Դուռը պարտաւորւում է, առանց այլիս յետաձգելու, « իրագործել այն բարեփոխութիւնները և վերանորոգումները, որ « պահանջում են Հայերով բնակեցրած նահանգների անզական կա- « կարիքները, և երաշխաւորել նոցա ապահովութիւնը Զերքեզների « և Քիւրդերի դէմ: Նա պարբերաբար պիտի տեղեկացնէ այդ նպա- « տակով ձեռնարկած միջոցների մասին Պետութիւններին, որոնք « պիտի վերահսկեն նոցա զործադրութեան վրայ»<sup>1)</sup>:

Այսպիսով, թէ Կիպրոսի մասնաւոր պայմանագրով և թէ Բերլինի խաղաղութեան դաշնագրով, գէթ առերկոյթ ապահովեցին ու Փոքրմաները, բայց և հետացւեց այն վտանգը, որ սպասում էին Ռուսիայի զօրքերի մնալովը տաճկահայ նահանգներում՝ նոյն այդ ու Փոքրմաների պատրւակով:

Անգլիան, որը յոյս ունէր թէ Կիպրոսի դաշնագիրը մեծ պարտականութիւններ չէր դնիլ իւր վրայ, արամազիր լինելով մի կերպ զեռ տանել Տաճկաստանի ներկայ կարգը, այդ նոյն Անգլիան երբէք չէր սպասում թէ Թիւրքիան կը վճռւէր այնպիսի անլուր դաշնութիւններ կատարելու, որ ամօթահար անէր ու Փոքրմաների համար երաշխաւոր կանգնած Անգլիային, այն Անգլիային, որը այդ ու Փոքրմաների փոխարէն Թիւրքիայի ասիական սահմանների ամբողջութիւնն էր երաշխաւորած:

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1893.թ. № 11 մեր յօդւածը աջաճկահայկան ինդիրը:

Զէ որ Անգլիան էր, որ Կիպրոսի գաշնագրի օգնութեամբ խանքարեց Սան Ստեֆանօի դաշնի 61-րդ յօդւածի անմիջական իրագործումը? Թէ այդ դիտակցութիւնը աչժմ որքան խորը պիտի խոցէր Անգլիացի ոչ միայն քաղաքական շահերը, այլ և անգլիական ազնի և կառավարութեան պատիւր—այդ շատ և շատ հասկանալի է:

Նոյնքան ևս հասկանալի է, որ Սասունի կոտորածի լուրը և նորանոր վկայութիւնները եղելութեան մասին անկեղծ սոսկումով են լեցնում անգլիացոց սրտերը, անգլիացոց, որոնք աշակէս կամ այնոյէս պատասխանատու են հանդիսանում քաղաքակրթութեանը վիրաւորող պժգալի անցքերի համար:

Այդ պատասխանատութիւնը, որքան ամենով Անգլիացին է վերաբերում, աւելի ևս մեծ չափով նա շօշափում է այդ երկրի պահպանողական կուսակցութեանը, որը հեղինակն էր Կիպրոսի գաշնադրի: Հասկանալի է թէ ինչու Սասունի կոտորածի մասին կասկածողները կամ կասկածել ձեւցնողները ամենից շատ այդ նոյն պահպանողական կուսակցութեան պատկանողներն էին:

Քանի որ ձայն բարձրացնողը գլխաւորապէս ազատամիտ կուսակցութիւնն էր և նորա գլխաւոր օրգան Դէյլի Նիւսը, գեռ պահպանողական կուսակցութիւնը հնարաւոր էր գտնում ինգիբը ձրգձրգել և պաղարին կերպով քննիչ յանձնաժողովի զեկուցումներին սպասել: Բայց երբ պահպանողական Դէյլի Տելեղրաժն եկաւ հաստատելու կատարւած ոճը իսկութիւնը և թէ այն՝ ինչ միցոջներով թիւբք կառավարութիւնը ծածկել էր ջանացել եղելութիւնը, այն ժամանակ արդէն պահպանողականները շօշափուած պիտի զգալին, իբր ամօթահար եղած թէ մարդկութեան դիմաց և թէ մասնաւորապէս անգլիական յառաջդիմական կուսակցութեան առւաշ, որի բողոքներին սկզբում նոքա այնքան սկեսուիկաբար էին վերաբերում:

Այսքանովն էլ պարզ է որ հասարակաց կարծիքը, ինգրի սկզբի օրից սկսած չէր կարող հանգիստ մնալ: Եւ իրօք, բազմամարդ ժողովները շարունակեցին իրար յաջորդել: Սաորեւ կարգով յիշատակում ենք այն նոր միտինգները, որոնք կայացան այս վերջին ամիսներին և որոնք հետևաբար մեր նախկին երկու յօդւածներում յիշատակած լինել չէին կարող, և թէ ինչ որոշումներ կայացան այդ ժողովներից ամեն մինում:

## ՆՈՐ ՄԻՏԻՆԳՆԵՐ ԱՆԳԼԻԱՅՑՈՒՄ

Յունւարի 29-ին մի միախնդ գումարւեց Մանչեստրի Town-Hall-ում (քաղաքատանը) Լորդ-Մէրի (քաղաքագլխի), նախագահութեամբ, ուր միաձայն վճռեցին պահանջել Բրիտանիայի կառավարութիւնից, որ նա փութայ ապահովել Հայաստանում տեղի գոած կոսորածների ու զրկանքների մի լիակատար և անկողմնակալ քննութիւն և վկաների իրական հովանաւորութիւն:

Զայների միութեամբ ընդունւեց հետևեալ որոշումը. «Այս ժողովը պարտք է դնում Վեհափառ. Թագուհու կառավարութեան վրայ՝ նախաձեւն լինել, միւս մեծ պետութիւնների միաբանութեամբ, պահանջելու Բարձրագոյն Դռնից, որ դա կատարէ Բերլինի դաշնադրութեան 61-րդ յօդւածն և որոշ ու ճշմարիտ սէֆորմներ մտցնէ հայկական նահանգների վարչութեան մէջ՝ բնակիչների կեանքը, պատիւն ու ստացւածքը ապահովելու համար»:

՚Ի նպաստ այդ որոշումների փաստաբան հանդիսացան Պարլամենտի անդամ սեօր Հասուորթը, Պարլ. անդամ միատր Հոլլանդը, Պ. ա. միստր Շեքս, Պ. ա. միստր Խորին, Կանոն Հիքսը, Կանոն Կելին, գերապտ հայր Վուգանը, գերապտ. Ա. Ստրենլին, գերապտ. Զ. Ակլատելը և սեօր Զ. Հարւուդը: Ատենախօսութիւնների նիւթ եղան նաև անդլիական թերթերի դէմ ժուրնալ կառավարութեան կողմից յարուցւած արգելքները:

2) Հէյլուդի յատուկ թղթակիցը հեռագրում է Դէյլի-Նիւսին Յունւ. 30-ին:

«Միդլտոնի ազատականների ճիւղը մի մեծ միախնդ կազմեց այս երեկոյ, ուր միաձայն որոշեցին հետևեալը. «Այս միտինդը զլուանք և զայրոյթ է յացտնում՝ երկար տարիներէ ՚ի վեր Բ. Դուան հաւանութեամբ հայերի դէմ շարունակ գործւող հարատահարութեանց և ճնշումների առթիւ, և տեսնելով որ սուլթանը վերին աստիճանի անփոյթ է կատարել Պարիզի և Բերլինի դաշնաքներով յանձն առած պարտքերը՝ իւր մահմեդական հպատակների հետ հաւասար գիրք տալու քրիստոնեայ հպատակներին և ապահով ու անդորր վիճակ շնորհելու դրանց, —ստիպաւ աղաջում է Վեհափառ թագուհու կառավարութիւնից, որ նա, դաշները ստորագրող միւս

մեծ պետութիւնների հետ միասին, հարկադրէ Բ. Դռան իրագործել իւր հանգիստուր խոստումները հայոց նկատմամբ, և պաշտպանէ հայերին ամենօրեաց զրկանքներից ու թշնամանքից, և որոշում է ներկայ վճռի սրատնէնը հաւացնել առաջին նախարարին և արտաքին դրդերի նախարարութեան:

3) Յունւարի վերջերքին (նոր տոմարով) դիսիդէնո (այլակրօն) քահանաների Միացեալ Ընկերութեան առենադպիրը հաղորդեց արտաքին գործերի նախարարին երիցական (presbyterian), միաբանական (congregational) և միրտող (habtist) անդամների միաբան ցանկութիւնը, որ է ներկացանալ նրան արտաքին գործերի նախարարութեան մէջ և մատուցանել յատկապէս Փոքր-Ասիացի հայոց վիճակը քննելու համար մի քանի օր առաջ գումարւած միտինգի որոշումը: Լորդ Կիմբերլէցը սպասախան տւեց, թէ նորին Մեծութիւն Թագուհու կառավարութիւնը սպասում է քննութեան հետեանքին և թէ ինքը յարմար չէ գատում ներկայ բոպէիս տեսակցութիւն ունենալ պատգամաւորութեան: Հետ յիշեալ հարցի առթիւ: Սակայն լորդ Կիմբերլէցը փափագում է, որ պատգամաւորութեան կողմից մատուցեելու որոշումը ուղարկեի իրեն, որպէս զի կարողանաց կարդալ իւր պաշտօնակիցներին: Աճուեցին հետեալը. «Դիսիդէնո քահանաների երեք ճիւղերի միացեալ ընկերութիւնը յայտնում է իւր ուժին զայրոցթը՝ թուրք կառավարութեան աստիճանաւորների կողմից, դաշինքների հակառակ, քրիստոնեաների դէմ գործւող յարատե բարբարոսութեանց առթիւ, որոնք գնալով գնալով վերջին կոտորածները յառաջ բերին: Մենք շնորհակալ ենք, որ մեր կառավարութիւնը քայլեր է անում այդ չարիքների առաջն առնելու համար: Մենք չենք ընդունում հարստահարիչ թուրք պաշտօնեաներից կազմւած որ և է քննիչ կոմիտիսա, այլ պահանջում՝ ենք անկողմնակալ անձերի արդար քննութիւն և մի այնպիսի քայլ, որ ազատէր հաւատի համար բանտարկւած հայերին: Պահանջում ենք նաև միջոցներ գործ գնել Տաճկատանի հայերին անգութ կեղեքութներից պատսպարելու համար: Այս պահանջներն անում ենք յանուն ընդհանուր մարդասիրութեան և բերլինի ու Կիպրոսի դաշինների թելադրութեամբ»:

4) Պարլամէնտի անդամ և անդօհական ընկերութեան նա-

իսագահ Ֆ. Ս. Ստիւենսթըն նախագահեց փետրւ. 4-ին հայկական խնդրի առթիւ ։ Վեստմինստէր-Պալաս-Հուտէլ-ում գումարւած ժողովին, որի մասին Daily News 5 փետրւ. լնդարձակ տեղեկութիւն տւեց։ Նախագահի մի ջերմ ճառից յետոց հայկական խնդրի մասին, ժողովը լնդունեց երկու որոշումներ։ Նախ՝ պարլամէնաի անդամ պ. Զ. Էլլիսի հետեւալ որոշումը։

«Ներկայ ժողովը, ի նկատ առնելով տարիներէ ի վեր Ասիական Թիւբքիայում տիրող ճնշումները և վատթար վարչութեան շարիքը, որոնք Սասունի կոտորածները և թիւբք զօրքերի բարբարոսութիւնները առաջ բերին, սորանով արտայատում է իւր զայրոյթը մարդկութեան սկզբունքները շարունակ բռնահարող և միջազգային պարտաւորութիւններն արհամարող Թիւբքիայի գէմի ժողովս ցաւելով ցաւում է որ Տերլինի դաշնադրութեան 61-րդ յօդածը, այլ գաշնագիրն ստորագրող պետութիւնների անտարքերութեան շնորհիւ, մինչև այժմ անկատար է մնացել, և դիմում է Վեհափառ Թագուհու կառավարութեան, որ նա, յիշելով ացդ դաշնագրի, ինչպէս որ Կիսլոսի պայմանագրի զօրութեամբ Անդիմի վրաց դրւած պարտքերը, ու Փորմների անմիջական իրազործումը պահանջիւ։

Միասր Էլլիսի ացդ առաջարկին ձայնակցեցին և պաշտպանեցին պարլամէնաի անդամներ՝ միստր Չաննինդ, գերապատիւ Աւ. Մոտրէմ և գեր. Զ. Գոսէտ Տաննէր։

Ապա նոյն նիստում պարլամէնաի անդամ միստր Շւէն առաջարկեց հետեւալը։

«Ներկայ ժողովը, փափագելով հանդերձ, որ մի միջազգային հիւսկատոսական յանձնաժողով նշանակւի թէ Սասունի նորագոյն կոտորածները և թէ այլուր պատահած նոյնօրինակ դէպքերը ճշդիւ քննելու համար, և ցանկալով հանդերձ, որ անհրաժեշտ զգուշութիւններ գործ դրւին բոլոր վկաների այժմեայ և առվագայ վիճակին ապահովելու համար, կարծիք է յայտնում, թէ մի քանի փոքր ի շատէ յանցաւոր անձերի պատժւելովը՝ իրերի ընդհանուր վիճակը չի փոխւիլ։ Նատ կարեւոր է, որ պետութիւնները միաբանուին և մի ազդու ու զօրեղ գործ տեսնեն, կէտ նպատակի ունենալով, յանուն մարդկութեան, արդարութեան և խաղաղութեան, հիմնական բա-

յենորոգումներ մաշնել Հայաստանում և տալ դորա քրիստոնեաց բնակիչներին ապահովութիւն հաւատի, կետնքի, պատւի և գոյքի»:

Ի նպաստ այդ առաջարկի խօսեցին գերապ. պրոֆ. Ագար Բիտու և պարլ. անդամ դոքտ. Ֆարբարտսը: Բայց ընդունեց Կառուն Մակ-Կոլլնի հետևեալ առաջարկը.

«Ներկայ միտինդն ափսոսում է, որ հայոց գործին վերաբերեալ հիւպատոսական զեկուցումները 1891 թւականից ի վեր չեն ներկայացւած պարլամենտին, և պահանջում է որ այդ տեսակ զեկուցումները միշտ հրատարակեն: Ֆողովը առանձին փափագ է յայտնում շուտափոյթ տեղեկութիւն ստանալու այն եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների, վարժապետների և ուրիշ անձերի մասին, որոնք առանց քննութեան և կամ կեղծ քննութիւնից յետով տաճկական բանտերը զցւելով՝ չարաչար տառապում են, կամ թե աքսորւած են»:

Ատենախօսն ասաց, թէ Հայաստանի վիճակը այս տասնուվեց տարւաց լնթացքում օրլստորէ վատացել է: Խնչու Բրիտանիացի կտուավարութիւնը չաղդարարեց Սուլթանին, թէ մինչև որ նա ձեռնամուխ չլինի ու վորմներին՝ տարեկան 100,000 ֆունտ ստերլինգ<sup>1)</sup> վճարումը Կիսրոս կղզուց դադարին Տաճկաստանում կատարւող զարհուրելի կոտորածները միշտ տեղի են ունեցել Կ. Պոլսից տրւած հրամանով:

Միասր Պէրսի նայտ կրկնեց այլ որոշումը, որին ձայնակից եղաւ Պարլ. անդամ Ա. Մորտոնն և գերապ. Զ. Գինէս Ռոջէրս, որ ասաց թէ մեր (անգլիական) կառավարութիւնը գործ ունի մի շատ ձարպիկ, նենգամիս ու խարգախ պետութեան հետ: Թիւրքիան միշտ գրգռել է մի պետութիւն միւսի դէմ—այդ է նորա սովորական խաղը. այժմ էլ ուզում է գրգռել մի քաղաքական կուսակցութիւն միւս կուսակցութեան դէմ. սակայն թող Թիւրքիան իմանաց, որ մեզանում ոչ մի կուսակցութիւն չի յօժարւիլ իւր հովանաւորութեան տակ առնել նորա վայրենի բւնակալութիւնը, և այդ այնքան էլ լաւ կը լինի մարդկութեան և քաղաքակարթութեան համար:

<sup>1)</sup> Ռուսաց փողով 630,000 ռուբլի ոսկով կամ 800,000 ռուբլի թըզթարամ:

կանանց ազատ դաշնակցութիւնը» գործադիր կոմիտէող հետեւալ որոշումն է կայացրել, դեռ ևս նոր տոմարով փետրւարի սկզբին (տպւած Դյուլի Նիւսի օ փետրւ. համարում):

«կանանց դաշնակցութեան գործադրիչ կոմիտէն ի նկատի առնելով Ասիական Թուրքիայի մէջ վերջին տասնուութեց տարիների ընթացքում իշխող բռնութիւնն ու վատթար վարչութիւնը, որոնք նորերս Սասունում կատարւած կոտորւածները լառաջ բերին, սորանով զարութ է վատնում թ. Դուան դէմ, որ սովոր է բռնանարել մարզկութեան սկզբունքները և առ ոչինչ դնել միջազգացին պարտաւորութիւնները: Կոմիտէն ցաւում է որ Բերլինի դաշնակցութեան 61-րդ օգուածը, չնորհիւ սոորագրող պետութիւնների անտարբերութեան, ալսքան ժամանակ անիրազործելի է մնացել, և դիմում է Վեհափառ Թագուհու կառավարութեան, որպէս զի դա, ճիմնելով Բերլինի դաշնակցութեամբ, այլ նաև Կիպրոսի պայմանագրով մեր ազգի վրայ զրած պարտաւորութեան վրաց, ձեռնամուխ լինի վճռական ու իրական ու քորմներ մացնել տալու, Եւրոպացի վերահսկութեամբ, հալաբնակ նահանգների մէջ և ապահովելու քլ իստունեաց բնակիչների կեանքը կրօնը, պատիւն ու գոյքը»:

6) Սկարբորդի հոգեւորական դասն, առաջարկութեամբ Պարլամէնտի անդամ սեօր Գ. Սիտուէլի որոշեց մի հասարակական միտինդ գումարել հայերի կրած հալածանքների խնդիրը քննելու համար: Հոգեւորականները միաձայն վճռեցին՝ հայ քրիստոնեաների դէմ գործւած անգժութիւնների առթիւ ցասումն յայտնելով, դիմել Մեծ Բրիտանիացի կառավարութեան, որ նա հնարաւոր կացուցանել մի արագ և անկախ քննութիւն անել և միւս պետութիւնների հետ միանալով, պահանջէ՝ Բերլինի դաշնակցութեան և Կիպրոսի պայմանագրի գօրութեամբ ռեֆորմներ մացնել Տաճկաստանի հայկական նահանգներում: Միստր Զ. Ռոունթրին, միենո՞ն նիւթի մասին գրելով, ասում է թէ Եւրոպացի արդի կացութեան մէջ շատ ցանկալի կը լինէր պետութիւնների միաբան գործողութիւնը. սակայն արդեօք Մեծ Բրիտանիան իրաւունք չունի՞ բռնելու Կիպրոսի սոուրքը, քանի որ Թուրքիան շարաշար իսախառում է Կիպրոսի պայմանագիրը, որով պարտաւորւած էր ու քորմներ մացնել Փոքր Ասիայում: Յամենայն դէպս անհրաժեշտ է վերջ տալ հայոց այժմեաց զրկանքներին և ընդ միշտ խափանել դրանց կրկնութիւնը: Հասարակաց կարծիքի ընդհանուր փափադն է օգնել այն կաւափառութեան, որ գործ կը տեսնէ՝ այդ վախճանին հասնելու մաքրու:

7) Ստոկպորտից 1) գրում են. — Այստեղ հասարակաց կարծիքն օր ըստ օրէ հետաքրքրւում է հայերի կրած մաշումներով։ Ամսոյս 12-ին գերապ. Ա. Սիմոնդսի նախաճեռնութեամբ և լորդ Մայորի գահերէցութեամբ մի քաղաքացին միտինդ կը գումարւի, և պարլամէնտի անդամմ միտար Նւէնը կը բացատրէ տաճկաբնակ հայերի վիճակը և անհրաժեշտութիւնը՝ լոյս սփուլու թուրք պաշտօնեաների ընթացքի վրայ, որով նրանք հալածում են քրիստոնեայ հայերին։ Այդ միտինդում կորոշւի առաջարկել կառավարութեան, որպէս զի նա հերլինի գաշնագիրն ստորագրող միւս պետութեանց հետ միասին փութաչ ու փորմներ մացնել Հայաստանում և շուտով արձակել տալ քաղաքական կոչւած կալանաւորներին։

Այդ միտինդը կայացաւ և ահա նորա հետեւ անքը ըստ Դէյլի նիւսի։

Թուրքաբնակ հայերի կրած հարստահարութիւնների դէմ բողոքելու համար փետրւ. 12-ին մայոր Ռոբինզոնի նախագահութեամբ Ստոկպուտում հաւաքւած քաղաքացին միտինդը մի բազմամարդ, եռանդուն և ազգու միտինդ էր։ Ներկայ էին ամեն դաւանութեանց հոգեսրտկաններ՝ թէ բողոքական, թէ կաթոլիկ, որոնք միարան ձայնակից եղան գերապ. Արթուր Սիմոնդսին, պահանջելով հաստատուն ու փորմներ հայերի համար և հաւասարութիւն օրէնքի առջև՝ քրիստոնեաների և մահմեդականների համար։ Հայոց աւագ քահանայ դոքուր Պարսնեանը և Անգլօ-Հայկական ընկերութեան պատւաւոր քարտուղար միտոր Էգուարդ Ատկինը նմանապէս ճառեր ասացին։ Մայորը յանձն առաւ հասցնել առաջին նախարարին և պետութեան առենադպրին միտինդի որոշումները։ Միշաբաթ առաջ քաղաքի բազմաթիւ ամբիոններից հայերին օգնելու հրաէրներ հնււեցան։ Միտինդի վերջում Զէշայրի համար Անգլօ-Հայկական ընկերութեան մի նոր ճիւղ հիմնեց և այդ ճիւղի պատւաւոր քարտուղար ընտրւեցան գերապ. Արթուր Սիմոնդսըն և գերապ. Ռիչարդ Խւբանկը։ Նուտով միտինդներ պիտի կազմէին Զետերում և Կրիւ լում։

<sup>1)</sup> Ստոկպորտ Փաթրիկակին քաղաք է Անգլիայում, Զեստէրի կոմունիթեան մէջ, աւելի քան 60,000 բնակիչներով։ Ծան. «Մուրճ» Խմբ.

«Այս բազմամարդ ժողովը զայրոցթ է յատանում Սատունում  
կատարւած զարշութիւնների առթիւ և ազերսում է Վեհափառ  
Թագուհու կառավարութեան՝ նախաձեռն լինել մացնելու հացկական  
նահանգներում՝ այն ռէֆորմները, որ Թուրքիան խոստացել է ներ-  
լինի դաշնադրութեան 61-րդ յօդւածով:

9) գետը. 15-ին մի միտինդ գումարուեց վերին Նոր վուդի բրիսթիակրեան տաճարում զեր. Զ. Գ. Տրէնի նախագահութեամբ, ուր պրոֆեսոր Թումայնեանը մի տեղեկադիր կարգաց հայերի կրած հալածանքների մասին; Գերապ. Ա. Առօքրունն առաջարկեց մի բանաձև, որով համակրութիւն է շայտնուում վշառչարչար հայերին և ցաււմն նրանց հալածող թուբք իշխանաւորներին; Միտինդը յոտնկաց ընդունեց այդ որոշումը: Դոկտոր Էայթը, որ Բիբլիական ընկերութեան անդամն է, յայտնեց՝ որ թէ անձնական փորձառութեամբ և թէ արևելքից ստացած նամակներին նայելով կարող է ոչ միայն հաստատել, այլ զեր սաստկացնել պրոֆեսոր Թումայնեանի պատմածները:

10) Աւելիթէչի Փ. հոլում (հարաւային և ամբէթ) սպրովետը  
թումայեանը մի մարդաշատ հասարակութեան առջեւ առենախօսու-  
թիւն արաւ. հայկական դէպքերի առթիւ: Նրա ճառից յետոյ  
որոշումն ընդունւեց պարլ. անդամ միասոր Զ. Հերբերտ Ռոբերտսի  
առաջարկութեամբ որի մէջ, ցասումն յացնելով Բ. Դուան դէմ,  
զիմումն է անուում Վեհափառ Թագուհու կառավարութեան, որսիս  
զի նա, ի նկատ առնելով թէ՝ Բերլինի դաշնադրութեան և թէ՝  
Կիալրոսի պացմանազրով յանձն առած պարտաւորութիւնները, ան-  
միջապէս պահանջէթուբքիացից՝ որոշ և հաստատուն ռեվորմներ  
մտցնել հայկական նահանգների վարչութեան մէջ:

11) Ուշասմինստրի Բրիջ-Բօօդ թաղի ս. Փրկիչ եկեղեցում, կարգում ենք Դէյլի Նիւսի մէջ 18 փետրվ., գերապ. Ե. Մայէրը, բնաբան առնելով ս. Պուկաս Աւետարանչի Փ. Գևիշ 30-րդ տունը, միշտ

<sup>1)</sup> Լամբեթ (Lambeth, կարդուցւում է Լէմբէս) Լոնդոնի մի մասն է՝ թիվզա գետի հարաւում:

զօրեղ և ազդու կոչումն արաւ հրիտանիայի քրիստոնեաներին, որպէս զի նրանք մի գործնական համակրութիւն ցոյց տան Թիւրքիայում ընկճւած հայերին։ Քաղաքական և կրօնական աղասութեան դատը միշտ եղած է մի սուրբ դատու Քահանաներն ու Դետացիք Երուսաղէմից Երիքով իջնելիս՝ անտարբեր գտնւեցան դէպի ձանապարհին ընկած վիրաւոր մարդը։ Սակայն հայերի ձանը խուլ ականջների չպիսի հանդիպի Բրիտանիայում։ մեր սուրբ պարտքն է օգնել մեր վիրաւոր աաճկաբնակ եղբայրներին ու քոյրերին, և հնար տալ նրանց՝ խաղաղ ասլրելու իրենց հայրենի աշխարհում։ Քրիստոնէական կրօնը պահանջում է գործով ցոյց տալ մեր հաւատը, ալլապէս դա չի լինիլ բուն հաւատ։

Միստր Մայէրի ճառից յետոց մի ազդու բանախօսութիւն արաւ Անգլօ-Հայկական Ընկերութեան մեծարդոյ անդամ միստր Եզուարդ Առոկինը, բազմավժիւ քաղւածներ յաւաջ բերելով սեօր Հէնրի Լէյարդի, սեօր Զօրացիո Կիչների, Տրոտէյ, Կիփորդ Լոյդ, Չերմսայդ և Էւրէտ հիւապատոսների պաշտօնական գրութիւններից, որոնք արժանահաւատ ու ստոյգ կերպով պատկերացնում են Տաճկասանի հայոց վիճակը։ Վերին աստիճանի վիրաւորիչ է Վեհափառ Թաղուհու կառավարութեան համար, որ նա խաբւել է Բ. Դուան Կողմից ժամանակ առ ժամանակ եւրոպական պետութիւններին հաղորդւած ստոյգ և անամօթ զեկուցումներով։ Ամենեին հիմք չկար յետաձգելու հայ կարանաւորների գործը՝ միմիայն այն պատճառով, որ Մասունի գէպքերը քննող Կոմմիսիան նստած է Բիթլիսի գաւառում։ Արաբիայի, Կիլիկիայի և Տերքերիայի բանակերը հարիւրաւոր մղոններով հեռու են Բիթլիսի գաւառից, և յետաձգել՝ կը նշանակէ մահւան մատնել զուր մեղադրւած անպարտ մարդկանց։ Մի ժամանակ Երիտասիայի եսասէր դիւանագիտութեան համար ձեռնոտու էր պաշտպանել հայոց դատը. բայց յետոց նա բարձի թող արաւ հայերին, մեղքն ուրիշ պետութեանց վրաց ձգելով։

Թուրք կառավարութիւնն, շարունակեց Առկին, իրաւունք ունէր եղբակացնել մեր իրար յաջորդող արտաքին գործոց նախարարների ընթացքից, թէ Երիտասիական կառավարութիւնը լիովին անտարբեր է դէպի տաճկաբնակ քրիստոնեաների վիճակը։ Երիտասիական պարլամէնտում լուռում էին ձայներ ի-

պաշտպանութիւն Բ. Դռան, և նրա արձանագրութիւնները լիքն էին կեղծաւոր պատճառանքներով՝ իբր թէ մեր շահերին ձեռնտու է ձեռնպահ մնալ, մինչդեռ Բրիտանիայի պատիւր յատկապէս կը պահանջէր մի ազգու գործ Զուր կը լինի Բ. Դռնից որ և է յօժարակամ ռեֆորմ սպասել: Եթէ Ռուսաստանը, Ֆրանսիան և Բրիտանիան փոխադարձ կասկածները դէն ձգեն և ձեռք ձեռքի ուած միաբան գործեն յանուն խաղաղութեան և մարդկութեան, այն ժամանակ ոչ մի հնարագիտութիւն ու դաշինք չեն կարողանալ այդ զօրեղ միութեան դիմադրել: Անգլօ-հայկական ընկերութիւնը ամենայն ուժով պիտի շարունակէ քարոզել այդ գաղափարի ճշմարտութիւնը և պահանջել մահմեդականների ու քրիստոնեանների բացարձակ հաւասարութիւն օրէնքի առջև: Ընկերութիւնը չի պահանջում հայերի համար մի բացառիկ արտօնութիւն, այլ կը ցանկար որ Թուրքիայի քրիստոնեանները նոյն իրաւունքներն ու ապահովութիւնը վայելէին Թուրքիայում, ինչ որ վայելում են մահմեդականները Ռուսաստանի, Անգլիայի և Բրիտանիայի սահմաններում: (Վափահարութիւն:)

Հայերին համակրութիւն յայտնող միաբան որոշում կայացաւ, և վճռեցին դիմումն անել կառավարութեան, որպէսզի գա այսուհետեւ աւելի ազգու կերպով դործ տեսնէ:

12) Անգլօ-հպատակ հայերը:—Հնդկաստանի, Հոնդի, Նեղուցների, Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ-Նահանգների, Կանադայի և Եղիպատոսի բրիտանական հայ բնակիչները մատուցել են թիւրքաբնակ հայերի մասին մի իննդրագիր պարլամենտի անդամներ միասոր Ֆ. Ո. Ստեւենսոնին և միասոր Ս. Ֆ. Շլէնին՝ անդիւական պարլամէնտին ներկայացնելու համար: Գոկումէնուը տպագրւած է Դէյլի Նիւո՞ի Յ վեարւար համարում:

Այդ խնդրագրի բովանդակութիւնը, որ կը բռնէր «Մուրմանի երեք էջը, ամբողջապէս առաջ չենք բերում, շգտնելով նորա մէջ նոր նիւթ. Կա կազմւած է այսպէս. ցիշեցնուում է Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածը և թէ այդ յօդւածով ինչ պիտի արդէն կատարւած լինէր. սակայն 16 տարուց յետոյ աւելի վաստ դրութեան մէջ են Հայաստանի հայերը. ցիշեցնուում են Վանի, Էրզրումի, Արարակիրի, Կեսարիայի, Թոքատի, Մուշի, Էնկիւրէի, Բիթլիսի,

Եթողդատի և Սասունի զարհուրելի դէպքերը. արդարադատութիւնը բացակայ է. ապացոյց Մուսաբէջի և Ենկիւրէյի դէպքերը. բանապարկութիւններ, աքսոր, ծանր տուրքեր, զօրքերի լրբութիւններ. Մինչդեռ հայերը արևելքում ամենից աւելի քաղաքակիրթ գործն տարրն են կազմում. Խնդրում է՝ հիմնաւոր ռեվորմներ մայնել այդ նահանգների վարչական և դատական ճիշգերում. նոյն աեղերի վարչական պարտքերի և իրաւունքների հաւասարապէս մասնակցելու հնար տալ հայերին. ոստիկաններից ու ժանդարմաներից կազմւած գնդեր կարգել և մի քրիստոնեաց կառավարչապետ նշանակել մեծ պետութիւնների հաւանութեամբ, որոնք և վերահսկեն այդ միջոցների ճիշդ իրագործման վրայ իրենց յատուկ ն իրակների ճեռքով։

## ՆՈՐ ՅԱՅՑՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Խնդիրը արդէն այս դրութեանն էր, երբ հրատարակւեցին Անգլիայում յուղիչ թղթակցութիւններ Սասունի կոտորածի մասին, որի չշգրիտ նկարագրութեան առաջ այլ ևս ապառաժ սրտերն անգամ պիտի յուղւէին։ Կարգով կը հրատարակենք այսաեղ նախ Դէյլի Տելեգրաֆի հռչակաւոր հեռագիրը, ասկա նորա երկար նամակը, յնտոյ կը դնենք մեր ընթերցողների առաջ Դէյլի Նիւսի թղթակցութիւնը, որը նոյնպէս յարմարում է Դէյլի Տելեգրաֆի հաղորդածին։ Դոքա արդէն էջեր են, որոնք պատմական կը մնան։ Դէյլի Տելեգրաֆը իւր համարում առ 27 վետրւ տպեց հետեւեալը.

«Նոր հասաւ մեզ հետևեալ նամակը Մուշից, որ զրկւած է մեզ Կարսի ռուսական հեռագրաթելի միջնորդութեամբ։ Կարեոր նամակի հեղինակը մեր յատուկ թղթակից է, որ ուզարկւած էր Հայաստան՝ անձամբ տեսնելու կոտորածների վայրերն և անկողմնակալ ու ճիշդ կերպով քննելու, թէ ճրքան ուղիղ են և կամ սուտ արդէն տարածւած լուրերը։ Այս պատասխանառու պաշտօնն սուսնձնած՝ մեր գործակալը, ծանօթ լինելով երկրի և տեղական լեզուների հետ, լիովին ձեռնհաս է իւր պարտքը կատարելու, և, ինչպէս որ ընթերցողը կը տեսնէ, նա ամեն դժւարութեանց յաղթել է, որովհե զի կարողանաց արժանահաւատ վկաներից բան լսել

և կամ տնձամբ ստոյզ փաստեր հաւաքել։ Նրա հեռագիրը մի սոսկալի հարսած է։ (Ապա տպւած է երկար հեռագիրը, որ ալս է.)

Մուշ, Փետր. 23.

Ձեր յանձնաբարութիւնը կատարելով և անելիքս հանդարսու յաջող առաջ տանելով, ահա ձեսնհաս եմ ուղարկել ձեզ առաջին զեկուցագիրս, թէե թիւրքերը ծածուկ և սիստեմատիքաբար ամեն հնար գործ են դնում քննութիւնը խափանելու և դիտողի աչքից դէպքերն ու դրանց շարժաւիթները թագցնելու համար։

Դեռ նւիրակների գալուց շատ առաջ, երբ Հոլուարդ հիւպատոսն աշխատում էր Սասուն հասնել, թիւրք պաշտօնեաները և յատկապէս պատասխանառու զինւորական հրամանառար Զէքի փաշան շտապում են ծածկել զարհուրելի կոտորածի հետքերը, որի գոյութիւնն անգամ Զէքին յամառօրէն ուրանում էր, և որ սակայն ես պիտի նկարագրեմ։ Փախստական հայերին մերթ յորդորելով, մերթ սպառնալով հարկադրում են վերադառնալ իրենց աւերակ զիւղերը և քարուքանդ տները վերաշնել։ Գէլիէգուզան, Ահմալ և Շէնիկ զիւղերի շուրջը կանգնած զօրքերն անգամ հրաման ստանում ացդ զիւղերը նորոգելու և վերականգնելու, որ և նրանք մի կերպ անում են։

Այնուհետեւ փորձում են դատարկել ու հարթել Գէլիէգուզանի զիւղապետի տան ետեւ գտնուող փոսը, ուր ձգւած էին խառն ի խուռն հարիւրաւոր յոշուաւած դիակներ, գլուխներ, ձեռքեր ոռքեր, իրաններ, իբրև մի նեխնեալ զանգւած։

Մինոյն ժամանակ գալիս է տաճկական յանձնաժողովը Արդուլանի փաշացի առաջնորդութեամբ, և դա հրատարակում է, թէ ողորմած ու գժառատ սուլթանը հրաւիրում է հայերին՝ յայոնել իրենց տրաունջները և մերկացնել քիւրդ կամ թուրք զինւորների ամեն մի չար գործը, որովհետեւ վեհապետը որոշել է պատժել յանցաւորներին և լիակատար հատուցումն տալ զրկածներին։

Այդ խօսքերին հաւատալով՝ նախաժիրների կենդանի վկաներից շատերը թողնում են իրենց թաքստեան անկիւնները և Մուշ գնում՝ համարձակ ասելու, ինչ որ զիտեն Սակայն նրանց խսկոյն բռնում են ու բանտարկում և կամ թէ թուրք զինւորների վերա-

հակողութեամբ հեռաւոր տեղեր պարտկում։ Ոմանք փախչում են, և այժմ հրաւեր են ստացել ազգակիցներից՝ ներկայանալու և ցուցմունք տալու եւրոպական նւիրակների առջև, որոնք էրզրումից դուրս գալու շորորդ օրը Խնուսկալէ հասնելով, իջնում են թուրք գնդապետի տանը։

Թէսկէո բոլոր լեռնացին և գաշտացին ճանապարհների վրայ կանգնած են թուրք լրտեսներ և զափախէներ, և, չնայելով որ պաշտօնական քննութիւնը գեռ չէ սկսած, երաք հայ կէս գիշերին հնար են գտնում նւիրակին տեսնելու և տալու նրանց մի շատ կարեոր հանրագիր, գանգտառելով իրենց գայմագամ Զիա բէզից, որ ի թիւս միւս կամսցական գործերի՝ յանիրաւի ձերբակալել է երեսուն և հինգ հոգի հայ և էրզրումի բանտը ձգել։ Այդ բանդում ժանտատենդն և հարինքը սովորական բաներ են։ ուստի նոր կալանաւորներից վեց հոգի շատ շանցած մեռնում են։ Միենայն գայմագամը մեղադրւում է և այն բանի մէջ, որ սովորութիւն է ունեցել կեղեքելու դաւառի հարուստ հայերին, նախ բանտարիելով նրանց և առաջ թէ նրանց արձակելու համար խոշոր գումարներ կորցելով։ Բողոքողները պնդում են, թէ միմիայն Խնուսի գաւառից մօտ 263 լնտանիք կամ գրէթէ 2,500 հոգի Կովկաս են փախել հալածանքից ազատւելու համար։ Թէե եւրոպական նւիրակներն այս տեսակ նիւթեր քննելու իրաւունք չունին, բայց և այնպէս Քեմալեան անունով մի Խնուսկալեցի հայ վաճառական մի յատուկ բողոքագիր տւեց նրանց, դատաստան պահանջելով միենայն գայմագամի դէմ, որ բռնի առևանգել ու լլկել է նրա նորատի աղջկան, թէե դա վազորօք նշանաած էր՝ բռնակալի ձեռքից ազատ ննալու համար։ Նւիրակները հրաժարւեցան միջամտել այդ գործի մէջ, որ դուրս էր իրենց քննութեան շրջանից։

Կոտորածներին ականատես հայ վկաներից մի ուրիշ անձն, և լատկապէս չարաշար սպանւած քահանացի որդի Միքայէլը յանձն առաջ ցուցմունքներ անել, և որովհետեւ նո գրեթէ մերկ էր, ուստի նրան հագուստ տւին, որ այնպէս Մուշ տանեն։

Հետեւալ գիշերը նւիրակներն անցկացրին Ղարաքեօփրու գիւղում, ուր նրանց ներկայացան Գրգո անունով ազնիւ հայ, երբեմն մարդաշատ, լնտանիքի կենդանի մնացած անդամները, որոնք փա-

խել էին Շէնիկից։ Այդ գերդաստանն առաջ ունեցել է 61 հոգի։ Այժմ ապրում են միայն ութ հոգի։ միւսները սպանւել են Գէլիկուզանի գաղանացին կոտորածի միջոցին։

Այդ կենդանի վկաների ցուցմունքը, որ նրանք որոշել են առ Մուշում, հետևեալն է։

Սասունի անկարգութեանց անմիջական պատճառը Բաքրանի ցեղի քուրզերն են, որոնք յայտնի են իբրև աւազակներ։ Նրանք յարձակում են մի քանի հայոց վրայ և յափշտակում նրանց խաշինքը։ Այն ժամանակ հայոց զիւղապետ Գրդօն գանգառ է յայտնում թուրք զնդապետ Ահմէդ բէկին, որ իւր 210 զինւորներով բանակ էր զրած Միրքէ-Մողան գաշտի վրայ։ Թուրք սպան հեգնում ու ծաղրում է Գրդօն։ Գրդօն էլ այնուհետև իւր գիւղացոց հետ որոշում է անձամբ զատաստան կտրել և յարձակում է Շէնիկ խուժած քուրզերի վրայ։ Կուրի ժամանակ հացերը վիրաւորում են մի քուրդ և սպանում են երկուսին։ Այդ սպանւածներից մէկի դիակը քուրզերը տանում են Մուշ և հրապարակաւ. ի ցոյց զնում իբրև փաստ, թէ հայերն ապստամբութեան դրօշակ են բարձրացրել։ Այդ բանին սիրով հաւատում է Բիթլիսի յայտնի նահանգապետ Թաքսին փաշան և ըստ այնմ հեռագիր է արձակում զէպի Պոլիս, որտեղից և հրաման է գալիս՝ զօրք գումարելու և պատժելու հացերին։ Անհաւատուների դէմ սուրբ պատերազմ է քարոզում և հրամանատար թուրք զնդապետը հրապարակաւ կարդում է, որպէս թէ Սուլթանից ստացւած մի ֆերման, որով զինւորները խրախուառում են ոչնչացնել բոլոր ատատամբ հայերին։ Փանի որ դրան յաջորդող ծանր զէպքի սպատասխանատուն այդ զնդապետն է կամ նոյն իսկ Զէքի փաշան, պէտք է յուսալ, որ նւիրակներն անսպատճառ գրանց էլ վկայ կը կանչեն։

Գրդօի խօսքերով հաստատում է որ այդ կոտորածի հրամանը տրւելուն պէս՝ ահաբեկ զիւղացիք փախչում են Անդոք սարը, Գելիկուզանի մօտերքում, և ժայռերի ետևը պատսպարւած՝ փորձ են փորձում պաշտնել իրենց հին-հին հրացաններով։ Այն ժամանակ զինւորները խոստանում են կայսերական զօրքի հովանաւորութիւնը այն ամենքին, որոնք զինաթափ կը լինին և կ'ապաւինին թուրք բանակին։ Մի հայ քահանաց լնդունում է այդ առաջարկը։

նոյն անում են և 360 անձ մեծ և փոքր, թէ այր, թէ կիս: Թուրք գնդապետը կարդադրում է կերակրել հայերին զինորների հետ միասին. յետոյ՝ զիշերւայ մուժն իջնելուն պէս՝ հրամացում է փոքր ինչ հեռացնել նրանց բանակից, և այնտեղ նրանք կոտորւում են և մի լայն փոսի մէջ ձգւում՝ մեռած ու հոգեվառ միասին:

Կոտորածի հանգամանքները բատմնելի են, և ինձ թւում է թէ բոլղարական ամենաչար նախնիրներն անգամ՝ նսեմանում են այդ զժուսացին արհաւիրքի առջև: Ես չեմ կարող կեղծիք համարել գրանց, այլ ցաւելով պիտի ասեմ, որ ճշմարտութիւնն սոուգւած է բազմաթիւ անկախ և ականատես վկաների ցուցմունքով:

Անդոք լերան անձնատուր չեղո ծ հայերն այնուհետև հալածում են և սպանւում մերթ անարգիչ չարութեամբ ու գազանութեամբ, մերթ վայրենի զւարձութեամբ:

Տաժանելի չարչարանքով, մեծ վտանգի ենթարկւելով ու երկար ժամանակ ատառնդական թափառելով կենդանի մնացած վկաները քննուելու են Սուշում նւիրակների առջև: Ասողներ կան, թէ նրանց պատամութիւնը հաստատելու է և շէնիկցի Սիքայէլ Առաքելեանը, որ ականատես էր կոտորածին, և որի երեք ընկերները վկայութիւն տալու համոր թուրք յանձնաժողովին ներկայանալիս՝ բռնւած և բանտարկւած են:

Մի հայ կին էլ կարողացաւ տեսնել նւիրակներին Կրող զիւղում, ուր հետեւ էր նրանց, և պատմեց, թէ ինչպէս նրանց գալու օրը Սիմօ զիւղի չէրքէզները բռնում են իւր նորատի աղջկան ու բռնաբարում՝ փոխարէն 5 լիրայի, որ պարտ էր նրանց իւր մարդի: Այս գէպքը քննելու իրաւունք չունէին նւիրակները:

Նրանք Մուշ հասան երկուշաբթի յունաւրի 21-ին:

Մինչև այժմ հարցրած վկաների թիւը չնչին է, ուստի հաւանական է, որ քննութիւնը գոնէ երկու ամիս կը տեի:

Թուրք պաշտոնեաները կաշառքի ու սպառնալիքի միջոցով լաջողել են կառավարութեան նոպաստաւոր և հայերին աննպաստ ֆուզմունք առնել Ա. Կարապետ վանքի մի քանի կրօնաւորներից: Այդ վարդապետները վկայել են, թէ հայերի մէջ իրօք մի վտանգաւոր յեղափոխական շարժումն կար օրինաւոր կառավարութեան դէմ և թէ ապստամբութեան նշանն արդէն տրւած էր օսմանեան գնդե-

րի որ և է հրացան արձակելուց առաջ, և թէ թուրք զինւորների վճռական ընթացքը հայ դիւղացոց յամառ ընդդիմութեան հետեւանք էր։ Այս ցուցմունքը, որ կարող է ինկատ առնելի որ ուրեք, չի բացատրում, թէ բնչպէս անզէն գիւղացիք, որոնք սպանել են վեցհօթը քուրդ, և ոչ մի զինւոր չեն սպանել. վերջապէս վկայող վարդապետները եղած էլ չեն Սասունում։ Այս էլ ասենք, որ այդ վարդապետները յայտնապէս վատ բնաւորութեան տէր մարդիկ են։ Դրանք էին, որ դեռ մի երկու տարի առաջ պիտի վանտէին վանքից Ներսէս եպիսկոպոսի որոշմամբ, որին յետոյ նրանք մատնեցին կառավարութեան, իբր թէ նա Տամատեան դաւադրի կուսակից է։ Անմեղ եպիսկոպոսը դատավարուեց հինգամեայ բանտարկութեան և նրա տեղը դաւաճան աբեղաներից մէկը դրեց։

Գիւրդիստանի զանազան մասերում ակներև գրգռում են մահ մեղական ժողովրդի Վանատիկոսութիւնը, և Վանի, Խարբերթի և ուրիշ քաղաքների բազարներում շատ են խօսում քրիստոնեաներին սպառնացող կոտորածի վրաց, որ սկսելու է Ռամազանի տօնին։

Ես կարծում եմ, որ այդ լուրերը ծայրացեղ են. սակայն թէ գրանք բոլորովին անհիմն չեն, այդ երեւում՝ է այն հանգամանքից, որ վարժապետութիւն անող մոլլաները սկսել են քարոզել, թէ պէտք է հաշու ապրել քրիստոնեաների հետ Սակայն իմ՝ գիտեցածիս նայելով՝ մի քանի մոլեւանդ թուրքեր գրգռում են քուրդերին՝ մասնակցելու յառաջիկայ կոտորածին։

Այս բովէիս ամբողջ Քիւրդստանում չարաչար սակառում են քրիստոնեայ գիւղացիներին, որպէս զի իրանց կառավարութեան շնորհակալութիւն յայնող հանրագրերը ասորագրեն, յայնելով թէ ողորմած կառավարութիւնը պաշտպանում է նրանց կեանքն ու գոյքը յեղափոխական հայերի դէմ։ Ստորագրութիւն չտողը բանտարկուում է։

Դժւար է նկարագրել Քոքր-Ասիացի քրիստոնեաների ողորմելի վիճակը։ Նրանք յարառե երկիւղով պաշարւած են. փողոցները լին հազար կերպ ծպտեալ լրտեսներով. ձեռբակալութիւններն անվելու են, և զրանք կատարուում են գլխաւորապէս դրամ՝ կորզելու նստակով և ստէպ՝ անձնական վրէժինդրութեան յագուրդ տալու տեղաշնչով։ Նորերս բանտարկւած էր մի զիւղացի իւր մօտ մի կաց-

կածելի նամակ գտնւելուն պատճառով, որի մէջ յիշւած էր Օհաննէս անունով մի քահանաց, սակայն առանց դրա ազգանունն և կամ բնակութեան տեղը ցոյց տալու: Այս գէպքից յետոյ սկսում են խուզարկութիւն անել, և թէպէտ Օհաննէս անունով միակ հոգեռականը ապրում էր շատ հեռու տեղ, և յատկապէս Խնուս գաւառի Կարաչոբան գիւղում, նրան բռնում են և կենդրոնական բանալ ձգում: Այդ վտանգաւոր համարւած եկեղեցականը մի գրագէտ մարդ է և խուլ ու կոյր լինելուց զատ՝ 103 տարեկան է:

Հռչակաւոր հայ Մուրադը, որ պաշտպանում էր իւր գիւղացոց Սասունի կուլի ժամանակ, քննուեց Բիթլիսում: Դատաւորներն աշխատում էին խոսառվանութիւն որսալ նրանից և նրա լինկերից, թէ Անգլիան յոյս է տւել օգնելու հայերին այն նպատակով, որ նրանք ապստամբութիւն յարուցանեն. սակայն Մուրադն և իւր լնկերները արիաբար հերքեցին այդ զրպարտութիւնը և մահւան դատապարտւեցան:

«Եզրի Տեղբրաֆուը, իւր թղթակցի վերը առաջ բերած և այլ հեռագիրները հրատարակելուց յետոյ, տպեց նորա պոստային թղթակցութիւնները, որոնք արժանացան լարւած ուշադրութեան: Հետեւեալ թղթակցութիւնը տպւած է թերթի մարտ 14-ի համարում, խմբագրութեան կողմից կցած այս երկառղով.»

«Մինչև այժմ հրատարակում էինք մեր Հայաստանի գործակալի հեռագրական նամակները այս օրւաց համարում լոյս ենք ընծայում նրա փոստով ուղարկած առաջին նամակները, որոնք նկարագրում են իւր հետազոտութեան հէնց սկզբին ծագած դժւարութիւնները»:

Ապա գալիս են թղթակցի առաջին նամակները, որոնք ցոյց են տալիս թէ ինչպէս Կ. Պոլսում նորան շփոթել էին և նախապաշարել հայերի գէմի:

Կերասուն, Փոքր-Ասիա:

Արեւելեան խնդրի բոլոր մասերից ամենափափուկն ու ամենից աւելի խճողւածը հայկականն է, և այնքան մեծ է դրա՝ ոչ միայն բաւարար լուծումը գտնելու, այլ և նոյն իսկ իրական փաստերը

սառուգելու դժւարութիւնը, որ թիւքքերն արդարեւ կարող են անյաղթելի համարել զրանց և ցուսալ, թէ Եւրոպացի անձարացած դիւանագէտները վերջ ի վերջոյ զգեւլով ձեւք կը վերցնեն քննութիւնից:

Դախ ասենք, որ հայերին արեւելեան չափազանցութեան բնածին և անդիմադրելի հակումով օժտուած ազգ են համարում. նրանց յիշողութիւնը, ասում են, ներդաշնակ կերպով միացած է վասերեւակացութեան հետ. նրանց ոխակալութեան ոգին բթացրել է հասարակ արդարութեան զգացմոն կը ը, իսկ ժառանգական յամառութիւնն ու ստացական ըմբոսութիւնը թուրք կառավարութեան դէմ՝ մնունդ է ստացել արւեստաքար բորբոքող յեղափոխական անիշխանականութիւնից: Նոր ժամանակի ազգերից և ոչ մէկը այն աստիճան սիրահար չէ առասպելական վէպերի, ինչպէս որ Հայկի խիզախ որդիքը, որոնք այսօր էլ դեռ մաւրիտանական երգիչների հեշտութեամբ և սիրով ազգային երգեր են շարադրում և արիւնահեղ կուիւների ու կոտորածների արհաւրական զրոյցներ հնարում, և այդ բոլորն իրար հետ այնպէս կապում և սազացնում, որ նոյն իսկ ֆալստափը<sup>1)</sup> կ'ամաչէր:

Եւ հէնց թուրքօ-քուրդական վարչութեան սարսափների ամենամտահար ու աղեկեզ մանրամասունքը, — այն ահուելի լուրերը, որոնք բոլոր տիեզերքի անգլիախօս տղամարդկանց ու կանանց գաղջ արիւնը սրտմութեան կրակով լառեցին և քաշերի սիրոն անփամ դողացրին, — հասոն մեզ գլխաւորապէս, այն, բացառապէս այդպատոր աղբիւրից:

Թոզներւի արդ հալցնել — արդեօք անհաւասնականութեան դրոշմն կրող այդ վայրենի առասպենեները չե՞ն պարունակում իրենց մէջ ծշմարտութեան գէմ մի հիւլէ, որ, ինչպէս ասում են, անհրաժեշտ է նոյն իսկ սուտ բան շարադրելու համար: Արդեօք մեր երեկոի պետական անձերին և հռչակաւոր առենարաններին իբրև հիմք ծառայող փաստերը, — որոնց վրայ յենւելով նրանք կը ցանկացին մի բարեկամ պետութեան տնային գործերի մէջ խառնուիլ:

<sup>1)</sup> Ֆալստափ մի կոմիկական անձն է Շեքսպիրի «Հենրիկոս IV<sup>o</sup>» և «Ալինձորի ուրախ կանաքը» պիեսներում, անառակ բալց որախօս պարծենի կոտին մէկը:

որ և է կշիռ ու վարկ ունին, որ կարողանացին բանի տեղ դրւիլ: Եւ արդեօք ի նկատ չպիտի առնենք թուրքերի հերքումներն ու բարձրաձայն կրկնութիւնը, թէ այն պժգալի զրոյցները լոկ հայկական զրայրատանք են:

Զրոյցների բնաւորութիւնը, գրանց պատմողների որ աստիճանն արժանահաւատատ լինելն և անպարտ մարդկանց իրը թէ կոտորւելուն վերաբերեալ հանգամանքները թեթևակի քննելիս՝ գալիս ենք մի այնպիսի եղբակացութեան, որ շատ նպաստաւոր է թուրքերին:

Սկսելով երկրորդ կէտից, հարցնենք, թէ ինչ պէտք է կարծել մի ազգի մասին, որի պատմաբանները լրջօրէն հաւատում են, թէ տակաւին մէկ գար առաջ Դաւիթ անունով մի հայ իշխան, միմիայն 453 զինւորով ահ ու սարսափ է աղղել 70,000 զինւոր ունեցող զօրքին, սպանել է 15,000-ին, իսկ միւսներին՝ հողմահարած չոր տերեների նման ցիր ու ցան արել:

Սակայն աւելի լաւ է՝ յառաջ բերենք մի նոր օրինակ, որ գիտածիս նայելով՝ զեռ ոչ մի անգամ չի հրատարակւած:

Մօա չորս ու կես տարի առաջ անդիմական և տարաշխարհի մամուլը վիստում էր քստմնելի և արիւնաթաթմաւ սպանութեանց, հրդեհումների, աւերումների, առեանդումների և ուրիշ ամեն տեսակ դժոխացին ոճիրների նկարագրով, որոնց ասպարէզը դարձեալ նոյն Հայաստանն էր: Հասարակացին կարծիքը հետզհետէ դրդուել էր: Պարլամէնտում հարցեր էին առաջարկւում, և մեր կառավարութիւնը վերջ ի վերջոյ հարկ դատեց միջամտել: Բայց գործի քննւթեան ժամանակ գուրս եկաւ, որ չարաչար կրակի մատնած բազմաթիւ եկեղեցիներից և վայրենաբար լլիւած բազմաթիւ կանացից ու աղջիկներից և ոչ մէկը գոյութիւն չի ունեցել: «Քո ասելով քանի՞ եկեղեցի են քանդել Մուշում», հարցնում է անկողմնակալ քննիչը: Պատասխան. «Ասու ծու չորս տաճարն էլ քար ու քանդ արին»: «Այդ չորս եկեղեցին էլ այրեցին, հարցնում է նորից քննիչը, երբ որ արդէն անց էր կենում Փիւրդիստանի միջով: Քիրա, կրկնում է զարմացած հայը: «Այստեղ միայն երեք եկեղեցի կար, և մէկը կանգուն է և անմնասոյ: Պազարիւն ճամբորդը և՛ս աւելի մօտենալով սրբապղծութեան վայրին, սկսում է նորից հարց ու փորձ անել: Այս անգամ նրան անսպասելի պատասխան են տա-

լիս, թէ «Մահդմեդականների մվասած միակ եկեղեցին սուրբ Կարապետն է, այն պատմական եկեղեցին, որ ամնքան նւիրական է ամեն մի հայի համար»։ Վերջապէս, երբ ուղևորը, պատահարի բռն վայրին հասնելով, իջնում է ձիուց, նրան ասում են, որ յիշւած եկեղեցին ամեննեին չի հրդեհւած, այլ միայն կողոպտած է եղել, այն ել ոչ թէ այժմ, այլ տասնեւթօթը տարի առաջ։ Այնուհետեւ նրան նորոգել են։ Ուզեորը մոնում է կարմրագոյն աղիւսից շինւած սուրբ տաճարն և երեխ թէ ջերս աղօթք է անում, որ Աստւած զգաստացնէ ստախօններին և զրաբարտիշներին։

Դարձեալ ովքեր են այն անձերը, որ վերջին երեք ամսւայ ընթացքում իրենց սոսկալի պատմութիւններով ամբողջ լուսաւորւած աշխարհը հիմն ի վեր զզրդեցրին։ Մարդիկ, որոնք վկայւած հալածանքի ու բռնութեան օրինակներ չունենալով, գիտութեամբ ստեղծեցին զբանց, — գաղանի ընկերութեան անդամներ, որոնք ոչ մի հնար, նոյն իսկ եղեռնական միջոց անտես չժողին իրենց ազգի կոտորածը յառաջ բերելու համար, որպէս զի, ինչպէս կարծում էին, այդ կոտորածի մանրամասն նկարագրութեամբ բովանդակ եւրոպան ոտքի հանեն փատալիստ և անհոգ թուրքի զէմ։

Արդեօք ճշմարիւ է, հարցնում են մեզ, թէ ամենադարշելի և ամեն մի քաղաքակիրթ երկրում պատժելի ծրագիրներ ու նախագծեր են տարածւած և անպայման ընդունւած եղել՝ թուրքերին սոհիպելու մոքով այնպիսի զաղանութիւններ անելու, որոնք հնար տային դաւադիրներին և նրանց բարեկամներին խաչտկրաց աղազակ բարձրացնել թուրքերի անգթութեանց դէմ։

Այս, միանգամացն ճշմարիտ է, և ոչ մի մարդ, որ փոքր ի՞ն տեղեակ է Քիւրդիստանի պատմութեան և հայկական հարցին, չի համարձակւիլ ուրանալ այդ։ Կան այնպիսի զօրեղ փատեր, որոնք նոյն իսկ ամենասկասկածու հայասէրին անգամ կը համոզեն։

Արդ, եթէ այդ ամենը ստոյգ է, եթէ ստոյգ է, որ մահմեդական ժողովուրդը գիտութեամբ դրդւած է եղել վրէժխնդիր լի նելու ու նոյն իսկ մի քանի բարբարոսական դրծեր կատարելու, — եթէ թուրք կառավարութիւնն ի պաշտօնէ յեղափոխական էախների թելադրած ապստամբութիւնը ճնշելու համար աւելի քան ազդու միջոցների է դիմել, — մեզ արդեօք վայել է յուզեիլ և զրդովել այն

ողբամելի զրոյցները լսելիս, որ տարածում են նոյն իսկ տեսական և գործնական առևմամբ պարսաւելի անարժան անձերը:

Այդ հարցման պատասխանը բաւական պարզ է թւում, և թուրք պաշտօնեաների յայտնի զեկուցումները և ըստ երևոյթին ուղիղ ընթացքը ասես թէ հաստատում՝ են, թէ այդ պատասխանը ճիշդ է: Խասավիստ օսմանլին, կեղծաւորութեան ու ճարտարանքի այդ երկեալ թշնամին, անբաղդ է եղել թէ լուելիս, թէ խօսելիս, և նրա անշահ և աշկարա ստախօս փաստաբաններն աւելի են վնասել նրա դատին, քան թէ ամենատխերիմ չարակամները: Բայց և այնպէս ի նպաստ նրա դատին յառաջ են բերւում բաւական ծանրակշիռ ապացոյցներ:

Արդեօք կարելի է ուրանալ, հարցնում է Բ. Գուռը, թէ հայ գրգոհները ծացրէ ի ծայր չափչիել են Տերսիմի, Էկմիածնի, Վանի, Էրզրումի և ուրիշ նահանգները և գրգել միամիտ ժողովրդին դէպի բացարձակ ըմբոսառութիւն:

Պատասխանը բացասական է:

Ստոյդ չէ արդեօք, շարունակում է հարցնողը, որ մահմեդական քիւրդերը միմի ժամանակ բնացինջ են եղել Հայկի ոխակալ որդոց ձեռքով, և հէնց նոյն անգժամութեամբ, որ այժմ գիւային է թւում քաղաքակիրթ Եւրոպային:

Դժբաղդիաբար ստոյդ է:

Յարմարւում է արդեօք թուրք զինւորի հանդարտ և իսկապէս մարդասէր բնաւորութեան, գէթ ա րիօր կարելի է հնթաղրել, որ այդ դանդաղ օսմանլին, այդ ընտանիեսէր ու որդեսէր զժոստ հայրը—առանց այլապլութեան սաւն սրտով կատարէ այն հրէշային ոճիրները, որոնք վերադրւում են նրան դժգոհ հայերի կողմից:

Հարկաւ ոչ:

Արդեօք հերքւած է տաճկաբնակ քրիստոնեաների, հայերի, բարձրաստիճան հոգեւորականների կողմից,—որոնք սիրում են անշուշ իրենց հօտն և հայրաբար խնամում,—որ Սասունի գիւղացիք, բացարձակ ապաստամբութիւն անելով, յարձակւել են իրենց մահմեդական մերձաւորների վրայ և ստիպել նրանց ինքնապաշտանութեան գիմելու:

Ոչ եւ իրօք նոյն բանը կրկնել են հայ պաշտօնատարներն ու եկեղեցականները և մինչեւ անգամ հասարակ ժողովրդից շատերը՝ որոնք, Սասունի մօտերքում ապրելով, աւելի ծանօթ են գործերի խսկական վիճակին, քանի թէ որ և է զրսի մարդ. զրանք խօսքով ու գրով հանդիսաբար հաստատել են, թէ Սասունի շփոթները գիտութեամբ յարուցւած են եղել յեղափոխականների ձեռքով և թէ կառավարութիւնը իւր բոլոր հայ հպատակների շնորհակալութեան արժանի գործ է կատարել, ոտնակոխ ան ելով ապստամբութիւնը և կարգ ու կանոն վերահաստատելով երկրի մէջ:

Եթէ այդ այզպէս է, և չի կարելի այդ ժխտել, ուրեմն ի՞նչ կը մնայ մեզ մտածել և ասել այն պետական և քաղաքագէտ անձերի մասին, որոնք, ունենալով հանդերձ այդպիսի փաստեր, համարձակում են խաչակրաց պատերազմ քարոզել և անուղղելիս թուրքերի դէմ:

Բայց և այնպէս ի՞նչ կ'ասենք մենք, եթէ հեռաւոր Գիւրդիստանից մեզ հասնող արհաւրական լուրերի մէջ ճշմարտութեան գէթ մի մասնիկ գտնելի, ինչպէս որ լինում է ամեն մարդկային ստոթեան մէջ: Ի՞նչ կասենք, եթէ որ ուսուցուելու համար քաջօրէն գնում են մահւան դէմ, այս, մահից էլ վատթար վտանգի դէմ, որ ոչ միայն հաւատացած լինին իրենց ասածի ճշմարտութեան, հաւպա և անհերքելի փաստեր ունենան ի հաստատութիւն իրենց համոզման:

Ահա այդ տեսակ երկբայութեան, կասկածի, վարանքի, տագնապի իրար ներհակ զգացմունքների ազգեցութեամբ պաշարւած էի ես, բայց և շատ հակամէտ կարեկցելու անչափ զրպարտած թուրքին, երբոր անցեալ գեկանեմբեր ամսին մտայ Պոլիս և ձեռք զարկեցի ստուգելու, թէ ի՞նչ են իրօք դէպքի բուն հանգամանքները:

Լոյս և առաջնորդութիւն դանելու համար ես դիմեցի, ի՞նչ պէս որ պատշաճ էր արդի հանգամանքներում, նախ և առաջ նոյն իսկ թուրք պաշտօնեաներին, յետոյ հարց ու փորձ արի Պէտաբնակւող եւրոպացիներից մի քանի նշանաւորներին և վերջապէս հացերին: Սակայն հետազօտութիւններիս հետեւ անքն այն եղաւ, որ ես աւելի ևս շփոթւեցայ:

«Սասունցիք ինքեանք փորձանք բերին իրենց գլխին», ասաց ինձ մի յարգելի հայ պարոն. «այդ խրատ կը լինի նրանց համար, որպէս զի ապագացին զգուշանան սոցիալիստներից և յեղափոխականներից»:

«Գաւառաբնակ հայերը շատ ծանրաբարոյ, օրինադահ, աշխատանք ժողովուրդ են», գոչեց մի բարձրաստիճան թուրք պաշտօնակալ, և մենք ինքնասպանութիւն արած կը լինէինք, եթէ իրօք այնպէս վարւէինք նրանց հետ, ինչպէս ասում են, թէ վարւել ենք: Այս բոլոր պատմութիւնը իի տուայօդ բան է, այդ դուք ինքներդ կ'իմանաք, երբ որ մեր կամմիսիացի անդամներն Արդուլ փաշալի առաջնորդութեամբ գործը քննին և զեկուցում տան Սուլթանին: Այն ժամանակ հայ ապատամբներին ձեր երկրում օգնող ու համակրող մարդիկն էլ իրենց մոլորութիւնը պարզ կը տեսնեն», յարեց նա հեգնական ծիծաղով:

«Արդեօք ո՞ր և է ճշմարիտ բան կայ Սասունի կոտորածի պատմութեան մէջ», հարցրի ես մի պոլարակ եւրոպացի պաշտօնեայի, որ լաւ հնար ունի տեղեակ լինելու գործինա:

«Այդ պատմութիւնը ծայրէ ՚ի ծայր ճշմարիտ է», ասաց նա շերմութեամբ. «այդպիսի անգութ և զիւական կոտորած զեռ չի լսւած մեր դարում: Բոլղարական արհաւերքը մի անմեղ կատակ է դրա առջեւ: Պէտք կը լինի վերագառնալ միջին դարին, եթէ կամենանք դրան հաւասար բան գտնել, բայց դժւար թէ հաւասարը գտնելի. դա անգուգական է պատմութեան մէջ: Այս է ահա ճշմարտութիւնը»:

Այս ջէնտլմէնի մի հանրածանօթ և յարգոյ բարեկամը, որին ես այցելութիւն արի այնուհետեւ, ասաց.

«Սասունի կոտորածի պատմութիւնը չափագանց սուարացրած է, և անշուշտ մի որոշ զիտաւորութեամբ: Ոտնակոլս ու այ այս երկրում առելի լաւ վիճակի մէջ է, քան թէ ո՞ր և է ուրիշ աշխարհի զիւղացին: Նա քամում և իւրացնում է երկրի պարառութիւնը, և բնականաբար ճնշւած է քուրդից և թուրքից, որոնք նախանձում են նրա վիճակին՝ առանց հետևելու նրա ջանափիրութեան ու տնտեսութեան: Այս տեղից է յառաջ գալիս աւազակութիւնը, որ միշտ պատահում է մի կամ միւս տեղում:

և մերթ մի հայի, մերթ մի քիւրդի պատճութիւնը, կամ որ և է կնոջ առևանդութիւնը և կամ թէ միւսի շրջումը գէպի խալամ: Վերջերս սովորականից փոքր ինչ աւելի են կատարւել այդ խաղերը; այն էլ մի շատ սահմանափակ գաւառում: Այս է, վերջնական քննութիւնից յետոց, բոլոր աղմուկի պատճառը:

Աւրեմն ձեր կարծիքով Թուրքիան մի բարեկարգ պետութիւն է, և նրա հպատակները հիմք ունին գոհանալու ճակաագրից, որ թոյլ է տւել նրանց այդ պետութեան սահմաններում ծնւելու:

«Իմ ասածն բնաւ այդ չէ: Եթէ կամենում էք իմ ազնիւ համոզմունքն իմանալ, կ'ասեմ, թէ Տաճկաստանը մի քաղաքական Աւգիասի ախոռ է, որի մէջ վազուց ի վեր զիզաղէզ կուտակւած աղբիւսը մաքրելու համար մի Հերակլէս էր հարկաւոր: Ամենից լու կը լինէր իսպաւ բառալ նրան մէջտեղից: Բայց այդ բանը հինգ տարի առաջ էլ նոյնքան ճշմարիտ էր, որքան և այսօր: Եւ ինչու այնքան աղմուկ յարուցին մի երկու հարկւր մարդ այս տարի աւելի սպանւելուն պատճառով, քան վերջին տարիները,—ահա այդ է, որ չեմ կարող բմբունելու:

Հետեւեալ խօսակիցս էր մի հայ եպիսկոպոս՝ մի պատկանելի ծերունի երկար ու գորշ մօրուքով, որի նօսր վնջերը երեւում էին թաւշեայ զլսարկի տակից: Նրա ակնածելի ձևերը, ծանր բռնածքը, զգեստի վէտ-վէտ ծալքերն ու բուն արեւելեան գէմքի գծերը կարող էին իբրև տիպար ծառայել Զաքարիա քահանալապետի պատկերը քաշող նկարչի համար, և մինչ նա մ.ծ եռանդով, պերճ լեզով և գէպերն ու մանրամասունքը վարպետորէն յեղաշրջելով բացատրում էր իւր հայեացքը հայկական խնդրի վրայ, ես մածում էի—ահա նոր ժամանակի կայիշափաք:

«Վատ ժամանակներ են, վանա, հառաշեց նա, երբ որ ես, մեր խօսակցութեան ընթացքը գիտնական ճանապարհից շեղելով, որին նա ամենեին ձեռնհաս չէր հետևելու, գէպի գործնական պոլիտիկան դարձրի:—«Նաև վատ», կրկնեցի ես: —«Եւ ամեն բանի պատճառը այդ սրիկայ յեղափոխականներն են: Ո՞րքան երջանիկ կը լինէինք, եթէ դրանց արմատը չքանար: «Նաև բարի, բայց մի՛թէ նրանք թուրքից էլ վաս են», հարցրի ես, փոքր ինչ շւարած նրա արդին հականալի հայեացքից:—«Ժամանապատիկ վատ», պատասխանեց նա:

Թուրքերն իսկապէս լու մարդիկ են և մինչեւ վերջին աշունքը մտերմական սիրով էին ապրում մեր ազգի հետ Հաւատացէք, որ թուրք զինուորը, բանակ գնալիս, հայ զրացուն էր յանձնում իւր իսոյ և զաւակների խնամքը Թուրքն ի բնէ մոլեւանդ չէ: Նա մի հոլանդացու նման պաղարիւն է: Սակայն այդ անզգամ ցեղափոխականները հրեշտակներին էլ ասես կը չարացնեն, ուր մնաց թէ մահմեդականներին, և բորբոքող ֆանատիկոսութեան ահռելի նշաններն արդէն սկսել են երևալ:—«Բայց վերադառնալով Սասունի կոտորածին, մի՞թէ կարծում էք, թէ հայ ցեղափոխականներն են դրա իսկական պատճառը»:—«Անսպայման: Գոնէ նրանց պէտք է մեղադրել տաճիկ զինուորների գործ զրած խիստ միջոցների համար. սակայն կոտորած որ ասում են,—դա մի լոկ կեղծիք է: Հաւատացէք ինձ, որ թուրքը չի կարող այգալիսի գազանութիւններ կատարել. նա ընդունակ չէ այդ բանին:—Ներեցէք, սրբազն հայր, որ ընդհատում եմ ձեզ: Արդեօք դուք խօսում էք ընդհանրապէս, թէ ունիք...»:—«Ես խօսում եմ ֆակտերի վրայ հիմնելով: Ես լու եմ ճանաչում Սասունն ու Մուշը, և գիտեմ, որ պատահարը չափազանց մեծացրել են—լուն ուզու են դարձրել»:—«Ուրեմն, ձեր ասելով, որն է բանի իսկութիւնը»:—«Կարծ այն, որ գիւղացիներին գրգռել են ապստամբելու. նրանք էլ սկսել են աւազակութիւն անել, սպանել են կայսերական փոսուր տանող թուրքերին, կրտկ են արձակել քուրդերի և կայսերական զնդիրի վրայ, անգութ չարիք են գործել և դրա համար էլ խիստ պատժւելու:—«Ի՞նչ էք կարծում, սրբազն, ի՞նչ կերպով կարելի կը լինէր մի բաւարար լուծումն տալ հայկական խնդրին:—«Մի քանի ըէփորմներ ներքին վարչութեան մէջ և ազնիւ նահանգապետներ նիթլիսի, Վանի և Էրզրումի համար, բայց ոչ հայերից, և մանաւանդ ոչ մի օտար վերահսկողութիւն կամ ճնշումն: Թող Վեհափառ Սուլթանը իւր յօժար կամ էոլ գործէ: Նրա կամքի վրայ բռնանալու փորձեր անելով, միայն գործին կը վնասեն և նրա նսղատակն ի դերեւ կը հանեն: Սուլթանը չերմ սրառվ վստագում է բարիք հասցնել իւր հազարակ հայերին, և վտանգաւոր սիւալ կը լինէր ճնշումն գործել նրա վրայ:—«Երեխ թէ անձամբ ծանօթ էք Սուլթանի հետ, սրբազն:—«Հարկաւ, լու ծանօթ եմ, շատ էլ նրան յարգում եմ:» Այս ցանկացի իմանալ—

արդեօք հաճելի՝ կը լինէր ձեզ Ոու սաստանի միջամտութիւն։—«Եռա-  
սաստանի» Տէրը մի արասցէ։ Եթէ մեր ազգի վիճակը իրօք էլ վաս  
լինէր, ինչպէս որ պատկերացնում են անդիհացիք և ամերիկացիք,  
դարձեալ այդ վատ վիճակն էլ անհամեստ աւելի լաւ է, քան ին  
որ կարող էր տալ մեզ Ռուսաստանը։ Ամեն բանի յօժար եմ, բայց  
Ռուսաստանի միջամտութեան—քաւ լիցի։

Յետոյ իմացայ, որ այդ ճարտար հին եկեղեցականը Սուլթանի  
անձնական բարեկամն է և ստէպ ստէպ նրա սեղանին հաղորդակ-  
ցող ցանկալի հիւրը, —մի հանգամանք, որ ցոյց է տալիս, թէ  
Սուլթանը լաւ գիտէ մարդ ճանաչել։

Այս իրար հակառակ ասութիւններից շնկւած՝ ես որոշեցի,  
իբրև վերջին միջոց, հարց ու փորձել համալներին՝ և Պոլսի բեռ-  
նակիրներին, որոնցից շատերը գալիս են Մուշից և Սասունից, և  
իմանալ, թէ ինչ է յատկապէս նրանց հայեացքը խնդրի վրայ։ Եւ  
ես դիմոցի հէնց առաջինին, որ պատահեց ինձ կամրջի վրայ։  
Նա էր մի յաղթանդամ, ամրակազմ և մօտ երեսուն և ութ տարե-  
կան սեւահեր, արծւէքիթ և ողնձագոյն տղամարդ, մուգ բեղե-  
րով։ Նա կանգնած էր մի գաշնամուրի մօտ, կամրջի մէջակը, ուր  
բեռնակիրները սովոր են գադար առնել փոքր ինչ շունչ բաշելու  
համար։ Համալը սրբում էր իւր ճակատի առատահոս քրտինքը և  
երբ որ ես հարցմանք արի, նա ապշութեամբ ու կասկածով պա-  
տասխաննեց։ «Այդ բոլորը իմ գիտնալու բանը չէ»։ Մի անգամ ը-  
տուգելուց յատոյ, որ նա բուն Մշեցի է, ինձ գիւրար չէր փարատել  
նրա երկմատութիւնը, և շատ չանցած նա սկսաւ բացւիլ։ Նախ և  
առաջ ես հարցրի այն սոսկալի երաժշտական գործիքի մասին, որի  
մօտ նա կանգնած էր հեւալով ու քրտնելով։ «Դու ինքդ մենակ հօ-  
չես տանիլ այդ պիաննու, ասացի ես։ — «Մենակ ինքս էֆէնդի։ Ես  
որ չտանեմ, հապա իմ տեղ նով կը տանի։ «Բայց շատ ծանր կը  
լինի»։ «Կորդ է ծանր է, բայց մի անգամ ոչ շալակիս զրւի, էլ  
հոգ չէ»։ — «Ովկը գոնէ գրան շալակիդ»։ «Անցնողներից մէկն ու մէկն  
շուապելու բան չկայ»։ Ոչ մի եւրոպացի, որ չի տեսել այդ բանը  
իւր աչքով՝ չէ հաւատալ զրան։ Պիանօի ծանրութիւնը կը լինէր  
մօտ... ասրսափում եմ ասել, թէ որ քան կը լինէր. և ինչպէս կա-  
րող էր մի կանանցածին էակ, առանց Սամսոն կամ Աժդահակ լի-

նելու, կրել մէջքի վրայ մի այլպիսի Առլաս և չխորտակւիլ,—այդ բանին խելքո բնաւ չի հասնում:

Սասունից իսկի լուր ունիս, Կարապետ», հարցրի ես: «Ունիմ էֆէնդի. մի ժամանակ եղբայրս գրում էր Մուշից, բայց էլ չի գըրում: Միայն երկու շաբաթ առաջ իւր բարեկամներից մէկի ձեռքով մի քանի տող հասցրեց ինձ. բայց նոր բան չկայ:—«Ո՞նց թէ չկայ: Միթէ շգիտես, որ հազարաւոր մղոններով հեռու տեղերից մարդիկ են գալիս բան լսելու, իսկ դու ասում ես, թէ չկայ: «Ես էլ եմ լսել, որ գալիս են, բայց չեմ հասկանում, թէ ինչու են գալիս: Երեսի թէ նրանց խելքը տեղը չէ: Սասունում պատահած բանը ամեն օր էլ պատահում է, միայն թէ այս անդամ մեր մարդիկ փոքր ինչ աւելի ձայն հանեցին, քան թէ առաջ,—այդ է բոլորը: Մեր երկրում ասում են՝ մինչև որ երեխան լաց ։լինի, մայրը նրան ծիծ չի տայ: Բայց ինչ որ եղել է, ամեն օր էլ լինում է: Այժմ մի առանձին բան չի պատահել, որ արժենար խօսելու: Աւրեմն թիւրքը ձեզ հետ շատ վաստ է վարում: Այդ ես լաւ գիտեմ, էֆէնդի: Մենք ունինք ոչխար և այծ, մի կտոր էլ հող, և կարող էինք փաշաների պէս երջանիկ ապրել, եթէ միայն փոքր ինչ բախտ ունենայինք: Բայց այդ է որ չունինք: Մեր ընտանիքը ցիր ու ցան եղաւ, և ես այստեղ եմ եկել այս մաշինի պէս ծանր բեռներ կրելու: Միթէ կարծում ես կը թողնէի առւն-տեղս, գառներս, և կը գայի այստեղ սև սարուկի նման չարշարւելու, եթէ հարկը չստիպէր: Եւ միթէ Աստուծու իր օրը, շաբաթներով ու ամիսներով, մի ջուխտ եզի բեռ կը քաշէի՝ այստեղ՝ միայն թէ ասլրելու չափ հաց վաստակելու համար, եթէ կարելի լինէր մի աւելի լաւ բան գտնել: Հենց այս առաւօտ ես կը վերադառնացի դէպի տուն, եթէ հնար լինէր ապրել մեր երկրում: Սասուն, Սասուն: Դոչ է Սասուն: Ամբողջ Հայաստանը Սասուն է: Այդ է ահա իմ ասածը: Բայց լրտեսն մեզ լսում է: Լաւ կ'անենք, որ բաժանւինք: Եւ Կարապետը, նշան անելով երկու անցաւոր մշակներին, ուխտի նման չոքեց, և նրանք բեռը նրա մէջքի վրայ բարձեցին: Նո փոքր ինչ գանդաղեց, յետոյ ուժգին ցնցմամբ վեր կացաւ և հանդարտ յառաջ գնաց կամրջով՝ թաշկինակը ձեռին բռնած: Կրտեսը, եթէ միայն լրտես եր, մի քանի վայրկեան կասկածանքով

վրաս նայեց և յետոյ գնաց Կարսապետի ետևից:

Ես տուն վերադարձայ, իմ լսած ու տեսած բաների վրայ մը-  
տածելով, բայց բոլորովին շփոթւած մոքով և խսպառ անկարող  
մի որոշ հաշիւ տալու ինձ Սասունի գէպքի և կամ թէ հայկական  
խնդրի վերջին շրջանի մասին: Բոլոր լսած բաներս չէին կարող  
ճշնարիտ լինել, և ամենից աւելի ինձ անել դրութեան մէջ ձգողը  
հէնց նոյն իսկ հայերի հակասական ցուցմունքն էր: Պարզ է, որ  
միայն մի հնար կար բանի էութիւնը իմանալու, այն է անձամբ  
գնալ տեսնել երկիրը, անձամբ ծանօթանալ ժողովրդի կացութեան  
հետ, և այդպէս էլ որոշեցի անել անյապաղ:

Դէպի Հայաստան, կամ, ինչպէս որ թիւրքերն են ասում —  
Քիւրզիստան ճանապարհ ընկնելուց առաջ, ես գիմեյի Օսմանեան  
կալսրութեան ամենաբարձր պաշտօնեաներին և ներկայացրի շատ  
ընտիր յանձնարարական նամակներ: Նպատակս էր պարզաբար յախ-  
նել նրանց, որ մտադիր եմ տեղն ու տեղը քննել Սասունի Վասու-  
րածիւ գէպքն և անհրաժեշտ տեղեկութիւններ հաւաքել: Ես սիրով  
ընդունեցաց, ինձ ուշադրութեամբ լսեցին և պայմանական հո-  
ւանութիւն տվին իմ մտքին: «Հէնց որ ընկերներիս հետ խորհուրդ  
տեսնեմ, իմաց կը տամ ձեզ: Եկէք տեսնելու ինձ մի քանի օրից  
յետոյ»:

Մի քանի օրից յետոյ նորից գնացի և տեսայ «Նրանո: Շնա  
նստած էր իւր գրասենեակում՝ Նիշան թաշ գտնւող տանը — քա-  
զաքի այն մասը, ուր բախտի և սուլթանի անցեալ և նոր սիրելի-  
ներից շատերն անց են կացնում օրւայ երջանիկ ժամերը: Նա նստած  
էր մի երիար սեղանի առջև մի շատ երկար սենեակում և զրու՞  
էր եղեգնով ձև տրուք մի ինչ որ թուզթ, որ դրած էր ձախ  
ափի վրայ: Նա եւրոպական եղանակով ձեռս սեղմեց, դրիւլ զրաւ  
սեղանի վրայ, մօրուքը շփեց և սկսաւ հետս խօսել: Նա մի բարձրա-  
հասակ, առոյզգ և վացելակազմ մարդ է՝ առես թէ ի ինչ զինւոր  
դաւնալու կոչւած: Եւ իրօք առաջ զինւոր էր, և զինւորական  
մարդու համարձակութիւնն ու պարզութիւնը այժմ էլ նրան յա-  
տուկ էր, թէն — շատերի ասելով — այդ յատկութիւնները չէին  
պատշաճ իւր նոր պաշտօնին: Նրա ձախնը մեզմ է, դաշն և շոտ  
յարմարաւոր այն չափաւորութեան ու անկեղծութեան, որով խօսում է

նա ամեն մի առօրեայ նիւթի վրայ։ «Մեր պաշտօնատարներից բան չլեցի՞ք», հարցրեց նա։ «Ոչ», պատասխանեցի ես։ «Հըմա։ Ուրեմն նրանք ուղում են այլ ևս մի քանի օր։ Սակայն ասացէք ինձ, միթէ անկարելի է ձեզ մաստեղ՝ Պոլսում ուսումնասիրել և նկարագրել ամեն բան։ «Դժբախտաբար անկարելի է Պոլսում անել այդ բանը», ասացի ես։ «Ոչ ոք չէ կարող մի սոսց բան իմանալ այսաեղ, ուր զատարկ բարբաջանքն ու շինծու ստութիւնը իրական ֆակտերի տեղ են բանում։ Այս, սակայն մենք կարող էինք շուտ օգնել ձեզ։ Մենք ունինք մեր ձեռքի տակ այն բոլոր էական փաստերը, որոնք ստուգւած են պաշտօնապէս։ Այդ ամենը կարելի էր ձեզ հաղորդել։ Բաւական չէ այդքանը։ Վարծեմ ոչ, պատասխանեցի ես։ Են չեմ կարող այդ կերպով ձեռք բերած տեղեկութիւնը որպէս իմ սեփական հրատարակել, ոչ էլ դրա ճշգութեան երաշխաւոր լինել։ Ես յօժար եմ սիրով լինգունել ձեր բոլոր պաշտօնական փաստերը, բայց չեմ կարող ասել, թէ նրանք ճիշտ են, քանի որ ինքս չվերաստուգեմ։ Ենայց կարող էք այսուեղ վերաստուգել։ Եթէ ձեր իսկ պաշտօնական ներկայացուցիչները այն ֆակտերի ձշմարտութիւնը հաստատեն, կարծեմ գուք լիովին կը շատանաք դրանով։ «Ո՛չ, ձերդ վսեմութիւն, ինձ հարկաւոր է անձամբ գնալ շփոթմունքի տեղերը, անձամբ տեսնել ու գրել, ինչ որ կը տեսնեմ ու կը լսեմ։ Ուրեմն գուք վերատին գալիս էք ձեր առաջին որոշման։ Այս, լաւ։ Եթէ ուղենաք մի քանի օրից յետոյ այսուեղ գալ, յոյս ունիմ, որ կարող կը լինիմ հաղորդել ձեզ որոշումը։»

Նա շասաց, թէ նվ պիտի աներ այդ որոշումը, բայց այդ գրեթէ աւելորդ էր նա այնքան յարդում եմ մեծ վիզիրի առողջ միտքն ու փորձաւութիւնը, որ համոզւած եմ, — եթէ ինդրի վճիռը մայն իրենից կախւած լինէր, նա իսկոցն թոյլ կը տար ինձ Քուրդը լրատան զնուալ։ Նա լաւ գիտէ, թէ որտեղից է քամին փչում, գիտէ, որ քամին էլ հրամայող ունի, և այդ հրամայողը, որ ամեն բանի ղեկավարն ու տէրն է, նստած է իլդիզ Քեօսկում։ Եւ կը մնար ինձ սպասել, մինչեւ որ իսուդիրս նոյն իսկ Սուլթանին ներկայացներ։

Մինչ այս, մինչ այն՝ ես դիմեցի մի անւանի կաթոլիկ հացի, որ բաւական կրթւած, շատ փորձառու և շատ հարուստ անձնաւութիւն է, և ինդրեցի յացանել ինձ իւր կարծիքը։ Նրա մաքերը

սաստիկ ազդեցին վրաս այն միջոցին, և ես տեսայ, որ դրանք աւելի ձեռնտու են թուրքերին; Մեր խօսակցութիւնը վերին աստիճանի բնորոշ էր ժամանակի, տեղի և հանգամանքների համար և այնքան լաւ էր լուսաբանում անաչառ խուզարկուի առջևն երդ արգելքները, որ մեղք կը լինէր չկրկնել նրան: Նա սկսաւ, — ինչ պէս որ սկսել է գրեթէ ամեն մի խօսակցութիւնս Կ. Պոլսի հայերի հետ, — հանդիսաւոր հաւաստիքով, թէ նա ամեննեխն բան չդիմէ ինձ հետաքրքրող հարցի մասին: «Ոչինչ», ասաց նա, քացի այն, ինչ որ միայն կարգացել եմ թերթերում: Մենք խակապէս ձեզնից և ձեզ նման անձերից ենք տեղեկութիւն սպասում: Մի կէս ժամ անցնելուց յետոյ, երբ որ սառոցը արդէն կոտրւած էր, նա ասաց. «Հաւաստացէք ինձ, որ Սասունի կոտորածը մի կոպիս ու չարամիտ առասպել է»: Ի՞նչպէս հաւաստամ ձեր խօսքերին, հարցրի ես: Ես հաւաստում եմ Փակտերին, այլ ոչ թէ կարծիքներին: «Ես էլ... ամենք էլ խօսում ենք միայն փաստերով: Մենք ունինք Մուշում և Սասունում այնպիսի մարդիկ, որ մեզ ամեն բան հաղորդում են, և ես ցոյց կը տամ ձեզ նրանց զեկուցումները...»: «Նաև կը ցան կանացի, որ ցոյց տացիք: Սակայն կը հաճիք արգեօք պատմել ինձ բանի էռութիւնը, ինչպէս որ իմացել էք ձեր Սասունի թղթակիցներից: — «Ամենայն պատրաստութեամբ: Ահա թէ ի՞նչ է պատահել».

«Կոտորած կուլած բանը մի զուտ քաղաքական բան էր, այլ ոչ ցեղական ատելութեան, կրօնական մոլեունդութեան և կամ թէ մի ուրիշ մոտացածին պատճառի արդիւնք...»

«Բայց այսօրւայ թուրքերը՝ քսան տարի առաջ եղած սերն զից աւելի իմաստուն լինելով, վճռած են առիթ չառալ իրենց քրիստոնեայ հաղատակներին բողոք կարգալու առ Եւրոպան: Նրանք խաղաղասէր են, ազնիւ, հաւաստարիմ և անտարբեր դէպի քաղաքական կամ ազգագրական հարցերը: Քիւրդիստանում թուրքը բնաւ այնպէս ֆանատիկու չէ, ինչպէս որ է, ասածներին նայելով ամբողիկեցի թուրքը և կամ ինչպէս որ էր նորերս՝ Հերցեգովինայի Բոսնիացի թուրքը: Նա հաշտ է իւր հայ հարևանների հետ — մի հաշտութիւն, որ ամրապնդւած է միասին կրած տառապանքով ու զրկանքով: Երկուսն էլ նաւում են միւնոցն նաւակի մէջ, բայց զանազան թիերով: Նրանք երկուսն էլ տանջւում են թուրք աստի-

ճանաւորներից, կեղեքումներից և ամեն տեսակ ճնշումներից։ Իսկապէս մահմեղականն աւելի է տանջւում, քան թէ իւր հայ զրացին։ Կը տեսնէք, որ հայերն ինքեանք են մեղաւոր։ Նրանք սկսան անդժութեան գործերն ու «կոտորածները», սպասելով ու յափշտակելով կայսերական փոստը տանող թուրքերին, որովհետեւ քիւրդերը մի քանի ճուռ էին փախցրել նրանցից, այն էլ ոչ աւելի, քան թէ գիւղի միւս մարդկանցից։ Այդ քուրդական ասպատակներն արդարեւ Քիւրդստանի խլամ և քրիստոնեայ ազգաբնակութեան պատուհանն են։ Սակայն թուրքը՝ ֆատալիստ ու միշտ հլու լինելով, լուռ է կրում իւր ազէտը։ Իսկ հայը տալիս էլ, տռնելիս էլ շարժում և գոռում է։ Եւ այդ բնական է, որովհետեւ հայն էլ իւր արեան մէջ մի վացրենի հոսանք ունի, և իբրև աւազակ միասին խմբւած՝ հայ մարդիկ շատ ստէպ են պատահում։ Մինչդեռ քիւրդերը գրեթէ ոչ մի տեղ բացառապէս այդ արհեստով չեն զբաղւած։ Քարեբախտաբար նրանց ախորժակը չափաւոր է—ես ասում եմ ընդհանրապէս։ Արդէն շատ է, եթէ նրանք մէկի տաւարը յափշտակելիս՝ նրա կնոջը կամ աղջկան և կամ թէ երկուսին էլ առևանգին։ Այդ բաները հարկաւ որտունջի տեղիք են տալիս։ Պակայն սովորաբար քիւրդերը շատանում են հաւերով, ճուռերով, գառներով և այլն, և մնասւած հայերը շտապում են վրէժինսդիր լինել քիւրդերից հանդարտ և խաղաղ կերպով, այն է կրակ թափելով նրանց գլխին։—«Այդ ԲՇնչ խաղաղ միջոց է», հարցրի ես։—«Հայերը թէև ընկճւած ժողովուրդ են, բայց և այնպէս ազգաբնակութեան տիրող տարրն են ոչ միայն մտաւորական ու բարոյական առևմամբ, այլ և տնտեսական։ Նրանք են երկրի զրամատէրերը։ Մինչև անգամ Վանի, Ֆիթլիսի, Էրզրումի և այլ նման տեղերում ոչ ոք չէ կարող առանց փողի բան շինել. և թէպէտ առ ձեռն զբամ այդ քաղաքներում շատ չկայ, բայց եղածն էլ պատկանում է հայերին։ Արդ՝ գիւտութիւնը կարող է ոյց կազմել Անդլիայի պէս քաղաքակիրթ երկիրներում, իսկ Հայաստանում փողը ամեն բան է—ի հարդէ խաղաղ ժամանակ։ Իսկ ուրիշ ժամանակ նա մի չէ կ է, որ իր արժէքը կորցնում է և այնուհետև յառաջ է գալիս Սառնի նախաճիրք ասւած բանը։ Անցեալ օգոստոսին քիւրդերը կողպատելու մաքով արշաւանքի դուրս դալիս՝ յափշտակում են հա-

ւեր, սագեր, վառիկներ և այլն, և այդ անցքի պատմութիւնը ամենևին չէր էլ լսւիլ, եթէ հայերն ինքեանք հալածէին քուրդերին, յետ շառնէին իրենց ստացւածքը և թշնամու գոյքի մի խոշոր մասը։ Տուր ու զմիոցն և կախւը ահա այդպէս սկսւեց։

—«Ուրեմն յանցանքը նոյն իսկ քրիստոնեաց հայերինն է», հարցրի ես, համոզւած լինելով, թէ գաղտնիքն արդէն բաւական պարզւած է։ —«Հէնց այցպէս է», պատասխանեց նա։ «Սակայն նրանց յանցանքն անհամեմատ աւելի քիչ է, քան թէ նրանց գրգռող ռամկավարների յանցանքը։ Ահա դրանք են բուն ոճրադործերը, այլ ո՛ թէ քիւրզերն ու թուրքերը... Սիրելի բարեկամ, քիւրզերը խարազան են, թուրք աստիճանաւորները խարազան են. սակայն եթէ դրանք միասին էլ որ ոլորտին, դարձեալ մի բարիք կը լինին։ Այդ սրիկաներն են, որ թէ թուրքերին և թէ քուրզերին—ոմբողջ մահմեդական աղքաբնակութիւնը գրգռեցին կոտորելու հայ քրիստոնեաց ժողովրդին՝ Եւրոպացի համակրութիւնը դրաւելու յուսով։ Միթէ կարելի՞ է դրանից էլ աւելի դժոխացին բան հնարել։ Բայց ինչքան որ եղեռնական էր այդ գործը, այնքան էլ սիսալ դուրս եկաւ։ Դա չի կարող յաջողութիւն գտնել։ Դրա հետեւանքն այլազգիների միջամտութիւնը կը լինի, իսկ այլազգի միջամտութիւնը հաւասար է Յսմանեան պետութեան լիակատար կործանման, մի վախճան, որի կատարումը շատ ձեռնտու չպիտի լինի Եւրոպացին։ Թիւրքիայում մի նահանգ չկաց, ուր միասին բնակեող և աշխատող հայեր չգտնին։ Հետեւաբար հայերին դարման հասցնելը կը նշանակէ միանգամայն յեղաշրջել ամբողջ երկրի այս օրւայ վարչութիւնը, —ասել է թէ անդամատել Տաճկասաանը։ — «Ի՞նչ կ'ասէք մի հիւսիսացին գրաւման մասին։» «Դա շարեաց ամենամեծը կը լինէր ամեն բարեմիտ հայերի համար, մանաւանդ կաթոլիկներիս, որ կրոնից գերազանց բարիք չունինք այս աշխարհիս երեսին։ Սակայն նոյն իսկ լուսաւորչական հայերին էլ այդ գրտումն ախորժելի չէ թւիլ...»

—«Ուրեմն արմատական ռէփորտները ո՛չ հարկաւոր են, ոչ էլ փափագելին։ հարցրի ես։ —«Ամենելին» պատասխանեց նա։ «Այդ ռէփորտները չարիք կը լինին թէ թիւրք և թէ քրիստոնեի համար. զի՞ բանք կը վառեն մահմեդականների մոլեսանողութեան ոգին, որ

միայն քնած է, այլ ոչ մեռած, և դրա հետեւանքը ինքներդ կարող էք երևակացնելու: «Հապա ի՞նչպիսի զարման կ'առաջարկէիք զուք, քանի որ ինքներդ էլ անշուշտ համոզւած էք, որ անհրաժեշտ է մի բան անելու:» «Հարկաւ համոզւած եմ: Անհրաժեշտ է շատ բան անել, բայց անել ատամճանաբար—f estima lente—և մանաւանգ՝ նոյն ինքն Սուլթանի ձեռքով, նրա յատուկ նախաձեռնութեամբ և առանց օտարի ձնշման: Թող այժմ բոլոր նահանգապետները վունտւին, ինչպէս որ Սուլթանն էլ անում է, և նրանց տեղ դրւին քրիստոնեաներ և կամ թէ ազնիւ, արգարամիտ մահմելականներ: Սակայն դրսից թող ոչ ոք չմիջամտի մեր պետութեան մէջ: Այդ բանն իսպառ կը քականք գաւառաբնակ քրիստոնեաների և իսլամների բարեկամութեան կապերը: Աւելին կ'ասեմ—մի հր և է այլազգու ճանապարհորդութիւնն անգամ Թուրքիայի ներքին նահանգներում և յատկապէս անզլիացու, —մեծ վնաս կը բերէր քրիստոնեաներին և իսլամներին, և եթէ դուք փափաղող էք իմ սիրելի համազգիների իսկական բարօրութեան, համոզեցէք եւրոպացոց, որ նրանք մեր երկրի ներսերը չմտնեն: Անզլիացու երենակն արգէն յոյսեր է ազգում հայերին, յոյսեր, որոնք երբէք կարող չեն իրազործել և երբէք էլ չպիտի յարուցւին: Անզլիացու երենալլ անհիմն երկիւղ է սրատճառում թուրքերին և քուրդերին: Կը հաւատամք արգեօք, եթէ ասեմ, որ Սասունի կոտորածը սարքող և ամբողջ երկրում հազարաւոր անգամներ վաստակող հայ դաւագիրները միայն նրանով կարողացան այդ անել, որ սուտ-սուտ խոսումներ տւին, թէ ժողովրդի ասպառամբւելուն պէս՝ Անզլիան խկոյն օգնութեան կը հասնի: Այսպէս էր, որ Տալւորիկի համար պատասխանատու մեծ դաւագիր Մուրադը գրգեց Սասունի միամիտ գիւղացոց դիմադրել կայսերական գնդերին և սպասել Սուլթանի համազգեստը կրող զինւորներին»:

—«Ուրեմն կոսորածը միայն մի կողմից չէր, ինչպէս որ պնդում են շատերը»: —«Միայն մի կողմից. այդ ի՞նչ էք ասում: Դա մի խառարիւալ պատերազմ էր, որ հէնց մերոնք սկսեցին, յարձակւելով Համբէիկի վրայ, այսինքն ամենամեծ դաւաճանութիւն գործելով. մերոնք էին, որ իրենց ձեռքն ընկնող քիւրդերի հետ զարհութելի անվթութեամբ վարւեցան: Այդպիսի գաղանութիւն անողներն իսկա-

պէս հայ աւազակներն էին, որոնց յեղափոխականները ցրւել էին ժողովդի մէջ և յետոց նոյն իսկ գիւղացոց մէջ։ Գիւղացիք ընդունակ չեն գազանութեան։ Արդ՝ պատերազմի բախտը հայերին ժըստաց, որոնք, զինւած ըստ մեծի մասին ամենանոր հրացաններով, այծերի հօրանի պէս հալածական արին քիւրդերին։ Նրանք վճռել էին բնաջինջ անել քուրդերին, և կ'անէին, եթէ ժամանակին արգելք դնող չգտնուեր, եւ իրաւ, միայն Աստուած դիտէ, թէ ինչը կը պատահէին, — ամբողջ Քուրդիստանը ոտքի կ'ելլէր, — եթէ հեռատես և հաստատակամ մուշիր Զէկքի փաշան չփութար, իւր գնդերը կուի տեղը խաղացնելով, հանգստացնել մահմելականների և քրիստոնեանների վրդով ած ոգին։ Այդ միջոցին հարկաւ մի քանի ծայրայեղ բաներ կատարւեցան, գլխաւորապէս վրէժխնդիր քիւրչերի ձեռքով, ճիշտ այնպէս, ինչպէս որ արին և ճապոնացիք Պորտ-Արթուրն առնելիս Մարդկացին գազանը իւր սանձերը կորած և մարդու պատկերը թոթափից։ Սակայն թուրքերն անպարտ էին այդ գործում, և մանաւանդ կայսերական գնդերը, որոնք, հաւատացէք ինձ, մինչև անգամ պաշտպանեցին հայերին։ Ո՛չ, ոչ։ Ամօթանգիւական մամուլին, որ այլպիսի թշնամական դիրք է բռնում դէպի Վէհափառ Սուլթանը, որին պարտական են արիւնհեղութեան գաղարումն և խաղաղութեան ու կարգի վերականգնումը։ Ո՛հ, եթէ ազնիւ անգլիական ազգը գիտենար միայն, թէ ինչպէս են խարել նրան մի քանի անզգամ մարդիկ, նա խկոյն կը փոխէր իւր դիրքը։ Սակայն այդ ցանկալի գործը զլուխ բերելու պաշտօնը ձեզ է վիճակւած։ Ի սրտէ յաջողութիւն եմ՝ մաղթում ձեզ։»

Ես շւարած և շշկւած դուրս ելայ այդ հայի պալատից, հայի, որի անունը հանրածանօթ է Պոլսում։ Եթէ գրա նման բարի հայը, մտածում էի ես, այլպիսի բաներ է ասում իւր ազգակիցների արարքի մասին, պատկերացնելով այդ արարքը իբրև մի խուժուժ գաղանութիւն, ուրեմն որքան անյայտ չարիք գործած կը լինին մինչև այժմ այդ մարդիկ։ Սակայն վերջի վերջոյ այդ բոլորը երկրորդ ական բաներ են։ Ամենազլիսաւոր կէտն այս է, թէ կոիւը սկսել է հայերի կողմից, որոնց շարքում մարտնչել են արեան ծարաւի աւազակներ։ Թէ նրանք լաւ զինւած են եղել և ջարդել են քիւրդերին, որոնց պիտի բնաջինջ անէին, եթէ Զէկքի փաշան ժամանակին վը

բայ հասնէր արքունի զօրքով և կարդ ու խաղաղութիւն չվերա-  
կանգնէր։ Վերին աստիճանի անհրաժեշտ էր վերասառուզել այս  
1894 թ. հայկական կոտորածի» վրայ լոյս սփռող Փակտերը և  
անխափաղ ներկայացնել անգլիական հասարակութեան։ Ուստի ես  
փութացի պատրաստ լինել, որպէս զի, իմ վաղուց փափափած  
թոյլառութիւնն սասաւալու պէս ևեթ, ճանապարհ ընկնեմ դէպի  
Քիւրդիստան։

Ահա այդպէս նախապաշարւած թղթակիցն էր, որ, Հայա-  
տան գալով՝ արտ մեր ընթերցողներին տրդէն ծանօթ յայնու-  
թիւնները եւ այդ նոյն թղթակիցը մի այլ ընդարձակ հեռագիր  
ուղարկեց Հասան-Կալէջից, որ խփուել է Կարսից Լոնդոն ապրիլի  
2-ին և որի մէջ, ի միջի այլոց, ասւած է հետևեալը.

«Մուշի ձեր թղթակիցից ուղարկած սուրհանդակը, որ տանում  
էր նամակներ և հեռացիրներ, ահա վեց օր է, որ չէ վերադառնում։ Նո  
կամ սպանւել է քիւրդերից կամ ձերբակալւել ոստիկանութիւնից։

Այժմ կարող եմ տեղեկացնել ձեզ, որ եւրոպական քննիչ  
յանձնաժողովը շատ դանդաղ է գործում։ Այն օրից, որ յանձնաժո-  
ղովի պատրիարկները սկսել են իրանց նիստերը, մինչի այսօր միայն  
երկու սուրհանդակ են ուղարկել Երզրում՝ դեսպաններին ուղած  
իրանց զեկուցագրերը տանելու։ Համար։ Հիմք կայ կարծելու, որ  
յանձնաժողովը չի կարող աւարտել իր գործը յունիս ամսից առաջ։

«Յանձնաժողովի անդամները կամենում են այցելել Սասունի  
գիւղերը ապրիլի վերջին։ այժմեղ կը մնան առնւազն տասն կամ  
տասնուհինգ օր։ յետոյ նրանք կ'այցելեն Բիթլիսը և աւարտելով  
այդտեղ իրանց գործը, կը վերադառնան Երզրում։»

Այդ տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ, հեռագրի մէջ  
երկար խօսում է այն մասին, թէ որքան անիրաւացի է այն  
կարծիքը, թէ հայերը գործում են մի գաղտնի յեղափոխական  
ընկերութեան թելալրութեամբ, և առաջ է բերում բազմաթիւ  
ֆակտեր ապացուցանելու համար, թէ այն տանջանքերը, որոնց  
ենթակայ է Թիւրքիայում բազմաչարչար հայ ազգը և որոնց նա  
ամենայն համբերութեամբ տանում է, մի ուրիշ, եւրոպական ազ-  
գին վաղուց ստիպած կը լինէին ապստամբւել։

Հայ ժողովուրդը, — ասւած է հեռազրի մէջ, ամբողջ երկրի մէջ անտովոր մեծ համբերութեամբ տանում է այն վարչութիւնը, որի տակ նա հեծում է և որը ամեն մի ուրիշ ազգի կը տանէր զէպի ապստամբութիւն։ Այն շարամիտ լուրը, որ գրւել է Թիֆլիսից այս ժողովրդի մասին, որ իբրև թէ նա գործում է մի զաղտնի լնկերութեան թելադրութեամբ, գուրեկ է միանգամայն ճշմարտութիւնից։ Այդ տեսակ անուն կրող լնկերութիւն չկայ ամենեւին Հայատանի մէջ։ Հայերը անընդունակ են գաղտնիք պահելու կամ մի զօրեղ կաղմակերպութիւն ստեղծելու, և նրանց վերադրւած յեղափոխական ծրագիրները լոկ հիւանդ ուղեղի արտադրութիւններ են։

Այն անարդարութիւնները և հարսաահարութիւնները, որնց զո՞ն է գարձել հայ ժողովուրդը, ամենախոնարհ եւրոպացիներին անգամ ապստամբներ կը շինէին։ Կանանց շարունակ անպատում են, սեփականութիւնը ենթարկեում է յափշտակութեան։ մարդի կին երեխայ տանջւում են, վիրաւորւում, սպանուում։ քրիստոնէական կրօնը հրապարակօրէն նախատեսում է։ Ով յանդգնում է գանգատել, իսկոյն բանտարկելում՝ է և նոյն իսկ ամենասրաբը պաշտօնական անձեր, որոնք վայելում են սուլթանի վստահութիւնը, բաց և ակնյալու կերպով իրանք են առաջին օրինակը տալիս։ Քրիստոնեայ վաճառականների գոյքը հրապարակով աւարառութեան է ենթարկեում մահմետականներից։ Եւ երբ այդ ողոմելի ժողովուրդը փակում է իւր խանութները կողովառումից ազաւելու համար, վալինները հրամացում են բանալ։

Այս ընդհանուր ակնարկից յետոյ հեռագիրը մանրամասն կերպով և բազմաթիւ առանձին զէպքեր պատմելով, նկարագրում է Թիւրքիայի հայ ժողովրդի թշւառ և անտանելի վիճակը<sup>1)</sup>։

Մեր յօդւածի այս գլխի սկզբում յիշատակւած էր նաև Դյուֆնիւթիւսի թղթակցութիւնը։ Այդ նշանաւոր թղթակցութեան առիթով

1) Մենք կ'աշխատենք, եթէ միջոցները ներեն, այդ թղթակցութիւնները, որ այնքան մեծ կարևորութիւն ունին հաւոյ վիճակը որոշելու համար, իրանց ամբողջ լնդարձակութեամբ մի այլ ժամանակ առաջ բերել մեր «Նիւթերի» մէջ։

Ծանօթ, «Մուրճանի Խմբ»

խմբագրութիւնը «Խոսկալի կոտորած» վերնագրով՝ հետևեալը գրեց.

«Հրատարակում ենք այսօր մեր յատուկ թղթակցի վերին աստիճանի սրտաշարժ նախակը։ Դա ակներև հասաւատում է թուրքաց դատապարտելի յանցաւորութիւնը նոր կոտորածների մէջ և հաստատում է մի թուրք զինւորի խոստովանութեամբ, որի ցուցմունքը մեր թղթակիցն արձանագրել է վկաների առջև։ Դա մի մանրաման ցուցմունք է։ զրա մէջ ցիշւած են և՝ տեղեր, և՝ թւեր, և՝ ժամանակներ. և դա կարգաւ մերկացնում է զժոխաչին չարութեան այնպիսի ահեղ պարագաներ, որոնց նմանը նոյն իսկ օսմանեան ցեղի պատմութեան մէջ դժւար է գտնել։ Կոտորածի նախընթաց դէպքերը Մուշի շրջակալքում, որքան էլ սոսկալի լինին, աննշան են, համեմատելով վերջնական նախնիրքի հետ։ Թուրքերը օրերով ու շաբաթներով պատոյտ են եկել կործանման դատապարտած գիւղերի մէջ, քիւրդերին ու զարկելով սպանութեան կուպիտ գործը զլուխ բերելու, իսկ ինքեանք կոտորել են միայն փախստականներին։ Զինւորն ասում է, թէ թուրքերն այրում էին թշւառնակիչներին, հրտեհելով այն անտառները, ուր որ զրանք ապաստանել էին։ Նա պատմում է, թէ թուրքերը ոչ սեռի համար գութ ունեին, ոչ հասակի, և անխնայ կոտորում էին նոյն իսկ մանկանց և կանանց։ Էնց որ զրանք պատահում էին ճամապարհին։ Բայց և այնպէս այդ բոլորը, որքան էլ ահուելի լինին, մի լոկ նախերգանք է վերջին դործողութեան, որ է «Գէլիհզուղանի դրի կոտորածը»։ Մի քանի հարհւը հայ—ողամարդ, կին և մանուկ—ամեն կողմից լրջապատւած, վերջ ՚ի վերջոյ անձնատուր են լինում իրենց քահանայի հետ միասին։ Առաջին զոհը քահանան է դառնում։

«Անձնատուր մարդիկ սպասում են, և թուրք հրամանատարը նոզ է տանում նրանց մասին։ Նա կերակրում է նրանց, և մինչ նրանք ուսում են, կարծելով թէ դա մի կարեկցութեան շնորհք է, թուրքը հրամայում է իւր մարդկանց փորել երկու լայն և խոր փոս, որոնք պիտի թշւառների զերեզմանը դառնացին։ Երբ որ փոսերի փորելը վերջանում է, զին որներին բաժանում են ջոկ-ջոկ վաշտերի, և ամեն գիշեր—շարունակ մի շաբաթ կամ տասն օր—այդ գահին վաշտերից մէկը կամ միւսը ու զարկւում է փոսի մօտ։ Փոսի մօտ գալուն պէս վաշտը գտնում է արդէն սպասող թշւառ

մարդկանց մի պատրաստ խումբ, և մի առ մի սպանում բոլորին Այս գործը, ինչպէս ասացինք, շարունակում է օրերով, մինչև որ զրեթէ բոլոր փախառականները, որոնք ձորն են գալիս ողարձութիւն գտնելու յուսով, կոտորուում են: Մնացածներն ազատում են, երբ որ Մուշից գալիս է փաշան, կարծելով, թէ արդէն ժամանակ է վերջ դնել կոտորածին:

«Այդ է փոսի ահազին կոտորածը, որի պատմութիւնը հաստատեցին երկու լիովին անկախ մարդիկ. մէկը «Daily Telegraph»-ի թղթակիցն է, միւսը մերը:

«Մեր թղթակիցի հաստատութիւնը լիակատար է: Հմուտ լինելով թուրքերէն լեզւին, նա հնար է գտել արձանագրելու կոտորածին մասնակից եղած թուրք զինուորի վկացութիւնը — զինուորի, որի խղճահարւիլն արդէն ցոյց է տալիս, որ այդ գարհու րելի մարդասպանութիւնը մի արտակարգ բան է: Ակներեւ է, որ որքան ահուելի է այդ ոճիրը, այնքան էլ անօրինակ պիտի լինի Եւրոպացի՝ միաձայն պահանջմունքը՝ պատուհասելու մարդասպան սրիկաներին, և անօրինակ՝ այդ տեսւկ ոճիրներին ընդ միշտ վերջ դնելու միջոցը:

«Հայոց ազգի այս ճգնաժամին դիւնանագիտութեան սովորական հաշիւները կարող չեն տեղի ունենալ պետութեանց խորհրդակցութեան մէջ»:

Ասպա գալիս է թղթակցութիւնը խմբագրական մի երկառողի որ ահա.

Հայերի կոտորւիլը: — Մի թուրքի դարհուրելի պատմութիւն: — Սոսկավ անգրեւ թիւներ,

Հետևեալ նամակը, որ ստացել ենք հայկական նախճիրների գործը քննող մեր լատուկ թղթակցից, մուալի գոյներով նկարագրում է «Փափ դէպքո անունով լաւանի ահուելի կոտորածը: Հարկ ենք համարում առելու որ մեր թղթակիցը, թուրքերէն լեզւին վարժ լինելով, ձեռնհաս է առանց միջնորդի և բռն աղքիւրից գրի անցնել թիւրք զինուորների, ականատես վկաների և կոտորածին մասնակցող անձանց վկացութիւնն երը: Մեր թղթակիցը հարկաւ չէր կարող հեռագրաթելի քանձնել այս կարենոր գոկումնատը, և դա հասել է մեզ մի վստահելի մարդու միջնորդութեամբ»:

Գոմածոր գիւղ (ոռոսաց ամհմանագուխ), Փոքր-Ասիա, վետր. 28.

Անգլիակում մեծ կասկածով ընդունեցին, այժմու էլ նոյն կասկածով են ընդունում հայերի հազարգած ֆակտերը անցեալ օգոստոսին և ունի տեղերին Սաստոնում տեղի գտած սոսկալի ազմուկի մասին։ Եւ իրաւ շատերը կարծում են, թէ հայկական աղբիւրից ծագող ամեն մի պատմութիւն անպատճառ ծաբավեղ պիտի լինի, եթէ ոչ լիովին սուտ։ Եւ մի թէ կարելի՞ է, ասում էին, փութալ գատապարտել թուրքաց հեղարարու պաշտօնակատարներին, հիմնելով այդ անպատախանատու վրդովիչների աղաղակի պէս լսպառ ամբաւարար վկացութեան վրա։

Ես ամենելին չեմ վիճում և չեմ հերքում, թէ անիրաւ տարձակումների, անգութ կոտորածների, անպաշտպան կանանց և մանկանց անլուր լիքանքի, հիմնայատակ արւած գիւղերի և սպառապուռ սրի մատնւած ժողովրդի մասին շրջաղ պատմութիւնների մէջ կան բաներ, որոնք լաւ չեն չերիւրում իրար հետ ժամանակի ու տեղի նկատմամբ, և կամ թէ մէկը միւսի հետ շփոթում են։ Սական պէտք չէ մոռանալ, որ հեռաւոր լեռների նախնական ժողովուրդը, սրի մասին գրում եմ, շատ թերի գողավար ունի ժամանակի վրա։ Նրա հաշիները միշտ սկսում են տարւագ եղանակներից՝ որոնք դիւզացու կեանքի սահմաններն են, — աշնան ցանքից կամ թէ ձմրան ձիւնի հալելուց, գարնան խոտը կտրելուց և կամ թէ վերջին ամրան ցուենի հունձքը ժողովներուց։ Եւ եթէ նա աղդպէս էլ չանէր, զարձեալ մենք մեղագիր չէինք լինիլ, որ նա փոքր ինչ շփոթ կերպով և կամ թէ շատ անձիշդ է առաջ բերում ան դէպքերի շարքը, որոնք զրկել են նրան ստացւածքից, տնից ու տեղից, ազգականներից, ամուսնուց ու զաւակներից, — դէպքերի, որոնք ի չիք են դարձել գէթ ապագային սընունաց գտնելու նրա վերջին լուսը, ստիպել են նրան մի անանուն, մի հալածական աղքատ դառնալ և ցնցուալք հագած՝ իբրև տարագիր թափառել Փոքր-Ասիավի անհւլունիալ ճանապարհների վրայ, ուր հէնց առաջին մահմեղականը կարող է սպաննել նրան, համոզւած լինելով, թէ իւր արածը մի բարեպաշտական գործ կը լինի։ Այս է ահա, բառիս բուն և ծիշ առմամբ, Վեհափառ Սուլթան Արգու Համիդի խմաստուն և բարեդութ կառավարութեան ներքու ապրող հազարաւոր հայ հպատակների իսկական վիճակը ծածկատանի ալս մասում։ Որ ասածն վեր ի վերոց և շատովի կարծիք չէ, — այդ ես պատրաստ եմ բացարձակ կերպով հաստատել։ Եթէ ես կինդանի մնամ, այնպիսի փաստեր կը հրատարակեմ ի լուր աշխարհի, որոնք անթերի պարզութեամբ կ'ապացուցանեն, որ ես ոչ թէ ստարացնում եմ այս արհաւիրքներով լցւած երկրի կացութիւնը, ալ զեռ մեղմացնում։

Այժմ ես կը փութամ քաղաքավարութեան և աղսիւ կուի բոլոր կանոնները պահել։ Ամեն խնդրի մէջ երկու կողմ կայ, և արդարութիւնը պահանջում է, որ երկուսին էլ ականջ դնենք, որ մենամարտի

մէջ առաջին գնդակ արձակելու իրաւունքը չնորհւում է հրաւէր սաացողին, աճնպէս էլ, իմ կարծիքով, առաջին խօսքը, ալս դիալւածում, հարկաւոր է տալ ամբաստանւածին: Թուրքերը և նոյն իսկ Սուլթանի տաղին նախարար՝ մեծ վեղիրը չեն ուրանում, որ Սասուն և Տալւորիկ գաւառներում չփոթմունքներ են պատահել: Արդէն սուուզւած է, որ մի քանի տարիներէ և վեր ընհարումներ են տեղի ունեցել քրիստոնեալ և մանմեական բնակիչների միջն: Արդ, լիովին անաշառ լինելու համար՝ ես ու զում եմ միջոց տալ արդարանալու նոյն իսկ բարբարոս և գալանամիս վայրենուն, նոյն իսկ Սուլթանի Փոքր-Ասիալում գտնուղ սպաներին,—և այս պատճառով ամենից առաջ աշխատեցալ մի մանմեական անկան վկարութիւն ձեռք բերել նատախում և Տալւորիկ ձորում անցեալ աճնան պատահած դէպքերի մասին:

Մի ացպիսի վկարութիւն ձեռք բերելը հեշտ բան չէ: Սասունի չարհամբաւ կոտորածներին մասնակից եղած թուրքերը մի տաղնապիշտութիւն են պահում: Բաց որ ալդ գաւառում անպարա և գրգռութեան առիթ չուոզ ժողովրդի մի վերին աստիճանի արիւնանեղ՝ դիւալին չարաթեամբ նախազիտած և նղովելի վատթարութեամբ գլուխ բերւած՝ սպանութիւն է կատարեւել:—որ ընդ միշտ պղծելու է նոր պատմութեան էջերը:—ալդ ես ժամանակին կ'ապացուցանեմ խորտակիչ փաստերով և նոյն իսկ չանցաւորների շրթունքով:

Առ ագժմ, իբրև պարագիս մէկ մասը, տալիս եմ ձեզ, Սուլթանի մի բարեսպաշտ իսլամ հպատակի բերնից լսելով, հետեւեալ պատմութիւնը: Այդ մանմեգանամը մի զինւոր է, որ իւր պաշտօնը կատարելիս անձամբ տեսէլ է Սասունի քսամնելի ողբերգութեան իւրաքանչիւր պատկերը և, հետեւով հրամանին, իւր ովսանն մասնակցել է սոսկալի ոճիրներին:

Միան մի քանի անհրաժեշտ խօսք կ'ասեմ ալդ վկաչի մասին նամաւ երեսուն տարեկան մի մարդ է: Վեց տարի ծառաչել է բանակի մէջ և կոտորածների միջոցին ենթասպակ է եղել հետեւակ զօրքի 25-րդ դնդում կրիտացի իսմայիլ բէյի իշխանութեան տակի, որ և ամեն պատահած բաների անմիջական պատասխանատուն է: Այժմ նա թողել է զօրքը և փախել իւր ծննդեան երկրից՝ ոռուաց սահմանների մօտ մոռացութիւն զանելու համար: Ներելի չէ ինձ աւելի բան ասել նրա մասին, որովհեան, եթէ ճանաչվի, նրան իսկովն կը մատնեն: Իրեն սպաւնացող վտանգի մասին նա ինքն բնաւ չի մտածում: Արդէն մօտեցել է զերեզմանին: Մի լաւանի հրւանդութիւն չունի և որ և է որոշ ցաւով չի տամնչւում: բայց և աճնպէս քաշը առ քաշը մօտենում է մահւան, իւր անսիրչ ներքին տաղնապից մաշւելով: Դրա պատճառը գուցէ աճն է, որ սասակի ջղակին է և զգալուն: Ինչ և իցէ: Ես երեք ժամ մնացի նրա մօտ՝ նրան հարց ու փորձ անելով (ձեռնհաս վկաների ներկայութեամբ), և ալդ ընկճաւած թշւառի կիրապ:

րանքը, թախծագին տրտմութիւնը և անպարտելի ու լամբ լուսահատութիւնը մի աշնագիտ տպաւորութիւն արին վրաս, որ դիւրին չէ փարառել իւր ամբողջ պատմութեան միջոցին նա ոչ մի անգամ ձանը չբարձրցրեց:

Թող անգլիական հասարակութիւնը կարդալ նրա պատմածը և դաստիան կտրէ:

Մուշից մեկնելով նրա գունդը հասնում է էկս գիշերին իւր առաջին բանակատեղը՝ հետեւեալ կուփ ասպարէզի մօտերքը. Շատախի Նահլիէ գաւառում, Տեղի անունն է Մերգէ-Մազան: Ազտեղ բանակած էին և ուրիշ վաշտեր: Հեռւից հրացանների որոտ էր լսւում: Գունդը չորս օր ալլտեղ մնաց:

Ազդ միջոցին վկան իմանում է, որ շրջաբնակ հայերից ունենոր անձինք՝ իրենց խոստացւած հովանաւորութեան փոխարէն՝ փող են վճարել իւր վաշտի սպաններին և ենթասպաններին,—նոյնպէս և քուրդերին: Քուրդերը շարունակ բանակ հն գալիս եղել և զնում:

Հինգերորդ օրը, ընթրիքից լեռով, վկանի վաշտը ճանապարհ է ընկնում դէպի Շէնիկ, — հետ ճանապարհ: Նրանք գտնում են կոփւն սկսած: Տներն արդէն ալլուսում էին: Գիւղացիք սկսել էին փախչել և նրանց հրացանները բոլորովին լանել էին: Վաշտերը երկու անգամ հուր տեղացին նրանց վրայ երկու լեռնալին թնդանօթներից, սակայն հետամուտ չնդան գիւղի սահմանից գուրս: Ազդ միջոցին Բաթիկարուտներն (?) և Վերզուլները (?) կողովառում էին հրդեւած տները և սպանում նրանց մէջ մնացող մարդկանց: Զինւորները չէին մասնակցում ազդ բանին, ազդ մնում էին գիւղի գուան առջև և սպասում էին իրենց մօտով անցնող փախտականներին:

Հետեւեալ առաւտեան զինւորները խաղացին դէպի Դէլիկուզան: Նրանք գտան ճանապարհի վրայ շատերին սպանւած, ոմանց վիրաւոր, և բազմաթիւ, վոքրիկ երեխսակք: Դրանց բոլորին կոտորեցին: Երբ որ զինւորները Դէլիկուզան հասան, դա արդէն շրջապատւած էր և կոփւր սկսած: Նրանք երկու կամ երեք օրով կանգ առին գիւղի կրղմը: ամեն օր լարձակումներ էին լինում գիւղի վրայ, բայց գլխաւորապէս քուրդերի կողմէց, որպէսեան զինւորները ձևոնապահ էին: Ազդ օրիքի ընթացքում վկան դարձեալ լսում է, թէ հայերն եկել են բանակ և փող տեղ սպաններին: Բայց թէ արգիօք նրանք վերապառնում են Դէլիկուզան, թէ սպանւում, — այդ նա չգիտէ: Յամկարծ մի դիշեր վաշտերը հրաման են ստանում լարձակւելու գիւղի վրաց Դարձեալ գործ են դրւում լեռնալին հրետաները, և դրանց թեարկութեան տակ գիւղի մօտակադ աներն իսկոն հրդեւում են: Զինւորները հրացան էին ձգում բարձունքից և կամ թէ բլրի զառիվեր շաւղից, բայց

թէ լատկապէս նրից—հաստատ չգիտեմ). իսկ քուրդերը նետեցան փողցի մէջ, ուր օրհասական տագնալը մեծ ջարդ լառաջ բերաւ. Քուրդերից շատերը սպանւեցան կանոնաւոր զօրքի գնդակներով. Կոխուր բաւական երկար շարունակեց՝ մինչև որ բնակիչները սկսան հեռանալ գիւղից. Այն ժամանակ—արդէն լուսացել էր—վաշտերին հրաման տրեց հալածել նրանց. Սակայն զինուորներից ոմանք միացին և սկսան քուրդերի հետ միասին տները կողոպատել. Գիւղացոց մեծ մասը կոսորտեց գիւղի և ժակուրի միջև.

Յաջորդ օրը վաշտերը պատուէր ստացան լառաջ գնալու. Դրանց հետ միացել էին և ուրիշ վաշտեր, և նրանք լեռնացին հրեաներ ունեին. Ճանապարհը շատ վատ էր, աճսպէս վասա, որ ջորիները չէին կարողանում լառաջ քաշել թնդանօթները, և պէտք էր լինում, որ զինուորները բարձրացնեն դրանց ժայռերի վրայ. Ալյոնեղ շատ գժար անցանելի կիրճն կապին, և շատ ժամանակ հարիւտոր եղաւ Տալւորիկի սահմաններին հաս նելու. համար, Թուրքերը շարունակ միանում էին զօրքի հետ. Մի քանի ժամանակից լեմու (չեմ կարող ճիշդ որոշել) եկան ուրիշ զինուորներ և աւելի շատ քուրդեր. Աճսունեան նրանք պատշարեցին գիւղերը՝ ճիշդ անեղանակով, ինչպէս և առաջ, ալոյնքն՝ քուրդերին լառաջ միջեցին պիզդ գործը կասարելու և զիշերակին լարձակումը հոգալու համար, մինչեւ վաշտերը կրակ էին տալիս մօտակաւ լեռներից. Հետևեալ օրը նրանք սկսան տները ումբակոծել և գիւղերն առնել. Մօտերքում կար մի անտառ, ուր գիւղացիք սրասովարւել էին, —շատ էր մարդկանց, կանանց և տղանց թիւը, բայց միան Աստած գիւտէ թէ նրան էին լատկապէս. Անտառի մի կողմից կանգնած էին քուրդերը, միւս կողմից զնդերը. Անաւոր միջոցին՝ բոլոր վեց հրեան էլ կրակ ժակթքեցին անտառի վրայ և իւրաքանչիւրը տասն և երեք անդամ ուումբ արձակեց. Ամբողջ անտառը բորբոքւեց. Անտարակոչս պատովարւողներից ոմանք փախան. բայց մեծ մասը կամ ուումբերին կամ բոցերին զո՞ զարձաւ.

Տալւորիկի գիւղերից մէկում մի մեծ տուն կար, ուր վակւած էին բազմաթիւ կանակք, ժանկունք և ծերելու Հրամանեցին աւդ տունն է ումբակոծել. Տունն այլուեց, և մէջը գտնւողներից ոչ մէկն էլ կենդանի չմնաց. Անտառում բռնւցան երկու աղջկեկ. մէկին առաւ գնդապետը միւսին մակեօրը. Ցեսոյ նրանց տարան Գէլիէգուզան, բայց աճսուկ նրանք անհետացան. Վկան ոչ մի հաւ կին չի տեսել իւր վաշտում. Արդեօք աղ երկուն էլ սպանւեցան Գէլիէգուզանում, —նա չզիտէ. ոչինչ չդիտէ նաև առւրբ Մեսրոբ եկեղեցու մասին:

Գէլիէգուզանում գումարւեցան զրեթէ բոլոր գնդերը և մօտ երկու շաբաթ աճսուկ մնացին. Երկրորդ թէ երրորդ օրը նրանց մօտ եկաւ Գէլիէգուզանի կուրց ճողովրած և Անդոկ սարին սպաւինած հայերի առաջին լիքուզանի կուրց ճողովրած և Անդոկ սարին սպաւինած հայերի առաջին

խումբը։ Նրանք առաջուց իմաց էին տւել թէ գալիս են անձնատուր լինելու և հովանաւութիւն ինդրելու Սուլթանի զօրքից։ Առաջին խըմբը բամ կը լինէին 450-ից մինչև 500 հոգի տղամարդ, կին և մանուկ։ Նրանք ունեին մի սուաջնորդ տանուտէր։ Երբ որ նրանք նեղ ձորը մտան, ուր զօրքը նստած էր, զինւորները նրանց ետեից ձորի մուտքը փակեցին։ Գնդապետ Խոմալի բէւը մօտեցաւ տանուտէրին և հրամակեց բռնել նրան։ «Ովէ է ձեր մեծը», դաշնց նա, դառնալով բազմութեան։ «Յս եմ», պատասխանեց տանուտէրը (քեօնւան), և մարդիկ նորից հարցւելով, ասացին։ — «Ի՞ւ է»։

Քեօնվա ասելը՝ զիխաւոր կամ առաջնորդ ասել է։ Հանգամանքի բերմամբ աչդ միջոցին սասունցոց մէջ զիւզի սուաջաւորը մի քահանաց էր Սի ուրիշ վկալութեամբ, որ ևս տակաւին չեմ ստուզել տրամադրւած եմ կարծելու, թէ թիւրք ենթասպազի վիշտակած քեօնւան ոչ աչ ոք է բաց եթէ Սէմալի Տէլ-Օհաննէս քահանան, Սէմալի՝ որ Շատախի քարու քանդ եղած չորս զիւզերից մինն է։ Սրան սպանեցին։

Այնուհետեւ նրան հնատով մարդկանց մի կողմ տարան և ուտելու բան աւին։ Նրանք զո՞ն էին, որ վերջապէս ազատւել են աղէտից։ Հետեւալ օրը աւելի շատուր մարդիկ եկան։ Չորի մուտքն ու ելքը պահպանած էին զինւորների երկու շղթալով, որոնք թուլ էին տալիս ներտ մտնել, բաց դուրս գալն արգելում։ Նրկորդ օրը զօրքի չողատներից մէկը հրաժան սոտացաւ երկու անագին փոս փորել մի սեպ ժալոյի զառիվալում, որ մի անձուկ խոռոչք էր կաղմում վիւզի եզերքին։ Խոռոչքի չատակում մի փոքրիկ հեղեղ էր հոսում, և շուրջն երմում էին քարաչըներ, ուր գիւղացիք ոտվոր էին խոտ պահել։

Ալդ օրւակ արեգակը մալր մտնելու միջոցին զինւորները հրաժան ստացան շարւալու, և սպաները նրանց գծերի երկարութեամբ անցնելով, պատիսի հրաման տւին։

«Առաջին դասակի (բուլուկ) 10 հոգուց չորսը թող լառաջ գան»։

«Երկրորդ բուլուկի 15 հոգուց չորսը թող լառաջ գան»։

«Երրորդ բուլուկի 10 հոգուց թող հինգը առաջ գան»։ Եւ ալսպէս բոլոր դասակներից մարդիկ ջոկեցան։

Այնուհետեւ դասակներն մերարձան դէպի իրենց բանակը և ընթրիցին. իսկ ընտրւած զինւորներին հրամակեց առանձին հստել և ուտել չոկ ջոկ խըմբով։

Երբ որ զիշերւակ մութը կոխում էր, սպաները գալիս էին և ասում։

«Առաջին ջոկատի մարդիկ այս ճանապարհով կ'երթանու»։

Եւ նրանց տանում էին ձորի ստորոտը։ Այնտեղ նրանք գտնում էին խումբ խումբ զիւղացիք—աչք, կին և մանուկ, թւով վիսուն, երբեմն եղթանասուն և աւելի»։

Այն ժամանակ սպան զատում էր գիւղացոց խմբից տառն և քսան հոգի, և հրամալում զինւորներին:

«Սպանեցէք դրանց:

Իմ հարցման, թէ արդեօք հայերը զինւած էին, նա պատասխանեցի թէ անրանք գոտու գանակից զատ՝ ուրիշ ոչինչ չունէինա:

—Արդեօք նրանք դիմաղլում էին, հարցրի ես: Զառչը պատասխան տւառ, թէ մինչև վերջը նրանք չգիտէին իրենց ձականագիրը, և երբ որ վերջին հրամանը տրւեց, նրանք արդէն սւնների զեմ էին կանգնած:

—Արդեօք շատ երեխակը կային նրանց սիջն, շարունակեցի ես հարցնել: —«Ծառ շատ», ասաց նա, և փառք եմ տալիո Աստուծոյ, որ ինքս ոչ մի մանուկ չեմ սպանելո:

Ազգ միջոցին ես լսեցի նրա՛ ընկերոջ խօսքերը. «Հապա քանի մարդ ես սպանել գուռ» Յւ նա պատասխանեց կամացուկ. «Աստուծ զիտէ: Յա կարծում եմ՝ հինգ մարդ: Գուցէ եօթը: Քնչ անէին. Ինձ հրամանած էր:

Ազգ խօսքերը նա ինձ չասեց, և դրանք ինձ չինչ ուղղած:

Ես հարցրի, թէ արդեօք շատ երեխակը կային սպանւածների մէջ, իբր պատասխան Զառչը հառաչեց և զլուխը թոթւելով լուռ կեցաւ: Յետոյ ասաց, ուսերը լրտաճատաբար ցնցուով. «Մենք զինւորներ ենք, թիզ կարող անեքք: Եւ լարեց, որ երբ մէկը դանդաղում էր, բէզը (նա չասաց, թէ լատկապէս որ բէզը, բայց հարկաւ խօսքը խամալիլի մասին էր) խոկոն սպանում էր նրան ատրամանակով ուսրով. «Փառք եմ տալիս Ալահին, ասաց նա, որ ես տղակը չեմ սպանելո:

Իմ հարցման, թէ արդեօք անուշնետե էլ որ և է զիւղացի սպանեց: Նա իսկոն չպատասխանեց, և չետոյ ասաց. «Ոչո՞ւ Վերջապէս լատացնեց, թէ գուցէ ալլ ես մի քանի ուրիշ կոտորածներ պատահած լինին:

Երբոր հարցրի, թէ արդեօք ամբողջ կուկի միջոցին շատ մարդիկ սպանւեցան կանոնաւոր զնդերից, նա պատասխանեց:

«Ակզբից մինչև վերջը ես չեմ լսել, որ գէթ մի զինւոր վիրաւորած լինէր, ուր մնաց թէ սպանւած և ես չեմ հաւատում, որ ամբողջ գորքից գոնէ մի մարդ մնաւած լինի: Անտարակուս շատ քուրդեր սպանւեցան, և լատկապէս կուկի առաջին օրերը»:

Վերջապէս հարցրի, թէ նա տեսած էր որ և է ուրիշ պատերազմ: և նա ասաց. «Ոչո՞ւ, և աւելացրեց. Աստուծ տաէ, որ ալլ ես երբէք արին հեղութիւն չտեսնեմ»:

### ԲԱՆԱԿՈՒԻԻ ԴԵՅԼԻ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԴԵՄ

«Դէյլի Տելեգրաֆ»-ի վերը առաջ բերած հեռագիրը այն գրութիւնն էր, որ զօրեղ ցնցում գործեց ոչ միայն Լոնդոնում, այլ և ամբողջ աշխարհում: Թրքասէր և կամ ոչ-հայտասէր թերթերը

զինւեցին «Դէյլի Տելեգրաֆ»-ի դէմ կատաղի կերպով, բայց «Դէյլի Տելեգրաֆ»-ը չաղթանակեց: Մեծ գեր է կատարում հակա-հայկական և թրքասիրական գործերում անգլիացի Բարուլետը, որի անունը մեր յունարի յօդածում արդէն մի տեղ չիշատակւած էր: Բարուլետը փորձ փորձեց «Դէյլի Տելեգրաֆի այն հեռագրի ամբողջ բովանդակութեան խորոշիւնը հերքել, հիմնելով այն հանդամանքի վրայ, թէ իրը անհարին բան է Մուշում՝ 23 փետրւարի գրած թղթակցութիւնը մինչ փետրւարի 26-ը Կարս հասցնել, որտեղից և նա հեռագրւած է: «Դէյլի Տելեգրաֆը պատասխանեց, վարառելով կասկածները. Բարուլետը շարունակեց պնդել իւր ասածի վրայ, հրատարակելով մի գրութիւն, որ մեր ընթերցողները կը կարգան աս բոպէին: Հակա-հայկական շարժման պալագլուխ Պարիզի «The New-York-Herald» (Ներկա Նորկ-Հերալդ), իւր համարում առ 9 մարտի ահա ինչ ապեց «Դէյլի Տելեգրաֆի դէմ».

«Անգլիակի աշխատան ներքին քաղաքականութեան մէջ հետաքրքրելի բան չգտնելով, բնական է որ «Դէյլի Տելեգրաֆ»-ի կորիւնները զըստում սրոնէին աղմկիչ նիւթեր: Այս պատճառով նրանք փորձում են մի նոր ընթացք տալ հայկական խնդրին, որ արդէն ծանօթ է մեզ զազանութիւններ կրող վազաքաղաքական վերնագրով: Ասկան նոր էին նըրանք աղմուկ հանել, նոր էին իրենց որոտացող սիմֆոնիակի զլիաւոր եղանակը հնչեցրել, և առա Պարլամենտի պահպանողական անդամներից մէկը (Բարուլետ), մի անդաշն խազ առնելով, սոսկալի շփոթութեան մէջ է ձգում նրանց ամբողջ օրքեսարը»:

Այդ խօսքերից լեռով «Հերալդ»-ը «Դէյլի Տելեգրաֆ»-ի ստութիւնը ցոյց տալու համար չառաջ է բերում միստր Աշմէդ Բարուլետի նամակը հետեւալ վերնագրով.

«Դէյլի Տելեգրաֆ»-ի իմբագրին.

«Սեօր—արժանի է, որ ես արհամարհեմ ձեր կողմից անձիս դէմ ուղղած վերաւորանքը: Դարձեալ պնդում եմ—Փիզիքապէս անհնարին է, որ սուրհանդակի միջնորդութեամբ փետրւարի 23-ին Մուշից ուղարկած մի հեռուգիր Աարսի վրապավ Լոնդոն համնի վետր 26-ին, առն էլ տարակ աս եղանակին,—ինչպէս որ առած է «Դէյլի Տելեգրաֆ»-ի վետր 27 համարում»:

«Ես հրաւիրում եմ ձեզ առաջարկել ալդ հեռագրի բնագիրը երեք անկախ իրագէտների հետազօտութեան իմ առջև. մէկը թող նշանակւի ձեր կողմից, միւսն իմ կողմից, երրորդն էլ արտաքին գործոց նախարարութեան կողմից:

«Այս գործին միջամտելուա պատճառն այն է, որ ներկացումս մի շատ չարամիտ դաւադրութիւն, ճշմարտութեան հակառակ, ամեն կերպ աշխատում է ասորացնել և հաջողնել ջաճկատանն ու տաճիկներին. Այդ դաւադրութիւնը դրազւած է ոչ միան հավկական գործերով, այլ և Սիրիակի, Մակեդոնիակի և Օսմանեան պետութեան միւս մասերի մէջ՝ ստալող աղմուկներ հնարելով. Նա զործ է դնում ամեն միջոց՝ ցեղերի ու կրօնների մէջ մի պատերազմ գրասելու և թիւրքիակի դէմ մի ալազգի արշաւանք լարուցաներու համար, որ շատ վնասակար պլոտի լինի Բրիտանական շահներին. Հետեաբար անզիլիական թերթերի համար պատասխանատու անձերը պարտաւորու, են մեծ զգուշութեամբ քննել, թէ արդեօք որ քան ճիշդ է և վաւերական այն բոլորը, ինչ որ նրանք հրատարակում են. Զեզ խոնարհ Աշմեղ Բարտլետ»:

«Հերալդ»-ի միենոն մարտի 9 համարում տպւած է նրա լատակ թղթակցի հետեակալ հեռագիրը Լոնդոնից, որ ուզարկւած է աղ լրագրի սեպհական հեռագրաթելով:

«Անողլիական թերթերն այն համոզման են հասել, թէ անհրաժեշտ է մի սառզ և հաւաստի ապացուց ունենալ, լառաջ քան թէ կարելի լինի հավկական անզիլութեանց վերաբերմամբ չըջող լուրերը իւօք ճշմարի համարել.

«Երեկ (Globe) «Դլոր» լրագիրը համարձակ դէն ճգեց իւր վրայից Անզիլի՝ տաճիկների դէմ ունեցած նախապաշարման կամանքները և բռնեց այն գիրքը, որ ամենից առաջ Հերալդ-ն ունէր երոպական թերթերի շարքուն իւր առաջնորդողում նա ասում է. «Մեօր Էգւարդ Գրէի երեկւաձ պատասխանն այն հարցին, թէ արդեօք Հայուսաւան ուզարկւած երոպական նվիրակները պիտի փերաստուգնի «Դէլլի Տելեգրաֆ»-ի գեկուցումները այն ասութեան դլադստոնական է իւր զգուշութեամբ, որ մենք զժւարանում ենք հասկանալ, թէ լոտիկապէս թիւն է հրամակւած նվիրակներին: Մենք հրատարակում ենք այսօր մեր Պոլսի թղթակցի մի նամակը, որ արժանի է այն ամենքի ուշադրութեան, որոնք «Ասխճիրներ» բառն լինելուն պէս հաւատ ընծակեցին ազ բանին: Նա ասում է, թէ Պոլսում շատ են հարցնում, թէ արդեօք փերուիշեալ զիկուցումների հեղինակը երբեք եղին է Սասնի նահանգում, և ծանր կասկածի են ենթարկում Մուչի հեռացիքը, որ փետրաւարի 23-ին զրկւելուց իւսուչ մանքան շուստ է Կարսի թելին հաղորդել, որ արդէն 27-ին լուս է տեսել Լոնդոնում. Մենք Չերտ հրաէր ենք կարդում անզիլիական հասարակութեան առկախ թողնել իւր վճիռը: Հիմնաւոր պատճառներ կան հաւաստ չընծակելու այն ահռելի լուրերին, որ լսել են դիւրահաւատու թղթակիցները և կամ թէ հաւաքնել Լեանտի սահմանի մօտերքում: Հավաստանի հարցում միան երկու բան ճիշտ է նախ, որ թիւրքիակի այդ մասն լի է ամեն տեսակ ստախօսներով, և եր-

կրորդ՝ որ հաջկական կոմիտէտները Նւրոպակում մեծ շահ ունին սաստկացնելու տագնապը։ Մինչև որ մի պաշտոնական տեղեկագիր չստացվի, ոչ մի արդարամիտ մարդ չէ կարող որոշ բան վճռել։ Թիւրքիավի դեմ հրատարակող բաները գուցէ մասամբ են կամ թէ բոլորն էլ սուտ են։ Ինչ որ կարելի է իրաւամբ ասել, այդ այն է, որ մենք այժմ ոչ մի նիւթ չունիք, որի վրաչ հիմնելով կարողանազնք մի արդար և առողջ դատաստան կորելու։

Գլոր-ի ախնարկած Պոլսի թղթակցի գրածն այս է.

«Անգլօ-Հայկակ սն գրականութիւնը նորերս հարստացաւ շատ ընդարձակ և սաստիկ գրւատուած տեղեկութիւններով, որ հանձարեղ թղթակիցները շտապում են հասցնել Լոնդոնի թերթերին։ Այդ թղթակիցները թէն շատ են ջանացել Սասուն համնել, բայց նրանց ջանքերն ու բարի ձգտումը դերենել են։ Թղթակիցներից մէկն անձամբ խոստվանում է այդ բանը։ Խակ միւսը, որ շատ աչքի ընկնող է իւր գրածների ծալրաչեղութեամբ, արդէն ամեն մարդկացին հնարաւորութեան չափն ու սահմանը անցնում է, գրելով Մուշից փետր. 23-ին մի համակ, որ ով զիսէ, թէ ինչպէս կարս համնելուց լետո՞ հաղորդում է հեռագրաթերին և արդէն 27-ին լուս է տեսնում Լոնդոնում։ Մինչդեռ նոյն իսկ սովորական հանգամանքներում Մուշից կարս մի գիր հասցնելու համար առ նւազն տան օր է հարկաւոր խակ այս սաստկաչունչ ձմրան եղանակին շատ ամլի ժամանակ կը պահանջէի։ Մինչեւ անդամ եթէ ենթագրենք, որ Մուշ ու կարսի միջև սուրհամնդակ աղաւնիների մի ծածուկ երթեեկութիւն է կազմակերպւած, դարձեալ դժւար թէ այդ ուշիմ թուշունները կարողանալին այլուր առասպելական արագութեամբ սլանալ անցնել երկու քաղեներն իրարուց անջատող ահագին տարածութիւնը։ Շատ հակասական բաներ է հաղորդում և Թիւրքիավից գրող թղթակիցը։ Նրա ասելով, օրինակի համար, Լոնդոն հասած պատմութիւններն աւելի չափաւոր են, քան ծարակեղ, բայց և այնպէս նա ինքը վկալում է, թէ բուն հակական պղիւրից ծագող լուրերը վստահելի չեն։ Մինասն ժամանակ նա լօժարութեամբ հաւատում է, որ իր՝ ռուսական հողի վրաչ հարցուփորձ առած հակ գեղջուկները ներկել են իրենց ձեռքերը թիւրքի արիւնով։ Իբր թէ մէկը սպանել է վեց թիւրք, միւսը մորթել է մի թիւրք զինւոր, այն էլ հասարակ դաշոնով։ Խակ մի հակ ապստամբի մահւան նկարագիրն անելիս, որի նմանը կարելի է կարդալ միաէն գիւցազնական վէպերում, թղթակիցը պնդում է, թէ այդ քաջը միաէն քսանումէկ թիւրք կոտորելոց լետու է հոգին աւանդում։ Պէտք է մեծ զգուշութեամբ վերաբերւել այդ խիզախ ապստամբների պատմածներին, քանի որ նրանց ակների նը պատակն է հաւատացնել մեզ, թէ նրանք զոհեր են, այլ ոչ թէ խոսվարներ»։

Սէդ բոլորից լետու «Նիւ-Խորկ Հերալդ»-ի մարտի 10 համարի մէջ տպւեց մի լողած մի ընդհանուր երկար վերնագրով, որ այս էր՝ «Սուս զեկուցումներ Մուշից»—Հիմնաւոր փաստեր մի թուրք նախարարի կողմից», և լետու աւելի մասնաւոր նույնպէս երկար վերնագրով, որ հետեւ ելն էր՝ «Թիւրքաց գեսպան Մահմուղ Նէղիմ բէջը ծաղրում է Հայատանի մասին գլուխութեամբ տարածւած զեկուցումները»:

Այդ յօգւածը մի թղթակցութիւն է Հռոմից, որ և այստեղ առաջ ենք բերում:

Հռոմի մարտի 8—Լոնգոնի «Դէվլի Տելեգրաֆ»-ին Կարակից հեռագրով հուղորդած տեղեկութիւնները Հայաստանում կատարւած անգթութիւնների մասին շատ ու շատ մեկնութիւնների նիւթ են զարձել Հռոմում: Նրէկ ես զիմեցի Տաճկաստանի գեսպանին և հարցրի Նրա Կարծիքը: Մահմուղ Նէղիմ Բէջը պատասխանեց:

Ըստ իս այդ բոլոր պատմութիւնը առաջօդ է. դա բովանդակում է իւր մէջ շատ միամիտ և հնարովի բաններ և կամ աւելի ճիշդն ասած՝ մի կրկնութիւն է աճն բոլորի, ինչ որ արդէն երեք ամսից ի վեր հրատարակում են անգլիական թերթերը, և որոնց հերքումը վաղուց արել է «Հերալդ»-ը: Ահա ձեզ մի նոր հակասութիւն: Անգլիական մամուլը դեռ երեկ սաստկապէս բողոքում էր իւր թղթակիցներին Հայաստան գնալու իրաւունք չտրւելուն գէմ: Զգիտեմ որքան ճշմարիտ է այդ արգելքը, քանի որ աղդ մասին ոչ մի պաշտօնական զեկուցումն չունիմ: բայց ահա հեռագիրէ իսփած «Դէվլի Տելեգրաֆ»-ին, Ուրեմն արգելք չկար, որովհետեւ եթէ մի ալղպիսի արգելք գոյութիւն ունենար, անգլիացի թղթակիցը չէր կարողանալ Մուշի գաւառն ընկնել, որտեղից իւր թէ զրել է իւր նամակը: Քանի որ ոչ մի եւրոպացի ճանապարհորդ հնար չունի ալստեղ համելու առանց վաւերական թուլուութեան: Մական եթէ Մուշ հասած և ալստեղ էլ իւր նամակը զրած լինի, դարձեալ ակներեւ է, որ նրա զեկուցումն վերին աստիճանի կողմնակալ է, բովանդակելով իւր մէջ միան հայերի պատմածը, ալսինքն մի կրկնութիւն աճն բոլորի, ինչ որ տարածւած է Եւրոպակում լեղափոխական հայ կոմիտէտների ձեռքով:

«Նամակի մէջ ոչ մի ճշմարիտ բառ չկար, դա էլ ժողովածու է այն սուսերի, որ սիստեմատիքաբար լեզեզուու են՝ հասարակաբին Կարծիքը անասունը իւր թուրքի մասին լարւած պահելու նպատակով:

ՎՅՅ հակերի կոտորածը, շարունակեց գեսպանը, որոնց նախ հովանաւորութիւն և ազատութիւն էին խոսացել, մի աճնպիսի բան է, որ ես չեմ կարող հաւատալ, նույն իսկ եթէ իմ աչքովս տեսած լինէի, ինչ պէս որ չէր հաւատալ և ոչ մի թուրք, իսկ անգլիացիք և ամերիկացիք միան կը ծիծաղեին, եթէ ասեմք, թէ մի ալղպիսի բան պատահել է նրանց երկրում: Յուրքիան միանց իւր իրաւունքն ու պարտքն է կատա-

թել Հայաստանում, դիմադրելով՝ իբրև մի միահեծան պետութիւն, ամեն ինդափոխական և անիշխան ական ձգտումներին:

«Թէ հայ խոռվարաբների ձղութիւնները ճիշտ այդ տեսակից են, այդ և զոկութենատներով կ'ապացուցանեմ: Այս մի քանի շատ կարեոր հատածներ մի գրութիւննից, որ հալ հայրենասիրաց ընկերութեան լաւտնի անդամ պ. Վ. (Ա.արդան?) Փափաղեանը հրատարակեց «Lumina Novaeթերթում լունար 14 ին, երբոր նրան արտաքին էին Ծումանիալից թուրքիակի գետ արած չար ձակութեների պատճառով:

Այս վաղուց առել եմ ձեզ, թէ այս խնդրի գժւարաւթիւնը հէնց նրանումն է, որ եկրոպացիք լաւ ծանօթ չեն ոչ Թուրքիակի, ոչ էլ նրա կառավարութեան և օրէնքների հետ: Նրանք ասում են, օրինակի համար, թէ Թուրքիալում հայերը հալածած են, բայց չդիտեն, որ մեր բարձր պաշտոնեաների համարեա թէ մի քառորդը բուն հայերից է բազկացած: Արդքունի զանձարանի նախարարը հալ է, արտօրին գործոց նախարարի օգնականը հալ: պետական խորհրդի անդամներից հինգը հալ են, երկրագրութեան և հանքերի պաշտօնէութեան մէջ տասնեերեք հալ կայ, արդարադատութեան մէջ՝ տասնեւկի, և ազն: Հէնց իմ առաջին քարտուղարն ացանել մի հալ է, հալ են նմանապէս և Պարիզի ու Բելգրադի թուրք ղետպանատների առաջին քարտուղարները»:

### ՔՆՆԻՉ ՑԱՆՉՆԱԺՈՂՈՎ,

Քննիչ ցանձնաժողովը, ինչպէս հաստատում են անգլիական և այլ աղքիւրները, գանդաղ է գործում: Եւ հասկանալի է. մի կողմից ձմեռուայ ցրտերը, իսկ միւս կողմից և մանաւանդ այն արգելքները, որ աշխատել է զնել ցանձնաժողովի գործունէութեան առաջ թիւրք կառավարութիւնը, և երբորդ կողմից՝ ցանձնաժողովի թրբքական լինելը, այդ ամենը պիտի զանդաղեցնէր ցանձնաժողովի գործունէութիւնը: Ճիշդ է, ցանձնաժողովին մասնակից են երեք մեծ պետութիւնների պատուիրակները. բայց սոքա լիազօր չեն: Թէ ինչ իրաւունքներ ունին եւրոպական պատուիրակները թրբքական ցանձնաժողովի մէջ, — այդ ճշգութեամբ և լիակատար կերպով պարզած չէ: Բոլորը, ինչ մենք գիտենք, այդ այն է ինչ յայտնւել է Անդլիացի պարլամէնտում արտաքին գործերի մինիստրութեան առած տեղեկութիւններից, որ ամփոփւած են սլարլամէնտի այս ու այն անդամի հարցմունքներին արւած պատասխանների մէջ: Աւելի լիակատար կերպով մենք գտանք ամփոփւած այդ տեղեկութիւնները այն պատասխանի մէջ, որ արտաքին գործերի մինիստրի օգ-

նական սեօր էդ. Գրէց տւեց Ստիւենսընի հարցմունքին թէ՝ որքան  
ճիշդ է թէ թիւրք պաշտօնեաները թոյլ չեն տւել Սասունի քննի  
յանձնաժողովին ուղեկցող եւրոպական նւիրակներին ացցելել շրջա-  
կաց զիւղերը և տեղեկութիւններ հաւաքել և այն։ Այդ հարց-  
մունքին պատասխանելով սեօր Գրէց ի միջի այլոց հետեւալն  
յայտնեց թրբռքական յանձնաժողովի եւրոպական նւիրակների  
իրաւունքների և պարտականութիւնների մասին։

«Նւիրակների պարտքն է միշտ ներկաց լինել Կոմմիսիայի մէջ  
և տեղեակ լինել նրա արած բոլոր քննութիւններին։ Նրանք կա-  
րող են պահանջել ուղղութիւններ մտցնել ամենօրեաչ տեղեկագրերի  
մէջ։ կարող են, եթէ անհրաժեշտ զատեն, ցոյց տալ, թէ ի՞նչ  
տեղեր և կամ մարդիկ պէտք է քննել, և պահանջել, որ իրենց  
կարեւոր համարած հարցերը որոշ և պարզ կերպով դնեն, և եթէ  
այդ պահանջը կը կատարւի, անձամբ առաջարկել հարցերը»։

Եւ ապա, միստր Ստիւլնուընի հարցմունքին թէ ին։ իրաւունք-  
ներ ունին նւիրակները վկաների վիճակն ապահովելու համար,  
սեօր է. Գրէց պատասխանեց թէ։

«Նւիրակները ոչ մի վարչական կամ դրա նման իշխանութիւն  
չունին Հայաստանում. սակայն, եթէ իւր մեծարգոց բարեկամի  
յայտնած երկիւղն արգարե վտանգ սպառնաց յանձնաժողովի կանո-  
նաւոր գործունէութեան, այն ժամանակ իւրաքանչիւր նւիրակ այդ  
մասին սովորական կերպով զեկուցումն կը տայ իւր գեսպանատան  
(Կ. Պոլիս)։»

Այսպիսով ուրեմն, ինչպէս տեսնում ենք, եւրոպական նոհ-  
րակները իրանց կամքով գործելու իրաւունքներ չունեն։ իսկ ինչ  
վերաբերում է իրանց զեսպանատանը զեկուցումներ ուղարկելու  
իրաւունքին, դորանով գործ կարգի կարելի էր բերել միայն այն  
գէպքում։ եթէ նւիրակների յարաքերութիւնները Կ. Պոլսի հետ  
հեշտ լինէին, եթէ Մուշը այնքան հեռու չլինէր Կ. Պոլսից։

Բայց թէ տաճիկ-կառավարութիւնը իւր կողմից ինչպէս էր  
հոգացել քննիչ յանձնաժողովին խոշնդոտներ զնելու՝ այդ մասին  
մի, թէև դեռ ոչ լիակատար, զաղափար տւին անզլիական «Խէցուիրի  
հեռագրական գործակալութեան» Կ. Պոլսի թղթակցի նամակները։

Անզլիական «Խէցուիրի հեռագրական գործակալութեան» յա-

տուկ թղթակիցը Թիւրքիայում իւր մի առաջին նամակով աշխատել էր փոքր ինչ գաղափար տալ այն դժւարութիւնների մասին, որնց, իւր կարծիքով, հանդիպելու էր քննիչ յանձնաժողովը, եթէ նա ուղինար Սասունի կոտորածի իսկական հանգամանքները իմանալ: Իւր մի երկրորդ նաևակով, տպւած անդիբական թերթերում փերարի 23-ին, հիմնւած նոր հաւաքած տեղեկութիւնների վրայ, նա եկաւ հաստատելու, որ խոշնդուների մասին իւր յայտնած կասկածները ծովրայեղ չեին: Եւ առաջ, քննիչ յանձնաժողովի գործելու դէմ դրած խոչնդուների մասին նա գրում է հետևեալը.

«Նախ և առաջ ասենք, որ սուլթանի կառավարութիւնն այն պիսի կարանտիններ է սահմաննել իւր պետութեան զանազան մասերում և այնպէս շրջապատել է կոտորածների հայկական նահանգը, որ խսպառ հետացնում է կոտորածների վայրից և դրանց ափանատես վկաններից ամենքին, որոնք կարող էին մի անկախ հետազօտութիւն անել: Յաջարարաբւած է, թէ Վանում, Բիթլիսում և Մուշում՝ խոլէրա կայ, և թէ ուրեմն անհրաժեշտ է խստացնել քառասնօթեայ արգելանի (կարանտինի) կանոնները: Տարօրինակ բան է, որ խոլէրան բրդել է յանկարծ տարւայ այս եղանակին, այն էլ յատկապէս Սասունի կոտորածների շրջակացքում, իսկ և իսկ Փոքր-Ասիայի կեդրոնում: Ո՞վ կարող է ապացուցանել կամ՝ հերքել, թէ խոլէրան ճարակում է այդ ձիւնապատ և անմատչելի լեռնային նահանգում: Նոյն իսկ Պոլսի կամ Ստամբուլի մէջ հասարակութիւնը և կամ լրագիրները ոչինչ չդիմեն խոլէրայի մասին, որ երբեմն-երբեմն պաշտօնապէս ծանուցում է այդ քաղաքում: Թուրքաց մայրաքաղաքի մէջ ո՞ր և է խոլէրայի դէպք յայտնող բժիշկը կրկնապատիկ վարձ է առնում, մինչեւ որ վարակւած տեղի առողջական պայմանների մասին մի գոհարար տում կը տուացւի. և Թիւրքիայի նման երկրում սակաւաթիւ չեն այնպիսի բժիշկներ, որնց համար ամեն բան խոլէրա է սկսած խռուկից մինչև ժանոն տենդը: Ո՞րքան էլ կարանտինի օրէնքները սուրբ լինին ամենքիս համար և միջազգային հովանաւորութիւն վայելին, բայց և այնպէս, երբ լսեցինք, թէ յանկարծ համաճարակ հիւանդութիւն է բորբոքւել Սասունի կոտորածի շրջանում, ակամայ կասկածի եկանք, թէ կարանտինները սահմանւած են թուրք կոմմիսիայի քննութիւնը յամրացնե-

լու համար: Մենք կարծում ենք, որ թուրքերը, կոմմիսիայի ալ-ազգի նւիրակներից նեղւելով, գիտութեամբ են հնարել այդ վերջին արդելքը և վրան գեղին զրօշակ պարզել: Զէ որ եւրոպացի նիւրակը կը յարգէ խոլէրայի կարանտինը և չի փորձիլ արհամարհել դրան: Սակայն ոչ մի տեղեկութիւն չկայ այն մասին, թէ ի՞նչ կերպով է յայտնւել համաճարակը նոյն իսկ Սասունի լեռներում: Կը մնայ ենթագրել, թէ նա ձիւնի հետ է վերուստ ընկել ապառաժների և սարերի վրաց, որովհետեւ ստոյգ յայտնի է, որ այժմ Սասունի լեռնոտ նահանգում ոչ մի մարդկային արարած չի մնացել, որ կարողանար մնունդ տալ հիւանդութեան: Ով որ չի սպանւել կոտորածի ժամանակ, արդէն փախել է մի ուրիշ տեղ: Այդ կարանտիններն առիթ են տալիս կարծելու, թէ քանիքած գիւղերի վերաշինութեան համար ուղարկած զրամը գողացել են և կամ թէ, զրամի տեղ հասնելուց առաջ, այնպիսի խոր ձիւն է իջել, որ հնար չէ եղել որ և է բան անելու:

«Թուրքերը լաւ են հոգ տարել, որ կոմմիսիան գարունքից առաջ Սասուն չհամնի և կոտորածների բոլոր հետքերը ջնջւեն, քանի որ զայրացած քրիստոնէութիւնը մի նոր և անկախ Քննիչ Կոմմիսիա չի նշանակել:

«Սակայն եթէ կարանտինի արգելքն էլ չլինէր, գարձեալ կոմմիսիան հնար չէր ունենալ իրօք ճանապարհ կորելու, որովհետեւ Հայաստանում սատորի ցուրտ է և երկիրը ձիւնապատ: Դժւարութեան մասին մի գաղափար կազմելու համար բաւական է յիշել որ Երեան և Կարս տանող ճանապարհները, թէպէտ ծովի մակերեսով թից Սասունի չափ բարձր չեն, արդէն երկու շաբաթից ի վեց ծածկւած են ձիւնով:

«Կարսում ՅՈ աստիճան (Անօմիւր) ցուրտ է, աւելի բաց տեղերում ցուրտն աւելի սաստիկ է: Օրի մէջ սրսկւած ջուրը սառոցց գարձած է վայր ընկնում և շունչի դոլորշին տասն րոպէում սառցով ծածկում մարդու մօրուքը: Սասունի լեռներն աւելի բարձր լինելով, կարելի է երեւակայել, թէ որքան խիստ է ացնաեղի օդը Սակայն բրիտանական կառավարութիւնը կարիք էլ չունէր ապարդիւն թուրք կոմմիսիայի ետևից միասր Նիսլենու ուղարկելու, քանի որ Սասունի կոտորածների ընդարձակ զեկուցու մն արդէն արւած

է Վանի անդղիական վուլ-հիւսկառոս միստր Հոլւարդի ձեռքով։ Այդ կարևոր զեկու ցման վրայ հիմնելովն է, որ բրիտանական կառավարութիւնն այժմ մի հիմնական քննութիւն է պահանջում։ Միստր Հոլւարդի զեկուցազիրը, իրաւ է, լիակատար չէ, որովհետև թուրքերն արգելեցին նրան աւելի մանրակրկեալ քննութիւն անել, բայց և այնպէս զշսաւոր ֆախուրն արդէն գրւած են, և կառավարութիւնը նոր ապացոյցների հարօս չէ։ Քսիմէնէս անունով իսպանացին, որ իրեն մի ռուղեոր և աշխարհաղիր է անւանում, ուզում էր միստր Հոլւարդի զեկուցման վարկը կոտրել, ասելով թէ դա հաջիական ազբիւրից է ծագում։ նա փորձեց ևս ապացուցանել, թէ Թիֆլիսում հրատարակող «Կառկազ» լրագրի հրատարակիչը մի հայ է։ Այն ինչ կառկազ»-ը մի պաշտօնական թերթ է և նրա խմբագիրը՝ բուն ուուս։ Եթէ արեւմտեան աշխարհում դեռ գտնուի գէթ մի մարդ, որ հաւատ չընծացէր Աստունի նախաճիրների պատմութեան, աշտեղ չեք գտնիլ մի ազդուիսի մարդ՝ ինչև անդաշ հայերին շատ չիրող ժողովրդի մէջ։

«Թուրք պաշտօնեաների շրջանում յեղափոխութան շարժման երկիւղն այն աստիճան սաստկացել է, որ ոչ միայն հայերը, այլ և նոյն իսկ ամերիկացիք ու անդղիացիք չեն կարող անում Հայաստան ճամբորդելու իրաւունք ստանալ, եթէ մինչև անդամ կամենացին Ֆիլիլիսի վիլայէթից հեռու տեղեր այցելել։ Ամերիկացի հայ հաղատակին, ինչ զործ էլ ունենար, միանգահայն անկարելի է ոսք զնել Հայաստան։»

Գործի քննութեանը գէմ զրած խոշնկուների մէջ է նաև այն, որ մեծ ջանքեր են արւած կարեւը վկաններին հեռացնելու գործի տեղից, և այզպէս եղած է ոչ միայն հայերի նկատմամբ, այլ և քիւրդերի, որոնք կուլին մասնակից են եղած։

Նաև երկար ժամանակ նւիրակները չունէին ոչ մշտական թարգման և ոչ քարտուղար, այնպէս որ, (ինչպէս Դէյլի Տելեգրաֆի թղթակիցը տեղեկացրեց թերթի փետրւարի 26-ի համարում), իրանց երկրորդ զեկուցումը Կ. Պոլսի գետպանների համար փետրւարի վերջերքը դեռ ոչ մէկը նւիրակներից չիարողացաւ ուղարկել։

Յետոյ միայն նշանակւած թարգմաններից մեզ յացոնի են Փրան-

սիական և անգլիական նւիրակների թարգմանները, որոնց մասին  
«Մուրճ»-ի թղթակիցը մի զրութեամբ, թւագրած 1-ն ապրիլի,  
հետեւեալն է հազորդում: «Հաջակաւոր դոմինիկոս Սրապեանի եղ-  
բայր միւսիւց ժան Սրապեան, ծխախոռի ո.եժիկ յացանի պաշտօ-  
նեայ, հայոց յացանի հակառակորդ, որոշ գոյնի կաթոլիկ, որ կը խոր-  
շի հայերէն խօսիլ, ընդհակառակ Վրանսերէն կամ թուրքերէն  
կը յացոնէ իւր միտք, նշանակւեց քննիչ յանձնաժողովի Վրանսա-  
կան նւիրակին թարգման, ըստ ոմանց ասութեամբ՝ Բ. Դուան թե-  
լագրութեամբ. թէ ինչ գեր ողիսի խաղաց իւր փեսաց մուսիու  
հւսումնեանի հետ, որ նոյն ժողովի անդլիական հիւպատոսի  
թարգմանն է, պէտք է երևակացնել...»:

Թէ քննիչ յանձնաժողովի եւրոպական նւիրակներին ինչ խո-  
չնդուներ են զնում տեղական իշխանութիւնները, այդ ցոյց է տա-  
լիս ի միջի ացլոց Դէյլի Նիւոի այս հեռազիրը, որ խփւած է Ֆի-  
լիպպոպովից փետրւարի 16-ին և տպագրւած է թերթի համա-  
րում առ 17 փետրւարի.

«Բննիչ կոմմիսիան դեռ նստած է Մուշում: Թիւրք աստիճա-  
նաւորների կողմից արգելքներ են յարուցւած, որպէս զի նւիրակ-  
ները չկարողանան շրջակաց զիւղերը գնալ տեղեկութիւններ հաւա-  
քելու համար: Տեղական թիւրք պաշտօնեաներն առարկում են,  
թէ ացլազգի նւիրակների գործն է հսկել քննութեան վրաց, այ-  
ու ոչ թէ վկայութիւն հաւաքել: Նւիրակները մոտադիր էին նաև  
զնալ տեսնել Նէնիկ զիւղը, որ աւերւած է, իսկ բնակիչները Մուշի  
շրջակաց զիւղերում պատուալրւած: Այդ այցելութիւնն էլ արգել-  
ւեց, իսկ երբ նւիրակներն առաջարկեցին Մուշ բերել փախստա-  
կաններին և այդտեղ հարց ու փորձ անել, — այդ առաջարկն էլ  
մերժւեց: Այս անակնկալ արգելքների և դրանց հաւանական հե-  
տեւանքների մասին արդէն ազգարարարութիւններ տրւեցան Բ.  
Դուան:

Սակայն, չնացած այդ բոլոր խոչնդուններին և աննպաստ հան-  
դամանքներին, Քննիչ Յանձնաժողովը, անդլիական տեղեկութիւն-  
ների համաձայն, շատերին հարց ու փորձ է արել և հայերին  
նպաստաւոր վկայութիւններ է ձեռք բերել:

Այս հարցին ըստ Քննիչ Յանձնաժողովը երբ պիտի աւարտի իր քննութիւնը, պատասխանը առաջման այս է, որ քննութիւնը հաւանական է որ յունիսից աւելի վաղ չաւարտի:

Արդար քննութեան դործին, սակայն, այժմ մեծապէս նպաստում են անզիւսական թերթերի արդէն յայտնի թղթակիցները, որնց յաջողւել է երկիրը մասնել, չնայած կառավարութեան բոլոր գործ գրած միջոցներին թղթակիցների գէ՞՛, մի արդելք որ այնքան մեծ աղմուկ հանեց անցեալ ամիսները և որի մասին խօսեցինք մեր անցեալ Տեսութեան մէջ:

Ի վերջոյ դնում ենք աշտուղ Սասունցի հայերի՝ Քննիչ Յանձնաժողովին մատուցած զեկուցաղիրը:

Անդղիական «Դէյլի Տելեգրաֆ» լրագիրն աւասջ է բերում այն զեկուցաղիրը, որ Սասունցի հայերից 14 պատգամաւորներ ներկայացրել են եւրոպական քննիչ յանձնաժողովին. նոյն զեկուցման պատճէնը յանձնաւած է նոյնուիս այդ լրագրի թղթակիցին: Պատգամաւորների թւում են յայտնի հերոս Գրգոյի որդի Զաքէն և Գէլէզուզանցի Պետրոս քահանան. ահա, ասում է յիշեալ թերթը, այդ զեկուցման ճիշտ թարգմանութիւնը, որ բոլորովին համաձայն է միւս վկանների ցուցմունքներին:

Մէնք գիւղացիներս հարկեր ենք վճարում ոչ թէ միայն թուրքերին, այլ և քրդերին, որոնք ամեն տարի իրանց վրաններով և հօտերով զալիս են մեր լեռները և ստանում են մեզանից ոչխարներ, ձիեր, կաթ, պահիր—միով բանիւ ամեն բան, ինչ որ մէնք ունինք: Բայց որովհետեւ անցող տարի մէնք ոչինչ չունէինք, այդ պատճառով և ոչինչ չտւինք:

Պաքրանլի քրդական ցեղը այդ հսրկերը պահանջեց Սեմալ և Նէնիկ գիւղերից, բայց մերձումն ստանալով՝ յարձակեց գիւղացիների վրայ և ոյժով խլեց ու քշեց բոլոր անասունները: Գիւղացիք գանգաւուցին տաճկական գնդապետին, որ 100 զինուորներով բանակ էր զրել գիւղի մօտ. բայց այդ սպան մերժեց օգնել զիւղացիներին և զինուորների օգնութեամբ անասունները յետ առնել քրդերից. ուստի գիւղացիք զէնք վերցրին և քրդերի ետևից ընկանակաց յետոց, որի ժամանակ երկու քուրդ սպանւեցին, բոլոր անասունների հօտերը յետ խլեցին: Վնդապետը երկու սպան ած քրդերի

մարմիններն ուղարկեց Մուշ, միևնոյն ժամանակ լուր տալով թէ հայերն ապատամբել են. միևնոյն ժամանակ այդ զնդադեսը զրել էր իր իշխանութեան, թէ հայերը սպանել են այդ երեսու քրուերին ևր աչքի առաջ՝ և թէ ամեն բովէ կարելի է սպասել որ նրանք ապատամբեն ու յարձակւեն կայսերական սակաւաթիւ զօրքերի վրայ:

«Մենք արգէն առաջուց լսել եինք որ տաճիկները Մուշով սպատրաստում են մեր զիւղերի վրայ յարձակւելու, որովհետեւ մեր բարեկամքիւրդերը մեզ ասել էին թէ տաճիկները փորձել են նրանց զրգուել մեր զէմ: Այդ լուրերից մի շաբաթ յետոց մենք տեսանք որ զօրքերը յարձակւեցին Սէմալի ու Շէնիկի վրայ. ստիլւած թողեցինք մեր բնակարանները և փախանք Գելիկուզանն զիւղը: Յայց քրդերը յարձակւեցին այդ զիւղի վրայ և այլեցին տանուտերի տունը: Գիւղացիք սարսափած այստեղից էլ փախան և 15 օր սպատապարւեցին Անդօք սարի վրայ, որտեղ զինուորները եկել են միջնորդ լինելու մեր և քրդերի մէջ և, խոստանալով մեզ իրենց սպաշտպանութիւնը և կեանքի ապահովութիւն, հրաւիրեցին մեզ վերապառնալ մեր զիւղերը: Մենք երկու մարդ ուղարկեցինք—Պետրոսին և Մովսէսին, որ իմանան թէ այդ խոստումներին կարելի է հաւատ լնծայել: Զօրքերի բանակը Գելիկուզանումն էր: Մեր լիազօրներին շատ լաւ ընդունեցին տաճիկ իշխանաւորները և նրանց յետ ուղարկեցին մեզ իմացինելու որ եթէ: Հայ զիւղացիք վերապառնան իրենց տեղերը, նրանց կատարեալ ասկահովութիւն կը շնորհի, իսկ որոնք յամառութիւն: կ'անեն և չեն վերադառնալ՝ նրանք կը պատժը լինեն: Մեր պատգամաւորները վերադարձան և այդ բարի համբաւը բերին մեզ. տաճիկները նրանց նոյնողէս խոստացել էին թէ Սէմալ Շէնիկ և Գելիկուզան զիւղերը նորից կը վերանորոգւեն և կողաւած կայքերը կը վերապարձնւեն:

«Այս խոստումները լսելով՝ Սէմալի քահանաց Տէր-Օհաննէսը 300 զիւղացիների հետ գնաց տաճկական բանակը: Սակայն այդքան հայերից միայն Աւագ անունով մի առեւտրական հայ հրաշքով ազատւեց մահից, և մենք նրան մեզ հետեւ բերել ենք, որ ձեր աչքով տեսնեք նրան. միւսը՝ որ նոյնողէս ազատւել է, բայց որ իր մարմնի վրայ 12 վերք ունի առաջած տաճկական սւիններից՝ Շէնիկից՝ Զոհրայի տղայ Պիտ Օհաննը նոյնողէս եկել է մեզ հետո: Եռներում

ֆացած միւս գիւղացիները դեռ ոչինչ չդիտէին իրենց 300 եղբայրների վիճակի մասին, որովհետև դեռ լուրի էին սպասում։ բայց հաւատալով Պետրոսի և Մովսէսի խօսքերին, թէ նրանք արդէն վերագարձել են իրենց աները, իրենք էլ շտափեցին տաճիկներին անձնատուր լինել։ Բայց թէ ինչ քաշեցին այնտեղ, այդ արդէն յայտնի է Եւրոպացին։

«Զինւորները բարձրացան լեռները և կոտորեցին այնտեղ մնացած գիւղացիներին և շատ քչերը կարողացան փախչել և այն էլ այն գիւղացիք են, որոնք դառւում են այստեղ։

«Տալւորիկ գիւղի բնակիչները, որոնք մասնակից չեին մեր կուտին, հաւատացած էին թէ իրենց հանգիստ կը թողնեն, բայց զիշերն այդ գիւղը ենթարկեց յարձակման և կրակի մատնւեց։ Մենք գիտենք և ձեզ ամենամձիշդ տեղեկութիւններ կը տանք՝ թէ որ զիւղերն են այլեւել և աւերել, թւով քանի են, և խնդրում ենք ձեզ զալ մեր երկիրը և անձամբ համոզւել թէ մեր ասածը նշմարիս է։ Մենք միայն մի բան ունինք աւելացնելու, այն է որ մեր կրած գժբաղութիւնների մեղաւորները քիւրգերը չեն, ընդհակառակն՝ նրանք, բացի մի քանի ցեղերից, ամենքն էլ մեր բարեկամներն են և մինչև անդամ մեղ պաշտպանում էին աաճիկ զինւորներից։ Այրւած է և աւերւած 16 եկեղեցի, 8 ուսումնարան, 1357 տուն։ Գիւղերում միայն մնացել են մի քանի հոգի, որոնք քաղցից մեռան։»

Աս զեկուցումն ստորագրած են 14 հոգի, սկսած Գրգոյի որդի Զաքէից մինչև Արթինը։

Այս փաստաթուղթը և վկաների ցուցմունքները սաստիկ տպաւորութիւն են արել պատգամաւորների վրայ։

Սակայն, դէմ Անգլիան, ինչպէս մեր այս յօդւածի սկզբումն էլ ասացինք, դորձում է ոչ միայն Քննիչ Յանձնաժողովի արդիւնքներին սպասելով, այլ և անկախ։ Յանձնաժողովը իրա կարգով, հանրացին խիղճ՝ իրա կարգով։ Այդ հանրացին խղճի համար բաւական են համարւում արդէն ձեռք բերւած սասոյդ տեղեկութիւնները։ Լաւ թարգման է հանդիսանում հանրացին կարծիքի այդ

տրամադրութեան Դէյլի Նիւսը իւր մի յօդւածում, վերհազրած և ջմարտութիւնը պիտի պարզեի։ Այդ յօդւածում, որ մենք ամբողջապէս այստեղ առաջ ենք բերում, Դէյլի Նիւսը մի զնահատութիւն է անում (հարկաւ ոչ առաջին անգամը!) մեծ ծերունի Գրադունի բարձրացրած ձայնին և ապա վերջացնում իւր խօսքը պատասխնով այն անձերին, որոնք քարոզում են մէկ ապէտ է սպասել Քննիչ Յանձնաժողովի քննութեան վախճանին։

«Ո՞րքան էլ ծեր լինիմ, սական զգալարաններս այն աստիճան չի բթացել, որ չվրոգիմ Հայաստանի թշուառ կայութեան նկարագլուր կարդալիս։ Անցեալ տարւաչ գրեթէ վերջին ժամին Հովարդենում առած ալդ անմոռանալի խօսքերն են, որ մի հոչակաւոր պատկերան նիւթ է արել իւր մի աղնիւ նկարի համարո։ Զօն-Տէնմիլը՝ իշխան Բիամարկին իրբ նաւից հեռացող զեկավար պատկերացնելուց լեռոց դեռ ոչ մի բան չէր նկարել, որ այնքան արժանի լիներ ընդհանուր հիացման, ինչ քան որ արժանի է միստր Գլադտընի պատկերը «Պանչ»-ի վերջին համարում։ Դա մի հրաշալի կենդանագիր է։ Սական քիչ է միայն ինդադանագիր անհանել դրան։ Դա մի ձօն է, մի նւեր հանձարի կողմից՝ հանձարին և մարմնացումն այն ամիշտ հոկող արթնութեան, որ նւիրած է խաղաղութեան դործերին։

Միստր Գլագութընը Բաղարացոց մատին ճառելիս ասում էր, «Երանք հաղիւ են համարձակւում առ Երկնակին Հայրն ամբանալ իրենց աշքերը», Միստր Գլագութըն աղասից նրանց անտաճնիլի վիճակից, այժմ հագիրն են ապաւինւած նրա հզօր օդնութեան։ Այսօր նա պաշտօնի մէջ չէ բայց աչժմ կարող է աւելի ազգու զօրափիդն լինել լօժարս միա կոռապարութեան, քան թէ առաջ, երբ կառավարութիւնը չէր կամենում ականջ դնել նրա ձախինո կամնում իւր զրական երկերին նւիրած այդ ալենոր պետական անձը անսոր էլ ամենակորովի գործիչներից մէկն է Կորոպակի և Ասիակի քաղաքաբեկան հարցերի քննութեան մէջ։ Ասում են թէ Սովորանը այնքան անզուշութիւն է ունեցել, որ պահանջնել է մեր թագուհու կառավարութիւնից դատապարտել միստր Գլագութընի վերջին ճառը։ Մեր կարծիքով՝ ալդ տեսակ ով պահանջ արհամարական պատասխանի անգամ արժանի չէ։ Կորդ Բիկոնսֆիլզն այն աստիճան կամակատար էր, որ փութաց ուրանալ միստր Գլագութընի ընթացքը 1877 թարկանին կանին։ Եւ ինչ եղաւ դրա հետեանքը։ Այն եղաւ, որ 1880 թւականին Միացեալ ովետութեան յոզովուրդը դատապարտեց լորդ Բիկոնսֆիլզն Այս օրւանից մի կես զար ՚ի վեր միստր Գլագութընը, նեազովից մի քանի մասնաւոր նամակներ գրելով լորդ Աբերգինին, ՚ի չիք զարձրեց առել Բոմբակի գարշնելի բռնակալութիւնը և աղասեց նեազովի բանտարկւած-

ներին։ Նէապոլի թագաւորը պահանջել էր, որ վաս կոչեն այդ նամակ-ները։ Լորդ Պալմերուտընի պատասխանն այն եղաւ, որ նա, որպէս ար-տաքին գործերի նախարար, այդ նամակների պատճենը Վեհափառ Թա-գուհու բոլոր դեսպաններին ուղարկեց։ Մինչդեռ միասր Գլազուռնը ոչ ալ ինչ էր, բայց միան մի սակ անդիմացի, որ նստած էր Նէապոլում։

Հայոց դէմ գործած չարութիւնները միենոն ծիծաղելի և անմիտ ներքումները յառաջ բերին, ինչ հերքումներ որ գտել էին բոլղարացաց դէմ գործած դազանութիւնները։ Մի քանի չնչին թերթերի թղթակիցներ, իրենց տնամուռն բարեկամներին կուր հաւաս ընծալելավ, հասարա-կեցին, թէ ոչ մի բան չէ պատահել Սասունում։ Մի լայտնի ծովակալ դրեթէ համոզւած է, թէ տաճիկ զինւորն ամեններն ընդունակ չէ որ և է բանութիւն և կամ պիղծ բան անելու Կիսամուրձկան պարապ տպաններն և իրենց անձն ՚ի վաճառ հանող շրջմուկի վաշանները հարկաւ չէին կո-րող ալլ կերպ վարելու բայց եթէ զարմանք լայտնել, որ հեղ ու խո-նարհ քուրդերն և երկանամիտ թուրքերը մինչեւ այժմ համբերում են խոռվասէր հայերին։

ԱՅս վասահ եմ, ասում է մի թղթակից, որ էական ֆակտերը ճիշտ են։ Մենք ունինք արդէն վահնի, Երզումի, Սըւազի և Գլազուռքիրի հիւ-պատունների պաշտօնական զեկուցումները, որ թէն տակաւին չեն հրա-տարակւած, բայց զիտեհնը որ հաստատում են մամուլի հաղորդած սոս-կալի դէպքերը։ Ունինք ականատես վկանների ամսթանելի ցուցմունքներ։ Ոնչինք Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի թղթերն և Սասունի մօտերքում զանող կաթողիկ և պրոտեստանտ միսիօններների նամականին։ Բացի այդ՝ և զա ամենասոսկալին է, ունինք նոյն իսկ թուրք զինւորների վկանու-թիւնը, զինւորների, որոնք անձամբ մասնակից են եղել կոստրածին։

Մենք լսում ենք, թէ պէտք է համբերել, մինչեւ որ ճշմարտութիւնը լայտնի և քննութեան հետեւնքը հրատարակւի։

Համբերութիւնը լաւ բան է, քանի որ կարելի է համբերել։ Բայց խմասակութիւն և վմարութիւն կը լիներ ուրանալ ճշմարտութիւնը միան այն պատճառով, որ Կոմմիսիան զեռ ձան չէ հանել։

Հայաստանում գտնող հիւպատուններն ինչ բանաւոր հիմք ունին աղաւագելու կամ թիւրելու դէպքերի նկարագլուր, քանի որ նրանք պա-տփանաստու, իրաղետ և իրենց պատիւն ու վարկը բարձր զասող ար-ժանահաւաս մարդիկ են։

Միւս կողմից՝ Կոմմիսիակի անկողմնակալութիւնը դեռ չտու կասկա-ծելի բան է։ Նա առվթանի ազատ կամքով չէ նշանակւած, ալլ միայն մի ակամակ զիջումն է Անդլիաչի, Ֆրանոիաչի և Ռուսաստանի պահանջներին։ Կոմմիսիաչի անդամները թիւրքեր են և մահմեդական, նրանց զաղա-փարներն այն մասին, թէ ինչ կերպով պէտք է վարել քրիստոնեաց

հպատակների հետ, և արդի քաղաքակրթութեան ոկզբունքները՝ անհաշտելի բաներ են: Սակայն եթէ նրանք ուզենան էլ անկողմնակալ հանդիսանալ, շատ քիչ էաջողութիւն կ'ունենան արդ բանում: Տեղական պատունեաներից նրանք հարկաւ չեն քաշիլ, բայց ինչ կը մնալ նրանց անելի եթէ կոտորածների դլաւուր դրդիչները նոզն խկ Պոլսում նասած լինին, կոմմիտիան ոչինչ է, քանի որ չարագործները կարող են պաշտպանութիւն դանել Կոմմիտիաի անդամներից շատ զօրել շրջաններում:

Մեղ կը մնայ սպասել, որ Անգլիակի, Թրանսիլվանի և Ուռուսոսանի հիւպատոսները մի ազնիւ և համարձակ կարծիք լաւանեն: Բայց նրանք Կոմմիտիաի անդամներ չեն: Եթէ մենք ուզիլ ենք ըմբռնել նրանց դիրքը, նրանք չունին իրաւունք ոչ վկաներ կանչելու, ոչ նրանց հովանաւորելու, ոչ էլ պահանջելու, որ ցուցմունքներ անեն: Այնու ամենամեծին սուլթանը և նրա խորհրդականները կարող են մի քանի մասին աներկից լինել. այդ այն է, որ եթէ Կոմմիտիան լիովին ճշմարտախօս չգուրս գաց այն ժամանակ նրան մի ուրիշ կոմմիտիա կը էաջորդէ: Ճշմարտութիւնն անպատճառ պիտի պարզէի, և կը պարզէի, մարդասպանները պիտի պատճին, և կը պատճին: Տաճիկների բոնակալութեան մահագործ ժամի արդէն հնչել է Հայաստանում, ինչպէս որ հնչել էր սրանից տասնույն տարի առաջ Յոլդարիակում:

### ՆՈՐ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Մեր նախկին յօդւածներում այսպիսի վերնադրով զլուխ չկարբայց մենք ստիպւած ենք տեսնում նաև այդպիսի զլուխ բաց անել այժմ, երբ արդէն ընդհանրապէս վկայւած է այն նոր վտանգը որ սպառնում է աաճկա-հայերին մահմեդականների ֆանատիկութիւնքումից: Այդ վտանգը նորանով իրական է, որ արդարեւ Տաճկա-Հայաստանի բազմաթիւ մասերում մահմեդական տարրը թւով աւելի մեծ է հայերի թւից: Հայերի ներկայ վիճակում, ուր նոքա պետութեան մեջ բռնում են նւաճւած ազգի գիրքը, թւի պակասութիւնը աւելի ես խրախուսում է մահմեդական մեծամասնութեան՝ բռնութիւններ զործ գնելու ապառամբ համարող փոքրամասնութեան դէմ: Մանաւանդ անդիմական թղթակիցները, որպէս նաև հայկական թերթերի ստացած տեղեկութիւնները, հաստատում են որ փորձեր եղած են հայերի վրայ յարձակումներ գործելու: «Մուրճա-ի թղթակիցը մեզ հազորդում է մի այդպիս գէպքի մասին, որ եղած է Կարինում (Երզրում): Ակարնոյ մեջ,

զբում է մեզ մեր թղթակիցը մարտի վերջերքից, մոլեռանդ Թախաճի զադէի, Խալիլ օղու և զոցա նման շէլսերու, իմամներու թելաղրութեամբ զրգուած թուրք խուժանը յարձակում գործեց (որ օրը?) հայոց վրաց. բարեբախտաբար կառավարութիւնը փութաց զինու զօրութեամբ ցրել երեք հազարէն աւելի հրոսակները, վերահաստատել առերևոյթ խազաղութիւն, որ պիտի տեէ մինչև Քննիչ Յանձնաժողովի հեռանալը: Այս ենթադրութիւն չէ, այլ իրողութիւն, որ թուրք պաշտօնեաչք յայտնի կը խօսին—«էւլէր եանը իսէ, սիշանէլէրէտէ զալմասին» (եթէ տները պիտի այրւին՝ միներին էլ թող չմնայ), այսինքն՝ եթէ հայերը մի աեսակ ինքնափարութիւն ստանալու լինեն, պիտի կոտորւին: Ահն ու սարսափը պաշարած է մեզ, ոչ ոք վստահ չէ իւր կեանքին վրաց. ժամէժամ կը սպասենք մի ահեղ կոտորածի: Թէև ցիշեալ ընդհարման մէջ մեծ կորուստ չեղաւ, մասնաւորներ վիրաւորւեցան, բայց ամենքիս սիրաը կը զողայ. զարհուրելի է հայոց վիճակը: Փոլիս (ոստիկան) Մուրագն ամեն օր, հայի հագուստով, սներ, վարժարաններ, սրճարաններ մտնել. ելուրով, սուստ ու անիրաւ ցուցումներ կուտայ իւր պէտքուն՝ իրեն անհաճոյ անձանց մասին...»:

Մենք մանաւանդ տրամադիր ենք հաւատալու մեր թղթակցի ասութեանը, որ հայերի գէմ զրգումները վկայւեց նաև անգլիական սպարլամէնտում զեռ ևս փետրւարի կիսին, ինչպէս այդ կը տեսնեն մեր ընթերցողները սպարլամէնտի 15-ին փետրւարի նիստում եղած հետեւալ հարց ու պատասխաններից:

Փետր. 15-ինիստում միստր Չանին գլ հարցմունք արաւ արտաքին գործերի մինիստրի օգնական սեօր է. Գրէցին թէ արգեօք յայտնի՞ է մինիստրի օգնականին, որ Մարաշի իսլամական ժողովուրդն այն աստիճան զրգուած է հայերի գէմ, որ մահմեդականները մի քանի անգամ խումբ խումբ անցել են փողոցների միջով և երգել. «Հէնց այսօր պիտի կոտորենք գեաւուրեներին, և արգեօք անմիջական ազգարարութիւն պիտի արւի՞ և. Դամն, որ նա փութաց քրիստոնեաններին սպառնացող վտանգի առաջն առնելի»

Սեօր է. Գրէց.—Վեհափառ Թագուհու կառավարութիւնն սեղեակ է որ Մարաշի մահմեդական ժողովրդի մէջ արդարեւ մի հակառիստոնէական զրգուութիւն կայ: Վեհափառ Թագուհու դես-

աղանն արդէն հրաւիրել է թիւրք կառավարութեան ուշադրութիւնը իրերի այդ վիճակի վրայ թէ Մարաշում և թէ Հալէպի վիլայէթում, և Բ. Գուռը խոստացել է քննութիւն անել:

### ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

Հայ բանտարկեալների թիւը մինչ այժմ մեզ անհնարին եղագէթ մօտաւորապէս հաշւել: Դոյցա թիւը, սակայն, շատ մեծ պիտի լինի: Մեր խօսքը, ի հարկէ, միայն իրը յեղափոխական անբաստանւածների մասին է: Առ այժմ շատանում ենք անդլիական պարլամէնաի համայնքների ժողովում մարտի 21-ին և 22-ին տեղի ունեցած հարց ու պատասխաններով այդ նիւթի մասին:

Մարտ 21-ի նիստում միսար Շւէն հարցնում է արտաքին գործոց մինիստրի օգնականին—արդեօք նա ուշք զարձրել է «The Daily Telegraph»-ին Վիեննաից մարտի 16-ին հազորդած ուղղեկութեան վրայ որ մօտ երեք ամիս առաջ յանիրաւի իրեր յեղափոխականներ ամբատանւած 150 հազերը թէպէտ և արձակուում են Ամսալիալի բանտից, բայց նահանգապետ Բէքիր փաշան զանազան պատրւակներով հնար է գանում վերստին ձերբակալել անպարտ մարդկանց, և եթէ այդ բոլորը ճշմարտի, արդեօք Վեհապիառ թագուհու կառավարութիւնը մտադիր է Բէքիր փաշալի պաշտօնանկութիւնը պահանջել:

Աեօր Էդ. Գրէ է.—Ամսալիալի միւթէսէրիֆ Բէքիր փաշան նշանակւած է անցեալ զարման մի ուրիշ պաշտօնէի անդ, որին թուրք կառավարութիւնը հեռացրել է պաշտօնից այն կամաւորկան ձերբակալութիւնների համար, որ նա արմէլ էր Անցեալ նուեմբերի անուն ծանուցուց թէ ձեռբակալածներից շատերին արձակել են: Մեծարդու անդամի ակնարկած գեկուցումը կ'ուղարկւի Վեհապիառ Թագուհու Ա. Պոլսի գեսպանին քննութեան համար:

Մարտ 22-ի նիստում Միսար Շւէն հարցնում է արտաքին գործոց նախարարի օգնականին—արդեօք ճիշտ է Ոէլտերի հեռադրի բերած լուրը, որ լուս է տեսել առաւտօնեան թերթերում, թէ ոուլթանը կարգողել է արձակել Թուրքիալի ասիական նահանգների բերդերում կալանաւորւած հայ հոգերականներին, և արդեօք նա ձեռնհան է որ և է առանձին բան հազորզել սուլթանին վերագրեալ ալլ զիւութեան գործի նկատմամբ:

Աեօր Էդ. Գրէ է.—Ուրախ եմ, որ ձեռնհաս եմ առել, թէ տեղիկութիւն ենք ստացել Պոլսից, որ մինչեւ այժմ գատապարտած բոլոր հայ հոգերականները միաժամանակ պիտի Պոլսի բերւին՝ իրենց գործին վերաբերեալ դատական թղթերով հանդերձ: Բացի այն անձերից, որոնք

ամբաստանւած են իքրեւ մարդասպանութեան և կամ ուրիշ քրէական ոճիրների լանցաւորներ, միւս բոլորն էլ կ'արձակւին՝ հէնց որ բարի կեանք վարելու երգումն տան:

Միսար Ֆ. Ս. Սալիւընսը.—Թող ներւի ինձ հարցնել մեծարգու լինուլէնին՝ արդեօք աեղեակ է նա որ վերջին աշնան լայտարարւած էր 700 կալանաւորների արձակումն, իսկ լինու նրանցից 500-ը վերստին բանտարկւած են տեղական պաշտօնեաների հրամանով, և արդեօք միջոց ներ պիտի զործ զրւին, որ աւոպիսի դիմուածներ չկրկնուին այլ ես:

Անօր Է. Գ. Ք. Ք. Դ. —Դա մի բոլորովին ուրիշ հարց է, և ինձ հարկաւոր կը լինի աեղեկութիւն հաւաքել:

Եթէ ուրեմն դեռ ևս անցեալ տարւայ աշնանը յայտարարւած էր 700 բանտարկեալների արձակումն (թէև նոյանից 500-ը նորից ձեռ բակալւեցին), առա որքան մեծ պէտք է լինէր դեռ ևս այն ժամանակ բոլոր հայ բանտարկեալների թիւը, և որքան ու որքան պիտի աճած լինի այդ թիւը անցեալ աշնանից դէս, հայկան խնդրի յուգւած ամփսներում. և խնդիրը միայն ներկաց բուղչում բանտարկւածների թւի մէջը չէ, այլ թէ որքան հոգի հայերից առհասարակ բանտարկութեան ենթարկւած են եղել՝ արձակւածներ և ոչ-արձակւածներ միասին!

### ՀԱՅ ԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Որքան է, սուկայն, յառաջացել հայկական խնդիրը? Հայկական խնդիրը, մենք պիտի կրկնենք, Սասունի կոտորածը քննելու և այս ու այն յանցաւորներին պատճելու մէջ չէ միայն. այլ այդ քննութիւնը, կառարւածի հրապարակ հանելը, պէտք է գայ նորաստելու հայկական խնդրի լուծման: Խոկ խնդիրը կայանում է տաճկա-հայկական հահանգներին ինքնավարութիւն տալու մէջ, այս կամ այն շափով՝ բայց այնպէս, որ Սասունի պէս կոտորածները, ժողովրդի ահ ու սարսափի մէջ սպանելը, անիրաւ և մեծաքանակ ու սիստեմական բանտարկութիւնները հայի, իբր ազգութեան, իրաւացի պահանջների համար,—այն ամենը այլ ևս աեղի ունենալ չկարողանան:

Գեկտեմբերին Թիւրքիան, իրան տեսնելով կանգնած Եւրոպացի պղար զայրոցթի հանդէպ, Սասունից եկած լուրերի առիթով, խոսումն արաւ թրքա-հայկական երեք նահանգները միացնել մի

առանձին կառավարութեան ներքոյ, ինչ-ինչ ինքնավար իրաւունքներով։ Կառավարով թէ Թիւրքիայի խոստումներին ինչ զին պիտի տրւի, Անդլիան չհանդսացաւ և շարունակեց իւր պատճուղման գործը։ Թիւրքիան, իւր առաջին խոստումից մի սմիս յետոց պարտցրեց մի լուր թէ Սուլթանը Կարաթէօդրրի փաշային յանձնարարել է իրան մի ծրագիր ներկայացնելու Հայաստանի ինքնավարութեան։ Բայց Անդլիան նաև այդ բանից ոչ միայն չհանդրտացաւ, այլ աւելի կատաղեց նոր ձեռք բերւած հաւաստիքներով այն զարծուրելի անցքերի մասին, որոնց հետքերը ծածկել էր ջանում թուրք կառավարութիւնը—մեծ յոյսեր գնելով իւր նշանակած Քննիչ Յանցնաժողովի վրայ։ Խակոր սա է, որ ուժորմների իրագործումը—ահա քանի ամիսներ են անցել—մի քայլ առաջ չ գնացած։ Բ. Դուռը շատանում է միայն նոր-նոր լուրեր պլորակնելով ուժորմների համար նշանակւած յանձնաժողովների մասին, ուժորմների, որ տաճիկ կառավարութիւնը երբէք իրագործել չ կամենալ առանց մեծամեծ ճնշումների մեծ պետութիւնների կողմից։

Թիւրքիան իւր այդ խաղերի մէջ խրախուսւած էր զգում Գերմանիայի, Ֆրանսիայի և մանաւանդ Առուսաստանի բունած դիրքով, որոնք Անդլիայի ինքնավարութեան առաջարկները չէին պաշտպանում։ Թիւրքիան նաև յոյս էր տաճում թէ Անդլիան, միւս պետութիւնների սառնութեան հանդիպելով, ինքը բաց կը թողնի իւր առաջարկները։ Բայց Անդլիան, նոյն իսկ իւր կառավարութեան բերանով, քանիցս խոստովանել է անհնարաւորութիւնը Հայաստանը առանց ուժորմների թողնել։

Անդլիան միայն աշխատում է Ֆրանսիայի և Առուսաստանի գործակցութիւնը ձեռք բերել, ինչպէս այդ երեսց Անդլիայի արտաքին գործերի մինիստրի օգնական սեօր Գրէցի՝ միստր Նւէնին տած պատասխանից պարլամէնտի մարտ 21-ին նիստում և մանաւանդ արտաքին գործերի մինիստր լորդ Կիմբերլէցի ընդարձակ ճառից, որ նա խօսեց մարտ 28-ին Անգլօ-հայկական ընկերութեան ներկայացուցիչներին։

Ահա այդ կարեոր տեսակցութեան հանգամանքները։

Մարտի 28-ին Լոնդոնում մի պատգամաւորութիւն ներկայա-

շաւ անդլիական արտաքին գործերի մինիստր լորդ Կիմբէրլէյն  
հարց հարցի առիթով:

Պատգամաւորութեան կազմակերպողն էր Անգլօ-Հայկական ընկերութիւնը: Նա բաղկացած էր բազմաթիւ անձերից, որոնց թւում պարլամենտի նշանաւոր անդամներ, անխոտիր թէ ազատամխտ և թէ պահպանողական կուսակցութեան պատկանող, ինչպէս ուր Պիզ, Չանինդ, Սմիտ, Շեան, դնդապետ Սէնդիս, զոկտոր Կլիֆորդ, Էրտոն, Զորջ Ոխտուէ, զանազան կրօնների և դաւանութեան ներկայացուցիչներ, որոնց թւում հոչակաւոր կարդինալ Վոդանը, Ոռչուտերի ետիսկոպոսը, զանազան գիտնական հաստատութիւնների, ուսումնական և բարեգործական բնկերութիւնների նախագահներ, ինպէս ուր Էդւարդ Ռոստէլ, Վեսէլիցկիյ, զոկտոր Ռոջէրս և այլն:

Լորդ Կիմբէրլէյն՝ իր օգնական ստատուսէկրէտար Գրէյլի հետ միասին բնդունեց պատգամաւորութիւնը արտաքին գործերի մինիստրութեան տան մէջ:

Անգլօ-Հայկական ընկերութեան նախագահ Ստիւէնսոնը, ներկայացնելով պատգամաւորութիւնը և նրա անդամներին, մի երկար ժառ խօսեց, որի մէջ յայտնեց, թէ այդպիսի մի պատգամաւորութիւն, որ բաղկացած է զանազան քաղաքական կարծիքների և կուսակցութիւնների, ինչպէս և ամեն տեսակ դաւանութիւնների և ընկերական ամեն շրջանների ներկայացուցիչներից, այն մեծ առաւելութիւնն ունի, որ ոկտոք է համոզէ ազնիւ լորդ մինիստրին և թագուհու կառավարութեանը, թէ ներկայումս այն հարցը, որի մասին եկել է խօսելու պատգամաւորութիւնը, զբաղեցնում է անխոտիր կիրարով ամբողջ անգլիական հասարակական կարծիքը:

Այս տեսակ մի ազգեցիկ պատգամաւորութիւն, ասաց Ստիւէնսոնը, ոչ թէ նպատակ ունի շփոթութիւն պատճառել կառավարութեան, այլ համոզել նրան, որ այժմ պէտք կայ աւելի եռանդուն գործունէութեան և այլ ևս անկարելի է թոյլ տալ շարունակել այն անտանելի կառավարութիւնը, որ հաստատել է Հայաստանում 16 տարուց ի վեր:

Ապա Ստիւէնսոն երկար բացարեց, թէ ինչ պատասխանապես թիւն է յանձն առել Անդլիան թէ միւս պետութիւնների հետ միասին ընդհանուրպէս, Բերլինի դաշնադրի հիման վրա, և թէ

առ անձնապէս ինքն՝ Կիպրոսի պաշմանազրով, և արծարծեց այն միաքը, թէ անգլիական կառավարութեան գործունէութիւնը պէտք է հիմնւած լինի ոչ թէ Բիթլիսի նահանգում պատահած ողբալի դէպքերի և Սասունի կոտորածի վրա, այլ այն բազմաթիւ դէպքերի վրա, որոնք կուտակւած են 16 տարիներից ի վեր և որոնք արձանագրւած են հիւպատոսական գեկուցագրերի մէջ:

Նեշտելով այն հանգամանքը, որ Տ. Գուռը իր սովորութեան համեմատ աշխատում է ձգձգել գործը, Ստիւէնսոն աւելացրեց, որ անգլիական մամուլի արագ և եռանդուն գործունէութիւնը, որ կարողացաւ հիմնաւոր փաստեր հայթհացթել կառավարութեան, զօրեղ ֆակտ է տալիս կառավարութեան ձեռքը՝ գործել արագ և վճռական կերպով թիւրքերի վերաբերմամբ:

Գալով այն բէփորմներին, որոնք պէտք է մտցնեն Հայաստանում, Ստիւէնսոն հազորգեց լորդ Կիմբերլէցին պատգամաւորութեան մշակած ծրագիրը, որ բազկացած է 4 կէտերից և որը պարունակում է այն սկզբունքը և հիմքերը, որոնք ցոյց են տւած նուբար փաշացի ծրագրի և 1880 թ. սեպտեմբերի 7-ի հաւաքական յայտագրի մէջ:

Ստիւէնսոնից յետոց խօսեցին կանոնիկոս Գոր, պրոֆէսոր Ալար Բոժ, դոկտոր Ալիքորդ, կանոնիկոս Վելթէրֆորս, Էյտոն, սըր Փորժ Սիտեէլ, սըր Պիզ, Շւան, Զաննինգ և այլ շատերը:

Մինիստր լորդ Կիմբերլէց պատասխանեց երկար և ընդարձակ ձառով որի մէջ հետեւալ մաքերն արտայացեց:

Ամենից առաջ անգլիական արտաքին գործերի մինիստրն ասեց, որ ջերմ կերպով համակրում է այդ տեսակ մի պատգամաւորութեան, բացց իր դիրքը թոյլ չէ տալիս իրան մանրաման բացատրելու աց համակրութեան հիմքը. այդ դիրքը և իր պատասխանատու պաշտօնը ստիւլում են նրան, բացի դրանից, կշռել իր խօսքերը և չափաւոր լինել իր լեզուի մէջ:

Ելդ առաջաբանից յետոց, պատասխանելով առենաբանների խօսած ձառերին և յարուցած հարցերին, նա զլսաւորապէս կանդ առաւ երեք կէտերի վրա, այն է 1) բէփորմների անհրաժեշտութիւնը, 2) Ֆրանսիացի և Առևսաստանի գործակցութիւնը և 3) զոր ծաղրելի միջոցները:

Առաջին կէտի վերաբերմամբ նա ասեց, որ կառավարութիւնը ամեն միջոցներ ձեռք է առել, որ Սասունի քննութիւնը կառարելապէս եւրոպական և ոչ թուրքական քննութիւն լինի, այն է լիտակատար և արգար. այդ նպատակին համելլը կարելի է ապահոված համարել, քանի որ քննիչ յանձնաժողովին մասնակցում են թագուհու կառավարութեան, ինչպէս և երկու բարեկամ եւ բոփական մեծ պետութիւնների—Ռուսաստանի և Ֆրանսիայի պատվիրակները, որոնք առանձին առանձին և միմեանցից անկախ զեկուցագրեր կը ներկայացնեն:

«Սակայն ներկայումս ամենքին զբաղեցնող հարցը միայն Սատունի մասնաւոր դէպքը չէ, ասաց լորդ Կիմբերլէց, այլ ինչպէս շատ իրաւացի նկատեց ճառախօսներից մինը, միստր Ստիւէնսոնը, զինաւոր նպատակը սկզբ է լինի ապահովել հայերի կեանքը, տացաւածքը, կրօնը և պատիւը: Խողիրը միայն նրանում չէ, թէ պէտք է պատժել զազանութիւնների հեղինակներին, այլ ինչպէս անել, որ այդ զազանութիւնները այլ ևս չկրինւեն և առհասարակ մի մշտական զարման գտնուի: Միակ դարմանը բէֆորմներ մտցնելն է, բայց այդ հարցը շրջապատւած է գժւար պարագաներով:

«Թէև,—շարունակեց Կիմբերլէց, մեր գեսապանը սըր Ֆիլիպ Աէրին հաւասարացնում է մեզ, որ իր ընկերները, Ռուսաստանի և Ֆանսիայի զեսպանները, կատարելապէս համոզւած են բէֆորմների անհրաժեշտութեան մէջ և, հարկը պահանջած ժամանակ, նրանք նոյնչափ ջերմ և անկեղծ կերպով կ'օգնեն, ինչպէս օգնեցին Մուշի քննութեան գործում, բայց բէֆորմների իրագործման հարցում զինաւոր գժւարութիւնը պէտք է նկատել այն, որ Հայաստան ասելով չպէտք է հասկանալ մի երկիր, որ բնակւած է բացարձակապէս հայերով: Ոչ, նա ասիական Թիւրքիայի մի մասն է, որ սովորաբար կոչւում է Հայաստան, որտեղ մեծ թւով հայեր կան և շատ տեղերում խիս կերպով բնակւած են. սակայն այդտեղ կայ և մի մեծ մահմետական ազգաբնակութիւն, որը մի քանի նահանգներում մեծամասնութիւն է կազմում: Կան նոյնպէս և շատ հայտական համայնքներ, ցրւած թիւրքաց կայսրութեան ասիական մասի զանազան տեղերում և, թէև շատ էլ բազմաթիւ չեն, բայց նրանք նոյնպէս արժանի են համակրութեան և չպէտք է անտես առնւեն:

Երկրորդ կէտի զերաբերմամբ Ախմբէրլէց յայտնեց, թէ պըլ-խաւոր նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ունենալ ֆուսաստանի և Ֆրանսիայի գործակցութիւնը և նրանց հետ համերաշխ գործել, քանի որ նրանք ևս անմիջական կերպով շահ ունեն արեկեան խնդրում։ Կոյնակէս ինկատի պէտք է ունենալ Բերլինի դաշնագիրը ստորագրող միւս պետութիւնների կարծիքը։ Ոչ մի կահած չկայ, որ այդ պետութիւններն եւս չեն խնայի իրանց գործակցութիւնը, երբ ժամանակը հասնի։ Գալով Առուսաստանին և Ֆրանսիային, նրանք արդէն խոր կերպով համոզւած են, որ վտանգաւոր է անվտօնուս թողնել երկրի այժմեան վիճակը և որ պէտք է մի ազդու գարման գտնել չարիքի դէմ։

«Ենչ վերաբերում է հիւսկատոսական զեկուցագրերի հրատարակելուն, այժմ այդ անյարմար է անել և պէտք է սպասել, մինչքննութիւնը վերջանայ, որովհետեւ նրանց հրատարակութիւնը ներկայ սպարագաններում կարող է մնասել զործին»։ Գալով վերջին և ամենաէ ական հարցին — միջոցների գործադրութեան — լրդ Ախմբէրլէց յայտնեց, որ պէտք է բոլորը համոզւած լինեն և հաւատան, որ կառավարութիւնը ամենայն ուշադրութեամբ և լրջութեամբ կը քննի և կը լսի առաջարկելի միջոցները և, երբ ժամանակը հասնի, նա անպատճառ և ձեռնունայն չի լինի։

«Այժմ գեռ անհն սրին է յատուկ և որոշ միջոցներ առաջարկել. մի բան միայն պարզ է, այս այն է, որ սուլթանի հպատակների մեծ մասը դժո՞ր են յոռի կառավարութիւնից և մինչև այն աստիճան, որ ստիպւած են յեղափոխական մտքեր մնուցանել։ Պէտք է ամեն կերպ աշխատել, որ հայ ժողովուրդը աղնիւ և արդար կերպով կառավարւի, և այն ժամանակ նա, թշնամու փոխքէն, նրա նեցուկը կը դառնայ։

«Ժողովուրդը այժմն շատ իրաւացի պատճառներ ունի դժո՞ր լինելու, ուստի թէ սուլթանի և թէ Եւրոպայի շահերը պահանջում են, որ վատթար վարչութիւնը և կառավարութիւնը արմատախիլ լինի և ահա պէտք է գործ զնել արմատախիլ անող իրական միջոցներ։ Այդ ուղղութեամբ և կը գործի անգլիական կառավարութիւնը միւս պետութիւններից ոչ մինը մտադիր չէ սուր կերպարանք տալ արեւելեան հարցին, իսկ այդ նպատակին հասն-

լու համար անհրաժեշտ է մի իրական դարման գոտել Թիւքիայի այժմեան վատթար վարչութեան վերջ դնելու համար։ Մեծ յոյս կայ, որ գործը աջողութեամբ կը պահպիւ։

Անդիայի հաստատակամութեանը հայկական խնդրում նպաստում են Սասունի կոտորածի այն մանրամասնութիւնները, որ յայնուեցին անդիական մատմուլի մէջ, մանրամասնութիւններ, որոնք պէտք է ազդէին նաև այլ պետութիւնների վրայ։ Եւ իրօք, Պոլից հաղորդեցին ապրիլի 5-ին Դէյլի Նիւսին հետևեալը. «Որպէս երևում է, երեք (անդիական, ֆրանսիական և ռուսական) պետութիւնների գեսապանները փոխադարձ համաձայնութեամբ յանձնարարեցին որը Ֆիլիպպ Կերրիին խօսել սուլթանի հետ հայկական խնդրի վերաբերեալ և գլխաւորապէս, ի հարկէ, սեփորմների ծրագրի մասին, Միւս գեսապաննութիւնների մէջ նկատում է մեծ փոփոխութիւն իրանց վերաբերմունքի մէջ դէպի հայկական խնդիրը վերջին շրս թէ հինգ շաբաթներում։ Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ բոլոր գեսապաննութիւնները սասացել են ուղղակի կամ կողմնակի տեղեկութիւններ, որ Հայաստանում անօրինակ սարսափներ են կատարւել։ Եւ հէնց այդ պատճառով ներկայումս բոլոր մնացեալ զիւնադէանները միացել են Անդիայի, Առուսիայի և Ֆրանսիայի ներս կայացուցիչների հետ հայկական խնդրում։»

Այս տողերը գրելու ժամանակ, իբր վերջնագոյն զարգացման աստիճան հայկական խնդրում՝ կարող ենք հաղորդել զիւնաւորութեան մասին՝ Պոլսում գումարել եւրոպական մեծ պետութիւնների ներկայացուցիչներից բաղկացած մի կոնֆերենցիա, որի գլուխ գալուն դէմ, սակայն, ամեն ջանք գործ է գնում Թիւքիան։

Ահետիբ ԱՐԱՍԽԱՆԵԱՅՑ:

## ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ս Ե Խ Ե Ա Ն Ի

Եկող տարւակ թատրոնի խնդիրը.—«Ներկաչացումներ և դերասանական ճանապարհորդութիւններ».—Թատերասէրների ներկաչացումների առի. թով.—«Նովոտի» լրագրի մի լուրը.—

Եկաւ գարունը, գարնան պիտի յաջորդեն ամառն ու աշուն, և հայ թատրոնի ապագայի խնդիրը գարձեալ պիտի մնայ անորոշ։ Ո՞ւմ պարտքն է հայ թատրոնի մասին մտածելը... Մա Խովին, որ, շատ չնչին բացառութեամբ, մինչև անգամ հազիւ է հետաքրքրուամ նրա գոլութիւնով, ինտէլլիգէնցիալին, որի մի մասը անտարբեր է և արհամարող, իսկ միւս մասը պահանջում է (կամ աւելի ճիշտ է ասել՝ պահման է զնում) թատրոն յաճախելու համար անուղանառ բեմի վերակ զուրս բերել Աղամեաններ, Հրաչեաններ, Աստղիկներ և Գարաքաշեաններ։

Մամուլի մեծամասնութեան անտարբերութիւնը թատրոնի մասին խսկապէս գատապարտելի է։ Մամուլը մեղանում արդէն դրաւած ոնէ իւր պատշաճաւոր տեղը, և հասարակութեան բոլոր դասակարգերը համարեա միշտ ու աւճնորդուում նն նրա ներչնչումներով։ Աւս ալսպէս լինելուց լիտոյ իրաւունք ունեինք պարբերական մամուլի ուշագրութիւնը դարձնելու հայ թատրոնի վերակ, մի հիմնարկութեան՝ որ տաննեակ տարիների աշխատանք է կուլ տւել, որի համար թափել են անչափ ջանք ու քըրտինք և որ իւր գոլութեան ընթացքում սպառել է քանի թանգագին կեանքեր։

Անտարբեր ինտէլլիգէնցիալի մասին չարժէ անգամ խօսելու նրանք հաջութեան խորթ որդիքն են, իսկ միւս մասը, որ քիչ թէ շատ ցոց է տալիս թէ ինքը հետաքրքրուամ է իւր կեանքի առօրեակ խնդիրներով աշնանսակ պահանջներ ունէ թատրոնից՝ որին 20—30 տարուց լիտոյ էլ դժւար թէ կարողանակ բաւականութիւն տալ։

Թատրոնը այնպիսի հիմնարկութիւններից է, որի գոլութիւնը պահանջանելու համար հարկաւոր են բազմատեսակ ուժեր, որոնց մէկն ու մէկի բացակալութեամբ գործը կը տումէ։ Նորան գործակիցներ են հարկաւոր նիւթեականը ապահովելու համար, հարկաւոր են անձեր թատրոնի կենսական մնունդի, ուշէրառուարի խնամքով պատրաստութեան համար։ Հարկաւոր են անձեր բևմի զեղագիտական (էսթէտիկական) մասին հարկաւոր համար, և ալսն։ Կա նկատի ունենալով ալս բոլորը, մննք կարծում ենք իւրաքանչիւր թատրոնի բարեկամ չպիտի զլանակ իւր աջակցութիւնը ալդ համակրելի հիմնարկութեան նույնելու, իսկ թատրոնի վերակաղմու-

թեան մասին մտածնը, կարծում ենք, պատկանում է դերասաններին, եթէ միայն՝ նրանք մի կողմ թողնեն, իրանց անձնական ես-ը և կոպէկի հաջիմները հաչ թատրոնին մասամբ զոհելու քաջութիւնն ունենան, այդ է պահանջում թատրոնի օգուտը. այդ է պահանջում իրանց շահը. Սրանով հանդերձ ցաւով լիշում ենք՝ անցեալ տարւակ ընկերական պատմաններով ներկայացումներ տալու գեղեցիկ մտքի չիրագործւելը, որի պատճառը մի-երկու դերասանի «եմն» էր, որից տուժեց թատրոնը ի վնաս նոյն այդ դերասանների. Մենք կրկնում ենք՝ դերասաններին մնում է համախմբել, զօրելացնել խումբը և միացած ովքերով գործի ձեռնարկել, խոկ հասարակութեան հասկացող անդամները, չենք կասկածում որ, թէ բարուապէս և թէ նիւթապէս կ'աջակցեն զործի լաջողութեան:

Այս խնդրին մենք կրկն կը վերադառնք միւս անդամ.

Մեծ պասւակ ընթացքում խաղացւեց «Մեծապատիւ մուրացկաններո բաւականին թուլ անսամբլով. 'ի զէպ, պէտք է վիշել, որ ապէ պիեսի ներկայացումը պահանջում է լաւ անսամբլ, քանի որ բոլոր գործող անձնից իւրաքանչիւրը իրանից ներկայացնում է մէկ մէկ սրոշ տիպ: Խոկ պէտքի ներկայացնելիք Մոլիէրի «Ագան»-ը չկալացաւ, խնչպէս լատարարւած էր լրացիրներում, խմբի մի քանի անդամների մէջ պատահած գժտութեան պատճառաւ, 5—6 հոգուց բաղկացած դերասանական խոմբ և գարձնեալ կոյւ և դարձնալ գժտութիւնս...:

Մեծ պասւակ ընթացքում ուղերւեց պ. Պետրոսեան միանակ Բաթում և Բագու և տւեց մի մի ներկայացումն: Խոկ Զատկի տօներին պ, պ. Սարգարեան և Վրուր Բագւում խաղացին Պարոնեանի «Բաղդասար աղբար» ը: Մօտ օրերումն պ. Պետրոսեան մի քանի ընկերներով ուղերւել է նրեան՝ ներկայացումներ տալու:

Վերջին ժամանակներում, երբ ընդհատւած են կանոնաւոր դերասանական կազմակերպւած խմբի ներկայացումները, մասնաւոր ձգտումն կա թատերաւէլմերի մէջ բեմ դուրս գալու բատկապէս բարեգործական նպատակով տրատող ներկայացումներին, այդ պատճառով էլ իրաւացի տըրտունջ է չափուաւում դերասանների շրջաններում, որ, սիրովների բեմ դուրս գալով իրանց բոլորովին անաւես են առնում, քանի որ իրանք, շարունակ թիմն ծառաւէրլով, ամենայն իրաւունքով պէտք է գոնէ մի չնչին վարձատրութիւն սպասէին նոյն բեմից, և մեր թատերասէրները իրանց բարեկ, ընկերութեան, հաջուհեաց, և այլ բարենպատակ հիմնարկութիւններին նպաստելու եռանդից բորբոքւելիս, չպէտք է մոռանաւն և այն մի քանի դերասաններին, որոնց պաշտօնը իրանք՝ կատարելով խում են նրանց ստանալու վարձատրութիւնը և ծառաւէրլով մի բարենպատակ զործի, միս կողմից անգիտակցաբար վեասում են մի հիմնարկութեան, որ իւր

կարգին ևս պէտք ունէ օգնութեան, իսկ նորա պաշտօնեաները՝ վարձատրութեան:

Մեր թատերասէրները որքան կամենան թող բեմի վրաէ ցոյց տան իրանց չնորհքը և ընդունակութիւնները, բայց մի և նոյն ժամանակ դիրասաններին էլ անտես չառնելու չափ իրաւախոհ լինեն:

Վարս ամոի սկիզբներին Պետերբուրգի բականի «ՀՈՎՈՍՏ» թերթում մի լուր հրատարակեց, որը, հազ թատրոնական գործին հետամուս եղողների շրջաններում չափազանցութիւն արած չենք վնի, եթէ ասենք՝ զայրութ պատճառեց: Այդ լուրի մասին մեր թերթերից և ոչ մինը, մինչեւ անդամ նրանք, որոնք պեղաբեստ, «թատրոն», «երաժշտութիւն» և այլ վերնագիրներով բաժիններ տնեն, չգիտենք ինչ պատճառով, կատարեալ լրութիւն պահպանեցին: Յիշեալ ուսու թերթը հաղորդում է որ պ. Արէլեան Պետերբուրգում ներկայացրել է Զիակօմէտատիի «Քաղաքական մահ կամ օճրագործի ընտանիքը» դրաման, որի մէջ պ. Արէլեանը կատարել է «Կորրագո»-ի դերը: Այս լրատուն համեմատութեան է դնում Արէլեանի գերակատարութիւնը հանդուցեալ Ազամեանի հետ և առաջինի խաղը անհամեմատ բարձր դանում Ազամեանից, վերջինիս անւանելով «Մալինիի և Ռոսսի ընդօրինակող»: Մինուն ժամանակ լրատուն ցաւում է որ պ. Արէլեանի ներկայացմանը շատ քիչ հաեւը ներկաւ են գտնել և այն:

Մենք, աւելորդ համարելով հանդերձ այդ անհեթեթ լուրի ամեն մի տողը հերքել, անուամենանիւ հրաւիրում ենք չիշեալ լրագրի խմբագրութեան՝ որ թերթէ իւր լրագրի 12 տարի առաջ հոչակաւոր հազ ողբերգակի մասին լայտնի րէցէնգէնստ Զուլիօի գրածները, և համեմատէ ան ժամանակւալ իւր գովիստները աղժմեան համեմատութեան հետ: Փառք Աստուծոց, Թիֆլիսեցիք տեսան հանդուցեալ Ազամեանի Կորրագօն մի քանի անդամներ, տեսան և անցեալ տարի պ. Արէլեանին միմնոյն դրում բայց համեմատութիւններ անել Ազամեանի նման հանձարի և պ. Արէլեանի մէջ, նշանակում է զուրկ վիճել բոլոր ովին գեղագիտական հաշակից, և նոյն իսկ վիրաւորել իրան, պ. Արէլեանին, որ ինքը, վիճելով մի ժամանակ հանգուցեալ Ազամեանի հետ միննոյն խմբում, անշուշտ կը խոսափի այդ օրինակ համեմատութիւններից և կը ճանաչէ իւր համեստ տեղը Կրկնում ենք «ՀՈՎՈՍՏ» լրագրի լրատուփն շատերի ասածը, որ նա իւր այդ լուրով վիրաւորել և կատարեալ «արջի ծառակութիւն» է մատուցել պ. Արէլեանին: Մենքուրացողներից չենք պ. Արէլեանի ընդունակութիւնը և աշխատասիրութիւնը, բայց հեռու ենք համեմատութիւններ անելուց

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Զին-համոնական պատերազմի վերջը։ Սիմոնոսէկի հաշտութեան դաշնը։  
Հակլական խնդիրը։ Բյումարկի լոբելեանը։

Եապոնիացի կողմից Զինաստանին յայտարարւած պատերազմը  
վերցացաւ Սոմոնոսէկում ստորագրած հաշտութեան դաշնով, որի  
մասին հաղորդեց հեռագիրը ներկայ ապրիլի 5-ին։ Եապոնիան  
դուրս եկաւ այդ պատերազմից յաղթանակով, և անքան փայլուն,  
այնքան վճռողական յաղթանակով, ինչպիսին պատերազմի սկզբում  
ոչ ոք չէր գուշակած։ Եապոնիացի զէնքի գերազանցութիւնը, ճիշդ  
է, յայնի եղաւ զեռ առաջին պատերազմական զործողութիւննե-  
րից, բայց որ Զինաստանը այդ աստիճանի անզօր պիտի հանդիսա-  
նար գէթ զիմադրութեան համար իւր սեփական հողի վրայ—ահա  
այդ է, որ նոր պարզեց։ Զորս հարիւր միլիոն բնակիչ ունեցող  
Զինաստանը ստիսլած եղաւ, եօթ. ամիս պատերազմից յետով,  
հաշտութիւն խնդրել և ընդունել որ և է երեսուն միլիոն բնակիչ  
ունեցող բայց անհամեմատ աւելի լուսաւոր հակառակորդ երկրի թե-  
լադրած պայմանները։

Հաշտութեան սրայմանները սոքա են, որքան առ այժմ յայտ-  
նի է. 200 միլիոն տակէ, որ ասել է մօտ  $1\frac{1}{2}$  միլիարդ ֆրանկ,  
պատերազմական վարձատրութիւն։ Կորէան յայտարարւում է ան-  
կախ թագաւորութիւն։ Ֆորմոզա կղզին Զինաստանը տալիս է եա-  
պոնիացին առ միշտ տրւում է Եապոնիացին նաև Լիաթոնդի թե-  
րակղու հարաւայցին մասը (այդ երկիրը սեպի պէս մոնում է Զի-  
նաստանի և Կորէացի մէջ տեղը)։ Եապոնացիների առեւտուրի համար  
բացւում են Զինաստանի հինգ նաւահանգիստները; որոնց թւում  
նաև Զինաստանի մայրաքաղաք Պեկինի նաւահանգիստը. ամբողջ

Զինաստանում հաղոնացիք իրաւունք են ձեռք բերում հիմնել  
բամբակի գործարաններ և զբազւել այլ արդիւնաբերութիւններով:

Դոքա են հաշտութեան պայմանները: Դոցա մէջ կարւորա-  
գոյններն են Լիաթոնզի թերակղզու մի մասի նւաճումը և ապա-  
առեւորի և արդիւնագործութեան վերաբերեալ կէտերը: Լիաթոնզի  
թերակղզին նւաճնելով՝ Եապոնիան ոտք է զնում Ասիայի ցամաքի  
վրայ. իսկ դա ունի ահազին պատերազմական և հետեւապէս քա-  
ղաքական նշանակութիւն. գորանով Եապոնիան ձեռք է բերում  
քաղաքական ազգեցութիւն Զինաստանի և մանաւանդ Կորէայի վեայ,  
որ հարեւան է Ոռւսաստանին. իսկ միւս պայմանի միջոցով՝ Եապո-  
նիան սպառնում է Եւրոպային և Ոռւսաստանին՝ Զինաստանի շու-  
կայից գուրս վանաել Եապոնական ասլրանքները, փոխարինելով նոցա-  
եապոնականով, քանի որ Եապոնիան ընդունակ է, որպէս պնդում  
են, նոյնքան կատարեալ ապրանքներ պատրաստելու որպէս Եւ-  
րոպան:

Սիմոնոսէկի հաշտութեան դաշնագրով մանաւանդ իրան վնաս-  
ւած է համարում Ոռւսիան, որի ահազին ձեռնարկութիւնը՝ Սի-  
բիրի հսկայական երկաթուղին՝ պիտի մնուցւէր Ոռւսիայի և Զի-  
նաստանի մէջ եղած և լինելիք առեւորով և Եւրոպայի տրանզիտ  
ապրանքների փոխարրութիւնով: Այժմ, երբ Ոռւսիայի և Եւրոպայի  
առեւարի տեղը Զինաստանի լնդարձակ շուկայում հաւանականօրէն  
Եապոնիան պիտի բռնէ՝ Սիբիրի մեծածախս երկաթուղին բնակա-  
նաբար կորցնում է իւր ենթագրած արժէքը թէ Ոռւսիայի և թէ  
Եւրոպայի համար, (այդ երկաթուղին դեռ պատրաստ չէ, բայց աշ-  
խատութիւնները սկսւած են):

Բացի գորանից, իւր տարած յաղթութիւնով և իւր հետեւանք  
Սիմոնոսէկի հաշտութեան դաշնագրի՝ Եապոնիան այժմեանից ներ-  
կայանում է որպէս ծագող արեգակ Ասիայի հորիզոնում, իւր առաջ-  
նակարգ մրցող ոյժ մանաւանդ Ոռւսիայի և Անգլիայի հետ՝ Ասիայի  
քաղաքական գործերում:

Դոցանից, սակայն, Անգլիան, լաւ կշռելով իւր օգուտն ու  
վնասը, տրատւնջ չի յացանում Սիմոնոսէկի հաշտութիւնից և ու  
էլ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները. մինչեռ Ոռ-  
սիան, Ֆրանսիան, որպէս նաև Գերմանիան, որոնք նոյնպէս առե-

արական շահեր ունին Զինաստանում, բողոքում են և պահանջում Սիմոնոսէկի հաշտութեան դաշնի մէջ որոշ փոփոխութիւններ:

Բայց ինեղիրը նոր ծագած լինելով՝ այդ մասին աւելի որոշ բան հաղորդել անկարող ենք: Մինչ մի ամիս պետութիւնների պահանջները աւելի կ'որոշեն:

Զին-եասպոնական զործերի մէջ ցոյց տւած անհամերաշխութիւնը Անդլիայի մի կողմից, և Ռուսիայի ու Ֆրանսիայի մէջ միւս կողմից, — վախենալու է որ իւր ազգեցութիւնը անէ նաև հայկական խնդրի ընթացքի վրայ Խնչակս յայտնի է, Անդլիան ջանքեր է անում հայկական խնդրի մէջ ձեռք բերել Ռուսիայի և Ֆրանսիայի աջակցութիւնը, ինչպէս որ այդ երեք պետութիւններն են որ ներկայացուցիչներ ունին Սասունի կոտորածի համար նշանակւած քննիչ յանձնածողովի մէջ: Անհամերաշխութիւնը մի կարեոր խնդրի մէջ, ինչպիսին չին-եասպոնական զործերն են, իւր անդրադարձումը կարող է ունենալ նաև մի այլ կարեոր խնդրի մէջ, ինչպիսին է հայկական նահանգների ինքնավարութեան խնդրը, որի մէջ Ռուսիայի աջակցութիւնը Անդլիային շատ կարեոր է: Բարեբախտաբար Անդլիան չին-եասպոնական խնդրում Խապսնիայի հետ հաշտ լինելու ձեն է բանեցնում, այլապէս թէ կառավարութիւնը և թէ հասարակաց կարծիքը Անդլիայում ստիպւած կը լինի հայկական խնդրի լուծումը աւելի հեռաւոր ապագային թողնել: Իսկ այդ հանգամանքը — բաղդաւոր հանգամանքը պիտի համարել:

Ոչ ամեն քաղաքական գործիչի յօրելեանի տօնելը — քաղաքական կարեորութիւն ներկայացնելու ոյժն ունի: Այդ բացառութիւնների թւին պատկանում է Բիսմարկի ծննդեան 80-ամեակի տօնումը մարտի 21-ին: Բիսմարկի յօրելեանի խնդրին մասնակից եղաւ ամբողջ Գերմանիան — թէ կառավարութիւններ և թէ ժողովուրդ — որը դրական և որը բացասական մոքով: Բացասական գիրք բնողների մէջ կարեորագոյնն էր Գերմանիայի կայսերութեան պարլամէնտը, թէն միայն մինչքսան ձայն մեծամասնութեամբ վճռեց, որ պարլամէնտը չմասնակցի յօրելեանին: Այդ մեծամասնութիւնը կազմւեց

գլխաւորապէս կղերական կուսակցութեան պատճառով, բայց նաև սոցիալիստ կուսակցութիւնով, լինացիներով և այլն Եւ այնու ամենայնիւ Բիսմարկի յօբելեանը համագերմանական կերպարանք ընդունեց այն ջերմ մասնակցութեան պատճառով, որ ցոյց տւին գերմանական ովետութիւնները՝ կայսեր գլխաւորութեամբ, և ազգի մի ստւար մասը։ Կայսրը սակայն աւելի հեռուն գնաց՝ հանդէսին տալով զինւորական կերպարանք, և մինչև իսկ ցոյց անելով ֆրանսիացի դէմ։

Պարլամենտի բացասական քւեն Բիսմարկի յօբելեանին մասնակցելու մասին աեղիք տւեց շատերին մտածելու թէ իբր ժամանակակից Գերմանիան գորանով դատապարտեց Բիսմարկի ներքին քաղաքականութիւնը՝ նորա մինիստր եղած ժամանակ։ Սիսալ եղրակացութիւն։ Եւր մեծ զծերով Բիսմարկի նաև ներքին քաղաքականութիւնը կենդանի է այժմ այսպէս, որպէս և առաջ էր

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆԵՅ: Հակիական լինողրին նւիրւած մեր լօդւածի պատճառ-  
սով որ բռնում է 75 էջ, ներկայ տեսքը ևս շատ ստւարացաւ,  
պարունակելով 210 էջ. անպիս որ լունւարից դէս՝ մինչ ներկայ  
համարը «Մուրճ»-ը տևից ճիշտ աէնքան, որքան պիտի տրէր  
չըրս համարներում: Որպէս զի ակտ հանգամանքը չաղղի չա-  
ջողով տեսրերի լուս տեսնելու ժամանակի վրայ, մենք վճռեցինք  
ներկայ ստւար տեսրը լուս ընծալել իր մարտ-ապրիլի համար  
(№ 3—4), և ազգպիտով հնարաւորութիւն ձեռք բերել մազոի  
տեսրը վաղօրոք հրատարակել: Ազդ կերպ միան դէմն կ'առնուի ան-  
ոչ ցանկալի երեսթին, որ սովորական էր զառել վերջին երեք տա-  
րիները, երբ մի որ և է ամսւակ տեսրը լաճախ լուս էր տեսնում  
չաջողով սմոխին: Ազմ, երբ ապրիլի համարը լուս է տեսնում արդէն  
ապրիլի 20-ին, հնար կամ մալիսինը լուս ընծալել մալիսին, լունի-  
սինը՝ լունիսին, մինչդեռ եթէ առաջաւ կարգով զնար գործը՝ ամեն  
համարի լաջորդ ամիս ընկնելը Դաեւ ապագանում կանոն կը զառնար,  
որ, սական, ցանկալի չէ:

ՎԱՐՁԱՑՈՂ ՅՈՒԽԱԾՆԵՐ: «Մուրճ»-ի ներկայ համարում վերջանում են  
նախկին համարներում սկսւած մի շարք գրւածքներ—«Կեօթէի «Հեր-  
ման և Գորոթէա», Շանթի «Յրազ օրեր» և Տէր-Միրաքեանի «Քա-  
ղաքակրթութեան պատմութիւնը տևույթան գործում»:

«Հերման և Գորոթէան» մի վէտ է, որի մէջ, ինչպէս ընթեր-  
ցողները նկատած կը լինեն, տիեզերանոչակ գերմանացի բանաստեղծ  
Գեօթէն (ծն. 1749, † 1832) տիպարներ է դուրս բերում ան-  
ձերի, որոնք գեր են կատարում փոխադարձ սիրով վրայ հիմնած և-  
լսելացի ամուսնութեան մէջ, ուր ամէն մի գործող անձը մի-մի  
բարոչական կատարելատիալ է դուրս բերւած: Դա, կարելի է ասել,  
ամուսնական իմաստութեան մի գիրք է: Ազդ վէտը մէկն է Գեօթէի  
ամենալավատնի գործքերից, գրւած 1797, իւր ստեղծագործութեան  
երկրորդ (գասական և իդէալական) չրջանում: Դա թարգմանւած  
է բոլոր քաղաքակրթ ազգերի լեզուներով:

Խւր «Երազ օրեկում» Շանթը արտաքաջառում է իր մի եղակի դրող մեր մէջ, որը զիտէ սիրով արտացայտութիւնների ամենամուլք ելեհները գեղարեհստորէն վիրարուղրել, Խւր արդ վիպի մէջ Շանթը մնում է այն, ինչնա է խւր ոտանաւոր բանաստեղծութիւնների մէջ—սիրով երդիչ, նոն խոկ և մանաւանդ երբ ալդ ուրը պատրանքների աշխարհումն է (Համենատէք Շանթի տուածին ոտանաւոր «Մուրճ»ի մէջ, 1894 № 4 «Էս պատրանքը սիրեցի»): Արդ վեպը իւր վրա ուշադրութիւն է դարձնում նաև իւր լեզով, որը որքան բնական է նոնքան էլ ճոխ է, մի ճոխութիւն, որին գրէթէ անսովոր է ոռասահաւ ընթերցողը:

Յ. Տէր-Միրաքեանի լոդւածը «Քաղաքակրթութեան տատիճանները ուսաւցման գործում» մի լուրջ վործ է՝ մատնանիշ լինելու հալոց պատմութեան ան շրջանների վրայ, որոնք ցոց են տալիս հալոց ազգի քաղաքակրթութեան շրջանները և որոնց չաջորդականութեանը պիտի համապատասխանի նաև մանկան դպրոցական կրթութիւնը, աճապէս որ մանուկը զպրոցական կեանքում անցնի նման շրջանների միջով, ինչպէս որ անցել է մարդկութիւնը:

ՍԱՍՈՒՆԻ ՔԱՐՏՔԵԶԸ: Մենք սասցանք «Մուրճ»-ի ներկալ համարում շարունակող «Աստուն» լոդւածի հեղինակ ալ. Սէլանից մի քարտէղ Սասունի ալբւած և քանդւած մասի, ուր առանձին գծւած են նաև Անտօք լիուլ, Գեօլի զլիսում Ֆըռֆըռ քար լիուը և Ծովասարի Սանուկ բերդի կոմ Քաղքիկ'ի ուրւագիծը: Մենք մտադիր ենք այդ քարտէղը հրատարակել լատուկ բաժանողագրութեամբ հայթաթելիք միջոցներով, «Մուրճ»-ի բաժանողների համար 28 կոպէի (ապստի մարկաններով), խոկ ոչբաժանողների համար՝ 56 կոպէի որ կարելի է ուղարկել նոյնպէս պոստի մարկաններով:

Պր. Սէլանը եղած է Սասուն 1887—1888 թւականներին, ինքն անձամբ շրջած է երկրի մի մասը, լինելով, ինչպէս տեղեկացած ենք, ուսուցիչ Սէմալ զիւլում:

Ցիշեալ քարտէղը միծագիր է, չափան է 42×32 սանտիմէտր

---

ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԱԿՈՍԻ: Վեհափառը, ինչպէս տաել էինք «Մուրճ» № 2-ր գիւարւարի 25-ին, ուզնուրւեց Նոր-Նախիջևան, ուղեկցութեամբ արդ քաղաքից եկած չատուկ պատգամաւորութեան, այդ քաղաքի կողմից պատրաստած արտակարգ գնացքով: Փետրւ. 26.ին հասու Ուսուով, որի երկաթուղալին կացարանում դիմաւորեցին Վեհափառին մարմնաւոր իշխանութեան ներկավացուցիչները, նոր Նախիջևանի, Տաղանդոգի և աչլ հասարակութիւնների ներկաւա-

ցուցիչները, Ռոստովից, բազմաթիւ կառքերի ու ձիւորների ուղեկցութեամբ, Վեհափառ ուղենորւեց Նոր-Նախիջևան, Քաղաքը զարդարւած էր զրոշակներավ, խանութները փակւած էին: Վեհ. Հազարեալը իջաւ ու Խուսաւորիչ եկեղեցին, ուր ազօթելուց լեռու, զիմեց պ. Կրասինիկեանի տունը, որ պատրաստւած էր Վեհի բնակութեան համար: Գիշերը հրավառութիւն տեղի ունեցաւ, ժողովրդի ոգեսրութիւնը անհուն:

Մարտի 8-ին Վեհափառի ուղեկիցներից վախճանւց Երևանի թեմի փոխանորդ Կիւրել եպիսկոպոս Արագեան, որը նկատւած էր որպէս Վեհ. Կաթողիկոսի մերձաւորադոյն անձը:

Ապրիլի 9-ին Վեհափառը ճաշի էր հրաւիրել Նոր-Նախիջևանի հասարակութիւնից մինչ հարիւր հոգի, որոնց մէջ էր և պատւառոր հիւր նկարիչ Յովի: Ավագովակիւ Վեհափառը պարապեց բաժակներ Խուսաց Կատեր և ապա պ. Ավագովովկու կինաց. Վեհափառի թողաւութեամբ, քաղաքագլուխ պ. Բալաբանեան, ճաշի ժամանակ (մինչդեռ Կաթողիկոսը մի այլ սենեակ հանդսուանալու էր դժացած) հաւաքեց հանգան ակութեամբ 20.000 ռուբլի, որ տրենած տնօրինութիւն Նորին Վեհափառութեան: Կաթողիկոսը խօսք խօսեց, որ վերաբերմունք ունէր հալ գողթականներին և Սասոնի կոտրածին:

ԾԱՄԱԽՈԼ ԹԵՄԱԿԱԼ, ԱՌԱՋՆՈՐԴ պաշտոնապէս հաստատւած է Մակար եպիսկոպոս Բարխուղարեան, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանի տեղ:

ՍԵՆԱՏՈՐ Ա. Ֆ. ԿՈՆԻ Ներկայումս Կովկասումն է, մեր երկրի գատաստանական հաստատութիւնները վերաբննելու համար:

ԱՆՑԱԹՈՒՂԹ ՀԱՅ ՀՊԴԵԿՈՒՐԱԿԱՆ ՆԵՐԻՆ: Ներքին գործոց նախարարութիւնը հնարաւոր է գտել, իբր բացառութիւն ընդհանուր օրէնքից արտասահմանեան անցաթղթերի մասին՝ թուլատրել տեղական նահանգապետներին անցաթղթ տալ այն հաջ-լուսաւորչական ոչ եպիսկոպոսական աստիճանի հեգեստականներին, որոնք Ս. Էջմիածնի պիտողի կողմից կը նշանակեն արտասահմանում հոգեոր պաշտոնների համար, միաւն թէ ամեն անդամ անցագիր տալիս՝ նահանգապետները այդ մասին լավտոնեն ի տեղեկութիւն օտար զաւանութիւնների դեպարտամենտին և Կովկասի գլխաւոր վարչութեան:

ՀԱՑՈՅ ԵՒ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ: Հայերի օրինակից զրդւած վրացիք ևս զիստաւորութիւն են լրացած զրականական ֆոնդ հիմնելու և արդէն իսկ մշակած են կանոնադրութեան ծրագիր՝ կառավարութեանը ներկայացնելու համար:

Հայոց գրականական ֆոնդի ծրագիրը, որպէս լաւտնի է մեր

ընթերցողներին, արդէն մշակւած է և նորա վերջնական խմբագրութիւնը նախապատրաստական ժողովի կազմից լանձնւած է ամսագրիս խմբագրին, որը և պիտի ներկայացնի կառավարութեանը ի հաստատութիւն։ Բայց մեր հայ հասարակութեան ամօթալի անտարբերութեան պատճառով՝ ոչ միայն չն հոգացում լինելիք անհրաժշտ ծախքերը, ալև չեն ծածկւած նորն իսկ այն ծախքերը, որ արդէն եղած են և որոնց մասին թէ վերջին ժողովներում և թէ ամսագրիս էջերում չափանւած է։ Յալտանում ենք, որեմն, որ եղած ծախքը ծածկելու համար տացւած է մինչ այժմ 27 ո. 50 կ. (տես Մուլճ 1894 № 10) + 1 ո. (տես Մուլճ 1804. № 11-12), ընդամենը ուրեմն 28ո. 50 կոպէկ, իսկ միայն եղած ծախքը ծածկելու համար գեռ ևս մնում է տաճանալու 32 ո. 40 կոպէկ։ Յոսունենք որ սա կը լինի մեր վերջին ազգը այս առարկաի մասին և ծրագրւած ընկերութեան համակրողները կ'չտապին իրանց լուսան հասցնել մեզ և դուսնով օր առաջ շտապեցնել կատարելիք զործը։

Ամեն նւիրաբերութիւն և ժողովարարութիւն այլ նպատակի համար պէտք է ուղղել «Մուլճ»-ի խմբագրութեանը։

ԲԱՐԻՔԻ ՄԱՐԴԱՍՏԻԲԱՆԱ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻ ՀՐԱՄԱՐՈՒԿԵԼ է 1894 թւականի մուտքի և ելքի հաշիւը բրոցիւրակազմ (24 էջ)։ Հաշւից երեսն է, թէ Ընկերութիւնը ունեցած է։

Ո. կ.

1. Անձեռն միեւ գումար առ 1.ն լունա	
1894 թ. զուար զբանով.	57.838 45
Տարւակ ընթացքում այդ անձեռնմխելի գումարը աւելացել է նոր կտակներով և մանաւանդ առանձին հաշիւների փոխադրումով . . . . .	21.000 -
Խաղարկական առկոսաբեր տաճուներով որոնց անւա-	
նական արժէքն է . . . . .	4.702 50

Ընդամենը մայր զումար . . . . . 83.540 95

Դրամական միջոյներից տարւակ ընթացքում զըն  
մել են առկոսաբեր արժեթղթեր 14.278 ո. 80 կ., այս-  
պէս որ տարւակ վերջը կար իբր անձեռնմխելի զումար՝

ա. Զուար զբանով . . . . . 64.559 65

բ. Արժեթղթերով . . . . . 18.981 30

2. Դարձւածական զումար՝ (կոպէկները չհաշւած)  
նախկին տարւակ մնացորդներից (2.184 ո.), զրամա-  
գըլիսի առկոսներից (8.024 ո.), արժեթղթերի կտրոն-  
ներից (344 ո.) և տարիեկան անդամներից (330 ո.).

Նկուղներից վարձ (760 ռ.) և անակնունելի աղբիւրներից ըից (580 ռ.), ընդամենը . . . . .	12.227	40
3. Գրադարանական գումար կար 1550 ռ., երես կոմիտից գումացաւ 2039 ռ., ընդամենը . . . . .	3.590	23
4. Պայմանաւոր գումար (բժ. Ռուսականի կիւս- արձանի համար . . . . .	205	07
5. Որդեղրական գումարների տոկոսներից և այլ նւիրաբերութիւններից. . . . .	5.414	36
6. Օժիարի գումար կար 2295 ռ., տոկոս է բերած 198 ռ. . . . .	2.493	16
7. Պահեատի գումարներ իրանց տոկոսիքներով. . . . .	26.243	35
8. Գրականական ֆոնդի լատկացրած է . . . . .	200	—

## Ծախսք եղած է՝

Դպրոցական նովառակներով . . . . .	8.233	—
Գրադարանի համար . . . . .	2.059	97
Որդեղիրների համար . . . . .	580	36
Զքաւոր օրիորդներին օժիար . . . . .	180	—
Պահեատի գումարների տոկոսներից արւած է 1894 ին այլ գումարների տէր զպրոցներին. . . . .	536	38
Ուրիշ ծախսքից . . . . .	1.560	

Ծախսքից գումար . . . . . 13.049 ռ.

Այսպիսով մեր զուրս բերած թւերից երևում է որ Մարդա-  
սիրական Ընկերութիւնը իսկական ծախսք ունեցած է թէ իւր և  
թէ պահեատի գումարներից ընդամենը 13.049 ռուբլու Հարկ ենք  
համարում, ի վերջու, աւելացնել, որ այս հաշիւները մեր ընթեր-  
ցողներին ներկայացնելու համար մենք տոփառած էինք աւելի քան  
մի ժամ աշխատել Ընկերութեան ներկայացրած հաշիւների վրաէ  
Որովհետեւ այլ հաշիւները կազմւած են, թէն գուցէ շատ ճիշդ կեր-  
պով հաշւապահութեան տեսակէտից (այլ թողնում ենք հաշւապահ-  
ներին դատելու), բայց և անսպատակալարմար կերպով՝ ընթերցող  
հասարակութեան և նոխնակէս այլ ընկերութեան անդամների համար։  
Մարդ ուզում է իմանալ թէ ինչ գումարներ ունի Ընկերութիւնը  
այլ և այլ նպատակների համար, և չի գտնում մի էջ, ուր այլ գու-  
մարները նշանակւած լինեն մի ցուցակի մէջ, ուզում ենք իմանալ  
թէ Ընկերութեան գանձարանից իսկապէս ինչ է մսխած այլ և  
այլ նպատակների համար—և զորա փոխարէն գտնում ենք իսկական  
ծախսքից շարքում նաև սինդիկի գումարներ, որոնք ծախսքեր չեն,  
այլ միայն հաշւապահական գործողութիւններ են, հաշւապահնական  
փոխադրութիւններ են։ Որինակ ծախսքից մէջ գրւած է՝ գրականա-

կան ֆոնդի համար 200 ռուբլի, բայց այդ նշանակում է միայն որ ընկերութեան որ և է մատեանում գրւած է այդ նսլատակի համար 200 ռուբլի, մինչդեռ ոչ ոքի չի տրւած։ Եւ ինչու նա ծախք է, որովհետեւ դարձածական գումարների մատեանից 200 ռուբլի գումարը վերցրած է և գրւած գրականական ֆոնդին չատկացրած մատեանի մէջ, Նույնպէս ծախքի մէջ է գրւած 600 ռուբլու մի գումար, որովհետեւ դարձածական ծախքերից այդ գումարը վերցրած է և գրւած պահեստի գամարների մէջ, Ծախքի մէջ է 4.600 ռուբլու մի ազ գումար, որը որդեգրական գումարներից փոխադրած է Ընկերութեան մակր գումարի վրայ, ևալն ևալն։ Ազնաբէս որ մի առանձին աշխատութիւն է պէտք, որ խմացվին իսկապէս մսխածի գումարները, մինչդեռ ազ բանը պէտք է իսկոյն խմացւէր տպած հաշից։ Ազսպիսով, ուրեմն, հաշւատութեան ացմեան ձեր, եթէ ոչ փոխել, գոնէ լրացնել պէտք է։ Ազ պակասը ամբողջապէս չի լրացնում բրոշիւրին կից առանձին թերթի վրայ տպած հախանաշով, որը չգիտենք ինչու տպած է «վաճան 1894 ամին», մինչդեռ զա մի նախահաշիւ է 1895 թւականի համար։ Ազ նախահաշիւ լոդածների դիմաց զրւած նաև համապատասխան խական մուտքն ու ծախքերը 1894-ի համար, բայց անլիակատար և ոչ մանրամասն կերպով։ Ազ պէս օրինակ, այդ ցուցակում ոչինչ չի առւած ոչ զրադարանի, ոչ չքաւոր օրիորդներին օժիալի ծախքերի մասին և այն։

Մի խօսքով, ընկերութեան հաշիւը որքան և ընդարձակ է, բայց պարզ չէ, գոնէ պարզ չի մեզ համար։

Թիֆլիսի ՍՊԴՆԸ Ս. Գլուխ եկեղեցու ելքի և մուտքի հաշիւը 1892-1894-ի համար։ Ստացանք այդ հաշիւը տպած, որ կազմել է այդ եկեղեցու այժմ հրաժարական տւած երեցփախան պ. Աւետիս Վարդապետեանց, վերաստուգութեամբ ընտրւած հաշւատեսների (Առ. Կիսիցեանի և Յ. Տէր-Մարկոսեանի)։

Պր. Աւ. Վարդապետեանի երեցփախ ընտրւելը, որ եղաւ 1892 թւականի մայիսին, արդիսնք էր Հաւաջիմականների ընտրողական շարժման, որոնք ամեն մի հասարակական գործում ձգտում են մշտցնել մաքրութիւն, հաշիւների պարզութիւն, իրերի վիճակի մասին անխարդախ հաշւետութիւն և պարտաճանաչ գործունեութեան հետ միասին՝ պատասխանաւուրութեան զգացմունք պաշտոնեանների մէջ ժողովրդի քննադատութեան առաջ։ Ազ տեսակետով անա պ, Վարդապետեանի ընտրութիւնը մի նորութիւն էր նոյն իսկ Թիֆլիսի համար։ Մեղ ուղարկած տպած հաշիւը գալիս է համոզելու մեջ, որ պ, Վարդապետեանը լիապէս արդարացրել է իրան ընտրողների հաւատը։ Նախ տպած հաշիւ, որ վերաստուգել են երկու ոչ միան-

ընտրւած այլ և միանգամակն արժանահաւատ մարդիկ։ Կրկորդ՝ մուտքի աւելացումը, երրորդ, որ զլխաւորն է, նպատակավարմար գործադրութիւն ստացած մուտքերի, — այդ է եղած սկ. Վարդապետեանի Ընտրւած լինելու արդիւնքը։ Երեք տարի սրբութեամբ վարելով իւր պաշտոնը, պ. Վարդապետեան հրաժարւեց ու հեռացաւ, տանելով իւր հետ գործալ ճոխացրած իւր նախկին պատւական համբաւը և, որ անխուսափելին էր՝ նոյն եկեղեցու հոգեոր պաշտոնեաններից մէկի կամ միւսի խորին ատելութիւնը, առանց որի, մեր քահանապատկան ներկաց կազմութեան հանգամանքներում, ոչ մի բարեկարգութիւն չի կարելի իրազործել։ Նոր երեցիուս ընտրեց պ. Քաղբատ Ալիբէզեանն, որը չափահար է տալիս իւր նախորդի շաւիդով գնալու, շարունակելով նորա սկսած բարեկարգութեան գործը։ Քաջի Ընկերութիւն Թաւրիզում։ Ստացանք այդ Ընկերութեան 1894 թ. (4-րդ տարի շրջանի) հաշվուը վիմագրած։ Հաշվից երեսում է որ Ընկերութեան կենզրոնական ընթերցարանն ունի հայերէն 266 հատոր և 8 հատորում կազմւած 30 մանր գրքովներ։ այլ լեզուներով 66 հատոր դիրք։

Ընկերութեան մասնաճիւղն ունի հայերէն գրքեր 74 հատոր և 14 հատոր 38 մանր գրքովներ միասին կազմած։

Թացի աւդ, Ընկերութիւնն ունի անկազմ դիրքով 17 պարգևական հրատարակութիւններ (13-ը հայ և 4-ը օտար լեզուներով) ումանք սկսած 1891 թւականից մինչ 1894 թ. և ոսմանք միան վերջին մի, երկու կամ երեք տարիները։ Ընկերութիւնը ունեցաւ 1894-ին մուտք 2703 զրան, ելք 2450 զրան։ Առ մէկն լուսւարի 1895 թ. ուներ կանխիկ և ապասիկ գումար 1205 զրան։

(Նկատողութիւն։ Ֆէն վիմագրած թերթը ընթեռնելի է, բայց վայելչութիւնը պահանջում է, որ վիմագրած աւելի կանոնաւոր ձեռագրով գրւած լինի և ոչ անսպէս ինչպէս այդ չափուկ է հին վաճառականների «գաւթար» ներին։ Նաև աւելորդ չէր լինի ոչ պարականէնրի համար մի ծանօթութեան մէջ գնել հաշւի մէջ գործածւած պարականան գրամմինիրի արթէքը քրանկով և ոռւրլի-կոպէկով)։

ՆիմԱԲԷՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՄ ԿՏԱԿՆԵՐ։ Պերեկոպ քաղաքի վաճառական լազար Շերպերեան թողել է կտակ, որի մէջ, ի միջի ալոց, հանդուցիալը նշանակել է գրականական երկու մրցանակ՝ 300 և 200 ոռւրլու, որոնք պէտք է տրւեն ամեն երեք տարին մի անգամ, առաջինը՝ հաջոց պատմութեան և զրականութեան վերաբերեալ գրւածքների, երկրորդը՝ ժողովրդական կամ մանկական ընթերցանութեան գրքերի համար, հայերէն լեզուի։ Մրցումն չափարարել և մրցանակ նշանակելը լանձնւամ է Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան և մանկավարժական ժողովի ընդհանուր վճռին։

Այդ մասին Սիմֆերոպոլի նահանգական գատարանի դատախազը անդեկացրել է Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեանը:

Գանձակիեցի Հալաբեանի (վախճանմեց Բաքւում, թողնելով 100,000 ռ. կարողութիւն) ազրին նւիրել է 5000 ռուբլի զանազան բարեգործական նստատակիներով, մանրամասնութիւնները մեզ լատուի չեն:

Այդի տիկին նույն է Մելիք-Փարագաղաց և անեանց (Թիֆլիսում) նուրբեց Հալոց Բարեգործական Ընկերութեանը 600 ռուբլի, որպես զի զորա տակուներով Կարսի հալոց ուստիմաբանում մի որդեկիր պահելու:

Հանգուցեալ Անդրէաս Խան զամիր եան (Չուշեցի) կանկալ թողել է 1000 ռուբլի Հալոց Բարեգործական Ընկերութեանը Կովկասում, որ նորա տոկուները լատկացնեն չքաւողներին: Գումարը հասցրած է ըստ սրամկանելոյն:

Յարութիւննեանց (Մալիսէ Խաչատրեան, Թիֆլիս) նուրբել է 200 բուբլի Թիֆլիսի Հաւաբետը քաղաքամտուի Եջմիածնեցոց եկեղեցու ո. Մարիամեան օրիորդաց պարոցին:

**ԱՅՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆ:** որ աւելի քան երկու տասնեակ տարի հալոց զպրացներաւմ ուսուցչութիւն էր արած, ներկաէ տարւանից վերջնականապէս թողեց ուսուցչական ասպարեզը, անցնելով մասնաւոր զործի: Պր. Ս. Մանդինեան հալոց մէջ հնագոյն ներկարացոցին էր մանկավարժութեան Հերբարա-Ցիլէրեան սիստէմի, վաղամեռիկ Առաքել Բահամեթրանցի հետ միաժամ: Նա իւր ուսուցչական զործունեութիւնը անցկացրեց մեծ մասամբ Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցում և Ս. Էջմիածնի Գեորգեան ճեմարանում, զլիսաւրապէս որպէս մանկավարժութեան գառատու, կարծ միջոցներով նաև որպէս տեսուչ Շուշւաչ և Ներսիսեան զպրանոցներում և վերջին երկու տարի և մի քանի ամիսը նրամանի դպրանոցում:

**ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՅՈՒՆԵԱՆ:** Անցեալ 1894 թ. դեկտեմբերի 5-ին տօնել է Նոր-Նախիջևանի թիւմական զպրանոցի դահլիճում՝ զպրանոցի հաջոց լեզվի ուսուցիչ պ. Գէորգ Յարութիւնեան Խաչստրեանցի 25-ամեակ ուսուցչութեան չորեկանը, մատնակացութեամբ զպրանոցի հոգաբարձուների և այլ զպրացներում ծառալող հայ և ուսուցիչների և վարժուհիների, որոնք մատուցել են չօքելեարին ուղերձներ՝ թաւշաղատ կազմով: Նոյն օրը, երեկոյեան, ի պատիւ չօքելեարի, ճաշկերպթ եղաւ նոյն քաղաքի վաճառականուց ամիբում:

Ալպիստով, ուրեմն, մի վոքք անձշութիւն կար անցեալ համարում մեր ասածի մէջ, որի հսմաձալն Ներսիսեան զպրանոցի ուսուցիչ պ. Ամիրան Մանդինեանց առաջինը պիտի եղած լիներ՝

հայոց դպրոցների ուսուցիչներից, 25-ամենակ ուսուցչական ծառա-  
լութեան համար ջրելեանի տօնի արժանացած:

ԿԱՐԱ-ՄՈՒՐԳԱՅԻ ՅՈԲԵԼԵԱՆ: Ներկաց մարտ ամսի 15-ին լրացաւ 10  
տարին պլ. Կարա-Մուրգայի առաջին համերգից, որ աեղի էր ու-  
նեցած 1885 թւականին. Ամսիս 25-ին բաքում կազացաւ Կարա-  
Մուրգայի մի համերգը աչտ տասներորդ տարեղարձի առիթով:  
Յօրելենական համերգի աֆիշան ուղարկւած է մեզ. Աֆիշան զար-  
դարած է 10 տարի առաջ եղած խմբի լուսատիպ պատկերով և,  
բացի համերգի կտորներից, բոլանդակում է հետեալ վիճակագրա-  
կան տեղեկութիւնները Կարա-Մուրգայի 10 ամեաց գործունէու-  
թեան մասին. Ազդ տասը տարւաչ ընթացքում կազմել է 22 խումբ  
17 քաղաքներում և տրւել է 91 համերգ, որոնց մասնակցել են  
1220 անձ արական, 260 անձ իգական սեռից և 67 առանձին (սոլո)՝  
երգողներ երկու սեռից. Երգւած են 320 նումբ մշակւած, 67 ին-  
քնուրուն, 28 օրքեստրի համար երգեր և 18 բանաստեղծութիւններ.  
Դոյց մասին ռեցենզիաներ գրել են 22 լրագլուներ. Յիշեալ 17 քա-  
ղաքներն են՝ Թիֆլիս, Բաքու, Աստրախան, Պետրովոկի, Ախալցխա,  
Աբասթուման, Ախալքալաք, Վաղարշապատ, Էջմիածին (Ճեմարան)՝  
Երևան, Խոգիլ, Ալեքսանդրապոլ, Նոր-Նախիջեան, Շուշի, Գորի, Բա-  
թում, Գանձակ:

ՅՕԲԵԼԵԱՆ ԱՐՔԵՓ. ԱՅՑՆԵԱՆԻ: Գեր. Արսէն արքեպ. Աբոնեանը, որ  
զլում է Վիեննայի Մխիթարեան ուխտի, լրացնում է այս տարի  
իւր քահանայութեան և ուսումնական կեանքի 50 ամեակը. Վիեն-  
նացի Մխիթարեանները և հայ հասարակութիւնը պատրաստութիւն-  
ներ են տեսնում աչզ յօրելեանը կատարելու. Ազդ նպատակով կազ-  
մւած է Մխիթարեան ուխտի միաբաններից և տեղական հայ վաճա-  
ռականներից մի յանձնախումբ, որ արդէն մի քանի նիստեր է ունե-  
ցած. «Հանդիս Ամսօրեալ» իւր ապրիլի պրակի մէջ ծանուցանում է,  
որ յանձնախումբ անդամ պլ. Զատիկի Բոբովիչի առաջարկութեամբ ըն-  
դունեց «Այսուհան արւեստովիտական հիմնարկութիւն» անունով մի  
հաստատութիւն կազմել, «որուն գործ ըլլաչ վարչական ժողովոց  
մ'առաջնորդութեամբ արևելքէն» (Ճաճկատան, Ռուսաստան, Պարս-  
կաստան և ալլն) հայ աղքատ պատանիներ Վիեննատ բերել տալ և  
ալսուել պարզ ձեռագործ արւեստներ սորվեցնել 3—4 տարի, և  
վարպետ հանելէն ետե վերադարձնել», Յանձնախումբը ալժմ արդէն  
զբաղւած է աչզ հաստատութեան կազմակերպութեան խնդրով և  
կանոնադրութեան կազմելովը.

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ Պետերբուրգում բացւեց ապրիլ  
5-ին մինչ ապրիլի 12. Մեր երկրից, որքան մեզ լատնի է, ցուցա-

հանդէսին մասնակցեցին Եջմիածնի Մալք-Աթոռի տպարանը և  
Բաքրի «Արօր» տպարանը, Եջմիածնի տպարանը ուղարկած էր իւր  
հրատարակութիւնների ժողովածուն:

ԾԱՂԻՆ, ազգագին, գրական և քաղաքական կյամանեալ հանդէս, խմբա-  
գրապետ Արշակ Զօպաննեսն, Կ Պոլիս, տպ. Ն. Ճ. Ա. Արամեան, 1895.  
—Ստացանք այդ նոր հանդէսի առաջին տետրը, բաղկացած 32 է-  
ջերից, որ առել է թէ ամիսը երկու տետր 64 էջերով, «Ծաղկի  
ապիտի ջանալ զարգացման ճամբան ընդարձակել մեր արդի գրա-  
կանութեան զոր «Հայրենիք» քանի մը տարիէ ի վեր ծաղկեցոց և  
սիրցուց ժողովարդին: «Ծաղկի» ճշմարիտ հանդէսի մը հանդամանք-  
ները պիտի ունենալ, ամբողջական ուսումնասիրութիւններ ներ-  
կացնելով ու խնդիրները իրենց ընդհանրութեան մէջ նկատելով:  
Անիկա սահմանւած է մանաւանդ ընդարձակ և աշխատւած գրակա-  
րութեան»:

Բաւականանալով առ այժմ այս կարճ ծանուցումով, մենք գը-  
րախօսական բաժնում կը լինադառնամք «Ծաղկի» մասին խօսելու  
երբ լուս տեսուած և ստացւած կը լինեն մի քանի տետրեր: Ծաղկի  
բաժնորդագինն է 30 զրուշ Պոլսի համար և 40 զրուշ Պոլսից  
դուրս տեղերի համար:

«ԾԱՂԻՆ» լրագիրը, ներկայ թւականից սկսած հրատարակումը է նախ-  
կինց աւելի մեծ դիրքով և աւելի գալելուչ տպագրութեամբ: Հա-  
վիզը մի կենդանի լրագիր է, ունի լրագիրներին չատուկ բաժիններ,  
առաջ է տանւում ընդհանրապէս՝ լառաջւիմական ուղղութեամբ և,  
մանաւանդ այս տարւանից սկսած՝ մտրակողական ոճով: Ուրախալի  
է տեսնել Պարսկաստանի նման ճացած կետնքում՝ մի լրագիր, որ  
քաջօրէն կուի է մղում հնացած կարգերի դէմ: Ծակիզն վիճակած  
է կարենոր գեր կատարելու պարսկա-հակերի կեանքում, ընթերցանու-  
թիւնը մացնելով մինչեւ իսկ անողիսի խորքեր, ուր ներկայումս ոչ  
միան ընթերցանութիւն, այլ և նոր իսկ հայախօսութիւն չկա:

«ՄԾԱԽ» լրագիրը, Մուրճ-ի անցեալ համարում տպւած մեր լոդւածի  
առիթով վեցամսեալ գրական հանդէսների մասին, լոդւածի: ուր  
գրւած էր որոշ հարց և տրւած բոլորովին որոշ պատասխան, լոդ-  
ւածի, վերջապէս, որ ոչ մի մութը կէտ չի պարունակում, որքան  
և խիստ լինէր լոգւածի լեզուն, Մշակուը, ասում ենք, մեր այդ լոգ-  
ւածի առիթով տպագրեց իւր № 30-ի մէջ մի առաջնորդով «Պոլս-  
միկան հանց մամուլի մէջ» խորազրով, ուր մի կողմ թող-  
նելով բուն խնդիրը՝ թերթի խմբադրութիւնը զբաղւում է այլ և այլ  
համեմատութիւններով, վերագրելով մեզ հրէշաւոր զիտաւորութիւն-  
ներ և այդ բոլորը համեմելով երկդիմի: ու չաւարտւած խօսքերով ո

ակնարկութիւններով։ Այդ հոտն է փչում «Մշակ»-ի խմբագրական լոդւածից, մի հոտ, որ չառուկ է միայն խաւարամիտ բանակի բարուրուապէս նեխւած թերթերին, մի վարմունք, որը, որքան մեծ անպատւութիւն է Թիֆլիսի եղածների մէջ աւելի օրինաւոր գրական օրաթերթին, նունքանէլ սովորական է զառել «Մշակ»-ի խմբագրութեան համար, երբ նրան հարկաւորում է «Մուրճ»-ի հետ ուղղակի և մանաւանդ անուղղակի դործ ունենալ։

ԱՐՁԱԳԱՆՔ»-Ը ՀԱՆՊՈՒՑԵԱԼՆԵՐԻ ԱԱՍԻՆ։ Մի թերթի վերաբերմունքը դէպի խնդիրները և գործող մարդիկ ճանաչելու համար բաւական չէ միայն խմանալ այդ թերթի կարծիքները ապրող մարդկանց մասին։ հետեւցէք նորա խօսքերին նաև հանգուցեալների մասին։

Վախճանւում է Թիֆլիսի քաղաքագլուխ Պօղոս Խղմալեան, մի եռանդուս, քաղաքի գործները սիրող և նոցա նւիրւած անձն, ճարպիկ խօսուղ, զրող և գործող չատկութիւններ, վերջապէս, որոնց համար քաղաքակին դուման երախտապարտ է զգում իրան առանձին լարգանքներ մատուցանելու հանգուցեալի լիշտառակին։ Անկասկած հանգուցեալը մի շատ գնահատելի անձնաւորութիւն էր։

Բայց և այնպէս, երբ մի քանի տարի առաջ, պ. Ա. Մատինեանի հրաժարւելուց չետու՝ նոր քաղաքագլուխ ընտրութիւններ եղան՝ «Արձագանքը», որի խմբագլուքը նաև այն ժամանակ քաղաքակին խորհրդարանի անդամն էր, զէմ էր Խղմալեանի թեկնածութեանը։ Մենք գորանով մեղադրանք չենք բարձում «Արձագանք»-ի վրայ, չնայելով որ «Մուրճ»-ը ջերմ է ջեր նւիրեց Խղմալեանի թեկնածութեան օգտին։ Եւ մեր այն ժամանակ տւած զնահատութիւնը այն անկեղծ խօսքերն էին, որ մենք կարող ենք վերաբառ գրել հանգուցեալի մահացուցակը սալելու ժամանակի։ Բայց խոր ֆակտ է, որ Արձագանքի համար Խղմալեանը Յ-Հ տարի առաջ բաւականաչափ արժանիք չունէր քաղաքագլուխութեան համար, համեմատած իւր թիվնածուի հետ։ Դորա հետ միասին տանիք և այս, որ Արձագանքը երբեք չի վրադեցրել իւր ընթերցողներին Խղմալեանի անձնաւորութիւնով, բայց եթէ միայն մի մի ֆելիէտոնների միջոցով, ուր Խղմալեանը իրեւ «Պաշառ լամենան զէպս քաղաքի ամենալարգւած գործիչի գերում չէր նկարագրում։

Բայց ահա մեռնում է Խղմալեանը։ Քւողաքը արտակարգ պատիւներ է մատուցանում իւր ընդումենը մի տարի ու կէս քաղաքագլուխութիւն արած պաշտօնեալին, և իհարկէ զլիսաւորապէս ի նկատի առնելով նորա գործունէութիւնը մինչեւ քաղաքագլուխ ընտրվելը, ալսինքն նորա ահն գործունէութիւնը, որը գրեթե, անցալու էր «Արձագանք»-ի ընթերցողներին։

Իոկ աչժմ? Աչժմ, «Արձագանք»-ը տպում է մի ընդարձակ մահագուժ-առաջնորդող, որի մէջ Խզմազեանը դուրս է բերւում, թէ կը կարծէք, իբրև ինչպիսի խոշորութեան մարդ? բանից դուրս է գալիս, ըստ «Արձագանք»-ի, ի հարկ է, որ Խզմազեանը «մեր ամեն ատադանդ աւոր հրապարական է ախօսն է բայց ազդ գնահատութիւնը իսպան նսեմանում է «Արձագանք»-ի կողմից Խզմազեանին չատկացրած մի աչլ գնահատութեան առաջ, որովհետ Խզմազեանը, նոխաչէս ըստ «Արձագանք»-ի, աճնպիսի անձնաւորութիւն էր, որի նմանը ոչ թէ տարիներն են ծնում, աչլ ԳԱՐԵԲՈՅ

Միմիան դէպի հանգուցեալի փշատակը տածած խորն բարգանքն է, որ մեղ թելադրում է ջանրանալ եզրակացութիւնների վրայ: Այսքանը միան, որ ակնարկած լողւածը տպւած է «Արձագանք»-ի № 8-ում: Գտէք ու կարդացէք...

Բայց ահա վախճանում է և մի աչլ մարդ, Ախւրեղ եպիսկոպոս Սրբակեան, Կրիանի թեմի փոխանորդը: Ելի «Արձագանք»-ը մէջ մեղ է գալիս. և թէ հոչակում նորան:

Տադանդան մաթեմատիկոս, որի գիտութեան և տաղանդի մասին, սակայն, ոչ մի համարւարանի մաթեմատիկական փակուլտէս տեղեկութիւն չունի:

Հազւագիւտ հաչկարան, որ, սակայն, պէտք է աւելացնէր «Արձագանք»-ը, ոչ մի չափանի զրւածքով հանգուցեալլ չապացուցից և սակայն «Արձագանք»-ը ոգեորւած լողւածով է փառարանում աղջնանաշւած «մաթեմատիկական տաղանդը» և անվագտ «հաղորդիւս հականին»:

Աղդքանը զեռ բաւական չէր. ինչպէս որ Պ. Խզմազեանը ոչ միան առաջնակարգ հրապարակախօս» էր, աչլ և աճնպիսի մարդու որին ամփան դարերն են ծնում», աճնպիս էլ Ախւրեղ եպիսկոպոսը ոչ միան երեսի մաթեմատիկական տադանդ էր, ոչ միան հազւագիւտ հաչկարան, աչլ և նա էր մի աճնպիսի մեծ մարդ, որը ընդունակ էր իւր մանով «ի ի որ սուգ և վիշտ համակել իւր ամբողջ ազգը» և... «մանաւանդ Նոր Նախիջեանը ըստ, պեղում է ազդ թերթի թղթակիցը, որը վառանում աւելցնել, սակայն, որ ամանաւանդ խորը վշտացած Նախիջեանում» հանգուցեալի թաղմանը միան մի քանի մտերիմ բարեկամներ ներկաց եղան:

ԱԱՐԱՐԱՑՅ-Ը իւր 2-րդ համարում տպել է «Անանական» ստորագրութեամբ մի լողւած՝ «Իսւաց եկեղեցին Ալեքսանդր Ականել Ժամանակ», որ քաղւածօրէն կազմւած է «Եկեղեցական համբաւաթիր թերթում տպագրւած պ. Անդրեսեսկու մի լողւածից: «Արարացյ»-ի

Վաճականը երբ պրոֆ. Անդրեևսկու չողւածում որ և է օտարոտի բան է գտնում, փակագծում հարցական ու զարմացական ( \* ) նշաններ է գնում, որով ուզում է հասկացնել թէ կուրօրէն չէ այլ գիտակցորէն է թարգմանում ուռւ զրովի չողւածը. Բայց ուրքան մեծ է էջմիածնի և «Արարատ»-ի նոր կուրսի «վաճականի» հիացմունքը ուռւաց մի կարգ եկեղեցական տարրական դպրոցներում նորից մուտք գտած հին մանկավարժական մեթոդից, որ նա, և անականը կամ «Արարատ»-ի նոր կուրսի խմբագրութիւնը ոչ միայն հարցականներ ու զարմացական նշաններ չեն զնում, այլ և նոյն իսկ նօտրաւար են տպում հետևեալ մարդարաւեալ տողերը. խօսքը «Գրագիտութեան ստորին կարգի ուսումնարաններու կոչւած դպրոցների մասին է. «Այդ ուսումնարաններում, առւած է չողւածում, դասաւառութիւնը ոչ թէ օտարեւ կը բեա ու ուսուցման եղանակով էր կատարւում» (աջմինքն մանկավարժական նոր եղանակով ուզում է ասել Վաճականը), որով նախ և առաջ աշակերտներին ուսուցանում են ժողովրդական առարկաներ ու հեքիաթներ, կենդանիների կեանքը, այլ ժողովրդի սիրած եկեղեցական գրքեր - Սազմու ու Ժամագիրք»:

Զլինի թէ դորանով ծրագրում է «Արարատ»-ի խմբագրութեան մէջ Սաղմու-ժամագրքի ընթերցանութեան վրա հիմնած մի տէր-թողիկեան մանկավարժական սիստեմ մեր հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար?

**ՄԱՄՈՒԼ:** Իրաւունք է արւած ար. Պալմին (Արբենին) հրատարակել Բաթումի մէջ՝ Կերոմօրսկի ԲՇԵՏԱԿԵՎ («ԱԿ-ծովիկան լրաբեր»).

ԳԻՒԴԱՏՆԵՑԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷՆԿԱՌՈՒԹԻՒՆ, կառավարութեան թուլաւութեամբ, հիմնեց թիֆլիսում: Խոր տեսակում դա առաջինն է մեր երկրում: Նախաձեռնողները և զեկավարները վրացիք են:

ՖԻԼՈԿՍԵՐԱՅԻ ՔԷՄ մարտնչելու համար կովկասում՝ կառավարութիւնը նշանակել է 91.500 ոռոբլի:

† ԿԻՐԵՎ. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐԱՎԵԱՆ, վախճանեց ներկայ մարտ ամսի 8-ին, նոր-Նախախիջևանում, ուր նա գտնուում էր իբր ուղեկից Վեհափառ կաթողիկոսի: Կիւրեղ եպիսկոպոսը հայ հոգևորականութեան մէջ բռնում էր մի որոշ զիրք իւր աշխարհականութեամբ և գործելու եղանակով, թէ իբր քարոզիչ և թէ իբր բարձր հոգևորական պաշտօնեալ: Երկար ժամանակ նորա անձնաւորութիւնը ազգի ընդհանութեան համար գրեթէ անկատ մնաց, և նա մեզանում սկսեց ճանաշւել նախ երբ նա բաքու իբր քարոզիչ նշանակեց զեռ ևս Մակար կաթողիկոսի վերջին տարիներում, բայց աւելի երբ Երեմիակ եպիսկոպոսի տեղեկալութեան օրով նա Երեանի թեմի կառավարից նշանակւեց, և մանաւանդ երբ նա ներկայ Վեհա-

փառ. Կաթողիկոսից հաստատեց իբր վասիանորդ (առաջնորդ) Նըրեանի թեմի: Աստեղ միան պարզեց որ Կիւրեղ եպիսկոպոսը սնուցւած էր անպիսի գաղափարներով, որոնք նորան գարձնուելին ժամանակիս լառաջիմութեան հակառակ հոսանքի մի գործիք:

Նորա զործքերը Նըրեանում պարզ ցուց տվին որ նա գնահատող չէր ոչ ժողովրդական լուսաւորութեան և ոչ իսկ եկեղեցական նորմութեան գործին, զենւելով առաջնորդական իշխանութեան վրայ, նա ամեն բանում ջանազիր էր լոկ ազդ իշխանութեան դուլցումն տեսնել, աշխատելով ինչիք դարձնել և նոյն իսկ ծաղրել ժողովրդի թէ ձանը և թէ նորա վայելած իրաւունքները ֆեմի առաջնորդ դաւնալով՝ նա հնարեց այս խօսքը թէ՝ «առաջնորդը թեմի Կաթողիկոսն է»։ Նա անընդունակ եղաւ ըմբռնելու ժողովրդի վառ և չառաջդիմող զիտակցութեան դերը այն հիմնարկութիւնները հաստատ պահելու գործում, որին նա ինքը կոչւած էր և, օրինակ, ընդունակ էր քառաձանն երգեցողութիւնը արգելել, ասելով թէ Աստւած մի է, ուրեմն և երգն էլ պիտի մի տեսակ ձանով երգի։ Մեր գիտացածով Նըրեանի թեմը նորա կառավարութեան ժամանակ ըստ ամենալի լետագիմեց։ Նա բարեցալաւտապէս տգիտութեան պաշտպան եղաւ, և ալդպէս էր նաև քահանաներ ձեռնադրելու ինող րի մէջ, լար և նման իւր պաշտոնակից Կարապետ եպ, Ազգագեանի, այս զանազանութեամբ միան, որ Կիւրեղը ալդպէս վարւում էր աւելի իւր խաւարամութեան չնորհիւ, և ոչ շահամոլութեան։

Գրելով այս տողերը՝ մենք խապառ չենք մոռանում «Մուր» 1889 թ. № 12-ում տպւած Մասկուայի ուսանողների բողոքը ընդիմ Պատկանեան—Սիւլիկի լավոնի գրւածքի, բողոքի, ուր պաշտպանում էր այն ժամանակ զեռ վարդապետ Կիւրեղը նշանաւոր բանաստեղծի ստարիբայի դէմ։

+ ԶՈՐՁԱՉԵ: Իշխան Զախարիէ Ալեքսանդրովիչ (Վրացի), վախճանեց 29 մարտի, Պիտերբուրգ: Հանգուցեալի գլխաւոր ծառակութիմը կաւացաւ նրանում, որ նոտ, իւր ազգական և նոյնպէս նորոգ նանդուցեալ իշխ. Ա. Բագրատիան-Մուխիրանակուու հետ, որի տնտեսութիւնը նա առաջ կառավարում էր, առաջին պիտնէրը եղաւ կանոնաւոր գինեգործութեան Կալկասում։ Ապա կազմակերպիլով մի անկախ ընկերութիւն, «Իշխ. Զ. Ա. Զորջաձէ և ընկ'», անունով նա մեծ ծաւալ աւեց կովկասեան գինիների տարածւելուն ռուսաց շուկաներում և այդ գինիների համար շատ պատաւոր անուն ստեղծեց թէ Ռուսիանում և թէ արտասահմանում։

Խշու. Զորջաձէն ծնւեց 1847 թ.-ին, կրթւեց Պետերբուրգում

զինւորական միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում և փալեց  
իր մէկը լաւագոյն աշակերտներից, Բայց կարճ միջոցից լետով նա  
թողեց զինւորական ծառալութիւնը, գնաց արտասահման, ուսանե-  
լով նախ գործարանական և երկրագործական քիմիա, ապա պա-  
րապելով ագարակներում և զինու պահեստներում, իբրև սովորական  
աշխատաւոր: Ազգպիտով նա հիմնաւորապէս ուսեց զինեգործութեան  
ահսական և գործնական մասիրը: Վերադառնալով հակընիք Թիֆ-  
իս՝ նա, չունենալով սեփական միջոցներ, մի քանի հաւ ինտելիգէնսա  
դրամատէրերի մասնակցութեամբ, կազմեց վերոլիշեալ ընկերութիւնը  
թէս ոչ գործի մեծութեան համապատասխան մեծ կազմակալով, մինչ-  
դեռ զա պահանջում է մեծ դարձւածական դրամագլուխի, քանի որ  
գինին ասրիներով է պահուում:

Հանգուցեալը իւր գործի եռուն ժամանակը, 1890-ին, հիւան-  
դացաւ հոգեկան ցաւով. նորա մերձաւորները տարան նորան Պե-  
տերուորդ 1991 թ. սկզբում և տւին Ֆրէի չափանի բուժարանը, ապա  
ոգելաքին վարչութեան հիւանդանոցը: Չորս տարի նա անգիտակ  
դրութեան մէջ մնաց և վախճանեւց:

ՄԱՅԻՖ (Յարսութիւն Յովհաննիսեան Ալէքսանդրեանց) ժողովրդական  
երգիչ վախճանեւց Ենքնքորանում վետքւար ամսին, 75 տարեկան  
հասակում ծննւեց Պարսկաստանի Համադանի դաւառի կարախանի  
խանութեան մէջ, և 1835-ին միւս հակերի հետ ինքը և իւրաքինք  
գաղթեցին Շամախի, ուր ազքատ շանուորի ծանր գործերից կուրա-  
ցաւ 10 տարեկան հասակում, որից հնագ նս դառաւ կուր երգիչ:  
Ամուսնացաւ, տեղափոխւեց Ենքորան, տու և տրով պարապեց, հո-  
րսացաւ, բայց ունեցածը կորցրեց գործակատարների պատճառով  
ու ընկաւ չքաւորութեան մէջ:

Մայիֆ (որ պատկերէն կուր և նշանակում) իւր ստանաւորները  
թելադրում էր հակերէն և թուրքերէն, նոցա մի մասը լուս է տե-  
սէլ հակերէն առանձին զրքուիներով: Մայիֆը երգում էր հալա-  
ծեալիների, անտուն-անտէրների վիշտը Դովում հն Մայիֆի տաղանդը,  
բայց զրականական քննութեանը նորա գրածները դեռ չեն ենթար-  
կւած:

ԱՐԻԹԱԿԱՆԱՐ: Անցեալ 1891 թ. Մուրճ № 1, 2, 3, 4 և 5 տպագրւած  
«Հողագին և անձնական իրաւունքը Հին-Հայաստանում» Ա. Բահա-  
թրիանցի, աչման առանձին գրքով լուս տեսած լինելով օգտաւում ենք  
հեղինակի ցուցմունքներից հրատարակելու համար հետևեալ թէ խո-  
չը և թէ մանր գրիպակները, ցոչ տալով Մուրճու (1894 թ.)  
էջերը և տողերը:

Խ ո չ ո ր վ ր ի պ ա կ ն ե ր ը ո ո ք ա ե ն (էջերը նշանակում ենք  
միծ թւանշաններով, տողերը՝ փոքրերով):

սիմալ	ուղիղ
91. <sub>19</sub> իսկ թագաւորների . . . . .	իսկ թողլ թագաւորների
93. <sub>13</sub> միապետական արդիւնաւոր.	միապետական իշխանութեան ոկիզբը զրեց հարց երկրում Արամի հաստատած միապետու թիւնը արդիւնաւոր...
94. <sub>18</sub> իրաւունքների . . . . .	կալւածների
96. <sub>16</sub> թագիբարապետը . . . . .	թագադիր ասպետը
99. <sub>33</sub> առաջներին . . . . .	աւագներին
269. <sub>33</sub> խորթ էր . . . . .	խորթ էր և տարածւում էր
275. <sub>15</sub> պատկառելի . . . . .	պատկանելի
413. <sub>5</sub> Շէնք.	Շէն
417. <sub>16</sub> զուրկ էին . . . . .	զուրկ չէին
422. <sub>3</sub> Զուալ . . . . .	Զուաշ
422. <sub>30</sub> Թագաւորութիւնը ջոկ է . .	(Չնչել)
425. <sub>6</sub> ծախեց.	ծախսեց
546. <sub>15</sub> անունները . . . . .	անասունները
550. <sub>11</sub> ցաւ . . . . .	լաւ
552. <sub>4</sub> և 556. <sub>3</sub> իրերի . . . . .	երկրի
745. <sub>7</sub> Արշակունեաց	Արշարունեաց
746. <sub>2</sub> 1800.000 դահեկանի . . . . .	180.000 փաչտ ևն կարել ի Քար- քեռ և 40.000 դահեկանի
746. <sub>23</sub> այր ու կին . . . . .	այրնձին
747. <sub>5</sub> մեծ թագաւորին . . . . .	թագաւորին:

Նւազ նշանաւոր վրիպակներն են. 98.<sub>19</sub> պատրաստ (ուղղել՝ պարտաւոր). 98.<sub>8</sub> ներքեխց Խատրապա, Խշատրա (կատրապա, կշատրա).—100.<sub>14</sub> Կոտոլիխին (Կոտոշիխին). 277.<sub>4</sub> ներքեխց Փաւ. եռ. 14 (Փաւ. եր. 64).—278.<sub>4</sub> Փաւստոսը եր. 93 (Փաւստոսը եր. 193).—279.<sub>2</sub> Էր (Էիր).—420.<sub>2</sub> ներքեխց. 'Կուզարացի (Կուչարի).—421. ներք. Գուգարաց Հակազնոց (Գուշարաց Հակազնոց).—422. <sub>3</sub> Զուալ—Զուաշ.—423.<sub>6</sub> ներք. անովք (անովի).—426.<sub>11</sub> Փաւ. եր. (Փաւ. եր. 9).—546.<sub>1</sub> ներք. սահմանները (սահմանները Արամը լցրեց բնակչներով շատ անբնակ աշխարհներ).—550.<sub>15</sub> Փ. 127 (Փ. 197).—550.<sub>20</sub> աւագ (աւագ աւագ).—550.<sub>21</sub> զան (զոմե).—554.<sub>6</sub> Խ. 123 (Խ. 129).—554.<sub>22</sub> Ագ. 359 (Ագ. 459).—745.<sub>7</sub> ներք Յ. եր. 124 (Յ. եր. 211).—745.<sub>4</sub> ներք. Կուսաս (Կուառ).—747.<sub>18</sub> ներք. անւանւում (անւանւում. Մեծ իշխանները աւագ նախարարներ էլ էին կուչւում):

Եթո. Տար.	Այլու.	Ուղիղ.
1636 11	Միլ-Գիտօ.	Ոէս-Պէտօ...
1637. 21	Գուշուջանի.	Ղուզուզան
1638 21	անցած.	անցան...
1639 11	Զէնք Բագրատունի հարս- տութեան՝ որով...	Զէնք Բագրատունի հարստութեան քակըաւում է, որովհետեւ...
" 23	տէր Գրոնից	Տէր-Ցրօնից
" 29	Ռահուացի դաշտը	Ռահուացի դաշտը...
" 30	նեան Տիգրան.	նեան Տիգրան...
1640 7	ռահուաց.	Ռահուաց
" 8	ապա՝ Պէշասէլի գիւղի.	ապա՝ Կէլ-առէշի գիւղի.
1641 3	Հասարան-Օթոփալ	Հասարան-Թօփալ.
" 23	երկաթ դանակով	երկաթ վականքով
1643 17	նում էի Ալիքն.	նում էի Ալիքն
" 28	իշխանական ծերունին.	իշխանական ծիրանին.
1644 12	Զէնալին հաղորդած է.	Զէնալին ցաջորդած է ալժմ
" 15	Խոյթի Բաղարինց.	Խոյթի Բաջարինց...
1646 19	Ֆէթիհ-Մէնմէտ-Ղուլի.	Ֆէթիհ-Մէնմէտ-Ղաղի.
" 31	Պէշ-տաշ, Շիփակ,	Պէշ-տաշ, Շիփակ
1647 28	(այժմ Ռչի ճամի.)	(այժմ Ուլի ճամի)
" 32	հեռանալ խորդալ.	հեռանալ, խոլս տալ
1648 30	կորած են նորա	կորած են նոցա
1652 22	Հիսան 5	Նիսան 5

«Մուրճ» 1895 թ. № 1. ի վրիպակը

114 6 հիմնումն Սէմալ. . . . . հիմնում են Աւգրմը. իսկ Առ-  
զուզան մի քանի տեղ տպագրւած է «Գուշուջուջանի»:

### ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ.

- 1) ԱԱՐԴԱՐԵԱՆ-ԱՐԵՒՇԱՏԵԱՆ, Ադամ, — Օրթաճալու քէփը կամ Զիգրու-  
րան է. Փարս-վողըւիլ մէկ արարւածով (թուլատրած ներկալացման  
համար Կովկասեան երկրի բեմների վրա): — Թիֆլիս, տպ. Մ. Ռո-  
ալինեանցի, 1895 թ. գինն է 20 կոպ.
- 2) ԳԱԲԱՔԱՇԵԱՆ, Ա. Մ. — Քննական պատմութիւն հաջոց, ըստ նո-  
րագոյն պատմական, լեզւաբանական և բանասիրական տեղեկու-  
թեանց: մասն Ա. Նախնական ժամանակ: Հրատ. Թիֆլ. Հրատարակչ.  
Ըսկ., Թիֆլիս, տպ. Շարաձէ, 1895 թ. գինն է 1 ռուբլի:
- 3) ԼԵՒՈՆԵԱՆ, Գարեգին Զիւանի. — Հայոց պարբերական մամուլը, պատ-  
մական աւեսութիւն սկզբից մինչ մեր օրերը. Արժանացած Խզմիրեան  
առաջին մրցանակին. Ալեքսանդրապոլ, 1895 թ., գինն է 3 ռուբլի:

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

Անդրկովկասեան երկաթուղի:

Ճամբորդական գնացք № 1. Թիֆլիսից Բաթում, դուրս է գալիս առաջ՝  
տեսն 9 ժ. 30 ր., հասնում է Բաթում երեկ. 9 ժ. 45 րոպէ:

Ճամբորդական գնացք № 2. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում առաջ.  
9 ժ. 40 ր., հասնում է Թիֆլիս երեկ. 9 ժ. 55 ր.:

Պոստալին գնացք № 3. Թիֆլիսից Բաթում, դուրս է գալիս երեկովան 6 ժ.  
50 ր., հասնում է Բաթում առաւ. 8 ժամ 15 րոպէ:

Պոստալին գնացք № 4. Բաթումից Թիֆլիս, դուրս է գնում գիշերակ 11 ժ.  
20 րոպէ, հասնում է Թիֆլիս ցերեկւակ 12 ժ. 25 րոպէ:

Պոստալին գնացք № 3. Բաքրից Թիֆլիս, դուրս է գնում գիշերը 11 ժ. 5 ր.  
հասնում է Թիֆլիս երեկովան 5 ժ. 50 ր.:

Պոստալին գնացք № 4. Թիֆլիսից Բաքր, դուրս է գնում ցերեկ. 1 ժ. 10 ր.  
հասնում է Բաքր առաւ. 7 ժ. 30 րոպէ:

Ապրանքա-ճամբորդական գնացք № 24. Թիֆլիսից Գանձակ, դուրս է գնում  
երեկւան 7 ժամ 27 ր., հասնում է Գանձակ առաւ. 7 ժ. 40 ր.:

Ապրանք-ճամբորդական գնացք № 25. Գանձակից Թիֆլիս, դուրս է գնում  
երեկովան 6 ժ., հասնում է Թիֆլիս առաւ. 7 ժ. 35 րոպէին:

Թիֆլիս Վլադիկավազի տրակտ:

Երթևեկութիւն ց1-ն մայիսի 1895 թ.

Թիֆլիսից հինգ տեղանի կարետները դուրս են գնում առաւօտեան 8  
ժամին, վիցտեղանի օմնիբուսները կէսօրից լետոց 3 ժա-  
մին, Համեռում են Վլադիկավազ հետևեալ օրերը կէսօրից  
լետոց՝ կարետները ժամ 7-ից մինչ 8, օմնիբուսները նոյն-  
պէս նոյն ժամերին:

ՎԼԱԴԻԿԱՎԱԶԻՑՑԻՑ հինգտեղանի կարետները դուրս են գալիս առաւ. 8  
ժամին, վիցտեղանի օմնիբուսները կէսօրից լետոց 3 ժամին  
և 5 ժամին. Համեռում են Թիֆլիս հետևեալ օրը կէսօրից լետոց  
կարետները 7 ժամ 25 ր. և 9 ժամին, օմնիբուսները 6 ժ. 40 ր.  
և 8 ժամ 25 րոպէին:

Յ ԵՖԵԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՐԻԺՄՐԱՆ  
(Գործակա լիցեօնից)

Մուխրանսկայա փողոց, տուն Կուզանեանի № 15:

Հիւանդների ընդաւնելութիւն ամեն օր, բայց կիւալի օրերից, ձմեռէ  
առաւտեան ժամ 9-ից մինչ 1-ը (ամառ՝ լուսին, լուլիսին և օգոստոսին  
առաւ. 8-ից մինչ 12-ը):

- 1) Ա. ը ծ ր ո ւ ն ի (Ա. Ա.)—ներքին, երեխանց և ջղավին հիւանդու-  
թիւնների, ժամ 10<sup>1/2</sup>—12, ամեն օր: 2) Պ. ո ն ե ա ն ց (Կ. Ա.)—ներքին  
և երեխանց, ժամ 10<sup>1/4</sup>—12, ամեն օր: 3) Պ. ո ւ լ ո ւ ե ա ն ց (Պ. Պ.)—խի-  
ռուրդիական և մէզի անդ, ժամ 11—12, ամեն օր: 4) Կին-բժիշկ ի ո ա հ ա-  
կ ե ա ն ց (Ա. Ա.), կանանց հիւանդութիւնների, ժամ 9—11, ամեն օր:  
5) Կ ա ս ո ւ մ ե ա ն (Ա. Պ.)—ներքին և երեխանց, ժամ 12—1, ամեն  
օր: 6) Մ ի ր ա ք ե ա ն (Ա. Ա.)—ներքին և վիճներական, ժամ 12—1,  
երկուշ, չորեքշ, և շար, օրերը: 7) Մ ո ւ ր զ ա ե ւ (Ա. Պ.)—ականջի,  
կոկորդի և քթի, ժամ 9—10 ամեն օր, բայց հինգ առելաքթից: 8) Կին-բժիշկ  
Մ ո ւ լ ս ա ր ի ն ս կ ա ւ ա (Ա. Եա.)—կանանց, ժամ 11—12 ամեն օր: 9)  
Ռ ա զ ա մ ա տ (Եա. Ա.)—ներքին, երեխանց և աստմի, ժամ 9—10,  
ամեն օր: 10) Ս տ ե փ ա ն ե ա ն (Պ. Ե.)—կառավարիչ քաղաք. բաւժա-  
րանի—ներքին, մէզի անդ. և վիճներական, ժամ 11—12 ամեն օր: 11)  
Թ ա ր լ ս ա ն ե ա ն (Պ. Ա.)—ներքին և խիլիուրդիական, ժամ 11—12 ամեն  
օր: 12) Կին-բժիշկ Շ մ ի ց (Ա. Ա.)—աչքի և կանանց, ժամ 11—12 ամեն  
օր: 13) Ա.տամինաբուժ Օ ր բ ե լ ի (Ա. Օ.)—ատամիների, ժամ 10—11,  
ամեն օր:

Բժշկական խոր հուրութեան (կոնսուլտացիա) երեքշաբթի և ուր-  
բաթ օրերը, ժամ 11—12: Ծ ա զ կ ի պատաստութիւն—չորեքշ, և շաբաթ  
օրերը, ժամ 9—1:

ՀԱԽԱՔԱՅԻՆԻ ԲԱԺԱՆՄՈՒԻՆՔ

Կախեթինսկայա փողոց, տուն Տէրտիքեանի

- 1) Ք ա լ ա ն թ ա ր ե ա ն (Ա. Ա.)—ժամ 11—12, ամեն օր: 2)  
Կին-բժիշկ ի ո ա հ ա կ ե ա ն (Ա. Ա.)—կանանց, ժամ 11—12 երեքշաբթի  
և ուրբաթ օրերը:

ԽԱՆՆԵՐԵԱ ՎՈՐՈՍԻ ԲԱԺԱՆՄՈՒԻՆՔ

Բաննըրեա վորոտա, տուն Էնֆիաճեանի

- 1) Պ է ր Ա. ս ա տ ո ւ ր ե ա ն (Պ. Բ.)—ժամ 11—12, ամեն օր: 2)  
Կին-բժիշկ ի ո ա հ ա կ ե ա ն (Ա. Ա.)—կանանց, ժամ 11—1 երեքշաբթի  
և ուրբաթ օրերը:

Ծ ա ն օ թ ո ւ թ ի ւ ն: Զքաւոր անձերին բժշկական խորհուրդ և դե-  
ղիր արաւում հնաձըի:

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՆԿԵՐՈՒԹԻՒՆ

# „ՌՈՍՍԻԱ“ „РОССИЯ“

ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ՀԱՍՏԱՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ԲՈՒԲՆ

Ա. Պետերբուրգում, Յալթա Մօրսկայ Ն 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ԲՈՒԲՆ  
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՈԿՈՍԱԲԵՐ ԹՂԹԵՐԸ պահուամ են պետական բանկում:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ընդունուած է՝

## ԿԵԱՆՖԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ազսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրող ների մասնակցութեամբ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ օգուաններին:

1894 թէի լունարի, 1-ին «Բոստիա» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ ապահովագրուած էին 28.246 անձ 75,621,010 ըուբլի դրամագլուխով:

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱՂԻ ԴԵՊՔԵՐԻՑ

առանձին անձների, և թէ համագումար ապահովագրութիւններ դորձարաններում ծառալողների և բանուրների, — պակասեցնելով ապահովագրական վճարները՝ գիւղիցնողի փոխարէն:

## ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալւածքները (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կանկարասիքի և այլն):


## ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետավին, ցամաքավին և ծծովավին. ապահովագրութիւն նաւերին:

Ապահովագրութեան մասին չափարարութիւնները ընդունուած են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդուամ են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Եօլշայ Մօրսկայ, սեփական տուն, Ն 37). Կոմիսարնեան ՀԸ Ջանի համար ընկերութեան վարչութեան մէջ՝

Թիֆլիսում, Սերգիւլսկայա փ. տուն Ն 6. և բոլոր գործակալութիւններում կալսրութեան բոլոր քաղաքներում:

Ապահովագրական տունակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ արւուամ են նույնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում:



# „ՄՈՒԲՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

### ԲԱՑԻԱԾ է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ: «Մուրճ»-ի բաժանորդագինն է **10** ռուբլի: Առաջիները, ուսանողները, որպէս նաև արհեստաւորները վայելում են **2** ռուբլով զիջում, վճարելով **8** ռուբլի: Բաժանորդագինը կարելի է վճառել նաև մաս-մաս, սկզբում **5** (կամ **4**) ռուբլի, մնացեալը լրացնելով առաջին կիսամեակում:

Բաժանորդ գրւում են, դիմելով՝

ԽՄԲԱԴՐԱՑՈՒՆԸ, Թիֆլիս, Վելեամինեան փողոց, տուն № 8:  
Տիֆլիս. Въ Редакцію журнала „МОУРЧЪ“.

Tiflis. Réaction de la Revue „MOURTCH“

և կամ դիմելով հետեւալ անձերին կամ հիմնարկութիւններին:  
ԹԻՖԼԻՍ — { Բոլոր գրավաճառանոցները:  
ԲԱԲՈՒ — {

ԲԱԹՈՒՄ — պ. Սարգիս Մակարեան, Ծովիանեանի բանկ. գրասենեադի  
ԿԱՐՍ — պ. Աբէլ Ասլուկեան:

ԱԽԱԼ-ՔԱԼԱՔ — պ. Զալալ Տէր.Գրիգորեան:

ՆՈՒԽԻ — պ. Աբրահամ Բունիխաժեանց և Խաչատուր Խօջամիրեանց:  
ԱԳՈՒԵՒՄ — պ. Ստեփան Արամիանեանց և Աւետիս Դաթեանց:

ՆԱԽԻՉԵՎԱՆ (Հին) — Արսէն վարդապետ Պլոտինեանց:  
ՂՋԱԲ — պ. Հմայեակ Մաժինեան և Կոստ. Գիւնազարեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՐԴԱՐ — պ. Արամ Շալովալեան:

ՄՈՍԿԻՍ — պ. Ալեքսանդր Ծատուրեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ — պ. Քր. Բաշինջաղեանին (Гостино. дворъ № 7):